

ա բ գ դ ե
զ է լ թ ժ
ե լ ե ծ հ
Տ Ճ Ղ Մ
Վ Ն Շ Ո Յ
Ա Ը Ռ Ս Վ
Մ Ր Գ Լ Փ
Բ Է Օ Ֆ

ա ե
է լ է
ո օ

The diaspora of Armenian printing

1512-2012 John A. Lane **Պոլ Ա. Լեյն**

**Հայկական
գրատպության
սփյուռքը**





(47.925)
d-33



John A. Lane

**The diaspora
of Armenian printing
1512-2012**

Amsterdam - Yerevan 2012

Ջոն Ա. Լեյն

**Հայկական
գրատպության
սփյուռքը
1512-2012 թթ**

Ամստերդամ - Երևան 2012թ.



Table of content

Armenia, the alphabet and the art of printing	9
I Armenians print for themselves and Catholics print to convert them	18
II Scholarly and not so scholarly printing offices	40
III Armenian printing offices spread but falter	50
IV Armenian printing in Amsterdam	60
V The Amsterdam press moves to Livorno, Marseille and Constantinople, and a new press begins in Amsterdam	100
VI Venice and Amsterdam revisited	124
VII Armenian printing spreads around the world and reaches the homeland	150
VIII Scholars, Protestant Missions, the Armenian Apostolic Church and Bible Societies	170
IX Westernization, advertising, new fashions ... and Jesuits!	190
Notes	210
Selective list of sources	216
Chronology of Armenian Printing Centres	218
Sources for the illustrations	219
Colophon	220
Author's acknowledgements	222

Բովանդակություն

Հայաստանը՝ այբուբենն ու գրատպությունը	9
Գլուխ Ա. Հայերն իրենց համար են տպագրում, կաթոլիկները՝ հայերին կաթոլիկ դարձնելու նպատակով	18
Գլուխ Բ. Գիտական ու և ոչ այնքան գիտական տպարաններ	40
Գլուխ Գ. Հայկական տպարանները տարածվում են, սակայն անհաստատ են	50
Գլուխ Դ. Հայկական գրատպությունը Ամստերդամում	60
Գլուխ Ե. Ամստերդամի տպարանը տեղափոխվում է Լիվորնո, Մարսել ու Կոստանդնուպոլիս և վերադառնում Ամստերդամ	100
Գլուխ Զ. Վենետիկն ու Ամստերդամը վերանայված	124
Գլուխ Է. Հայկական գրատպությունը տարածվում է աշխարհում և հասնում հայրենիք	150
Գլուխ Ը. Գիտնականներ, բողոքական քարոզիչներ, Հայ Առաքելական եկեղեցի և աստվածաշնչային միություններ	170
Գլուխ Թ. Արևմուտքի ազդեցություններ, գովազդներ, նորամուծություններ և... ճիզվիտներ	190





Opening page of the Gospel according to Saint Matthew. Manuscript containing the Four Gospels, 16th century.

Armenia, the alphabet and the art of printing

The Armenian people, christianized in the first centuries of the Christian era, had a rich manuscript tradition for a thousand years before the introduction of letterpress printing in Europe. Like Jews and Calvinists, they have been called 'the people of the book'. The Armenian people remained stateless for 543 years, from 1375 until 1918, when a short-lived Armenian Republic was set up for the first time following World War I, and they frequently suffered persecution at the hands of other Christians and of Muslims. Yet they turned their statelessness to advantage as international traders and struck a balance between retaining their cultural identity and assimilating to the societies where they lived.

The Armenian language, not closely related to other surviving members of the Indo-European family, was spoken in what is now eastern Turkey, Armenia and other parts of the Caucasus for thousands of years before the unified Kingdom of Armenia established its independence in 188/89 B.C. Armenia reached its culmination of power during the reign of Tigran the Great in the first century B.C. The vast Armenian empire of the period extended from the Caspian to the Mediterranean Sea and from the valleys of the Tigris and Euphrates rivers to the foot of the Caucasus Mountains.

Ավետարան ըստ Մատթեոսի, առաջին էջ. ձեռագիր Ավետարաններ, 16-րդ դար

Հայաստանը՝ այբուբենն ու գրատպությունը

Քրիստոնեականան շրջանի առաջին դարերի ընթացքում քրիստոնեությունն ընդունած հայ ժողովուրդը հազար տարվա ձեռագրային հարուստ ավանդույթ ուներ, մինչև Եվրոպայում տպագրության սկզբնավորվելը: Ինչպես հրեաներին ու կալվինիստներին, այնպես էլ հայերին կոչել են «գրքի ժողովուրդ»: Հայերը պետականությունից զրկված են եղել 543 տարի շարունակ՝ 1375թ.-ից մինչև 1918թ., երբ Առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծվեց կարճ կյանք ունեցած Հայաստանի առաջին Հանրապետությունը: Նրանք հաճախակի հալածանքների են ենթարկվել այլ քրիստոնյաների ու մահմեդականների կողմից: Հայերին հաջողվել է, սակայն, իրենց պետականություն չունենալը վերածել առավելություն՝ զբաղվելով միջազգային առևտրով, և կարողացել են հավասարակշռել մշակութային ինքնության պահպանումը նոր բնակավայրերի հասարակությանն ինտեգրման հետ:

Հայոց լեզուն, որը հնդեվրոպական լեզվաընտանիքի մյուս կենդանի լեզուների հետ անմիջական կապ չունի, արդեն հազարամյակներ խոսվում էր ներկայիս արևելյան Թուրքիայում, Հայաստանում և Կովկասի այլ մասերում՝ նախքան միացյալ Հայկական Թագավորության (Մեծ Հայքի) անկախության վերահաստատվելը՝ մ.թ.ա. 189/188 թ.-ին: Հայաստանն իր հզորության գագաթնակետին է հասել Տիգրան Մեծի գահակալության օրոք՝ մ.թ.ա. առաջին դարում: Այդ ժամանակաշրջանի լայնարձակ հայոց թագավորությունը ձգվում էր Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով, և Տիգրիս ու



Saint John, listening to a voice from above, dictates his Gospel to a scribe. Manuscript containing the Four Gospels, 16th century.

It was the third largest state of the Near East, after the Roman Empire and Parthia. According to the Greek geographer and historian Strabo (first century B.C.) all the people who lived in the Armenian Highlands spoke one language.

Christianity gradually established a strong presence there. Tiridates III (ca. 250-330 A.D.) was the first ruler to officially christianize his people, making Armenia the first state to formally adopt the Christian religion. This strengthened the nation's cultural identity, making a sharp contrast with Zoroastrian Persia and centuries later with the surrounding Islamic powers: Ottomans in Turkey and Safavids in Persia (Iran). The head of the Armenian Apostolic Church, seated at Echmiadzin, near Yerevan, is called the Catholicos of all Armenians. The Church separated from Rome and Constantinople in 554, though attempts at rapprochement with Rome continued for more than a thousand years. The last kingdom in Armenia itself, with its capital at Ani, fell in 1065. The King and many followers established a new kingdom in Cilicia, on the Mediterranean coast, in what is today southern Turkey. The seat of the Catholicos moved there as well. The Cilician kingdom fell in 1375, but its capital, Sis, remained the seat of the Catholicos. A seat for the Catholicos was again established at Echmiadzin in 1441, but the Catholicos in Sis did not step down.

Սուրբ Հովհաննես, վերևից ձայն լսելիս, իր Ավետարանն է թելադրում գրչի. ձեռագիր մատյան, Ավետարանները, 16-րդ դար

Եփրատ գետերի հովիտներից մինչև Կովկասյան լեռների ստորոտը: Մերձավոր Ասիայում մեծությամբ երրորդ պետությունն էր՝ Հռոմեական կայսրությունից ու Պարթևական թագավորությունից հետո: Հույն աշխարհագրագետ-պատմիչ Ստրաբոնը (մ.թ.ա. 1-ին դար) վկայել է, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչները միևնույն լեզվով էին խոսում:

Քրիստոնեությունը, հետզհետե, ամրապնդվում է հայոց հողի վրա: Տրդատ Գ թագավորը (250-330թթ.) իր հպատակներին քրիստոնյա դարձնող առաջին արքան էր, ինչի շնորհիվ Հայաստանն առաջին պետությունն է, որ քրիստոնեությունն ընդունել է որպես պետական կրոն: Սրանով ամրապնդվում է ազգի մշակութային ինքնությունը՝ սուր հակադրության մեջ դրվելով զրադաշտական Պարսկաստանի, իսկ դարեր անց՝ նաև հարևան իսլամական տերությունների՝ Օսմանյան Թուրքիայի ու Սեֆյանների Պարսկաստանի (Իրան) հետ:

Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդն Ամենայն Հայոց Կաթողիկոսն է, որի նստավայրը գտնվում է Երևանից ոչ հեռու՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Եկեղեցին Հռոմից ու Կոստանդնուպոլսից անջատվել է 554 թ.-ին, թեև Հռոմի հետ հարաբերությունները վերականգնելու փորձերը շարունակվել են ավելի քան հազար տարի:

Հայկական լեռնաշխարհում վերջին թագավորությունը՝ Անի մայրաքաղաքով, ընկնում է 1065թ.-ին: Թագավորն, իր հետևորդներից շատերի հետ, նոր թագավորություն է հիմնում Միջերկրական ծովի ափերին գտնվող Կիլիկիայում, ներկայիս Թուրքիայի հարավում: Այնտեղ էլ տեղափոխվում է Կաթողիկոսի նստավայրը: Կիլիկիայի հայկական թագավորությունն ընկնում է 1375թ.-ին, սակայն թագավորության մայրաքաղաք Սիսը շարունակում է մնալ Կաթողիկոսի նստավայրը: 1441թ.-ին Էջմիածնում վերականգնվում

The seat at Sis later accepted the authority of Echmiadzin, but continued as a secondary seat until 1930, when it moved to Antelias in Lebanon. The Church also has two additional Patriarchs, one at Jerusalem and, since the fifteenth century, one at Constantinople.

With the Armenian homeland divided between the Ottoman Empire and Persia for centuries and large Armenian communities in Cilicia and later in Constantinople, the Classical Armenian language evolved into two major modern dialects, Western Armenian and Eastern Armenian. Classical Armenian continued in the liturgy as Latin did in the Catholic Church. Until the nineteenth century the vast majority of Armenian books were printed in Classical Armenian.

The Catholic Church converted many Apostolic Armenians, while relations between the two churches oscillated between hostility and cooperation. From about 1700 the Armenian Catholics known as Mkhitarists made major contributions to Armenian scholarship and printing. Christianity played a key role in the development of Armenia's book production. The Armenian priest Mesrop Mashtots created the Armenian alphabet around 405 and translated the Bible into Armenian. The alphabet of thirty-six letters, with two more letters added centuries later, remains unchanged and in use today.

է կաթողիկոսական աթոռը, սակայն Սիսի Կաթողիկոսը հրաժարական չի տալիս: Սիսի Աթոռը հետագայում ընդունում է Էջմիածնի իշխանությունը, բայց շարունակում է լինել երկրորդ Աթոռը մինչև 1930թ., երբ տեղափոխվում է Լիբանանի Անթիլիաս քաղաքը: Եկեղեցին ունի նաև երկու պատրիարք՝ Երուսաղեմում և, տասնհինգերորդ դարից՝ նաև Կոստանդնուպոլսում:

Քանի որ Հայոց աշխարհը դարեր շարունակ բաժանված է եղել Օսմանյան կայսրության և Պարսկաստանի միջև, և հոծ համայնքներ են ձևավորվել Կիլիկիայում, իսկ հետո՝ Կոստանդնուպոլսում, զրաբարը զարգանում է՝ բաժանվելով ժամանակակից երկու ճյուղի՝ արևմտահայերենի և արևելահայերենի: Գրաբարը պահպանվում է որպես եկեղեցու ծիսական լեզու, ինչպես լատիներենը՝ կաթոլիկ եկեղեցում: Մինչև տասնհինգերորդ դարը հայկական գրքերի մեծամասնությունը տպագրվում էր զրաբարով:

Կաթոլիկ եկեղեցին դավանափոխել է մեծ թվով առաքելական հայերի, իսկ երկու եկեղեցիների հարաբերությունները տատանվել են՝ լինելով երբեմն թշնամական, երբեմն էլ՝ համագործակցային: Մոտավորապես 1700թ.-ից սկսած, հայ կաթոլիկ միսիթարյանները խոշոր ներդրում են ունեցել հայկական գիտությունների ու տպագրության զարգացման գործում: Քրիստոնեությունը կենտրոնական դեր է ունեցել հայ գրքի արտադրության հարցում: Հայ հոգևորական Մեսրոպ Մաշտոցը մոտ 405թ.-ին ստեղծել է հայերենի այբուբենը և հայերեն թարգմանել Աստվածաշունչը: Երեսունվեց տառից բաղկացած այբուբենը, որին դարեր անց ևս երկու տառ է ավելացվել, մինչ օրս անփոփոխ կերպով օգտագործվում է:



Some fifth-century graffiti and seventh-century manuscript fragments show considerable diversity in the forms of the letters. The earliest dated stone inscriptions, beginning in 618, show the round variant of the formal upright uncial letters now known as *yerkatagir*. They resemble the capitals in most Armenian printing types today. The name *yerkatagir*, literally 'iron letters', alludes to the Old Testament, which mentions letters made with an iron pen, stylus or – for inscriptions in stone or plaster – chisel: Job 19:23-24 and Jeremiah 17:1.

A more angular form of *yerkatagir* may be as old as the round form, but a new angular and usually sloped style called *bologgir* appeared by the tenth century. It gradually supplanted *yerkatagir* as the principal book hand around the twelfth century, but *yerkatagir* remained in use for initials and headings. The round *yerkatagir* combined with the angular *bologgir* led to the capitals and lowercase of today's Armenian printing types. *Bologgir* means 'round letters'.

A more cursive yet upright style known as *notrgir*, literally 'notarial letters' flourished by the seventeenth-century. Printers used

Above in *bologgir* the names of the owners: Bishop Ter Arakel and Monk Mkrtich. Below it some illegible words in *notrgir* script. *Evangelarium*, 15th(?) century.

Հինգերորդ դարի որմնագրերում և յոթերորդ դարի ձեռագրերում օգտագործված տառերը ձևերի բազմազանությամբ են առանձնանում: 618 թվականով թվագրված քարե ամենահին արձանագրությունների վրա նկատելի է ներկայումս «երկաթագիր» կոչվող ուղղահայաց մեծատառերի բոլորակ տարբերակը: Դրանք նմանվում են ժամանակակից հայերեն տառատեսակներից շատերի մեծատառերին: «Երկաթագիր» անվանումը, որը նշանակում է «երկաթե գիր», ծագում է Հին Կտակարանից, որտեղ նշվում են երկաթե գրչով քարի կամ ծեփի վրա փորագրված տառերի մասին (Հոբի գրքում 19:23-24 և Յերեմիայի մարգարեության գրքում 17:1):

Հնարավոր է, որ երկաթագրի քիչ ավելի անկյունավոր ձևը նույնքան հին է, որքան բոլորակ ձևը: Այնուհանդերձ, տասներորդ դարում ի հայտ է գալիս նոր, անկյունավոր և, սովորաբար, շեղ գրատեսակ՝ «բոլորագիր»: Մտավորապես տասներկուերորդ դարում բոլորագիրը հետզհետե փոխարինում է երկաթագրին՝ որպես գրչագրի հիմնական ձև, բայց երկաթագիրը շարունակում է օգտագործվել սկզբնատառերի համար և վերնագրերում: Բոլորակ երկաթագիրն ու անկյունավոր բոլորագիրը հիմք են դարձել արդի հայերենի տպագրային տառատեսակների մեծատառերի ու փոքրատառերի համար: «Բոլորագիր» նշանակում է «բոլորակ գիր»:

Մտավորապես տասնյոթերորդ դարում ծաղկում է ապրում ավելի ձեռագրային, բայց՝ ուղղահայաց գրատեսակը, որը կոչվում է «նոտրագիր», այսինքն՝ նոտարական գրատեսակ: Տպագրիչները բոլորգիրն ու նոտրգիրն օգտագործում էին այնպես, ինչպես արևմտյան լատինականն ու իտալիկը: Տպագրական տառատեսակներում, բոլորգիր և

bologgir and notrgir much like Western roman and italic. In type the bologgir and notrgir lowercase usually share a single set of yerkatagir capitals. The notrgir gradually fell out of fashion in the late nineteenth and early twentieth centuries and is now little used.

The fully cursive handwriting known as *shghagir* was never rendered in metal type. Printers borrowed the term, however, to describe types introduced in the mid-nineteenth century, influenced by Western italics. They also introduced sans-serif and other Western styles around that time.

Decorative initials in traditional Armenian manuscripts followed *yerkatagir* forms, but were constructed from stylized plants or animals. These were often rendered in printed books by woodcut initials: most commonly *tsaghkagir* or floral letters, usually braided or interlaced, and *dzagagir*, literally 'bird letters', sometimes mixing bird forms with fish, other animals or even human figures.

Armenians printed books in Europe for two-hundred and sixty years before they printed any in Armenia, and they all used Western production techniques. Some processes were mechanized in the nineteenth and early twentieth century, but the principles changed little until after World War II. The punchcutter produced a steel punch for each letter or other character needed for the fount, using files and gravers to form the character in high relief, actual size and in mirror image, on the end of small bar of steel. Blackening the face


Վերը, բոլորգրով՝ «Տեր Առաքել Եպիսկոպոսն է և Մկրտիչ աբեղայն ստացաւ Բրիստոսի Աստվածայեն տառիս». ստորև՝ գրեթե անընթացելի նոտրգիր գրություն. Ավետարան, 15-րդ (?) դար

նոտրգիր փոքրատառերի հետ, ընդհանուր առմամբ, նույն երկաթագիր մեծատառերն էին օգտագործվում: Տասներներորդ դարի վերջերին ու քսաներորդ դարի սկզբներին նոտրգիր գործածումը դադարում է և այժմ հազվադեպ է հանդիպում:

«Շղագիր» կոչված լիովին շեղ ձեռագրային գրատեսակը երբևէ չի վերածվել ձուլածո տառատեսակի: Տպագրիչները, այնուհանդերձ, այս անունով էին կոչում արևմտյան իտալիկ տառատեսակների ազդեցությամբ տասներներորդ դարի կեսերին ստեղծված տառատեսակները: Այդ նույն ժամանակաշրջանում հայտնվում են նաև առանց ծայրատեղերի և այլ արևմտյան ոճերով տառատեսակներ:

Հայկական ավանդական ձեռագրերի գեղազարդ սկզբնատառերը, բաղկացած ոճավորված բույսերի ու կենդանիների պատկերներից, երկաթագիր ոճով էին արվում: Տպագիր գրքերում սկզբնատառերը հաճախ փայտի վրա էին փորագրված, ամենից հաճախ կիրառվում էր «ծաղկագիրը» կամ ծաղկած գիրը՝ հյուսված կամ ժանեկաձև բույսերից, և «թռչնագիրը» կամ «ձագագիրը», բառացիորեն՝ թռչունի գիրը, որում երբեմն թռչունների կերպարները խառնվում էին ձկների, այլ կենդանիների կամ մարդկային կերպարների հետ:

Հայերը երկու հարյուր վաթսույն տարի շարունակ գիրք էին տպել Եվրոպայում՝ նախքան Հայաստանում որևէ գրքի տպագրումը, և այդ գործընթացում բոլորն էլ կիրառում էին արևմտյան տեխնոլոգիաները: Տասներներորդ դարում և քսաներորդ դարի սկզբին գործընթացների մի մասը մեքենայացվել էին, բայց սկզբունքները գրեթե փոփոխության չեն ենթարկվում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Փորագրիչը



Evangelarium, 15th(?)
century. The presentation
of Jesus in the temple and
his baptism in the River
Jordan.

of the punch with soot and stamping it on paper showed the letters much as they would appear in print.

When the punchcutter or patron deemed the letterforms satisfactory, each punch was hardened, tempered, and struck into a small block of copper. This block, once filed to adjust the alignment and spacing, was called a matrix. The typesetter used a single adjustable mould with each matrix in turn to cast all characters in the fount. The mould allowed the width of the piece of cast type to vary from letter to letter, while its 'body' – the vertical dimension on the printed page – remained exactly the same. Body sizes were designated with standardized names or from the nineteenth century with points: either the Didot point used in most of Europe or the slightly smaller Anglo-American point, close to that still used in many computers.

The compositor set the type letter by letter, placing the pieces of metal type in rows to form the lines in a column of text. When enough type had been set for one or more often both sides of a whole sheet of paper, the metal type was divided into pages. These pages were assembled to make a 'forme' for printing one side of a sheet, usually with a second forme for printing the other side, so that the sheet when folded would give four, eight, sixteen, twenty-four or more pages in the proper order. Each forme was laid on the bed of the printing press, an oil-based ink was applied to the face of the type, and the dampened paper pressed against the type to print one side of the sheet. The type was

Ավետարան, 15-րդ (?) դար. Մանուկ Հիսուսի ընծայումը տաճարին, և Քրիստոսի մկրտությունը Հորդանան գետում

տպագրական տառատեսակի յուրաքանչյուր տառի կամ այլ գրանշանի պողպատյա տառահայր էր պատրաստում՝ խարտոցների ու փորիչների միջոցով բարձրաքանակ փորագրելով գրանշանի իրական չափով ու հայելային արտացոլմամբ, և զետեղելով այն պողպատյա ձողիկի ծայրին: Մրով սևացված տառահայրի երեսը դրոշմելով թղթի վրա, երևակվում էր տառն այնպես, ինչպես կստացվեր տպագրման ժամանակ:

Երբ փորագրիչին կամ վարպետին տառերի ձևերը բավարարում էին, յուրաքանչյուր տառահայրը կոփվում էր և պղնձյա սալիկին խփվում: Այս սալիկը խարտվում էր, տառերի հավասարությունն ու հեռավորությունը կարգավորելու համար, ինչից հետո կոչվում էր մայր տառ: Գրանշանից մայր տառերը մեկ-առ-մեկ միևնույն շարժական կաղապարի մեջ էր տեղադրում, որպեսզի ձուլվեն հավաքածուի բոլոր գրանշանները: Կաղապարը թույլ էր տալիս ձուլվող տառատեսակի տառերի լայնությունը փոխել, մինչդեռ «մարմինը»՝ տպագրված էջի վրա ուղղահայաց չափը, միևնույն էր լինում: Մարմնի չափերին պայմանական անուններ էին տրվում, իսկ տասնիմեկերորդ դարից՝ հաշվում էին կետաչափերով: Կամ «Իդո» կետաչափով, որը օգտագործվում է եվրոպական երկրներից շատերում, կամ քիչ ավելի փոքր անգլո-ամերիկական կետաչափով, որը մինչ օրս օգտագործվում է շատ համակարգիչներում:

Գրաշարը տառ-առ-տառ շարում էր տեքստը, մետաղյա տպատառերը տեղադրելով շարքերում, որպեսզի կազմի տեքստի պունժի տողերը: Երբ շարվածքը բավարարվում էր թղթի թերթի մեկ կամ երկու երեսը լցնելու համար, մետաղյա տպատառերի շարվածքները քաժանվում էին էջերի: Էջերը միավորվում էին, որպեսզի կազմեն «տպատախտակ», թղթի

inked again and another sheet printed until hundreds or thousands of copies were printed as needed. Once dry, the other side could be printed in the same manner. The type was then cleaned and returned to the cases for setting the type to print more sheets until the book was complete.

Until the nineteenth century Armenian and Western printers delivered most books to publishers or booksellers as unbound printed sheets. With occasional exceptions, bindings were commissioned by the final owner or the bookseller. They therefore provide information about the history of the books after they left the printing office.

Books printed using Armenian type can be divided into three principal categories in addition to, though often related to, their varying subject matter. Some were printed or commissioned by Armenians for the Armenian community; others by non-Armenians in an attempt to convert Armenians to a different religion, often aided by Armenians who had already been converted. Finally, Western scholars studying the Armenian language or culture produced books with at least some passages set in Armenian type, usually with help from native speakers. The boundaries between these categories sometimes blurred, but most printing offices concentrated primarily on one of the three. All played important roles in the development and spread of Armenian books and printing during the last five hundred years.

Evangelarium, 15th(?) century. Nativity scene.

Ավետարան, 15-րդ (?) դար. Հիսուս Քրիստոսի ծննդյան տեսարան

մի երեսը տպագրելու համար: Ընդհանրապես երկրորդ տպատախտակը պատրաստվում էր նույն ժամանակ՝ թղթի մյուս երեսին տպելու համար այնպես, որ թուղթը ծալելիս ստացվեր չորս, ութ, տասնվեց, քսանչորս կամ ավելի շատ էջ՝ ճիշտ հերթականությամբ: Տպատախտակը տեղադրվում էր տպագրական մամլիչի սեղանի վրա, յուղի հիման վրա պատրաստված թանաք էր քսվում տպատառերի մակերեսին, և խոնավեցված թուղթը ճնշվում էր գրաշարվածքին, որպեսզի տպագրվի թղթի մեկ երեսը: Գրաշարվածքին նորից թանաք էր քսվում և նոր թուղթ տպագրվում, և այսպես շարունակ՝ մինչև հարյուրավոր կամ հազարավոր թղթեր տպագրվեին, ըստ անհրաժեշտ քանակի: Չորանալուց հետո, թղթերի մյուս երեսն էր տպագրվում՝ նույն ձևով: Հետո տպատառերը մաքրվում էին և վերադարձվում արկղերը, ինչից հետո նոր շարվածքներ էր պատրաստվում՝ մինչև գրքի տպագրումն ավարտելը:

Մինչև տասնիններորդ դարը, հայ և արևմտյան տպագրիչները գրքերից շատերը հրատարակիչներին կամ գրավաճառներին էին հանձնում առանձին թերթերի տեսքով՝ անկազմ: Եթե չհաշվենք եզակի բացառությունները, գրքի կազմը պատվիրում էր վերջնական գնորդը կամ գրավաճառը: Այդ պատճառով, գրքերի կազմերը տեղեկություններ են հաղորդում տպարանը լքելուց հետո գրքերի անցած ճանապարհի մասին:



Հայերեն տառատեսակներով տպագրված գրքերը կարելի է բաժանել երեք հիմնական դասի՝ ի լրումն տարբերվող թեմաների, որոնք, այնուհանդերձ որոշակի առնչություն ունեն: Մի դասի գրքերը հայերն էին տպագրում կամ պատվիրում հայ համայնքի համար, մյուս գրքերը՝ օտարներն էին տպագրում, որպեսզի հայերին դավանափոխ անեն, երբեմն՝ դավանափոխված հայերի օգնությամբ: Եվ, վերջապես, հայոց լեզուն ու մշակույթը ուսումնասիրող արևմտյան գիտնականներն էին լույս ընծայում գրքեր, որոնցում առնվազն մի քանի հատված տպագրված էին լինում հայերեն տպատառերով՝ սովորաբար բնիկ խոսողների օգնությամբ: Թեև այս դասերը բաժանող սահմանները երբեմն աղուտ էին, բայց տպարանների մեծ մասը դրանցից մեկի վրա էր կենտրոնանում: Դրանք բոլորն էլ անցած հինգ հարյուր տարվա ընթացքում, կարևոր դեր են խաղացել հայ գրքի և տպագրության զարգացման ու տարածման գործում:





VENETIA.

MURAN

S. Clara Maria

S. Secondo

S. Alufi

S. M. della

S. Filia

S. Catharina

S. M. & S. Angeli

S. Michael

S. Christophoro

Crocefioro

Scola di S. Marc

S. Joan et Paul

GRAN DO S. M. MARCO

CANAL DE LA GIUDECA

LA GIUDECA

S. Joan Bat

Georgia Magiore

Barabolo

S. Andrea

Maria Mem

S. Nicol

S. Eufemia

S. Michele

La Curia

S. Gregorio

La Tronca

La Croce

S. Jacob Padua

S. Luca

S. Marco

S. Maria

S. Giovanni

S. Pietro

S. Marco

S. Marco

S. Marco

S. Marco

S. Marco

S. Marco

S. Marco

S. Marco



I

Armenians print for themselves and Catholics print to convert them

The Armenian Apostolic Church had long helped to define national culture, but when the Cilician Armenian Kingdom fell in 1375, the Church remained as nearly the only unifying institution. Armenians had been establishing colonies scattered through Europe and Asia for centuries, but in the fourteenth, fifteenth and sixteenth centuries, with the homeland devastated by wars, the colonies evolved into a powerful mercantile network. The Ottoman conquest of Byzantine Constantinople (Istanbul) in 1453 united it and part of the Armenian homeland – a large part after 1514 – under a single government. Constantinople gradually regained its position as both the most populous city of Europe and the centre of trade between East and West. It housed the largest Armenian population outside the homeland.

The Venetian Republic suffered from the fall of Constantinople and from the Ottoman conquest of its own colonies in the East, but the city of Venice retained its status as the most important trading centre of the Western world and one of the most populous cities, after Paris and Genoa. It housed the largest Armenian colony in the West and served as the primary source for Western technology and culture in the East.

As the Ottomans conquered Constantinople, Johann Gutenberg began to print his 42-line Bible in Mainz,

Դ	ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	տ	ր	ա	ւ	ն
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	տ	ր	ա	ւ	ն	
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	տ	ր	ա	ւ	ն	
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	տ	ր	ա	ւ	ն	
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	տ	ր	ա	ւ	ն	
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	տ	ր	ա	ւ	ն	
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	տ	ր	ա	ւ	ն	
ա	բ	գ	դ	ե	զ	է	ը	թ	ր	ս	տ	ր	ա	ւ	ն	

Germany. The sack of Mainz in 1462 dispersed its workmen and several settled in Venice, where Nicolas Jenson established his printing office in 1470. This helped make Venice the world's most important centre of printing and of the book trade in general. While printing rapidly spread to other cities and countries, Venice

retained its role as the most important centre to about 1515, with Aldus Manutius as the leading figure in the last twenty years. The city of Venice therefore attracted not only printers, but also typographic punchcutters, paper makers and merchants, book binders and workmen in other collateral trades. They came to Venice not only from the Italian states, but also from Germany, France, the Low Countries and elsewhere.

A woodcut Armenian alphabet from the 1488 Dutch edition of Bernard von Breydenbach's *Travels in the Holy Land*.

Փայտափոր հայկական այբուբեն, Բերնարդ վոն Բրեյդենբախի *Խանապարհորդություններ Սուրբ Երկրում* գրքի 1488 թվականի հղանդերեն հրատարակությունում

20 View of Venice, late 16th century.

Վենետիկի տեսարան, ուշ 16-րդ դարում

Գլուխ Ա. Հայերն իրենց համար են տպագրում, կաթոլիկները՝ հայերին կաթոլիկ դարձնելու նպատակով

Հայ Առաքելական Եկեղեցին, որը հնուց ի վեր հայկական մշակույթը ձևավորող կարևոր գործոն է եղել, Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375թ.) հայերին միավորող գրեթե միակ կառույցն է դարձել: Դարեր շարունակ հայերը գաղութներ էին հիմնում Եվրոպայում և Ասիայում, սակայն տասնչորսերորդ, տասնհինգերորդ ու տասնվեցերորդ դարերում, երբ հայոց լեռնաշխարհը ավերվում էր պատերազմների պատճառով, գաղութները վերածվում են հզոր առևտրային ցանցի: Օսմանյան ուժերի կողմից 1453թ. բյուզանդական Կոստանդնուպոլսի (Ստամբուլ) նվաճումից հետո, այն հայոց լեռնաշխարհի մի մասի (1514 թվականից հետո՝ մեծ մասի) հետ միևնույն կառավարման ներքո հայտնվեց: Կոստանդնուպոլսը հետզհետե վերականգնեց իր դիրքը թե՛ որպես ամենամեծ բնակչություն ունեցող եվրոպական քաղաք, և թե՛ որպես Արևելքի ու Արևմուտքի միջև առևտրային հանգույց: Կոստանդնուպոլսը հայրենիքից դուրս բնակվող ամենամեծ հայ համայնքն ուներ:

Վենետիկյան Հանրապետությունը տուժեց Կոստանդնուպոլսի անկման և իր արևելյան գաղութների՝ օսմանյան զավթման արդյունքում, սակայն Վենետիկ քաղաքը պահպանեց

իր՝ արևմտյան աշխարհի կարևորագույն առևտրային կենտրոնի դիրքը և ամենամեծ բնակչություն ունեցող քաղաքներից մեկը մնաց՝ զիջելով միայն Փարիզին ու Ջենովային: Վենետիկն ուներ հայկական ամենամեծ գաղութը Արևմուտքում, և առաջնային օղակ էր հանդիսանում դեպի արևելք արևմտյան տեխնոլոգիաների ու մշակույթի տարածման համար:

Օսմանյան ուժերի կողմից Կոստանդնուպոլսի գրավման ժամանակահատվածում Գերմանիայի Մայնց քաղաքում Յոհան Գուտենբերգը սկսում է տպագրել իր 42 տողանոց Աստվածաշունչը: 1462թ. Մայնցի թալանից փախչող արհեստավորները սփռվում են Եվրոպայով մեկ, և նրանցից ոմանք հաստատվում են Վենետիկում, որտեղ 1470թ.-ին Նիկոլաս Յենսոնը հիմնում է իր տպարանը: Սա էլ պատճառ է դառնում, որպեսզի Վենետիկը վերածվի գրատպության և, ընդհանրապես, գրավաճառության աշխարհի կարևորագույն կենտրոնի: Չնայած տպագրության սրընթաց տարածմանն այլ քաղաքներում ու երկրներում, Վենետիկը որպես ամենակարևոր կենտրոն է մնում մինչև 1515թ., որի վերջին քսան տարվա ընթացքում առաջատար դիրք է զբաղեցնում Ալդուս Մինուցիուսը: Այսպիսով, Վենետիկը դեպի իրեն էր ձգում ոչ միայն տպագրիչների, այլև տպատառերի փորագրիչների, թուղթ արտադրողների ու վաճառողների, գրքի կազմարարների և գրատպական գործի այլ վարպետների: Նրանք Վենետիկ էին գալիս ոչ միայն Իտալիայի տարբեր իշխանություններից, այլև Գերմանիայից, Ֆրանսիայից, Նիդերլանդներից և այլ երկրներից:



Venice 1512

This unique concentration of book trade skills made Venice the city of choice for the establishment of printing in Armenian type. A rather crude Armenian alphabet printed from a woodcut at Mainz in 1486 gave many Europeans their first glimpse of Armenian, but the economical mass production of Armenian texts depended on printing from cast type.¹ Hakob Meghapart, who produced the first typographic books in Armenian, used a publisher's device with initials that have been interpreted to suggest he was an Armenian priest, but we know almost nothing about him. His five known books, produced in Venice from 1511/12 to 1513/14 are fairly modest works of a popular nature but well made, intended for travelling merchants: a prayer book, a book of astrology and medicine, a calendar, a missal and a book of religious poetry, some with explicit references to travel away from home.²

Nearly every account of Meghapart's books says his large bolorgir, sometimes printed in red and black, follows manuscript hands, and that his only colophon refers to it as 'writing'. As the first Armenian printing type it could hardly have followed anything other than a manuscript hand, yet I have seen no manuscript that closely resembles it. The type can be described as 'calligraphic' in the sense that it shows pen-influenced leading and final strokes and other cursive characteristics not found in every manuscript hand, and it

appears to competently render a nearly upright manuscript bolorgir hand. I suspect it followed manuscripts that were then quite recent, but I can't rule out sources even as early as the thirteenth century.³



The first printed book in Armenian: Hakob Meghapart, *Urbatagirk* or *The Friday Book*, Venice 1511-12.

Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ Հակոբ Մեղապարտի Ուրբատագիրի, Վենետիկ, 1511-1512 թ.

Վենետիկ՝ 1512թ.

Գրավաճառություն հմտությունների այս եզակի կենտրոնացումը պատճառ դարձավ որ հենց Վենետիկում հայերեն տպագրության հիմքը դրվի: 1486թ.-ին Մայնց քաղաքում փայտից փորագրված բավականին կոպիտ հայկական այբուբենի միջոցով իրականացված տպագրությունը շատ եվրոպացիների առաջին անգամ հնարավորություն է տալիս տեսնելու հայերենը, բայց հայատառ տեքստերի գանգվածային խնայողական արտադրությունը հնարավոր էր միայն ձուլածո տպատառերով գրատպության իրականացման պարագայում:¹ Հայատառ առաջին տպագիր գրքերը լույս է ընծայում Հակոբ Մեղապարտը, ում նշանադրոշմի սկզբնատառերից կարելի է ենթադրել, որ հոգևորական էր, սակայն իրականում շատ քիչ բան է հայտնի նրա մասին: Վենետիկում 1512-1514թթ. նրա տպագրած հինգ գրքերը բավականին համեստ, բայց լավ պատրաստված հանրամատչելի գործեր են, որոնք նախատեսված էին շրջիկ վաճառականների համար՝ աղոթագիրք, աստղաբանության ու բժշկագիտության գիրք, օրացույց, պատարագատետր և հոգևոր բանաստեղծությունների ժողովածու, որոնցից մի քանիսը անդրադառնում են հեռավոր ճանապարհորդությունների թեմային:²

Հակոբ Մեղապարտի գրքերին առնչվող գրեթե բոլոր գրություններում նշվում է, որ նրա մեծ բոլորգիրը՝ երբեմն տպագրված սև ու կարմիր գույներով, ընդօրինակում է գրչագիր ձևերին, և իր միակ հիշատակարանում Մեղապարտը բնօրինակը անվանում է՝ «գիր»: Որպես հայատառ առաջին տպագրության տառատեսակ, այն չէր կարող

չնմանակել ձեռագրերում օգտագործվող ձևերը, բայց ես չեմ տեսել ձեռագիր մատյան, որն օգտագործեր նրա տառատեսակին նմանվող ձևեր: Տառատեսակը կարելի է անվանել «գեղագիր», որովհետև ունի գրչի սկզբնական ու ավարտական հարվածին բնորոշ և այլ ձեռագրային հատկություններ, որոնք ամեն գրչագրում չէ, որ առկա են: Ըստ երևույթին, նույնանում է գրեթե ուղղահայաց բոլորգիր գրչագիր մի գրածևի, որը, ենթադրում եմ, ընդօրինակում է ժամանակի ամենավերջին ձեռագիր մատյանները, սակայն չեմ կարող բացատրել ավելի վաղ նույնիսկ տասներեքերորդ դարի սկզբնաղբյուրները:³

Տառատեսակը կրում է փայտափորագրության որոշ աղբյուրություններ, ինչի շնորհիվ այն հիանալիորեն զուգակցվում է փայտափոր զարդանախշերի հետ: Գրքերը ցուցադրում են հյուսված բույսերից կազմված հրաշալի գլխատառեր՝ հայ ավանդական տառատեսակ, որը կոչվում է ծաղկագիր: Մեղապարտյան ծաղկագրերը, սակայն, ավելի երկրաչափական են, քան տասնչորսերորդ ու տասնհինգերորդ դարերի ձեռագրերում իմ տեսած ամենամոտ օրինակները: Նրա գրքերում կան նաև փոքրաթիվ փայտափոր պարուրազարդեր և այլ գեղազարդ տարրեր:

Ժամանակակից տպագրիչներին երկաթագիրը հայտնի է որպես բոլորակ և սովորաբար ուղղահայաց ունցիա (գլխատառ), որը նմանվում է հնագույն հայկական ժայռափոր արձանագրություններին ու յոթերորդ դարի գրչագիր գրածևներին: Անկյունավոր ու սովորաբար շեղ բոլորգիր փոքրատառերը, որոնք արդեն գործածվում էին տասներորդ դարում, մոտ 1300թ.-ին փոխարինեցին երկաթագիրին՝ որպես գլխավոր տառատեսակի:

The type may even show some woodcut influences, suiting it nicely to use with the woodcut decorative material. The books contain charming initials made from stylized braided plant forms, a traditional Armenian style called tsaghkagir. Meghpart's are more geometric than the closest examples I have seen in manuscripts, which date from the fourteenth and fifteenth centuries. His books also use an occasional woodcut scroll panel or other decorative element.

Printers today know the yerkatagir as a round and usually upright uncial quite close to the earliest Armenian stone-cut inscriptions and manuscript hands of the 600s. The angular and usually sloped bolorgir minuscule, found already in the 900s, replaced yerkatagir as the dominant book hand around 1300. But an angular and usually sloped yerkatagir appeared alongside these until the 1200s and some yerkatagir hands mixed round and angular forms. Both round and angular yerkatagir continued to appear as occasional capitals or in headings for centuries after the bolorgir replaced them for the main text of most manuscripts. Many letters in the angular yerkatagir have the same basic form as the bolorgir, so to the modern eye it appears to mix yerkatagir and bolorgir. Some manuscripts use sloped angular (or mixed round and angular) yerkatagir together with bolorgir, much like the upper and lowercase of a roman type. But the same manuscripts often use upright round yerkatagir for initials or headings. These capitals in bolorgir manuscripts have not been studied as thoroughly as the hands used for the main texts or the larger decorated initials.



Hakob Meghpart,
Tagharan, Venice 1513.

Հակոբ Մեղապարտ, Մաղարան, Վենետիկ, 1513 թ.

Այնուհանդերձ, անկյունավոր ու առավելապես շեղ երկաթագիրը շարունակվեց գործածվել բոլորգրի կողքին մինչև 1200-ականները, և որոշ երկաթագիր գրություններում խառնվում են բոլորակ և անկյունավոր գրածները: Թե՛ բոլորակ, և թե՛ անկյունավոր երկաթագրերը դարեր անց դեռ երբեմն-երբեմն օգտագործվում էին որպես մեծատառեր և վերնագրային տառեր այն դեպքում, երբ ձեռագրերի մեծամասնության հիմնական տեքստերում երկաթագիրը վաղուց փոխարինվել էր բոլորգրով: Անկյունավոր երկաթագրի շատ տառեր բոլորգրի նույն հիմնական ձևն ունեն, ինչի պատճառով այսօր մեր աչքին դրանք երկաթագրի ու բոլորգրի խառնուրդ են թվում: Որոշ ձեռագրերում գործածվում է շեղ անկյունավոր (կամ խառն բոլորակ ու անկյունավոր) երկաթագիրը բոլորգրի հետ միասին, գրեթե նույն կերպ, ինչպես լատինական տառատեսակի մեծատառերն ու փոքրատառերը: Սակայն այդ նույն ձեռագրերում հաճախ ուղղահայաց բոլորակ երկաթագիր է գործածվում սկզբնատառերի կամ վերնագրերի համար: Բոլորգիր ձեռագրերում օգտագործված այս մեծատառերն այնքան մանրամասնորեն ուսումնասիրված չեն, որքան տեքստային գրածները կամ ավելի մեծ գեղազարդ սկզբնագրերը:

Ինչպես վաղ շրջանի լատինական տպագրական տառատեսակներում միաձուլված էին Հռոմեական կայսերության արձանագրություններում օգտագործված մեծատառերն ու գրական ձեռագրերում կիրառված փոքրատառ գրածները՝ կազմելով մի առանձին տառատեսակ իր մեծատառերով ու փոքրատառերով, այնպես էլ առաջին հայկական տպատառ տառատեսակները կազմվում էին երկաթագիր մեծատառերից ու բոլորգիր փոքրատառերից: Լատինական տպատառերի փորագրիչները շուտով միավորեցին

Just as early roman printing types brought together Imperial Roman inscriptional capitals and humanistic minuscule manuscript hands to form a single type with upper and lowercase, the first Armenian printing types made an upper and lowercase from yerkatagir and bolorgir. Punchcutters making roman types quickly assimilated the upper and lowercase to give them a degree of stylistic uniformity in spite of their differing forms. The lowercase, for example, took its serif structure from the capitals. The upper and lowercase of Armenian types retained a greater degree of independence. They were used together, but contrasted more than they matched.

In printed Armenian books of the sixteenth and early seventeenth century, the capitals may be upright or sloped, but in a single set some letters may show round forms and others angular (square or trapezoidal). To modern eyes the 'uppercase' often seems the weakest element in these early faces. The yerkatagir capitals that accompany Meghpart's bolorgir stand more or



մեծատառերն ու փոքրատառերը՝ ստեղծելով որոշակի ոճական միասնություն՝ չնայած տարբերվող ձևերին: Օրինակ՝ փոքրատառերի ծայրատ եզրերը մեծատառերից են վերցված: Հայերեն տառատեսակների մեծատառերն ու փոքրատառերը ավելի շատ պահպանեցին անկախությունը միմյանցից: Օգտագործվում էին կողք-կողքի, սակայն ավելի տարբերվում էին, քան՝ նմանվում:

Տասնվեցերորդ և վաղ տասնյոթերորդ դարերում տպագրված հայկական գրքերի մեծատառերը ուղղահայաց, կամ՝ շեղ էին, սակայն միևնույն հավաքածուի մեջ որոշ տառատեսակներ կարող էին բոլորակ, իսկ մյուսները՝ անկյունավոր (քառակուսի կամ սեղանաձև) լինել: Ժամանակակից պատկերացումներով, այս վաղ շրջանի տպատառերի մեջ «մեծատառերը» հաճախ ամենաթույլ տարրն են թվում: Մեղապարտի բոլորգրին ուղեկցող երկաթագիր մեծատառերը գրեթե ուղղահայաց են (տառերից մի քանիսը թեթև թեթու լինում ունեն), Բ, Գ, Մ ու Ռ տառերը բոլորակ են, մինչդեռ տասնյակ այլ տառեր անկյունավոր ձևեր ունեն:

Պարզ չէ, թե ինչու Մեղապարտի խոստումնալից մուտքը հայկական գրատպության ասպարեզ այդքան կարճ կյանք ունեցավ: Հնարավոր է, որ օգտվել է արտոնագրի տված կարճատև հնարավորությունից և ստիպված է եղել փակել իր տպարանը, երբ նորոգելու ժամանակն է եկել: Հնարավոր է նաև, որ հանդիպել է Հռոմեական Կաթոլիկ եկեղացու դիմադրությանը, կամ պարզապես չի կարողացել հաղթահարել գրատպությունը շահավետ դարձնելու դժվարությունները:

less upright (some letters slope slightly) and show a round Գ, Գ, Խ, Մ and Ռ, while a dozen letters show angular forms.


We can only guess why Meghapat's promising beginning to Armenian printing proved so short-lived. He may possibly have taken advantage of the brief lapse of a privilege and had to close his press when it was renewed⁴, but he could also have faced opposition from the Roman Catholic Church or simply failed to overcome the difficulties of making printing profitable.

Venice 1565

Meghapat had no real successor for fifty years, though an Italian scholar at Padova used Armenian type for one book after twenty-five (see below). Relations between the Armenian Apostolic and Roman Catholic churches had been strained for centuries, but some people from both camps continued efforts to reunite them or at least ally them against what many considered a more dangerous enemy: the Islamic religion. In 1562 the future Catholicos Mikayel in Armenia sent Abgar Tokhatetsi to Italy, accompanied by his son and an Armenian priest, to seek aid for Christian Armenia.

As representatives of the Armenian Apostolic Church, they hoped to convince the Pope it was not heretical and that Western Christendom should support it in its struggle against the two great Islamic powers that now reigned over the former kingdom: the Sunni Ottoman Empire in

Hakob Meghapat, *Parzatumar*, Venice 1512/13.



Հակոբ Մեղապարտ, *Պարզապտուճար*, Վենետիկ, 1512/1513 թ.

որ նրան թույլատրի աշխարհով մեկ սփռված քրիստոնյա հայության կարիքները հոգալու նպատակով հայկական տպարան հիմնել:

Հայերից ոմանք հռոմեական կաթոլիկ եկեղեցու հետ ձևականորեն համաձայնության գալը չնչին զոհաբերություն էին համարում, եթե դրանով հնարավորություն էր ստեղծվում աջակցել հայերի ինքնավարությանը: Այս համոզմունքը և միավորմանն ուղղված ջանքերը փոքրիշատե մեղմեցին առաքելադավան և կաթոլիկ հայերի տարբերությունները: Հռոմի պապը դավանափոխ է անում Աբգարի որդի Սուլթանշահին, որը Հռոմում մնում և կաթոլիկ հոգևորական է դառնում՝ Բարտողոմեոս Աբգարոս անունով: Աբգարն ինքն է տեղափոխվում Վենետիկ, ուր փորագրել է տալիս երկու չափի բոլորգիր տատետեսակ և սարքավորում իր տպարանը՝ 1565թ. տպագրելով օրացույց ու սաղմոսարան:

Այդ նույն տարի մահանում է Պիոս IV-ը: Նրան հաջորդող Պիոս V պապը եռանդուն բարեփոխիչ էր, սակայն նույնպիսի եռանդուն հետևորդ էր խստագույն ուղղափառության՝ ծառայելով որպես Մեծ հավատաքննիչ: Սա չէր համակրում կաթոլիկների կողմից հերձվածող համարվող Հայ Առաքելական եկեղեցուն: Հավանաբար Աբգարը հույս ուներ իր սաղմոսարանից հետո տպագրել առավել փառահեղ գործեր, երևի նույնիսկ ամբողջական Աստվածաշունչ: Շատ հնարավոր է, որ Աստվածաշնչի տպագրությանը շատ հարմար իր փոքր տառատեսակը հենց այդ նպատակով էլ պատրաստվել էր, քանի որ այն շատ քիչ է օգտագործել իր գրքերում: Սակայն նրա բոլոր հույսերն ի դերն են ելնում կաթոլիկական գրաքննության զավազանի ներքո:

Վենետիկ՝ 1565թ.

Հիսուն տարվա ընթացքում Մեղապարտի գործն իրականում շարունակող չեղավ, թեև Պարզապարտից քսանհինգ տարի անց (տես՝ ստորև): Դարեր շարունակ Հայ Առաքելական և Հռոմեական կաթոլիկ եկեղեցիների հարաբերությունները լարված են եղել, բայց երկու կողմից էլ կային մարդիկ, որ շարունակում էին ջանքեր գործադրել միավորելու նրանց, կամ՝ առնվազն դաշնակիցներ դարձնելու ավելի վտանգավոր համարվող թշնամու՝ իսլամական կրոնի դեմ:

1562թ. ին ասպագա Միքայել կաթողիկոսը Աբգար Թոխաթեցուն, վերջինիս որդու ու մի հոգևորականի հետ, Հայաստանից Իտալիա ուղարկեց՝ քրիստոնեական Հայաստանի համար օգնություն հայցելու նպատակով: Հույս ունեին, որ վերջապես կկարողանան համոզել Հռոմի պապին, թե Հայկական Առաքելական եկեղեցին հերձվածողական չէ, և որ արևմտյան քրիստոնյաները կաջակցեն հայկական եկեղեցուն իր պայքարում՝ նախկին Հայկական թագավորության վրա իշխող երկու մեծ իսլամական տերությունների դեմ՝ Թուրքական Օսմանյան կայսերության, որը Արևմտյան Հայաստանի վրա էր իշխում, և Պարսկաստանի Սեֆյան տոհմի, որն իշխում էր Արևելյան Հայաստանի վրա:

Վենետիկի կանգառից հետո, 1564թ. Աբգարը հասնում է Հռոմ, որտեղ ընդունելության արժանանում պապ Պիոս IV-ի կողմից: Հայաստանի համար աջակցություն ստանալու ջանքերն ասպարդյուն են անցնում, բայց Աբգարին հաջողվում է համոզել Հռոմի պապին,



Turkey, which controlled western Armenia and the Shi'ite Safavid dynasty in Persia, which controlled eastern Armenia. After stopping in Venice, Abgar reached Rome in 1564, when he was granted an audience with Pope Pius IV. The effort to secure support for Armenia proved futile, but Abgar convinced the Pope to grant him permission to set up an Armenian printing office to supply the needs of Armenian Christians around the world.

Many Armenians found at least outward conformity to the Roman Catholic Church a small price to pay if it might secure support for Armenian self-rule. This and the efforts for unification slightly blurred the distinction between Apostolic and Catholic Armenians. The Pope christened Abgar's son Sultanshah, who remained in Rome as a Catholic priest under the name Bartholomeo Abagaro. Abgar himself moved to Venice, where he had two sizes of bolorgir type cut and set up his press, printing a calendar and a psalm book in 1565.

Pius IV died in that year. His successor Pius V was a zealous reformer, but also a zealous adherent of strict orthodoxy who had served as Grand Inquisitor. He had little sympathy for the Armenian Apostolic Church, deemed heretical by the Vatican. Abgar probably hoped to follow his psalm book with more ambitious works, perhaps even a complete Armenian Bible. His smaller type, well suited to a Bible, may have been cut for that purpose, for he made little use of it in his known books. But any such hopes were dashed by the sceptre of Catholic censorship.

View of Constantinople, late 16th century.



Constantinople 1567

Ironically the Ottoman Empire now looked more inviting. While the Armenian homeland had been devastated as a battleground in the wars between the Ottomans and the Safavids, the Ottoman conquest of Constantinople had breathed new life into the city and allowed Armenians to flourish there. The Ottoman Sultan officially recognized the Eastern Orthodox Church of the old Byzantine Empire, the Jews and gradually also the Armenian Apostolic Church, each forming a 'millet' within Ottoman society.

Armenians were free to practice their religion and subject to their own laws rather than Islamic law, with the newly created Patriarch of Constantinople gradually assuming leadership of Armenians throughout the Empire. They did not have the full rights of Muslim citizens and were subject to additional taxes, but they could attain positions of prestige and influence, not only within their own community but in the Ottoman world itself. Many showpieces of Constantinople's 'Islamic' art and architecture were created by Armenian craftsmen who found favour with the Sultan. The dividing line between providing opportunities for talented Armenians and coercing them was sometimes blurred. The fact that a single government now ruled both Constantinople and a large part of the Armenian homeland also facilitated communication and trade with the homeland. As a result the Armenian community in Constantinople regarded the city more as a permanent home than as a foreign colony.

Կոստանդնուպոլսի տեսարան, ուշ 16-րդ դարում

Կոստանդնուպոլիս՝ 1567թ.

Թերևս ճակատագրի հեզմանքն է, որ այդ ժամանակ Օսմանյան Կայսրությունն ավելի խոստումնալից էր թվում: Մինչ Հայոց աշխարհը ավերվում էր՝ մարտադաշտ դառնալով օսմանյան ու սեֆյան իշխանությունների միջև մղվող պատերազմների համար, Կոստանդնուպոլսի օսմանյան գրավումը քաղաքին նոր շունչ է հաղորդում և հայերին հնարավորություն տալիս բարգավաճել: Օսմանյան սուլթանը պաշտոնապես ճանաչում է նախորդ Բյուզանդական Կայսրության Արևելյան Ուղղափառ եկեղեցին, հրեական դավանանքը և աստիճանաբար՝ նաև Հայ Առաքելական եկեղեցին, որոնցից յուրաքանչյուրը «միլիթ» (դավանական համայնք) է կազմում օսմանյան հասարակության մեջ:

Հայերն ազատ էին դավանելու իրենց կրոնը և ենթարկվում էին ոչ այնքան իսլամական, որքան՝ սեֆական օրենքներին, իսկ Կոստանդնուպոլսի նորահաստատ պատրիարքը հետզհետե դառնում է ողջ կայսրության հայության առաջնորդը: Հայերը չունեին մահմեդական քաղաքացիների բոլոր իրավունքները և լրացուցիչ հարկման էին ենթարկվում, բայց և այնպես հնարավորություն ունեին հարգված ու հեղինակավոր անձինք դառնալու ոչ միայն իրենց համայնքում, այլև նույն օսմանյան աշխարհում: Կոստանդնուպոլսի այսպես կոչված «իսլամական» արվեստի ու ճարտարապետության գլուխգործոցներից շատերը ստեղծվել են հայ վարպետների կողմից, որոնք վայելում էին սուլթանի բարեհաճությունը: Տաղանդավոր հայերին հնարավորություններ

տալու ու նրանց պարտադրելու սահմանազիծը երբեմն ջնջվում էր: Կոստանդնուպոլսի ու Հայոց աշխարհի մեծ մասի՝ միևնույն իշխանության տակ գտնվելու շնորհիվ ամրապնդվում են հաղորդակցությունն ու առևտրային կապերը հայրենիքի հետ: Արդյունքում՝ Կոստանդնուպոլսի հայությունը քաղաքը ոչ թե օտար գաղութ, այլ՝ մշտական բնակության վայր էր համարում:

Արգարի վենետիկյան տպարանը տեղափոխվում է Կոստանդնուպոլիս՝ վերջինիս պատրիարքի օժանդակությամբ: 1567-1569թթ. նաև ևս վեց՝ մանկական քերականություն և կրոնական բնույթի հինգ անուն գիրք է հրատարակում՝ օգտագործելով վենետիկում ձուլված տպատառերը: Սակայն այս ձեռնարկին էլ կարճ կյանք էր վիճակված: Թեև Կոստանդնուպոլսում 1493թ. իսպանա-հրեական տպարան հիմնելու անհաջող փորձ էր արվել և վաղ տասնվեցերորդ դարում բազմաթիվ հրեական տպարաններ էին գործում, բայց տպարանական սարքավորումների ու նյութերի մատակարարումը չէր հասնում վենետիկի մակարդակին: Նույնիսկ կազմարարների ու գրավաճառների թիվն ու հմտություններն աղքատիկ էին թվում վենետիկի ծաղկուն գրավաճառության ու տպագրական գործին ծանոթ մարդկանց:

Արգարն իր գրքերում ավելի քիչ զարդեր է կիրառել, քան՝ Մեղապարտը, սահմանափակվելով միայն փոքրաթիվ փայտափոր գեղազարդ մեծատառերով՝ հայկական ավանդական թռչնազիր կամ ձագազիր ոճով, «թռչնի գրեր», որոնք բաղկացած են ոճավորված թռչուններից՝ երբեմն խառնված ձկների կամ այլ կենդանիների հետ: Հնարավոր է, որ նրա երկու տառատեսակների պարզ ու շեղ բոլորգիր ոճը, որն, ի



Abgar moved his Venice printing office to Constantinople with support from its Patriarch. From 1567 to 1569 he produced six more books with his Venetian types: a grammar for children and five religious books. Once again, however, the venture proved short-lived. Constantinople had housed an abortive Spanish-Jewish printing office in 1493 and several Hebrew printing offices in the early sixteenth century, but its sources of supply for printing equipment and materials certainly fell far short of Venice's. Even the quantity and quality of its bookbinders and booksellers must have seemed meagre to anyone used to the flourishing Venice book and printing trades.

In both Venice and Constantinople, Abgar used less decoration in his books than Meghpart, limiting himself to an occasional decorated woodcut capital in a traditional Armenian style called trchnagir or dzagagir: 'bird letters' constructed from stylized birds, sometimes mixed with fish or other animals. The sober sloped bolorgir style of both his types, with fewer cursive characteristics than Meghpart's earlier or Granjon's later one, may derive from an earlier manuscript model. Abgar's smaller type would be especially important if he were to attempt an economical Bible, which would have been impossible with only Meghpart's single large type.

Both Abgar's types, but especially the more sloped larger one, point in the direction that was to become the standard a hundred years later. As far as I can judge from the few

'Armenian architect from Constantinople', after Jean-Baptiste Vanmour. Presumably a member of the Balian family, which supplied four generations of architects for six sultans.

'Պոլսահայ ճարտարապետ' ըստ Ժան-Բապտիստ Վանմուրի: Հավանաբար՝ անդամ Բալյանների ընտանիքի, որի չորս սերնդների ճարտարապետներ են աշխատել վեց սուլթանների համար

տարբերություն Մեղապարտի նախորդող և Գրանժոնի հաջորդող տառաձևերի, ավելի քիչ ձեռագրային առանձնահատկություններ ունի, բխում է ավելի վաղ մատենագրային ձևերից: Աբգարի փոքր տառատեսակը հատուկ կարևորություն կատանար, եթե նա ձեռնամուխ լիներ մատչելի Աստվածաշունչ տպագրելուն, աշխատանք, որն անհնար էր իրականացնել Մեղապարտի միատեսակ մեծ տպատառերով:

Աբգարի երկու տառատեսակն էլ, հատկապես՝ շեղ մեծ տպատառը, մատնանշում էին այն ուղղությունը, որը հարյուր տարի անց չափանիշ պիտի դառնար: Որքան հնարավոր է դատել գրականության մեջ վերարտադրված սակավաթիվ էջերից, Աբգարի մեծատառերն ավելի են նմանվում բոլորակ երկաթագիր գրաձևին, քան՝ Մեղապարտինը, չնայած որ Աբգարի մեծ տառատեսակի մեծատառերը փոքրատառերի պես շեղ են: Նրա փոքր տառատեսակում միավորված են ուղղահայաց մեծատառեր ու շեղ փոքրատառեր, ինչը հետագայում պիտի դառնար չափանիշ, չնայած որ այս դեպքում փոքրատառերը միայն թեթևակիորեն են թեքված: Թեև Աբգարի գրեթե բոլոր գրքերը կրոնական բնույթ են կրում, բայց նա Աստվածաշունչ չտպագրեց:



Rome, late 16th century.

pages that have been reproduced, the capitals more consistently follow round yerkatagir forms than Meghpart's, though in the larger size they slope like the lowercase. The smaller size mates upright capitals with a sloped lowercase, which was to become the standard form, though in this case the lower case is only slightly sloped. Nearly all Abgar's books had a religious content, but he never produced a Bible.

Rome 1579

Constantinople would have to wait more than a century for its next Armenian printing office, but Abgar's pioneering efforts nevertheless bore fruit. In Rome, his son Sultanshah and the Armenian Catholic priest Hovhannes Terzntsi and his son Khachatur worked with Catholic authorities as translators, editors and perhaps compositors in the next stage of Armenian printing. Cardinal Giulio Antonio Santori (1532-1602) helped lead the Catholic Church's Counter-Reformation efforts to find converts among non-Europeans, both in their homelands and in their European colonies. He hoped to supply them with Catholic books in their own languages, which required Armenian, Ethiopic, Syriac, Arabic and Coptic type. He was later to lead the 1599 Congregatio super negotiis Sancta Fidei et Religionis Catholicae, a forerunner of the 1622 Propaganda Fide. Before the Propaganda

Հոռոմ, ուշ 16-րդ դարում

Հոռոմ՝ 1579թ.

Պահանջվեց ավելի քան մեկ դար մինչև Կոստանդնուպոլսում հաջորդ հայկական տպարանի հիմնումը, բայց և այնպես Աբգարի նախաձեռնությունն ապարդյուն չանցավ: Հոռոմում նրա որդի Սուլթանշահը և հայ կաթոլիկ հոգևորական Հովհաննես Տերզնցին՝ իր որդի Խաչատուրի հետ, կաթոլիկ իշխանությունների համար որպես թարգմանիչներ, հրատարակիչներ ու գուցե նաև գրաշարեր էին աշխատում հայկական գրատպության այս հաջորդ փուլում: Կարդինալ Ջուլիո Անտոնիո Սանտորին (1532-1602թթ.) օժանդակում էր Կաթոլիկ եկեղեցու հակառեֆորմիստական օանքերին, որոնք ուղղված էին դավանափոխելու ոչ եվրոպացիներին թե՛ իրենց հայրենիքում, և թե՛ եվրոպական գաղութներում: Նա ցանկանում էր այլազգիներին տրամադրել կաթոլիկ գրքեր իրենց լեզուներով, ինչի համար հարկավոր էին հայերեն, եթովպերեն, ասորերեն, արաբերեն և ղպտերեն տառատեսակներ: Հետագայում Սանտորին կղեկավարի 1599թ. հիմնադրված "super negotiis Sancta Fidei et Religionis Catholicae" կոնգրեգացիան՝ 1622թ. հիմնադրվելիք Պրոպագանդա ֆիդելի նախակարապետը: Մինչև Պրոպագանդա ֆիդելի կողմից սեփական տպարանի հիմնումը 1626թ. -ին, Կաթոլիկ եկեղեցու ոչ լատինական տառատեսակներով տպագրությունն իրականացվում էր մի ամբողջ շարք խրթին տպագրությունների միջոցով՝ երբեմն նյութեր ու բանվորներ միմյանց հետ փոխանակելով:⁵ 1572թ. Պիոս V-ին հաջորդած Պապ Գրիգոր XIII-ը կիսում էր Սանտորիի խանդավառությունը բազմալեզու տպագրությունների հանդեպ և հայերին ավելի քիչ



Fide set up its own printing office in 1626, a complicated array of presses executed the Church's printing in non-Latin types and sometimes shared materials or workmen.⁵

Pope Gregory XIII, who had succeeded Pius V in 1572, shared Santori's enthusiasm for polyglot printing and proved less suspicious of the Armenians than Pius V. By this time Venice was no longer the leading centre of the book trade that it had been in Meghapart's day. France in general and Paris in particular had come under the sway of the Italian Renaissance during the reign of François I, inaugurating a French golden age that came to fruition typographically around 1530. In the next fifty years, France played a leading role in the book arts in general and the production of printing types in particular. Sixteenth-century French printing types spread to printing offices throughout Europe, and several French punchcutters worked abroad. So Santori turned to France and apparently convinced Robert Granjon (1512/13-1590), one of the best and most prolific punchcutters of all time, to come to Rome. Granjon was in Lyon in September 1577 and a later document says he arrived in Rome in December 1578. Abgar's son Sultanshah had been there since 1564 and Terzntsi since 1577/78, so either or both may have helped advise Granjon while he prepared his Armenian type.

On 14 May 1579 Santori noted that the Pope had accepted his proposal for Armenian printing.⁶ Granjon may have begun work on his Armenian type before that, for he presented the first specimen of the new type to the Pope before the end of the year. He had cut many kinds of type (including

Syriac) for thirty-five years in Paris, Lyon, Antwerp and elsewhere before coming to Rome to tackle Armenian and several other 'exotic' types. He cut non-Latin types for Rome's proselytizing presses for more than a decade, delivering his last punches less than four months before his death.

Granjon's fine sloped bolorgir type reflects his skill and experience. We have no record of the manuscript model supplied to him. His type shows pen-influenced leading strokes at the top of the ascenders in a style common in manuscripts from the late thirteenth into the fifteenth century, but not at all like Meghapart's.⁷ Rather than his




կասկածանքով էր վերաբերվում, քան Պիոս V-ը: Վենետիկն այլևս գրավաճառության առաջատար կենտրոն չէր, ինչպես եղել էր Մեղապարտի օրերին: Ֆրանսիան ու հատկապես՝ Փարիզը իտալական վերածննդի ազդեցության տակ էին հայտնվել Ֆրանսուա I թագավորի օրոք, ով բացեց Ֆրանսիայի ոսկեդարը, որը գրատպական ծաղկում ապրեց մոտ 1530թ.-ին: Հաջորդ կես դարի ընթացքում Ֆրանսիան առաջատար դեր ունեցավ գրքարվեստի բնագավառում, ընդհանրապես, և տպատառերի արտադրության ոլորտում՝ մասնավորապես: Տասնվեցերորդ դարի ֆրանսիական տպատառերը տարածվեցին ողջ Եվրոպայի տպարաններում, և որոշ ֆրանսիացի գրաձուլիչներ աշխատում էին արտասահմանում: Դա էր պատճառը, որ Սանտորին մեկնեց Ֆրանսիա և, ըստ երևույթին, համոզեց Ռոբերտ Գրանժոնին (1512/13-1590թթ.)՝ բոլոր ժամանակների ամենահմուտ ու ամենաբեղմնավոր գրաձուլիչներից մեկին, Հոռոմ մեկնել: 1577թ. սեպտեմբերին Գրանժոնը Լիոնում է եղել, իսկ ավելի ուշ շրջանի փաստաթղթում նշվում է, որ նա Հոռոմ է ժամանել 1578թ. դեկտեմբերին: 1564 թվականից այնտեղ է եղել Աբգարի որդի Սուլթանշահը, իսկ Տերզնցին՝ 1577թ. կամ 1578թ.-ից, հետևաբար հնարավոր է, որ նրանցից մեկը կամ երկուսն էլ Գրանժոնին խորհուրդներով աջակցություն ցուցաբերած լինեին նրա հայկական տառատեսակը պատրաստելիս:

1579թ. մայիսի 14-ին Սանտորին նշում է, որ Հոռոմի պապն ընդունել է հայերեն լեզվով տպագրություն իրականացնելու իր առաջարկը:⁶ Գրանժոնը դրանից առաջ երևի արդեն սկսել էր աշխատել իր հայկական տպատառերի վրա, որովհետև նոր տառատեսակի առաջին օրինակը պապին է ներկայացրել մինչև տարեվերջ: Երեսունհինգ տարի

շարունակ նա փորագրել էր տարբեր լեզուների տառատեսակներ (այդ թվում՝ ասորերեն) Փարիզում, Լիոնում, Անտվերպենում և այլուր, մինչև Հոռոմ գալը և հայկական ու բազում այլ «տարաշխարհիկ» տառատեսակների փորագրության վրա աշխատելը: Մեկ տասնամյակից ավելի նա աշխատեց Հոռոմում՝ ոչ լատինական տպատառեր պատրաստելով բաղաբի դավանափոխական քարոզչության տպարանների համար, ներկայացնելով իր փորագրած վերջին տառահայրերը իր մահվանից չորս ամսից էլ քիչ ժամանակ առաջ:

Գրանժոնի նուրբ, շեղ, բոլորգիր տպատառերը ի ցույց են դնում նրա հմտությունն ու փորձառությունը: Հայտնի չէ, թե ինչ ձեռագիր բնագիր է տրամադրվել նրան: Նրա տառատեսակը ցուցադրում է գրչագրին հատուկ գծիկներ տառերի դեպի վեր գնացող պոչերի գլխին, ուշ տասներեքերորդ դարից մինչև տասնհինգերորդ դարի ձեռագրերում ընդունված ոճով, որը սակայն շատ տարբեր է Մեղապարտի ոճից:⁷ Վերջինի ծայրատ, գրեթե հորիզոնական սկզբնագծիկների փոխարեն, Գրանժոնի վերասլաց է, ե, ե, թ, ժ, ի և կ տառերն ունեն բարակ, գրեթե ուղղահայաց, բարձրացող սկզբնագծիկ, որը ձուլվում է առավել ծանր, իջնող, գլխավոր գծի հետ (տարօրինակն այն է, որ թ և կ տառերի սկզբնագծիկներն ավելի ծայրատի են նմանվում): Լավ տպագրված օրինակներում երբեմն տեսանելի է, որ սա առանձին մագազնիկ է, ոչ թե գլխավոր գծի վերին ծայրի հաստացած մաս: Գրանժոնի համեմատաբար փոքր (թեև Աբգարի փոքր տառատեսակից մեծ) տառատեսակը հարմար կլինեիր Աստվածաշունչ կամ այլ ծավալուն տեքստ տպագրելու համար, սակայն հիմնականում օգտագործվել է կարճ տեքստերում: Գրանժոնի 1579թ.



nearly horizontal serif-like leading strokes, Granjon, on the ascending letters եւ, էէ, թ, ժժ, բի, խխ, ւկ and վ has a thin, nearly vertical leading stroke going up, which merges with the heavier main stroke coming down (curiously թ and Լ have a more serif-like leading stroke). In a well-printed example one can sometimes see that it is a separate hairline stroke, rather than a thickening of the top part of the main stroke. Granjon's relatively small type (though larger than Abgar's smallest) would have suited it for a long text such as a Bible, but it was used primarily for fairly short texts. Granjon's 1579 specimen shows five large upright yerkatagir initials, but these were not cast as type and were presumably woodcut (each of the three շ's in the specimen is different). The smaller capitals that accompany the bolorgir are not only sloped, they also – like Meghapart's – mix round and angular forms, so that many letters have the same basic shape as the bolorgir lowercase. This time the Պ is round and more than a dozen letters angular (trapezoidal, like the bolorgir lowercase).

Pope Gregory had introduced the new Gregorian calendar in 1582 and futilely tried to convince nations in the Near and Middle East to adopt it: the Ottoman Empire and the Soviet Union adopted it only in 1917, Iran never did. Sultanshah translated the calendar into Armenian by late 1583 and it appeared in print in 1584: the first book printed from Granjon's Armenian type, with woodcut initials and decorative elements.

The first book printed from Granjon's Armenian type: *Tomar Grigorean*, Rome 1584.

տառատեսակների ցանկում ներկայացվում է հինգ մեծ, ուղղահայաց երկաթագիր սկզբնատառ, բայց սրանք որպես տառատեսակ չեն ձուլվել և հավանաբար փայտից են փորագրվել (նմուշների երեք շ տառերը տարբերվում են իրարից): Բոլորգրի առավել փոքր մեծատառերը ոչ միայն շեղ են, այլև (ինչպես և Մեղապարտի տառատեսակում) համակցում են բոլորակ և անկյունավոր ձևերը, ինչի արդյունքում շատ տառեր նույնանում են բոլորգրի փոքրատառերին: Այս դեպքում Պ տառը բոլորակ է, մինչ տասնյակ տառեր անկյունավոր են (բոլորգրի փոքրատառերի պես՝ սեղանաձև):


1582թ. -ին պապ Գրիգորը մտցնում է նոր՝ Գրիգորյան տոմարը և ապարդյուն փորձեր անում Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդներին համոզելու, որ ընդունեն այն (Օսմանյան Կայսրությունն ու Խորհրդային Միությունը նոր տոմարն ընդունեցին միայն 1917թ., Իրանը մինչ օրս չի ընդունել): Տոմարը Սուլթանշահի կողմից հայերեն թարգմանվեց 1583թ. -ի վերջերին և տպագրվեց 1584թ. -ին: Դա Գրանժոնի տառատեսակով տպագրված առաջին գիրքն էր՝ փայտափոր սկզբնատառերով ու գեղազարդ տարրերով:

Գիրքն իր տպարանում տպագրեց Դոմինիկո Բազան, ով 1587 թվականին Վատիկանի տպարանի հիմնումից հետո դարձավ նրա տպագրիչը: 1584-1623թթ. -ին այս և Հռոմում գործող մյուս տպարաններում տասներկու անուն գիրք է հրատարակվել Գրանժոնի տպատառերով: Սուլթանշահը, ով մինչև 1586թ. աշխատել է Հովհաննես Տերզցու և նրա որդու հետ, դրանց մեծ մասի հարցում մասնակցություն է ունեցել: Չնայած որ այդ գրքերն առերես կաթոլիկ էին, դրանց մի քանիսի հրատարակումը Հայ Առաքելական եկեղեցին ողջունում է, իսկ Կաթոլիկ եկեղեցու իշխանությունները դրանց կասկածանքով

It was produced in the printing office of Dominico Basa, who became printer of the Stamparia Vaticana on its establishment in 1587. From 1584 to 1623 these and related Roman printing offices produced twelve books that used Granjon's type. Sultanshah, working with Hovhannes Terztsi and his son until 1586, played a role in most of them. Although nominally Catholic, some were welcomed by the Armenian Apostolic Church and regarded with suspicion by the Catholic authorities. One defended the orthodoxy of the Armenian Apostolic rites. Especially after Sixtus V succeeded Gregory XIII in 1585, Armenian books were once

more subject to severe censorship. Sultanshah converted back to the Apostolic Church – though he later returned to Catholicism once more.

With little hope of producing an Armenian Bible in Sixtus V's Rome, Terztsi had a new small type cut – the smallest to date, but not as well cut as Abgar's or Granjon's – and moved to Venice, where he had somewhat




Գրանժոնի հայերեն տառատեսակով առաջին տպագրված գիրքը՝ *Մոմար Գրիգորեան*, Հռոմ, 1584 թ.

են վերաբերվում: Գրքերից մեկը գոյություն էր Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգի ուղղափառությունը: Հատկապես Սիբստուս V-ի՝ 1585թ. -ին Գրիգոր XIII-ին հաջորդելուց հետո, հայալեզու գրքերը դարձյալ խիստ գրաքննության են ենթարկվում: Սուլթանշահը նորից ընդունում է Հայ Առաքելական դավանանքը, չնայած հետագայում մեկ անգամ ևս կաթոլիկություն է ընդունում:

Քանի որ Սիբստուս V-ի օրոք Հռոմում հայերեն Աստվածաշունչ տպագրելու հույսերը թուլանում են, Տերզցին փորագրել է տալիս նոր, փոքր, տառատեսակ, մինչ այդ եղած ամենափոքրը, որը ոչ այնքան հմտորեն էր պատրաստված, որքան Աբգարի կամ Գրանժոնի տառատեսակները, և տեղափոխվում Վենետիկ, որտեղ որոշակի ազատություն էր վայելում: Այնտեղ 1587թ. -ին նա մասնակցում է սաղմոսարանի հրատարակմանը Ջիովաննի Ալբերտիի տպարանում, որտեղ ոչ հայերեն գրքեր էին տպագրվում 1585թ. -ից: Այս վենետիկյան սաղմոսարանով ավարտվում է Տերզցու առնչությունը հայկական գրատպության հետ:

Գրանժոնի հայկական տպատառերի հետագա գործածողները

Կաթոլիկ եկեղեցու հովանավորության ներքո գործող Հռոմի տպարանները, այս սկզբնական եռանդուն գործունեությունից հետո, հազվադեպ էին տպագրում հայատառ գրքեր: Պրոպագանդա Ֆիդեն, որը հիմնադրվել էր հռոմեական կաթոլիկ կրոնը



Granjon's type in *Alphabetum Armenum*, Rome, printed by the Propaganda Fide, 1631.

more freedom. There he helped produce a 1587 psalter in the printing office of Giovanni Alberti, who had been printing non-Armenian books since 1585. This Venetian psalter brought an end to Terzntsi's association with Armenian printing.

Later users of Granjon's Armenian type

After these initial, mostly small publications the Roman printing offices supported by the Catholic Church produced an occasional longer Armenian book. When the Propaganda Fide, established to promote the Roman Catholic faith, set up its own printing office in 1626, it continued to use Granjon's type. The Church's authority gave this press a stability that the Armenian ones could never match. That and the quality of the type itself ensured Granjon's type a long life. The Propaganda Fide continued to use it in more or less its original form until they finally began efforts to acquire new Armenian types in 1758.

Before 1685 another half dozen printing offices used Armenian type in Rome, Venice and Constantinople. Most proved short-lived and produced only a few mediocre books with a limited range of materials. The most interesting group begins with Hovhannes Ankyuratsi, interpreter for the Venetians at Smyrna and known in Italy as Giovanni

Պրոպագանդա Ֆիդեի տպագրած Հայերեն Այբուբեն գիրքը, Գրանժոնի տպատաներով, Հռոմ, 1631 թ.

բարոզելու նպատակով, 1626թ.-ին իր սեփական տպարանն է հիմնում՝ շարունակելով գործածել Գրանժոնի տառատեսակը: Եկեղեցու հեղինակությունն այս տպարանին հաղորդում է այնպիսի կայունություն, որին հայկական տպարանները երբևէ չէին հասնի: Այս հանգամանքը և տպատառերի բարձր որակը Գրանժոնի տառատեսակին երկարակեցություն են ապահովում: Պրոպագանդա Ֆիդեն դրանք գրեթե իրենց նախնական տեսքով շարունակում է օգտագործել մինչև 1758թ., երբ ի վերջո սկսում է ջանքեր գործադրել նոր հայերեն տառատեսակներ ձեռք բերելու ուղղությամբ:

Մինչև 1685թ. մոտ կես տասնյակ այլ տպարաններ էին գործածում հայերեն տառատեսակները Հռոմում, Վենետիկում և Կոստանդնուպոլսում: Շատերը կարճ կյանք ունեցան և հրատարակեցին միայն փոքրածիվ, միջակ որակի գրքեր՝ տպագրական նյութերի սահմանափակ տեսականիով: Ամենահետաքրքիր խումբը սկիզբ է առնում Հովհաննես Անկյուրացիով, ով Ջովուռնիայում աշխատել էր որպես թարգմանիչ վենետիկցիների համար և Խտալիայում հայտնի էր Ջուաննի Մոլինո անունով: Նա 1631թ.-ին նամակագրություն է հաստատել Հռոմի կաթոլիկ եկեղեցու աստիճանավորների հետ՝ փորձելով համոզել, որ ձեռնարկեն հայկական Աստվածաշնչի տպագրումը: Ապա նա մեկնում է Վենետիկ և 1637թ.-ին տեղափոխվում Հռոմ՝ դեռ ջանալով իրականացնել հայալեզու Աստվածաշնչի տպագրությունը: Նա Պրոպագանդա Ֆիդեին օգնել է նրանց հայատառ գրքերից մեկը հրատարակելիս, սակայն գրքի՝ 1642թ.-ին լույս ընծայումից առաջ վերադարձել է Վենետիկ:

1641թ. Վենետիկում զրված մի ձեռագրի հիշատակարանում Անկյուրացին արժանանք է



Athanasius Kircher, *Prodromus Coptus sive Aegypticus*, Rome 1636, showing part of the Armenian alphabet in Granjon's type, with Hebrew, Arabic, Ethiopic, Syriac and Samaritan.

Աթանասիոս Կիրիսերի *Prodromus Coptus sive Aegypticus*, Հռոմ, 1636 թ.: Ներկայացված է Գրանժոնի տպատառերի հայերենի այբուբենի մի մասը՝ երբբայերեն, արաբերեն, եթովպերեն, ասորերեն և սամարիտերեն տառերի հետ

հայտնում Հռոմում Աստվածաշունչ տպագրելու նպատակին չհասնելու համար, սակայն նշում է, որ անհրաժեշտ նյութերն իր ձեռքի տակ են և հույս ունի վենետիկում կամ Կոստանդնուպոլսում հաջողության հասնել: Հավանաբար, նա Պրոպագանդա Ֆիդեին համոզել էր, որ տրամադրի տառահայեր կամ մայր տառեր, որովհետև 1642թ. և 1643թ. հայատառ գրքեր է տպագրել՝ օգտագործելով Գրանժոնի տառատեսակը, թե՛ բնօրինակ մեծատառերը, և թե՛ նոր, ուղղահայաց մեծատառերը՝ բոլորակ երկաթազիր ոճով: Թեև ականհայտ է, որ Անկյուրացին էր գրքերի տպագրման նախաձեռնողը և տպատառերը տրամադրողը, գրքերը տպագրվել են վենետիկյան «Ստամպերիա Սալիկատա» տպարանում, որն առավել հայտնի էր իր տպագրած հունարեն գրքերով: Նա գործածեց նաև (որքան մեզ հայտնի է՝ առաջին անգամ) անհայտ ծագումով, ավելի փոքր մեծություն, բոլորակի տառատեսակ, որի փոքրատառերը Գրանժոնի ազդեցությունն են կրում, սակայն մեծատառերը դարձյալ ուղղահայաց բոլորակ երկաթազիր ոճով են:

Հավանաբար, Անկյուրացու տպագրական նյութերը հանձնվել են Վենետիկի հայ համայնքի համար աշխատող այլ տպագրիչների, որոնցից առաջինը Ջուան-Բատիստա Պոլիսն էր՝ 1660թ.-ին: Բազում տպատառերի՝ տարիների ընթացքում կատարված նորոգումը կամ փոխարինումը դժվարացնում է սկզբնաղբյուրի հաստատումը, բայց կփորձեն ներկայացնել զարգացումների մոտավոր պատկերը: Միքելանջելո Բարբոնին 1680թ.-ին օգտագործել է բավական կոպիտ ու հնացած բոլորակի, որը 1674թ.-ին Հռոմում օգտագործել էր Պատր Մոնետան, սակայն 1685 թվականից սկսած երկու նոր տառատեսակ է գործածում: Գոնե չափերով դրանք համապատասխանում են Անկյուրացու տառերին:

Molino. He had corresponded with Catholic authorities in Rome in 1631, when he attempted to persuade them to have an Armenian Bible printed. He came to Venice and moved to Rome in 1637, still trying to arrange the production of an Armenian Bible. He helped the Propaganda Fide with one of their Armenian books, but returned to Venice before it appeared in 1642.

In the colophon of a 1641 Venice manuscript, Ankyuratsi regrets that he was unable to realize his aim of producing a Bible in Rome, but notes that he has the necessary materials and hopes he will succeed at Venice or Constantinople. He may have convinced the Propaganda Fide to supply him with cast type or matrices, for in 1642 and 1643 he produced Armenian books with Granjon's type, both with the original capitals and with new upright capitals in the round yerkatagir form. Though Ankyuratsi clearly initiated his books and supplied the type, they were printed by the Stamperia Salicata in Venice, best



Ատու
գելի
դինա
կան
նաց
ման
քահա

դելոյ 'ի վարել զորբա
պաշտօնս 'ի բարայ ք
րէն կոչն (պարսա) որ
ճանապարհ հեռի է 'ի
և. առիւք վաճառականյ
դրովք զգացոյց մեզ , թէ
քաղաքի ուղղափառք
այսինքն հայք կամ աս
զեւկական տաճար , դ

known for its Greek books.⁸ He also used – for the first time, as far as we know – a smaller bologir of unknown origin whose lowercase may have been influenced by Granjon's but again with upright round yerkatagir capitals.

Ankyuratsi's materials may have passed to other Venetian printing offices that worked for the Armenian community, beginning with Giovanni Battista Pavis in 1660. The revision or replacement of some characters over the years makes identification difficult, but I present a tentative view of the developments. In 1680 Michelangelo Barboni used a rather crude and old-fashioned bologir that Paolo Moneta had introduced at Rome in 1674, but from 1685 he used two new types. They match Ankyuratsi's at least in size. Antonio Bortoli belongs to a later stage in Venice's history, when printers of Armenian began to flourish there. His earliest books, beginning in 1694, deserve mention here, however, because they too use the Granjon face with round yerkatagir capitals, though these do not match Ankyuratsi's. Each of these three Venetian printers also used a smaller bologir face. It is tempting to see a related series of types here: Ankyuratsi 1642, Pavis 1660, Barboni 1685 and Bortoli 1694, but they require further study.

Even after the Propaganda Fide began efforts to acquire new types in 1758, the life of Granjon's Armenian type was not quite over. In 1799 and 1810 Napoleon confiscated punches, matrices and perhaps cast type from the Propaganda Fide and brought them to the Imprimerie Impériale in Paris.



Բենեդիկտոս XIV-րդի պապական նամակ՝ Հայ Առաքելական Եկեղացու ծիսակարգի վերաբերյալ Հռոմ, 1755 թ.: Այդ ժամանակին, Պրոպագանդա Ֆիդեի տպարանը դեռ օգտագործում էր Գրանժոնի տառատեսակը:

Papal bull of Benedictus XIV on the rites of the Armenian Church, Rome 1755. At the time the Propaganda Fide printing office was still using Granjon's type.

Անտոնիո Բորտոլին պատկանում է Վենետիկի պատմության առավել ուշ փուլին, երբ սկսվում է քաղաքի հայատառ տպարանների ծաղկումը: Այստեղ կարելի է նշել Բորտոլինի առաջին, 1694թ. -ից սկսյալ տպագրած գրքերը, քանի որ դրանցում նույնպես օգտագործվել են Գրանժոնի տպատառերը՝ բոլորակ, երկաթագիր մեծատառերով, թեև դրանք չեն համապատասխանում Անկյուրացու մեծատառերին: Վենետիկի այս երեք տպագրիչներից յուրանբանջուրը գործածել է նաև առավել փոքր բոլորգիր տառատեսակ: Կարելի է այս տառատեսակների միջև հետևողական կապ տեսնել: Անկյուրացունը՝ 1642թ., Բովիսինը՝ 1660թ., Բարբոնինը՝ 1685թ. և Բորտոլինը՝ 1694թ., սակայն լրացուցիչ ուսումնասիրության կարիք կա:

Նույնիսկ 1758թ. -ին Պրոպագանդա Ֆիդեի կողմից նոր հայկական տառատեսակներ ձեռք բերելու ջանքերը վերջակետ չդրեցին Գրանժոնի տպատառերի գործածմանը: 1799թ. և 1810 թ. Նապոլեոնը Պրոպագանդա Ֆիդեից բռնագրավում է տառահայրեր, մայր տառեր և գուցե ձուլված տառեր՝ փոխանցելով դրանք Փարիզի Կայսերական տպարանին: Ըստ երևույթին, Գրանժոնի հայերեն տառահայրերով պատրաստել են մայր տառերի նոր հավաքածու Փարիզում: Վաղ շարժանում հայ համայնքի համար աշխատող տպագրիչների նման, նրանք էլ մի քանի մեծատառեր փոխարինել են նորերով՝ բոլորակ երկաթագիր ոճով և վերանայել փոքրատառերը:

They apparently took punches for Granjon's Armenian and made a new set of matrices in Paris. Like the earlier printers working for the Armenian community, they replaced the capitals with some in the round yerkatagir style and they also revised the lowercase.

Allowing for these revisions, Granjon's type is still recognizable in books the Imprimerie Impériale printed from 1812 to 1829, two-hundred and fifty years after he issued his specimen. It even appeared the Imprimerie Royale's 1845 *Spécimen typographique*. In these French publications, the Granjon bologir is again accompanied by a smaller one that should be compared with those used with it in Venice. Since the Imprimerie Impériale is believed to have acquired this smaller type from the Propaganda Fide as well, one must wonder if Ankyuratsi acquired both his types from them, though they never used the smaller one, as far as I know. An account of the Propaganda Fide written by Francesco Ingoli in 1642 seems to suggest that Sefano Paolini (d. ca. 1640) cut Armenian for them, but Ingoli may have mistakenly attributed Granjon's type to Paolini, who used it in 1623.

Չնայած ձևափոխումներին, Կայսերական տպարանում 1812-1829թթ. տպագրված գրքերում դեռ ճանաչելի է Գրանժոնի տառատեսակը՝ իր ձևավորումից երկու և կես դար անց: Այն անգամ ներկայացվել է Կայսերական տպարանի 1845թ. տառատեսակների ցանկում: Ֆրանսիական այս հրատարակություններում Գրանժոնի բոլորգրի հետ մեկտեղ գործածվում է ավելի փոքր տառատեսակ, որը պետք է համեմատել Վենետիկում օգտագործվածների հետ: Քանզի ենթադրվում է, որ Կայսերական տպարանն այս փոքր տառատեսակը ևս վերցրել է Պրոպագանդա Ֆիդեից, հարց է ծագում, թե արդյոք Անկյուրացին իր երկու տառատեսակներն էլ նրանցից չի գնել, թեև, որքան հայտնի է, նրանք երբևիցե չեն գործածել փոքր տեսակը: 1642թ. -ին Ֆրանչեսկո Ինգոլիի կողմից գրված Պրոպագանդա Ֆիդեի հաշիվներից ենթադրվում է, որ Ստեֆանո Պաոլինին (վախճ. 1640թ.) է նրանց համար հայկական տառատեսակ պատրաստել սակայն հնարավոր է, որ Ինգոլին Գրանժոնի տառատեսակը սխալմամբ վերագրել է Պաոլինին, ով 1623թ. -ին գործածել է այն:





II Scholarly and not so scholarly printing offices

In the sixteenth and seventeenth century the religious stance of nearly all scholars played an important role in their scholarship. We can nevertheless distinguish between the presses that produced primarily proselytizing works and those that produced linguistic studies, dictionaries and grammars, even if the impetus for such works also grew at least in part out of efforts to convert people.

Pavia 1539

The second person to print with Armenian type – twenty-five years after Meghapart, but twenty-five years before Abgar Tokhatetsi – was Teseo Ambrogio (1469-1540 or soon after), not an Armenian, but a Catholic priest of noble origin. In 1537 he became Provost of the Rectory of S. Pietro in Cieldoro in his native Pavia.⁴ His lifelong study of exotic alphabets produced only one book, his four-hundred-page *Introductio in Chaldaicum linguam, Syriacam atque Armenicam et decem alias linguas*, published at Pavia in 1539. It pioneered the Western study of Armenian and several other scripts and provided a foundation for the work of others.

View of Pavia

Պավիայի տեսարան

Գլուխ Բ.

Գիտական և ոչ այնքան գիտական տպարաններ

Տասնվեցերորդ և տասնյոթերորդ դարերում, գիտնականների կրոնական դիրքորոշումը գրեթե միշտ մեծապես ազդում էր նրանց գիտականության վրա: Այդուհանդերձ, հնարավոր է տարբերակել գլխավորապես քարոզչական գործեր հրատարակող և լեզվագիտական գործեր, բառարաններ ու քերականություններ հրատարակող տպարանները, անգամ էթե դրանց հրատարակման համար, զոհն մասամբ, շարժիչ ուժ են եղել մարդկանց դավանափոխելու ցանկությունը:

Պավիա՝ 1539թ.

Երկրորդ հայերեն տպագրիչը, Մեղապարտից քանհինգ տարի անց, իսկ Աբգար Թոխաթեցուց քանհինգ տարի առաջ, Տեզեո Ամբրոջիոն էր (1469-1540թթ. կամ քիչ ուշ), ով հայ չէր, այլ ազնվատոհմ իտալացի կաթոլիկ հոգևորական: Նա 1537թ.-ին նշանակվել է Սբ. Պետրոս Ոսկե երկնքում եկեղեցու ծխի ռեկտոր՝ իր ծննդավայր Պավիայում:⁴ Նրա՝ մի ամբողջ կյանք տևած տարաշխարհիկ այբուբենների ուսումնասիրության արդյունքն ընդամենը մեկ գիրք էր՝ չորս հարյուր էջանոց *Introductio in Chaldaicum linguam, Syriacam atque*



Title-page of Ambrogio's book, Pavia 1539.

The second half of the alphabet in Ambrogio's Armenian type.

Ambrogio studied Greek and Hebrew at an early age and met Maronite priests from Lebanon at the Fifth Lateran Council (1513-1515). They sparked his interest in the Syriac script, used in the Middle East for several dialects of Aramaic. He spent much of his life studying its alphabet, comparing it with others and trying to prepare a Syriac psalter, which he never finished. He took a special interest in Armenian, which occupies a place in his book second only to Syriac. He met his most important Armenian informant only in or around 1537, so he must have worked intensely on Armenian in the two years before he published his book.

His informant Joannes (presumably Hovhannes), a young Armenian nobleman from Tabriz in northern Persia, had been enslaved by the Ottomans when they captured the city in 1534. Tabriz was a major Catholic outpost and at some point Hovhannes converted to Catholicism. Dominican monks rescued him from captivity




Ամբրոջիոյի գրքի անվանաթերթը, Պավիա, 1539 թ.

Այբուբենի երկրորդ կեսը, Ամբրոջիոյի հայերեն տառատեսակով

Armenicam et decem alias linguas, որը 1539թ. հրատարակվել է Պավիայում: Այս գրքով սկիզբ է առնում հայ և բազում այլ գրերի ուսումնասիրությունը արևմուտքում և հիմք է դրվում այլ աշխատությունների համար:

Ամբրոջիոն վաղ հասակից հունարեն ու եբրայերեն է սովորել, և լիբանանցի մարոնիտ հոգևորականների հետ ծանոթացել է Հինգերորդ Լատերանի խորհրդի ժամանակ (1513-1515թթ.): Նրանք իր մեջ մեծ հետաքրքրություն են առաջացել ասորերեն գրի հանդեպ, որը Մերձավոր Արևելքում գործածվում էր արամերենի տարբեր բարբառների համար: Գրեթե ամբողջ կյանքում ուսումնասիրել է ասորերենի այբուբենը՝ այն համեմատելով այլ այբուբենների հետ և փորձելով կազմել ասորերեն լեզվով սաղմոսարան, որն այդպես էլ չավարտեց: Նա հատուկ հետաքրքրություն է ցուցաբերել հայերենի նկատմամբ, որը նրա գրքում կարևորության առումով զիջում է միայն ասորերենին: Քանի որ իր կարևորագույն հայ տեղեկատուի հետ ծանոթացել էր միայն 1537թ. -ին՝ գրքի լույսընծայումից ընդամենը երկու տարի առաջ, պարզ է, որ մեծ ջանքեր է թափել հայերենը սովորելիս:

Իր տեղեկատուն Յոաննես (Հովհաննես) անունով մի երիտասարդ հայ ազնվական է եղել, Արևելյան Հայաստանի Թավրիզ քաղաքից, ում օսմանցիները ստրկացրել էին 1534թ. -ին՝ քաղաքի գրավման ժամանակ: Թավրիզը կաթոլիկության խոշոր հենակետ էր, և ինչ-որ մի ժամանակ Հովհաննեսը կաթոլիկություն է ընդունել: Դոմինիկյան միաբանների կողմից գերությունից փրկվելուց հետո, Հովհաննեսը գնացել է Հռոմ, որտեղ նրան ընդունել է Պողոս III պապը: Վենետիկում հաստատվել է և 1537թ. -ին հանդիպել



Guillaume Postel.

Գիյոմ Պոստել

and he went to Rome where he was received by Pope Paul III. He settled in Venice, where he met Ambrogio in 1537 and taught him a great deal about the Armenian alphabet and language, especially concerning its Eastern dialects.


Ambrogio also met Armenians in Venice who spoke Western Armenian dialects. With the help of his informants he made translations and phonetic transcriptions of Armenian manuscripts from a wide variety of sources and regions, providing a unique record of Armenian dialects and variant pronunciations before the widespread forced migrations of the later sixteenth and especially the early seventeenth century. He appears never to have left Italy, but in 1536 he met Guillaume Postel (1510-1581) who had just returned from a voyage to the Near East. They were to collaborate closely.

Ամբրոջիոն, ում շատ բան է սովորեցրել հայոց այբուբենի ու լեզվի մասին՝ հատուկ ուշադրություն դարձնելով Արևելյան Հայաստանի բարբառներին:

Վենետիկում Ամբրոջիոն հանդիպել է նաև արևմտահայերենի բարբառներով խոսող հայերի: Իր տեղեկատուների օգնությամբ, թարգմանություններ ու հնչյունաբանական տառադարձություններ է կատարել ամենատարբեր աղբյուրների ու շրջանների հայկական ձեռագրերից՝ կազմելով հայերեն բարբառների ու արտասանական տարբերակների եզակի արձանագրություն, ուշ տասնվեցերորդ և հատկապես վաղ տասնյոթերորդ դարի լայնածավալ բռնագաղթներից առաջ: Կարծես թե, Ամբրոջիոն երբևէ դուրս չի եկել Իտալիայից, բայց 1536թ. -ին հանդիպել է Գիյոմ Պոստելի (1510 - 1581թթ.) հետ, ով նոր էր վերադարձել դեպի Մերձավոր Արևելք կատարած ճանապարհորդությունից: Նրանք հետագայում պետք է սերտորեն համագործակցեին:

Ինչպես այդ ժամանակի շատ գիտնականներ՝ Ամբրոջիոն առեղծվածային ու կաբալիստական մոտեցում էր ցուցաբերում ոչ լատինական այբուբեններին, հետաքրքրվելով նաև աստղաբանությամբ ու այլմիայով: Հավատում էր, որ տառերի անվանումները, ձևերն ու թվային հաջորդականությունը, ճիշտ մեկնաբանության դեպքում, կբացահայտեն բրիստոնեության խոր գաղտնիքները: Համոզված լինելով, որ այդ առեղծվածային կապերը միացնում են աշխարհի բոլոր այբուբենները, նա փորձում էր ուսումնասիրել բոլոր հին այբուբենները, այդ թվում՝ նաև բազում հորինված այբուբեններ:

Թևև արդեն տասնվեցերորդ դարում ժողովք Սկալիզերը սկսել էր լեզվաբանությունը տանել դեպի այն ուղին, որը դարերի ընթացքում հանգեցրեց ժամանակակից եվրոպիոն



Like many scholars of his day, Ambrogio approached non-Latin alphabets from a mystical and cabbalistic perspective, and also took an interest in astrology and alchemy. He believed that the names, shapes and numerical sequence of the letters, if properly interpreted, could reveal secrets of deep Christian truths. Believing these mystical bonds united all alphabets of the world, he attempted to study all ancient ones, including many that were in fact purely imaginary.

Already in the sixteenth century Joseph Scaliger began to turn linguistics toward the path that lead over the course of the centuries to the modern science of evolutionary linguistics, but it is unfair to dismiss Ambrogio's work as a mere curiosity. It contains the first detailed printed account of the Armenian alphabet and language, extensive texts in Armenian with translations and phonetic transliterations, and notes the sources of its texts. This provided a foundation for all who followed and remains a valuable historical record for today's scholars.

Postel visited Ambrogio while his book was in press. To Ambrogio's irritation Postel published his own shorter work, with the Armenian alphabet and Lord's Prayer reproduced from woodcuts, the year before Ambrogio's. Postel has fared better in the eyes of modern scholars, but he fully acknowledged his debt to his older colleague.

Title-page of Postel's book on the alphabets of twelve languages, Paris 1538.

Պոստելի գիրքը տասներկու այբուբենների մասին, անվանաթերթ, Փարիզ, 1538 թ.

լեզվաբանության գիտությանը, բայց և այնպես անարդար կլինեն Ամբրոջիոյի աշխատանքն անտեսել՝ համարելով այն պարզ հետաքրքրասիրություն: Նրա զրքում զետեղված է հայոց այբուբենի ու լեզվի մասին առաջին տպագիր մանրամասն մեկնաբանությունը, ինչպես և հայալեզու ծավալուն տեքստեր՝ թարգմանություններով ու հնչյունական տառադարձություններով և աղբյուրների նշումով: Սա լավ հիմք ապահովեց գալիք ուսումնասիրողների համար, և շարունակում է արժեքավոր պատմական արձանագրություն համարվել այսօրվա գիտնականների համար:

Պոստելը Ամբրոջիոյին այցելել է վերջինիս գրքի տպագրման ժամանակ: Ի հեճուկս Ամբրոջիոյի, Պոստելն իր ավելի կարճ գործը՝ փայտափոր տառերով Հայկական այբուբենն ու Տերունական աղոթքը, լույս էր ընծայել Ամբրոջիոյի գրքից մեկ տարի առաջ: Ժամանակակից գիտնականների շրջանում Պոստելն ավելի լավ համբավ ունի, սակայն նա լիովին ընդունել է ավագ գործընկերոջ հանդեպ իր պարտավորվածությունը:

Բեռլին՝ 1583թ.

Տասնվեցերորդ դարի հայատառ տեքստ պարունակող մեկ այլ գործ արդարացիորեն անտեսվել է՝ որպես հետաքրքրասիրությունից դրդված գործ: Լեոնհարտ Թուրնայսերը (Բազել, 1531թ. - Քյոլն 1596թ.) սկզբում հորից սովորել է ոսկերչություն, ապա աշխատել որպես բժշկի օգնական հետաքրքրությունն ցուցաբերելով այբուբենի ու դեղաբանության



The Lord's Prayer in woodcut Armenian, from Postel's 1538 book.

Berlin 1583

Another sixteenth-century work that includes text in Armenian type has been more fairly dismissed as a curiosity. Leonhardt Thurneysser (Basel 1531-Cologne 1596), first learned the goldsmith's craft from his father and then worked as a doctor's assistant, taking an interest in alchemy and pharmacology. An early marriage and business venture both proved unfortunate and led him to spend ten years as an itinerant goldsmith and soldier. Around 1558 he married and began a mining company in Tirol, which soon brought him to the attention of the Habsburg Archduke Ferdinand of Austria.

Ferdinand outfitted him for voyages to Egypt and Asia Minor, where he collected information on medicine, natural history, alchemy and astrology. On his return, he had some of his studies printed at Münster in 1569 and Frankfurt an der Oder in 1571. Johann Georg, the new Elector of Brandenburg, took him on as physician, giving him regal living and working quarters in a disused Franciscan monastery in Berlin, the 'Graue Kloster', which he shared with an academic gymnasium.

There he set up his own printing office, publishing some of his studies in the first part of his *Onomasticum* in 1574. The second part required many non-Latin types and Thurneysser had to have most of them specially cut, so he began an extensive correspondence with scholars, printers, typefounders and punchcutters in Frankfurt am Main, Nürnberg and Wittenberg. Elias Hutter, professor of Hebrew

հանդեպ: Վաղ ամուսնությունն ու ձեռներեցությունն անհաջողությամբ են պսակվել ինչից հետո տասը տարի շրջիկ ոսկերիչ ու զինվոր է եղել: Մոտ 1558թ.-ին նա կրկին ամուսնանում է և Տիրոլում լեռնահանքային ընկերություն հիմնում, որի շնորհիվ շուտով արժանանում Ավստրիայի Ֆերդինանդ Հաբսբուրգ կայսեր ուշադրությանը:

Ֆերդինանդը նրան միջոցներ է տրամադրում Եգիպտոս ու Փոքր Ասիա ճանապարհորդություններ կատարելու համար, որտեղ տեղեկություններ է հավաքում բժշկության, բնագիտության, այբուբենի ու աստղաբանության վերաբերյալ: Վերադառնալով իր ուսումնասիրություններից մի մասը տպագրում է Մյունստերում (1569թ.) և Օդերի Ֆրանկֆուրտում (1571թ.): Բրանդենբուրգի նորահռչակ Կուրֆյուրստ Յոհան Գեորգը նրան բժիշկ է նշանակում՝ Բեռլինում տրամադրելով արքայալայել բնակարան ու աշխատատեղ՝ Ֆրանցիսկյան միաբանության չգործող «Գորշ Վանքում», որտեղ նաև ակադեմիական դպրոց էր գործում:

Այստեղ նա սարքավորել է իր տպարանը՝ հրատարակելով իր ուսումնասիրություններից մի քանիսը «Օնոմաստիկում» աշխատության առաջին հատորում՝ 1574թ.-ին: Երկրորդ հատորը բազմաթիվ ոչ լատինական տառատեսակներ էր պահանջում, և Թուրնայսերը ստիպված էր դրանք փորագրել տալ հատուկ այդ գրքի համար, ինչի նպատակով ծավալուն նամակագրություն է սկսել գիտնականների, տպագրիչների, գրաձուլիչների ու տառահայր փորագրողների հետ Մայնի Ֆրանկֆուրտում, Մյունխենբերգում և Վիտենբերգում: Լայպցիգում երբայերեն դասավանդող պրոֆեսոր Էլիաս Հուտերը 1578թ.-ին նրան տրամադրել է արաբերենի, ասորերենի և եթովպերենի այբուբենների օրինակներ, իսկ



Leonhardt Thurneysser, *Quinta essentia*, Leipzig 1570. Frontispiece with author's portrait.

in Leipzig, supplied him with model alphabets for Arabic, Syriac and Ethiopic in 1578, and in 1582 the Berlin goldsmith and punchcutter Andreas Hindenberg cut a Hebrew and perhaps other types for him.

The surviving correspondence makes it clear Thurneysser had most of his non-Latin types cut only shortly before he published the second part of the *Onomasticum* in 1583 (also issued as part of his *Magna Alchymia* in the same year). Some copies are bound with a *Tabula Quarundam Syllabarum*, which has letterpress comparative tables of letters and letter combinations from sixteen alphabets, also dated 1583.² The *Onomasticum* contains words or passages in Hebrew, Greek, Arabic, Syriac (serto and estrangela), Samaritan, Ethiopic, Coptic, Armenian, Georgian, Old Slavonic, Glagolitic and other alphabets, including 10 lines of Armenian on page 157. The Armenian is set in a single-case type giving the impression of capitals, but vaguely based on bolorgir forms and perhaps influenced by the Old Slavonic or Glagolitic. It is barely recognisable as Armenian and (fortunately) seems to have had little or no influence on later types.

Milan 1621 and Paris 1633

Francesco Rivola, a missionary from what in 1622 became the Propaganda Fide, worked among the Armenians in the Near East, attempting not only to convert them to Catholicism but also to counter what he saw as the dangerous

Լեոնհարտ Թուրնայսեր, *Quinta essentia*, Լայպցիգ, 1570 թ., ճակատագալուրդ հեղինակի դիմանկարով

բեռլինցի ոսկերիչ ու փորագրիչ Անդրեաս Հինդենբերգը 1582թ.-ին նրա պատվերով փորագրել է եբրայերենի ու, թերևս, այլ այբուբենների տպատառեր:

Մեր օրերը հասած նամակագրությունից պարզ է դառնում, որ Թուրնայսերը իր ոչ լատինական տառատեսակների մեծ մասը փորագրել է տվել 1583թ.-ի «Օնոմաստիկումի» երկրորդ հատրի տպագրությունից քիչ առաջ (որը նաև մաս է կազմել նույն տարվա ընթացքում հրատարակված իր «Magna Alchymia» աշխատության): Որոշ օրինակներ կարվել են «Tabula Quarundam Syllabarum» կոչված գործի հետ, որտեղ զետեղված են տպատախտակով տպագրված համեմատական աղյուսակներ՝ տասնվեց այբուբենների տառերով ու տառակապակցություններով, թվագրված նույն 1583 տարեթվով:² «Օնոմաստիկումը» պարունակում է բառեր ու տեքստային հատվածներ եբրայերենի, հունարենի, արաբերենի, (ներտո և էստրանգելա) ասորերենի, սամարիտերենի, եթովպերենի, ղպտերենի, հայերենի, վրացերենի, հին սլավոներենի, գլազովիցայի և այլ լեզուների այբուբեններով, այդ թվում նաև՝ տասը տողանոց հայատառ տեքստ 157-րդ էջում: Հայերենը տպագրված է միատեսակ տպատառերով, որոնք մեծատառերի են նմանվում, բոլորգիր ոճի հիման վրա ձևավորված և, գուցե, կրում են հին սլավոներենի կամ գլազովիցայի ազդեցությունը: Գրեթե անճանաչելի է որպես հայերեն և, ըստ երևույթին, (բարեբախտաբար) փոքր կամ որևէ ազդեցություն չի ունեցել հետագա տառատեսակների վրա:



View of Paris around 1650. Փարիզի տեսարան, մոտ 1650 թ.

Միլան՝ 1621թ., և Փարիզ՝ 1633թ.

1622 թվականից Պրոպագանդա Ֆիդե կոչվող հաստատության քարոզիչ Ֆրանչեսկո Ռիվոլան աշխատել է Մերձավոր Արևելքի հայերի շրջանում՝ փորձելով ոչ միայն նրանց կաթոլիկ դարձնել, այլև դիմագրավել բողոքական եկեղեցու աճող ազդեցությանը, ինչը նա վտանգավոր էր համարում: Ոչ այնքան մտահոգված լեզվաբանական տեսություններով, որքան հայերեն սովորել ցանկացող եվրոպացիների գործնական կարիքներով, նա գրել է հայերեն-լատիներեն բառարան (1621թ.) և հայերենի քերականություն (1624թ.): Երկու գրքերը տպագրվել են Միլան քաղաքի Ամբրոսյան վարժարանի տպարանում՝ հատուկ այդ նպատակով փորագրված հայկական նոր տառատեսակով:

Բացի Արգարի փոքր մանկական քերականությունից, սրանք առաջին տպագիր հայերենի բառարանն ու քերականությունն էին և, հետևաբար, կարևոր գործեր բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում էին հայերեն սովորել: Թեև Ռիվոլայի քերականությունը գլխավորապես հիմնված է Ամբրոջիոի գրքում զետեղված նյութերի վրա, բառարանից պարզ է դառնում, որ նա ևս զգալի աշխատանք է կատարել: Հետագա հեղինակները նրան քննադատել են գրաբարի մեջ թուրքերենի ու խոսակցական լեզվի ազդեցություններ մտցնելու համար: Սակայն, որպես Օսմանյան կայսրության հայության մեջ քարոզչական աշխատանք տանող, նա, հավանաբար, առաջնորդվում էր ոչ այնքան «մաքուր» հայերենի չափանիշներ հաստատելու, որքան գործնական հաղորդակցության գործիք ստեղծելու անհրաժեշտությամբ: Նրա բառարանը ավելի լայն տարածում ստացավ Անտուան

LINGVARVM ORIENTALIVM

HEBRAICÆ,
RABINICÆ,
SAMARITANÆ,
SYRIACÆ,
GRÆCÆ,
ARABICÆ,
TVRCICÆ,
ARMENICÆ,

ALPHABETA.



PARISIIS,
Apud ANTONIVM VITRAY, Regis
& Cleri Gallicani Typographum.

M. DC. XXXVI.

growth of Protestant influence. Less concerned with linguistic theories than with the practical needs of Europeans who wished to learn Armenian, he wrote an Armenian-Latin dictionary (1621) and an Armenian grammar (1624). The printing office of the Collegium Ambrosianum in Milan produced both books, using a new Armenian type cut for the occasion.

Aside from Abgar's small grammar for children, these were the first Armenian printed dictionary and grammar and therefore essential works for anyone who wished to learn Armenian. Rivola's grammar was based primarily on the material provided by Ambrogio's book, though his dictionary shows he made significant original contributions as well. Later authors criticized him for allowing Turkish and colloquial influences to infiltrate his classical Armenian, but as a missionary working among Armenians in the Ottoman Empire he was probably more interested in producing a tool for practical communication than in establishing a standard for a 'pure' Armenian language. His dictionary gained a wider distribution thanks to the wholly or largely unrevised Paris edition printed by Antoine Vitré in 1633.

Vitré had been appointed King's Printer for Oriental Languages in 1630, taking over the production of Guy Michel Le Jay's great Paris Polyglot Bible (1629-45) from Savary de Brèves. He acquired Savary's exotic types,

Title-page of Antoine Vitré, *Linguarum Orientalium Alphabetum*, Paris 1636.

Անտուան Վիտրեի *Linguarum Orientalium Alphabetum* գրքի անվանաթերթը, Փարիզ, 1636 թ.

Վիտրեի՝ 1633թ. Փարիզում տպագրած (ամբողջովին կամ մեծամասամբ՝ անփոփոխ) հրատարակության շնորհիվ:

1630թ. -ին Վիտրեն նշանակվել էր Արևելյան լեզուների թագավորական տպագրիչ ստանձնելով Գիյ Միշել Լըժեյի Փարիզյան մեծ Բազմալեզու Աստվածաշնչի տպագրությունը (1629-1645թթ.), որը սկսել էր Սավարի դը Բրեվեն: Նա ձեռք է բերել Սավարիի էկզոտիկ տառատեսակները, որոնք պատրաստվել ու գործածվել էին Իտալիայում 1610-ական թվականներին՝ դրանք համալրելով տեղում փորագրված նոր տպատառերով: 1632թ. -ին նա սամարիտյան տպատառեր է պատվիրել փարիզեցի գրաձուլիչ Ժաք դը Սանլեք Առաջինին (1572/73 - 1648թթ.), ով Գարամոնտի ու Գրամոնտի ավանդույթը շարունակող փարիզյան վերջին մեծ գրաձուլիչն էր:

Եթե անգամ ծրագրեր են եղել հայերենը ներառելու Լը ժեյի Բազմալեզու Աստվածաշնչի մեջ, ապա դրանք չեն իրականացել: Ռիվոլայի բառարանը տպագրելուց հետո, սակայն, Վիտրեն հայերեն տառատեսակն այլ էկզոտիկ տառատեսակների հետ օգտագործել է 1636թ. տպագրված «*Linguarum Orientalium*» (Արևելյան լեզուների մասին) գրքում: Միլանի և Փարիզի հայկական տառատեսակները ունեին միայն մեկ չափի (բոլորգիր) փոքրատառեր, առանց մեծատառերի: Մի քանի մեծաչափ փայտափոր երկաթագիր մեծատառեր են պատրաստվել անվանաթերթերի համար: Պարզ երևում է, որ Միլանի տառատեսակը ազդել է Փարիզի տպատառերի ձևավորման վրա, սակայն վերջինները պարզ ոճը հարստացրել են ավելի աշխույժ, գեղագրական հատկություններով: Երևի ավելի հմուտ ձեռքով են փորագրված, և ակնհայտորեն ավելի լավ են տպագրված: Այս

De abbreviaturis Armeniorum.

Abbren.	Valor.	Significatio.
ա	ամէսսսս	Omnis.
աճ	աստուաճ	Deus.
ա՛	աստու ճոյ	Dei, Deo.
ամ	ամէսսս	Omnis.
ամբս	ամէսէքէան	Omnis.
ալէլ	աւրէսէլ	Benedicere.
ալէալ	աւրէսէալ	Benedictus.
ալթի	աւրէսու թիւս	Benedictio.
աղթ	աղալթք	Oratio.
ալլ	աստուաճուլ	Pet Deum.
դպ	դպիր	Scriba.
դալ	դարձէալ	Rufus.
էպոս	էպիսկոպոս	Episcopus.
էրր	էրրորդ	Tertius.
էրկ	էրկրորդ	Secundus.
էրս	էրոսաղէմ	Ierusalem.
էրսէ	էրոսաղէմէ	Ab Ierusalem.
ըդ	ըսդ	Cum.
թբ	թէամբ	Definitio ma-

G ij

Armenian abbreviations from Vitré's book.

which had been cut and used in Italy in the 1610s, but also added new ones cut locally. In 1632 he ordered Armenian type from the Paris punchcutter Jacques de Sanlecque I (1572/73-1648), the last of the great Paris punchcutters that followed in the tradition of Garamont and Granjon.

If there were plans to include Armenian in Le Jay's Polyglot, they never materialized. After Rivola's dictionary, however, Vitré used the Armenian with his other exotic types, culminating in his 1636 *Linguarum Orientalium*. Both the Milan and the Paris Armenian types comprised only a single size and included only the (bolor-gir) lowercase without capitals. A few larger woodcut yerkatagir capitals were made to print the title-pages. The Paris type is clearly influenced by the Milan example, but departs from its sober style with a livelier calligraphic quality. It is perhaps more skilfully cut and certainly better printed. These dictionaries include decorative woodcut initials, but instead of the traditional Armenian decorative letters made from stylized plants, birds or other animals, they apply Western-style decoration to simple yerkatagir capitals: a drop-shadowed letter on a square of decorative background.

Հայերենի հապավումներ, Վիտրեի գրքում





View of Leopolis or Lvov.

Լվովի (լատիներեն՝ Լեոպոլսի) տեսարան

III Armenian printing offices spread but falter

In the first century of printing with Armenian type, the printing offices operated by or working for Armenians had been limited to a few brief efforts at Venice, Constantinople and Rome. But the Armenian mercantile network spread much further and Armenian printing spread with it. Venice's greatest European rival in international trade had been the Republic of Genoa, and its colony Kaffa (now Feodosiya) in the Crimea formed a strategic link in the trade between Southern Europe, Russia and Eastern Europe, and the East. Armenian merchants had operated in the Crimea long before Genoa took control in the thirteenth century. They flourished in the Genoese period, when Kaffa housed both Armenian Apostolic and Armenian Catholic churches. Fed by refugees from the wars in the Armenian homeland and the fall of the Armenian kingdom in Cilicia in 1375, the Armenian population of Kaffa grew to 46,000. Many spoke not only Armenian, but also the local Turkish dialect known as Kipchak, the native language of the Tatar community. Though initially used for business transactions with Tatars, the existence of a later prayer book in that language suggests that some Armenians adopted it for household use. Most

Գլուխ Գ.

Հայկական տպարանները տարածվում են, սակայն անհաստատ են

Հայկական տպատառերով տպագրության առաջին հարյուր տարվա ընթացքում, հայերի կողմից գործարկվող կամ հայերի համար գործող տպարանները սահմանափակվում էին Վենետիկում, Կոստանդնուպոլսում և Հռոմում կատարված փոքրաթիվ ու կարճատև փորձերով: Սակայն հայկական առևտրային ցանցն ավելի հեռուներն ընդլայնվեց և դրա հետ տարածվեց նաև հայկական տպագրությունը: Վենետիկի մեծագույն եվրոպական մրցակիցը միջազգային առևտրի բնագավառում ճենովայի հանրապետությունն էր, և ճենովայի դրիմյան գաղութ Կաֆան (այժմ՝ Թեոդոսիա) Հարավային Եվրոպայի, Ռուսաստանի ու Արևելյան Եվրոպայի և Արևելքի միջև առևտրում ռազմավարական հանգույցի դեր էր կատարում: Հայ վաճառականները Դրիմում առևտրով էին զբաղվում շատ ավելի վաղ, քան քաղաքի՝ տասներեքերորդ դարում ճենովայի իշխանության տակ անցնելը: Նրանք բարգավաճեցին ճենովական ժամանակաշրջանում, երբ Կաֆայում էին տեղակայված թե՛ Հայ Առաքելական, և թե՛ Հայ Կաթոլիկ եկեղեցիները: Հայաստանում մղվող պատերազմների ու 1375թ. Կիլիկիայի Հայկական Թագավորության անկման հետևանքով առաջացած փախստականների հաշվին Կաֆայի հայ բնակչությունն աճեց՝ հասնելով 46000-ի:




Armenians in the Crimea worked in agriculture or crafts and it became a leading centre of the manuscript book trade.

In 1475, however, the Ottomans conquered Kaffa and soon put the whole of the Crimea under control of the Tatars, who acknowledged Ottoman suzerainty. The Armenians, having supported the Genoans, often faced execution, forced conversion to Islam or transportation to Constantinople. Thousands fled the Crimea and most of these refugees formed small groups scattered through Eastern Europe. One of the largest joined a smaller existing community at Lvov in what was then part of Poland (now part of Ukraine). Even at its peak in 1633 the Armenian population of Lvov reached only about 2500.

Lvov 1616

Lvov's relative isolation from the Armenian homeland and relative proximity to the West helped it become a centre of Western learning, known for its manuscript production. The same factors, combined with the small size of the Armenian community, led it to gradually assimilate in the course of the seventeenth century. Both forced and voluntary conversions to Catholicism also played a role. The Polish Armenian Church broke with Echmiadzin in 1689 and was eventually absorbed by Rome. Jesuits facilitated the process, establishing a seminary in Lvov that specialized in



Armenian studies. Hovhannes Karmatanents set up a printing office at the seminary, printing three books in the years 1616-1618. The type may have been manufactured locally, for Lvov was known for its goldsmiths and silversmiths, trades whose techniques often tied them to type manufacture. The first book was a Psalter, the second a medical guide that is not known to survive. The last book, though set in Armenian type, is a prayer book in the Kipchak Turkish dialect of the Tatars, a language the Armenians had brought with them from the Crimea.

Although this printing office had a short life and a very modest output, it was better equipped than almost any up to that day, with two sizes of well-made bolorgir type (at least sometimes sharing their yerkatagir capitals), two larger sizes of cast yerkatagir capitals, still larger initials (presumably woodcut) and a variety of western-style fleurons. The Lvov combination of a sloped bolorgir lowercase with upright yerkatagir capitals, seen only tentatively in Abgar's smallest type, was to become the standard form of Armenian type.¹

New Julfa 1638

The city of Julfa (Jugha) in Eastern Armenia never had a printing office, but its history begins an important new chapter in the history of Armenian printing. Armenia's traditional trade routes had largely collapsed after the fall of the Armenian

Aghotk hasarakats Krisdoneits, Lvov 1618. Prayer book in the Kipchak Turkish dialect, set in Armenian type. The only known copy is preserved in the University Library of Leiden.

Շատերը խոսում էին ոչ միայն հայերեն, այլև ղփչաղերեն կոչվող թուրքերեն բարբառով, որը տեղական թաթարական համայնքի մայրենի լեզուն էր: Թեև հայերը սկզբում ղփչաղերենից օգտվում էին թաթարների հետ առևտուր անելիս, բայց հետագայում այդ լեզվով տպագրված մի աղոթարան վկայում է, որ նրանցից ոմանք բարբառը սկսել էին նաև կենցաղային մակարդակով օգտագործել: Ղրիմում բնակվող հայերից շատերը գյուղատնտեսությամբ կամ արհեստներով էին զբաղվում, և Ղրիմը դարձել էր ձեռագիր գրքի վաճառքի առաջատար կենտրոն:

1475թ.-ին, սակայն, կաֆայի՝ օսմանյան նվաճումից հետո շատ չանցած, ամբողջ Ղրիմը հանձնվեց Օսմանյան իշխանությունն ընդունած թաթարների վերահսկողությանը: Հայերը, ճենովացիներին օժանդակած լինելու պատճառով, հաճախ մահապատժի, բռնի իսլամացման կամ դեպի Կոստանդնուպոլիս տարագրման էին ենթարկվում: Հազարավոր ղրիմահայեր փախստական դարձան, և շատերը փոքր խմբերով սփռվեցին Արևելյան Եվրոպայում: Ամենամեծ խմբերից մեկը միացավ այն ժամանակ Լեհաստանի մասը կազմող Լվովում (ներկայումս՝ Ուկրաինայում) բնակվող փոքրաթիվ համայնքին: Անգամ ամենահայաշատ ժամանակահատվածում՝ 1633թ.-ին, Լվովի հայ բնակչության թիվը միայն մոտ 2500 էր կազմում:

Աղոթի հասարակաց իրիտոնէից, Լվով, 1618 թ.՝ հայատառ ղփչաղերեն գիրք: Հայտնի միակ օրինակը պահվում է Լեյդենի համալսարանի Գրադարանում:

Լվով՝ 1616թ.

Լվովի հարաբերական հեռավորությունը Հայոց աշխարհից և մերձավորությունը Արևմուտքին նպաստեցին, որ քաղաքը դառնա արևմտյան գիտությունների կենտրոն՝ հայտնի իր ձեռագիր մատյանների արտադրությամբ: Այս գործոններն ու համայնքի փոքրաթիվ լինելը պատճառ դարձան հայերի աստիճանական ձուլմանը տեղական բնակչության հետ՝ տասնյոթերորդ դարի ընթացքում: Աղբեցին նաև բռնի և կամավոր դավանափոխությունները կաթոլիկության: 1689թ. Լեհաստանի Հայ եկեղեցին անջատվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և, ի վերջո, տարալուծվեց Հռոմեական եկեղեցու մեջ: Ճիզվիտական միաբանությունը գործընթացին նպաստեց՝ Լվովում հիմնելով հայագիտությամբ զբաղվող հոգևոր ճեմարան: Այդ ճեմարանում Հովհաննես Քարմատանենցը տպարան հիմնեց և երեք ամուն գիրք տպագրեց 1616-1618թթ.-ին: Ցպատառերը, հավանաբար, տեղում էին պատրաստվել, քանի որ Լվովը հայտնի էր ոսկերչությամբ ու արծաթագործությամբ, արհեստներ, որոնք իրենց մասնագիտական նորություններով հաճախ կապվում էին տպատառերի պատրաստման հետ: Այստեղ տպագրված գրքերից առաջինը սաղմոսարան էր, երկրորդը՝ բժշկական ուղեցույց, որից ոչ մի օրինակ չի մնացել: Վերջինն աղոթագիրք էր, հայկական տպատառերով, սակայն հայերի՝ Ղրիմից բերած ղփչաղերեն բարբառով:

Չնայած տպարանի կարճատև կյանքին և շատ համեստ արտադրանքին, այն ավելի լավ էր հագեցված, քան մինչ այդ գոյություն ունեցած զրեթե բոլոր մյուս տպարանները. ուներ երկու չափի լավ պատրաստված բոլորգիր տառատեսակներ (երբեմն փոխանակելով երկաթագիր



Isfahan with 'Tzulfa' or New Julfa in the hilly background.

kingdom in Cilicia, but in the sixteenth century Julfa's merchants began to exploit a new route, bringing Persian silks via the Caspian Sea to Russia and from there to the rest of Europe. The silk trade allowed the city to prosper, especially in the relatively peaceful periods 1555-1578 and 1590-1603. By 1600, Julfa was a flourishing city with 2000 stone houses and a population of 10,000 Armenians.

Like most of Eastern Armenia, Julfa fell under jurisdiction of the Persian Safavids, who benefited greatly from the wealth of the silk trade in their territories. War broke out again in 1603, however, and the advancing Ottomans threatened to capture the city. Rather than risk losing the monopoly in the silk trade to the Ottomans, Abbas, the Safavid Shah, decided to forcibly transport the entire population of Julfa and its surroundings to his own capital city of Isfahan in central Iran – 875 kilometres away and far outside the boundaries of the old kingdom of Armenia. Moreover, he razed the entire city of Julfa, burning every house and every field in the surroundings, leaving nothing for the advancing Ottomans, who had employed a similar 'scorched earth' tactic against the Safavids a half century earlier. This also ensured that no Armenians could try to remain behind.

However much the Shah wished to 'protect' the Armenians from Ottoman control, his forced transport was brutal. Tens of thousands set out in the autumn of 1604 and marched through the winter, more than half dying en



Սպահան քաղաք, բլրաշատ ֆոնում՝ Նոր Ջուղա

route.² Merchants or others whose skills were especially valued were given preferential treatment. When they arrived at Isfahan in 1605 the Shah granted them residency, freedom to travel and tolerance of their religion. He also gave them land on the outskirts of the capital, where they established the city of New Julfa (Nor Jugha) and began to rebuild their lives.

In 1616 the Shah also granted them a monopoly in the silk trade. The Dutch East India Company (VOC) established a seat at New Julfa in 1611, strengthening the trading network to Amsterdam and its further international connections. By 1630 New Julfa's population had grown to 30,000. It had become one of the wealthiest trading centres in the world, with a network stretching from India to Amsterdam. The wealthy New Julfa merchants were to finance Armenian printing offices around the world.

In 1636 a group of Armenians led by the scholarly Bishop of New Julfa, Khachatur Kesaratsi (1590-1646), requested permission from the Pope to establish a printing office in Rome. Once again they hoped to print an Armenian Bible, but once again their request was denied. Instead the Bishop set up an Armenian printing office in New Julfa itself, the first letterpress printing office of any kind on Iranian territory.³

մեծատառերը), ավելի մեծ, ձուլված երկաթազիր մեծատառերի երկու հավաքածու, առավել մեծաչափ (հավանաբար՝ փայտափոր) սկզբնատառեր և արևմտյան ոճի բազմատեսակ ծաղկազարդեր: Շեղ բոլորգիր փոքրատառերի և ուղղահայաց երկաթազիր մեծատառերի լրովյան համակցությունը, որը մինչ այդ միայն Աբգարի փոքրաչափ տառատեսակում էր հանդես եկել, հետագայում դառնալու էր հայերեն տառատեսակների չափանիշը:¹

Նոր Ջուղա՝ 1638թ.

Թեև Արևելյան Հայաստանի Ջուղա քաղաքը երբևիցե տպարան չի ունեցել, բայց նրա պատմությունը հայկական գրատպության պատմության մեջ կարևոր նոր գլխի սկիզբն է դնում: Կիլիկիայի Հայկական Թագավորության անկումից հետո հայկական ավանդական առևտրային ուղիները մեծամասամբ փակվել էին, բայց տասնվեցերորդ դարում Ջուղայի վաճառականները սկսեցին շահագործել նոր ճանապարհ՝ Կասպից ծովով մետաքս փոխադրելով Պարսկաստանից Ռուսաստան և այնտեղից՝ Եվրոպայի այլ երկրներ: Մետաքսի առևտրի շնորհիվ քաղաքը բարգավաճեց, հատկապես 1555-1578թթ. և 1590-1603թթ. համեմատաբար խաղաղ ժամանակաշրջաններում: Մոտ 1600թ.-ին Ջուղան երկու հազար քարե տներով ու տասը հազար հայ բնակչությամբ ծաղկուն քաղաք էր:

Ինչպես Արևելյան Հայաստանի մեծ մասը, այնպես էլ Ջուղան գտնվում էր պարսիկ Սեֆյանների ենթակայության տակ, որոնք մեծապես շահում էին իրենց տարածքում

կատարվող մետաքսի առևտրից: 1603թ.-ին, սակայն, հերթական պատերազմը բռնկվեց, և առաջ շարժվող օսմանյան զորքերը սպառնում էին գրավել քաղաքը: Մետաքսի առևտրի մենաշնորհը օսմանցիներին չզիջելու համար՝ պարսից Շահ Աբասը որոշեց Ջուղա քաղաքի ու շրջակայքի ողջ բնակչությունը բռնությամբ տեղափոխել իր մայրաքաղաք Սպահան՝ կենտրոնական Իրան, որը գտնվում էր 875 կիլոմետր հեռավորության վրա՝ հին Հայաստանի թագավորության սահմաններից շատ հեռու: Դրանով չբավարարվելով, Ջուղա քաղաքը գետնին հավասարեցրեց՝ այրելով նաև շրջակայքի տներն ու դաշտերը, ոչինչ չթողնելով առաջացող օսմանյան զորքերին, որոնք դրանից մոտ կես դար առաջ նույն «նոխրի վերածած հողի» ռազմավարությունն էին կիրառել Սեֆյանների դեմ: Դրանով նա մանավանդ պահպանվեց, որ ոչ մի հայ չփորձեր տեղում մնալ:

Չնայած Շահի հայերին օսմանյան տիրապետությունից «պաշտպանելու» ցանկությանը, բռնագաղթը դաժան էր: Տասնյակ հազարավոր հայեր ճանապարհ ընկան 1604թ.-ի աշնանը և քայքայեցին ամբողջ ձմեռ. ավելի քան կեսը մահացան ճանապարհին:² Առևտրականների և բարձր գնահատվող հմուտ արհեստավորների հանդեպ արտոնյալ վերաբերմունք էր դրսևորվում: Նրանք, 1605թ. Սպահան հասնելուն պես, Շահից ստացան հաստատվելու իրավունք, ճանապարհորդելու ազատություն և կրոնական հանդուրժողություն: Նա նրանց նաև հողատարածքներ հատկացրեց մայրաքաղաքի արվարձաններում, որտեղ հիմնեցին Նոր Ջուղա քաղաքը և նոր կյանք սկսեցին:

1616թ. Շահը նրանց շնորհեց նաև մետաքսի առևտրի մենաշնորհ: «Հոլանդական արևելահնդկական ընկերությունը» (ՀԱԸ, հոլանդերեն՝ VOC) Նոր Ջուղայում հաստատվեց



Jean Baptiste Tavernier, a Frenchman who visited New Julfa in 1650, published an account of this printing office, though it does not entirely accord with the information in the colophons of the books. He says the matrices for casting the type were manufactured locally by an Armenian instrument-maker, 'Jacob Jan... de Zulpha' (Hakobjan [Yerevantsi] of [New] Julfa). By 1650 he was accounted 'le plus grand genie pour la Mechanique de toute la Perse'.⁴ Tavernier says nothing about cutting the punches for striking the matrices, but he seems to suggest that Hakobjan was responsible for the entire production. His account may be somewhat confused, because it says Hakobjan got the idea of setting up the printing office during a visit to Europe and outfitted it in 1641. In fact, the printing office began work in or soon after 1636 and finished its first known book in 1638. Colophons of 1642 and 1644 show that Kesaratsi, dissatisfied with the results, sent his disciple Hovhannes Ktrshents of [New] Julfa to Italy in December 1639 to learn from masters there and to improve the New Julfa printing office on his return.

Arriving in Venice, Hovhannes futilely tried to commission a new type, finding no one able to cut one nor even a type-founder. I have already noted that Venice had lost its leading role long before, and other sources confirm the difficulty of finding skilled punchcutters anywhere in Italy at this time.⁵ Did Tavernier conflate the story of Hakobjan with that of Hovhannes, who returned from Italy only in 1646, but might have sent new cast type or matrices from Italy to New Julfa in 1641? Or did Hakobjan accompany Hovhannes in 1639 and return with some materials in 1641? We may never know.



The New Julfa printing office used five or six different types, all bologgir, in the books published in the years 1638 to 1647. Some of the later types replaced earlier ones, so they may never have used more than two or three at any one time. Of the two types shown in 1638, the larger may have been influenced by Granjon's but is not as well cut, as far as one can judge from reproductions. The few rather crude capitals shown in the reproductions are angular and slightly sloped. It could be the work of a local craftsman without European training and is more old-fashioned than the types used in Lvov. The smaller type has upright round yerkatagir capitals but was sometimes used with sloped angular capitals as well. I have not seen the two or three types used in the third and fourth books, but Nersessian calls the latter 'typographically the best' and says it uses two new small types. Work on this book began in 1641 and was completed in 1642, which accords with the suggestion that the press acquired material from Italy in 1641.⁶

As far as we know, Khachatur produced only these four books: a psalter, lives of the fathers, a missal and a breviary. He died in 1646 and Hovhannes returned from Livorno to take charge of the press. He brought his Livorno type with him (see below), using it in a calendar in 1647. Tavernier wrote that the printing office began work on a complete Bible, but gave it up (so before or during his 1650 visit). He mentions problems with the impression and the ink, but also says professional scribes feared for their livelihood.

56 'An Armenian from Persia', after Jean-Baptiste Vanmour.

Պարսկահայ, ըստ Ժան-Բապտիստ Վանմուրի

Armenian priest.

Հայ քահանա

1611թ.-ին՝ ամրապնդելով Ամստերդամի հետ քաղաքի առևտրային և միջազգային այլ կապերը: Մոտ 1630թ.-ին Սոր Ջուղայի բնակչությունը հասել էր 30000-ի: Այն դարձել էր աշխարհի ամենահարուստ առևտրային կենտրոններից մեկը՝ Հնդկաստանից մինչև Ամստերդամ ձգվող ցանցով: Մեծահարուստ նորջուղայեցի առևտրականները հետագայում պիտի ֆինանսավորեին հայկական տպարանների ստեղծումն ողջ աշխարհում:

1636թ. մի խումբ հայեր, նորջուղայեցի գիտնական Խաչատուր արքեպիսկոպոս Աեսարացու (1590-1646թթ.) գլխավորությամբ, Հռոմի պապից Հռոմում տպարան հիմնելու թույլտվություն խնդրեցին: Դարձյալ հայկական Աստվածաշունչ տպագրելու հույս կար, և դարձյալ բացասական պատասխան ստացան: Փոխարենը, Աեսարացին հենց Սոր Ջուղայում տպարան հիմնեց, որն առհասարակ առաջին տպարանն էր Պարսկաստանի տարածքում:³

Ֆրանսիացի Ժան Բատիստ Տավերնիեն, ով 1650թ.-ին այցելեց Սոր Ջուղա, այս տպարանի մասին մեկնաբանություն է հրապարակել, որը լիովին չի համընկնում գրքերի հիշատակարաններում նշված տվյալներին: Նա գրում է, որ տպատառերը ձուլելու համար մայր տառերը պատրաստել էր տեղական գործիքագործ հայ վարպետ "Jacob Jan... de Zulpha"-ն (Հակոբյան [Երևանցի] Ջուղայեցին): Մոտ 1650թ.-ին նա համարվում էր «Մեխանիկայի մեծագույն հանճարը ամբողջ Պարսկաստանում»:⁴ Տավերնիեն չի գրում, թե ով էր փորագրել մայր տառերի պատրաստման համար անհրաժեշտ տառահայրերը, սակայն հասկացնում է, որ Հակոբյանն էր պատասխանատու ամբողջ գործընթացի համար: Սրա հիշատակումներում շփոթություն կա, քանի որ ասում է, թե Հակոբյանը տպարան հիմնելու

գաղափարը հղացել է Եվրոպա այցելության ժամանակ, և իրականություն է դարձրել 1641թ.-ին: Իրականում տպարանը սկսել է գործել մոտ 1636թ.-ին, և մեզ հայտնի առաջին գրքի տպագրությունն ավարտել է 1638թ.-ին: Ըստ 1642թ. և 1644թ. հիշատակարանների՝ Աեսարացին, դժգոհ արդյունքներից, 1639թ. դեկտեմբերին իր աշակերտ, նորջուղայեցի Հովհաննես Քթրշենցին ուղարկել է Իտալիա՝ տեղական վարպետներից սովորելու և ձեռք բերած գիտելիքները հետագայում Սոր Ջուղայի տպարանում կիրառելու նպատակով: Վենետիկ հասնելով՝ Հովհաննեսն ապարդյուն փորձել է նոր տառատեսակ պատվիրել և չի գտել տառահայր փորագրող կամ նույնիսկ գրաձուլիչ: Նշվել է, որ արդեն տևական ժամանակ Վենետիկը կորցրել էր առաջատար դիրքը, և այլ աղբյուրներ հաստատում են այդ ժամանակներում Իտալիայում հմուտ փորագրիչներ գտնելու դժվարությունը:⁵ Տավերնիեն միզուցե Հակոբյանին շփոթել է Հովհաննեսի հետ, ով Իտալիայից վերադարձել է միայն 1646թ.-ին, բայց, հավանաբար, 1641թ.-ին Իտալիայից նոր ձուլված տպատառեր կամ մայր տառեր է ուղարկել Սոր Ջուղա: Կամ գուցե Հակոբյանը Հովհաննեսին ուղեկցել էր 1639թ.-ին, և որոշ նյութերով վերադարձել 1641թ.-ին: Գուցե երբևէ չիմանանք:

1638-1647թթ. տպագրված գրքերում Սոր Ջուղայի տպարանն օգտագործում էր հինգ կամ վեց տարբեր տառատեսակներ, բոլորն էլ՝ բոլորգիր: Քանի որ հետագայում պատրաստված որոշ տառատեսակներ փոխարինել են նախորդներին, հավանաբար, երբևիցե երկու, երեք տառատեսակից ավելի միաժամանակ չի գործածվել: 1638թ.-ին օգտագործված երկու տառատեսակներից մեծը գուցե Գրանժոնի ազդեցությունն է կրում, սակայն այն

Livorno 1644

Hovhannes of New Julfa went on to Rome, both to find printing materials and to secure permission to set up a printing press, succeeding in both. He found assistants, set up a new printing office at Livorno, probably in 1641, and spent three years and five months printing 1050 copies of the Armenian psalter. He was justly proud of his accomplishment: many of the earlier Armenians often called 'printers' had acquired type and provided editorial expertise (and perhaps Armenian compositors to set the type) for books produced in existing printing offices. But Hovhannes set up an entire printing office from scratch. We have little information about the press runs of earlier Armenian books, but 1050 copies was clearly remarkable.

Hovhannes dedicated his book to his former master, Bishop Khachatur Kesaratsi in New Julfa. The Bishop died in 1646 and Hovhannes returned to New Julfa to continue the printing office, replacing or supplementing its type with his Livorno type in a calendar completed in 1647. As noted above, he finally began work on a Bible, but left it incomplete in 1650. As far as we know this ended New Julfa printing until the 1680s.

այնքան էլ լավ փորագրված չէ, որքանով հնարավոր է դատել վերարտադրություններից: Լուսանկարներում ցուցադրված փոքրաթիվ, բավական կոպիտ մեծատառերը անկյունավոր են ու թեթևակիորեն շեղ: Դրանք, երևի, պատրաստել է տեղական որևէ արհեստավոր՝ առանց եվրոպական ուսուցման. ավելի հնացած ոճով են արված, քան Լվովում պատրաստված տպատառերը: Փոքր տեսակն ունի ուղղահայաց բոլորակ երկաթագիր մեծատառեր, սակայն երբեմն գործածվել է շեղ անկյունավոր մեծատառերի հետ ևս: Ես չեմ տեսել երրորդ ու չորրորդ գրքերում գործածված երկու կամ երեք տառատեսակները, բայց, ըստ Ներսեսյանի, վերջին գիրքը «գրատպական տեսակետից լավագույնն» է և երկու նոր փոքրաչափ տառատեսակներ է գործածում: Այս գրքի վրա աշխատանքը սկսվել է 1641թ.-ին և ավարտվել 1642թ.-ին, ինչը համապատասխանում է այն վարկածին, որ տպարանը 1641թ.-ից Իտալիայից նյութեր է ձեռք բերել:⁶

Որքան մեզ հայտնի է՝ Խաչատուրը տպագրել է միայն այս չորս գրքերը՝ սաղմոսարան, հայրերի կյանք (հարանց վարք), խորհրդատետր և ժամագիրք: Նա մահացել է 1646թ.-ին, և Հովհաննեսը Լիվորնոյից վերադարձել է՝ տպարանի ղեկավարությունը ստանձնելու նպատակով: Նա իր հետ բերել է Լիվորնոյում ձեռք բերած տպատառերը (տես՝ ստորև)՝ օգտագործելով դրանք 1647թ.-ի Պարզատումարում: Տավերնիեն գրում է, որ տպարանը ձեռնամուխ է եղել ամբողջական Աստվածաշնչի տպագրությանը, դադարեցրել է (1650թ.-ի նրա այցից առաջ կամ այցի ընթացքում): Տպագրության ընթացքի և ներկի հետ կապված խնդիրներ է նշում, սակայն գրում է նաև, որ ձեռագիր գրիչները վախենում էին զրկվել իրենց ապրուստի միջոցներից:



Լիվորնո՝ 1644թ.

Հովհաննես Ջուղայեցին մեկնում է Հոռո՝ տպագրական նյութեր փնտրելու և տպարան հիմնելու թույլտվություն ապահովելու համար, և երկուսում էլ հաջողում: Օգնականներ է գտնում, Լիվորնոյում նոր տպարան հիմնում, հավանաբար՝ 1641թ.-ին, և երեք տարի ու հինգ ամսվա ընթացքում տպում հայկական սաղմոսարանի 1050 օրինակ: Արդարացիորեն հպարտանում էր իր կատարած աշխատանքով. առաջին հայ «տպագրիչներից» շատերը տպատառեր էին ձեռք բերել և խմբագրական փորձառություն տրամադրել (ինչպես և, գուցե, հայ գրաշարեր՝ տպատառերը շարելու համար), մինչ գրքերը հրատարակվում էին արդեն գործող տպարաններում: Հովհաննեսը, սակայն, զրոյից հիմնադրեց ամբողջ տպարան: Շատ տեղեկություններ չեն հասել հայկական առաջին գրքերի տպաքանակների մասին, բայց 1050 օրինակ տպաքանակը անկասկած նշանակալից էր:

Հովհաննեսն իր գիրքը նվիրել է Նոր Ջուղայի իր նախկին վարպետին՝ Խաչատուր վարդապետ Աեսարացուն: 1646թ.-ին վարդապետը մահանում է, և Հովհաննեսը վերադառնում է Նոր Ջուղա՝ շարունակելու տպարանի գործերը, և փոխարինելով կամ լրացնելով առկա տպատառերը Լիվորնոյից իր բերածներով՝ 1647թ.-ին ավարտում է մի պարզատումարի տպագրությունը: Ինչպես արդեն նշվել է, նա, ի վերջո, ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի տպագրմանը, սակայն անավարտ է թողնում 1650թ.-ին: Որքանով մեզ հայտնի է, սրանով ավարտվում է գրատպությունը Նոր Ջուղայում մինչև 1680-ական թվականները:



IV

Armenian printing in Amsterdam

The city of Antwerp in the Southern Low Countries (now Belgium) saw its golden age in the years 1560 to 1585. There Christoffel Plantin operated one of the largest and most influential printing offices ever known, acquiring type from leading French punchcutters and supplying books to the whole of Europe. Before Robert Granjon moved to Rome and cut Armenian type, he worked in Antwerp for several years. He cut type for Plantin and probably trained Hendrik van den Keere, who inherited a Ghent typefoundry and proved one of the most talented punchcutters of all time. Armenian printing was still in its infancy, however, and Antwerp had only a small Armenian colony, insignificant compared with that in Venice. Armenian printing found no place there.

Religion, revolt and printing in the Low Countries

The Low Countries had a long tradition of religious innovation, from Thomas à Kempis to Erasmus and Menno Simons, leader of the Mennonites. The Protestant Reformation found fertile ground there. Since 1556 these territories had belonged to the Catholic Habsburg Kings of Spain,



The eastern side of Amsterdam's harbour.

Ամստերդամի նավահանգստի արևելյան մասը

Գլուխ Դ.

Հայկական գրատպությունը Ամստերդամում

1560-1585թթ.-ին Հարավային Նիդերլանդների (այժմ՝ Բելգիայի) Անտվերպեն քաղաքն իր ոսկեդարն էր ապրում: Այնտեղ Քրիստոֆել Պլանտենը ղեկավարում էր բոլոր ժամանակների ամենամեծ ու ամենաազդեցիկ տպարաններից մեկը՝ տպատառեր ձեռք բերելով Ֆրանսիայի առաջատար գրաձուլիչներից ու գրքեր մատակարարելով ամբողջ եվրոպային: Ռոբերտ Գրանժոնը, նախքան Հռոմ գնալն ու հայկական տպատառեր պատրաստելը, մի քանի տարի Անտվերպենում էր աշխատել: Նա տպատառեր է փորագրել Պլանտենի համար և, հավանաբար, ուսուցանել Հենդրիկ վան դեն Կեյրեին, ով ժառանգել է Գենտում գտնվող տպատառերի ձուլարանը և աշխարհի ամենատաղանդավոր գրաձուլիչներից մեկը դարձել: Սակայն, հայկական գրատպությունը դեռ զարգացած չէր, իսկ Անտվերպենի հայ համայնքը փոքրաթիվ էր, Վենետիկի համայնքի համեմատ՝ աննշան: Անտվերպենում հայատառ տպագրության համար պայմաններ չկային:



and King Philip II brutally suppressed the Protestant movements. The religious disputes combined with economic and political factors led the Low Countries to revolt against the King. The Spanish army reconquered the southern provinces, and the fall of Antwerp in 1585 brought an abrupt end to the region's golden age.

Antwerp had been the leading centre of trade, finance and culture in the Low Countries, and many expected its fall to end the Dutch revolt. In many respects, however, it only strengthened the anti-Spanish resolve. The Dutch controlled the waterways and cut off Antwerp's trade, while Protestants from the Southern Low Countries fled the Spanish Inquisition. Antwerp lost more than half its population in four years, including most of its leading artisans and merchants. Many moved to the Northern Netherlands, sometimes after a few years in England or in the Rhein valley in Western Germany. These refugees enriched the North with their craft skills, scholarly training, capital resources and trading networks. Their cultural contribution combined with the North's native shipping and fishing industries to turn the end of Antwerp's golden age into a new golden age for the Northern Low Countries. These provinces, more or less corresponding to the present-day Netherlands, gradually evolved to form Europe's first modern Republic.

The cities of the dominant province of Holland in particular, including its most important port, Amsterdam, rose to prominence beginning in the 1590s. The Dutch East India



Ամստերդամի 'Քաղաքակույսը', Նիկոլաս Վիսսերի քարտեզում, մոտ 1670 թ.: Հայտնիության մեծ մասը բնակվում էր քաղաքի արևելյան թաղերում, Nieuwmarkt հրապարակի շուրջ (մաս):

Քարտեզում Ամստերդամի նորագույն տարածքները բաց գույնով են նշվում: (64-65 էջերում)

The City Virgin of Amsterdam, appearing in Nicolaes Visscher's map of ca. 1670. Most Armenians lived in the eastern part of the city, in the area around Nieuwmarkt (detail). The map shows the recent expansion of Amsterdam as a light-coloured area (p. 64-65).

Կրոն, ապստամբությունն ու տպագրությունն Նիդերլանդներում

Նիդերլանդները կրոնական նորամուծությունների երկար ավանդույթներ ունեն՝ սկսած Թովմաս Կենպացուց, մինչև Էրազմ Ռոտերդամցին ու Մեննո Սիմոնսը՝ մենոնիտների առաջնորդը: Բողոքական ռեֆորմացիան այստեղ պարարտ հող գտավ: 1556թ.-ից այս տարածքը պատկանում էր Իսպանիայի կաթոլիկ Հաբսբուրգ արքայատոհմին, և Ֆիլիպ II թագավորը դաժանաբար հալածում էր բողոքական շարժումները: Կրոնական վեճերը, տնտեսական ու քաղաքական գործոնների հետ միասին, Նիդերլանդները ոտքի հանեցին թագավորի դեմ: Իսպանական զորքերը վերագրավեցին հարավային նահանգները, և Անտվերպենի անկումը 1585թ.-ին կտրուկ կերպով վերջ դրեց այս տարածքների ոսկեդարին:

Քանի որ Անտվերպենը Նիդերլանդների առևտրական, ֆինանսական ու մշակութային կենտրոնն էր եղել, շատերը կարծում էին, թե քաղաքի անկման հետ կավարտվի հոլանդական արստամբությունը: Որոշ առումներով, սակայն, անկումն ամրապնդեց իսպանացիների դեմ պայքարելու վճռականությունը: Հոլանդացիները գրավեցին ջրուղիները՝ կտրելով Անտվերպենի առևտուրը, մինչ Հարավային Նիդերլանդների բողոքականները փախչում էին իսպանական ինկվիզիցիայից: Չորս տարում Անտվերպենը կորցրեց բնակչության ավելի քան կեսը, այդ թվում՝ առաջատար արհեստավորների ու առևտրականների մեծ մասին: Շատերը տեղափոխվեցին Հյուսիսային Նիդերլանդներ, ոմանք՝ մի քանի տարի Անգլիայում կամ արևմտյան Գերմանիայի Հռենոսի դաշտավայրում անցկացնելուց հետո: Այս փախստականները հարստացրին Հյուսիսային

Նիդերլանդներն իրենց վարպետությամբ, գիտելիքներով, դրամական միջոցներով ու առևտրային ցանցերով: Նրանց մշակութային ներդրումը, համադրվելով Հյուսիսի տեղական նավաշինության ու ձկնորսական արդյունաբերության հետ, օգնեցին Անտվերպենի ոսկեդարի վերջը վերածելու Հյուսիսային Նիդերլանդների նոր ոսկեդարի: Այդ նահանգները, որոնք մոտավորապես համընկնում են ներկայիս Նիդերլանդների հետ, աստիճանաբար զարգացան դառնալով եվրոպայի առաջին ժամանակակից հանրապետությունը:

1590-ականների սկզբին բարգավաճում գրանցեցին հատկապես գերիշխող Հոլանդիա նահանգի քաղաքները, այդ թվում՝ նրա ամենաակրևոր նավահանգիստը՝ Ամստերդամը: 1602թ. հիմնադրված «Հոլանդական արևելահնդկական ընկերությունը» (VOC) արագորեն վերածվեց աշխարհի առաջին բազմազգ ընկերության: Այն մարտահրավեր էր նետում իսպանական ու պորտուգալական գաղութային իշխանությանն ամբողջ աշխարհում՝ պատերազմի համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները տեղափոխելով Իսպանիայից Հոլանդական Հանրապետություն, և Ամստերդամը դարձնելով միջազգային առևտրի առաջատար կենտրոն: Հոլանդական ապստամբության անսպասելի ռազմական հաջողությունը Իսպանիային ստիպեց ընդունել Տասներկուամյա զինադադարը (1609-1621թթ.), որը թույլ տվեց հոլանդական առևտրին ու արդյունաբերությանը զարգանալ ու ծաղկել:

AENWYSINGHE

van Cyclus-gevalen
 Meer de nieuwste Reysen der Stad
 van de Oude vermaakt

1. De Begijnen
2. De Nieuwe Kerk
3. De Oude Kerk
4. De Nieuwe Kerk
5. De Nieuwe Kerk
6. De Nieuwe Kerk
7. De Nieuwe Kerk
8. De Nieuwe Kerk
9. De Nieuwe Kerk
10. De Nieuwe Kerk
11. De Nieuwe Kerk
12. De Nieuwe Kerk
13. De Nieuwe Kerk
14. De Nieuwe Kerk
15. De Nieuwe Kerk
16. De Nieuwe Kerk
17. De Nieuwe Kerk
18. De Nieuwe Kerk
19. De Nieuwe Kerk
20. De Nieuwe Kerk
21. De Nieuwe Kerk
22. De Nieuwe Kerk
23. De Nieuwe Kerk
24. De Nieuwe Kerk
25. De Nieuwe Kerk
26. De Nieuwe Kerk
27. De Nieuwe Kerk
28. De Nieuwe Kerk
29. De Nieuwe Kerk
30. De Nieuwe Kerk
31. De Nieuwe Kerk
32. De Nieuwe Kerk
33. De Nieuwe Kerk
34. De Nieuwe Kerk
35. De Nieuwe Kerk
36. De Nieuwe Kerk
37. De Nieuwe Kerk
38. De Nieuwe Kerk
39. De Nieuwe Kerk
40. De Nieuwe Kerk
41. De Nieuwe Kerk
42. De Nieuwe Kerk
43. De Nieuwe Kerk
44. De Nieuwe Kerk
45. De Nieuwe Kerk
46. De Nieuwe Kerk
47. De Nieuwe Kerk
48. De Nieuwe Kerk
49. De Nieuwe Kerk
50. De Nieuwe Kerk

Schale van 3000 Amstelamsche voeten.


AENWYSINGEN

1. De Nieuwe Kerk
2. De Nieuwe Kerk
3. De Nieuwe Kerk
4. De Nieuwe Kerk
5. De Nieuwe Kerk
6. De Nieuwe Kerk
7. De Nieuwe Kerk
8. De Nieuwe Kerk
9. De Nieuwe Kerk
10. De Nieuwe Kerk
11. De Nieuwe Kerk
12. De Nieuwe Kerk
13. De Nieuwe Kerk
14. De Nieuwe Kerk
15. De Nieuwe Kerk
16. De Nieuwe Kerk
17. De Nieuwe Kerk
18. De Nieuwe Kerk
19. De Nieuwe Kerk
20. De Nieuwe Kerk
21. De Nieuwe Kerk
22. De Nieuwe Kerk
23. De Nieuwe Kerk
24. De Nieuwe Kerk
25. De Nieuwe Kerk
26. De Nieuwe Kerk
27. De Nieuwe Kerk
28. De Nieuwe Kerk
29. De Nieuwe Kerk
30. De Nieuwe Kerk
31. De Nieuwe Kerk
32. De Nieuwe Kerk
33. De Nieuwe Kerk
34. De Nieuwe Kerk
35. De Nieuwe Kerk
36. De Nieuwe Kerk
37. De Nieuwe Kerk
38. De Nieuwe Kerk
39. De Nieuwe Kerk
40. De Nieuwe Kerk
41. De Nieuwe Kerk
42. De Nieuwe Kerk
43. De Nieuwe Kerk
44. De Nieuwe Kerk
45. De Nieuwe Kerk
46. De Nieuwe Kerk
47. De Nieuwe Kerk
48. De Nieuwe Kerk
49. De Nieuwe Kerk
50. De Nieuwe Kerk

Getoekende veld van de
 Dierick Straat
 Sijde de Oude Kerk

De Nieuwe Kerk
 Nieuwe Kerk

- Naamen der Bolwerken
1. De Nieuwe Kerk
 2. De Nieuwe Kerk
 3. De Nieuwe Kerk
 4. De Nieuwe Kerk
 5. De Nieuwe Kerk
 6. De Nieuwe Kerk
 7. De Nieuwe Kerk
 8. De Nieuwe Kerk
 9. De Nieuwe Kerk
 10. De Nieuwe Kerk
 11. De Nieuwe Kerk
 12. De Nieuwe Kerk
 13. De Nieuwe Kerk
 14. De Nieuwe Kerk
 15. De Nieuwe Kerk
 16. De Nieuwe Kerk
 17. De Nieuwe Kerk
 18. De Nieuwe Kerk
 19. De Nieuwe Kerk
 20. De Nieuwe Kerk
 21. De Nieuwe Kerk
 22. De Nieuwe Kerk
 23. De Nieuwe Kerk
 24. De Nieuwe Kerk
 25. De Nieuwe Kerk
 26. De Nieuwe Kerk
 27. De Nieuwe Kerk
 28. De Nieuwe Kerk
 29. De Nieuwe Kerk
 30. De Nieuwe Kerk
 31. De Nieuwe Kerk
 32. De Nieuwe Kerk
 33. De Nieuwe Kerk
 34. De Nieuwe Kerk
 35. De Nieuwe Kerk
 36. De Nieuwe Kerk
 37. De Nieuwe Kerk
 38. De Nieuwe Kerk
 39. De Nieuwe Kerk
 40. De Nieuwe Kerk






Company (VOC), established in 1602, quickly became the world's first multi-national corporation. It challenged Spanish and Portuguese colonial rule around the world, diverting essential sources of funding for the war from Spain to the Dutch Republic and making Amsterdam a leading centre of international trade. The Dutch rebellion's surprising military success led Spain to accept a 'Twelve Years' Truce' (1609-1621), which allowed Dutch trade and industry to develop and flourish.

The Dutch Republic also pioneered modern notions of religious tolerance. Freedom of religion became a tenet of the Dutch rebellion against Spain and especially of its most important early leaders: William the Silent, Prince of Orange, and the statesman Johan van Oldenbarnevelt. Although the officially Protestant Dutch Republic gave the Dutch Reformed Church a privileged status, Catholics were often allowed to practice with little interference. Jews flocked to the Netherlands in general and Amsterdam in particular, first Sephardim from Spain and Portugal and later Ashkenazim from Eastern Europe. Protestant rivals to the Dutch Reformed Church were tolerated as well: Lutherans, Mennonites, Remonstrants, Walloons, English Puritans and later Socinians and Huguenots. While orthodox factions in the Dutch Reformed Church regularly tried to restrict religious freedom and occasionally got the upper hand, the seventeenth-century Dutch Republic offered greater religious freedom than any other nation in Europe.

While skaters are enjoying themselves on the Amsterdam canals, two Armenians watch the fun from the quay. Painting by Jan Abrahamsz Beerstraten, ca. 1660.

Հոլանդական Հանրապետությունն առաջինն էր, ուր կրոնական հանդուրժողության ժամանակակից հասկացությունը ծագեց: Դավանանքի ազատությունը հավատամք դարձավ Իսպանիայի դեմ ապստամբած հոլանդացիների և, հատկապես, նրանց վաղ շրջանի կարևորագույն առաջնորդների՝ իշխան Վիլհելմ Օրանցի «Լուսկյացի», և պետական գործիչ Յոհան վան Օլդենբարնեվելտի համար: Թեև պաշտոնապես բողոքական Հոլանդական Հանրապետությունը արտոնյալ դիրք էր շնորհել Հոլանդական Բարեփոխված եկեղեցուն, բայց կաթոլիկներին թույլատրվում էր իրենց հավատը դավանել առանց էական միջամտությունների: Հրեաներն էին խմբերով հիմնվում Նիդերլանդներում և, մասնավորապես, Ամստերդամում, նախ՝ սեֆարդներն Իսպանիայից ու Պորտուգալիայից, ապա նաև աշքենազները՝ Արևելյան Եվրոպայից: Հանդուրժողաբար էին վերաբերվում նաև Հոլանդական Բարեփոխված եկեղեցուն մրցակից բողոքականներին՝ լութերականներին, մենոնիտներին, ռեմոնտրանտներին, վալդեններին, անգլիական պուրիտաններն և, ավելի ուշ, սոցինիաններին ու հուգենոտներին: Թեև Հոլանդական Բարեփոխված եկեղեցու ուղղափառ խմբակցությունները փորձում էին սահմանափակել կրոնական ազատությունը և ժամանակ-առ-ժամանակ հաջողում էին, սակայն տասնյոթերորդ դարում Հոլանդական Հանրապետությունում ավելի շատ կրոնական ազատություններ կային, քան ցանկացած այլ եվրոպական երկրում:

Արտահայտման ազատությունը կրոնի բնագավառից տարածվեց դեպի գիտություն, քաղաքականություն ու գրականություն: Արհեստների ու արդյունաբերության տեխնիկական ու կազմակերպչական առաջընթացի հետ համադրվելով, այն Հոլանդական




This freedom of expression spread beyond religion to science, politics and literature. Aided by technical and organizational advances in craft trades and industry, it made the Dutch Republic the world's most important centre of printing and allied trades. Böhme, Comenius, Descartes, Coccejus, Spinoza, Balthasar Bekker, Bayle, English Puritans and Polish Socinians all published their writings in Holland, though many had been banned elsewhere. The maritime expansion also created a demand for better maps, pilot guides, astronomical works and other books on practical science. The great atlas printer Willem Jansz Blaeu published his 1617 edition of Copernicus knowing that its 1616 appearance on the Roman Catholic index of restricted books stifled his potential foreign competitors. The ready capital and extremely good infrastructure also promoted the Dutch economy and attracted foreign artisans and merchants. The efficiency and low cost of transport on the Dutch canals amazed foreign visitors.

In 1580 and 1584, as political and religious tensions mounted, the Southern Low Countries' two leading typefoundries moved north to Holland and Zeeland. As the Twelve Years' Truce began in 1609, the printers of Antwerp had to beg the city magistrates to give special privileges to the last typefounder in the South, to induce him to reject attractive offers to move to Holland. During the Twelve Years' Truce and the decade that followed, the Netherlands became the world's most important centre of typefounding

Զնչկորդներ զվարճանում են Ամստերդամի ջրանցքների վրա. երկու հայ նավամատույցից նայում են զվարճանքը: Նկար Յան Աբրահամս Բեյրստրատենի, մոտ 1660 թ.

Հանրապետությունը դարձրեց գրատպության և հարակից արհեստների կարևորագույն կենտրոնն աշխարհում: Բյուեն, Կոմենսկին, Դեկարտը, Կոքսեուսը, Սպինոզան, Բալթազար Բեկերը, Բեյլը, անգլիական պուրիտաններն ու լեհական սոցինիանները բոլորն իրենց գրությունները Հոլանդիայում էին հրատարակում, թեև շատերի տպագրումն արգելվել էր այլ երկրներում: Ծովային էքսպանսիայի հետևանքով ավելի լավ քարտեզների, ուղեցույցների, աստղագիտական գործերի և կիրառական գիտությունների այլ գրքերի պահանջ առաջացավ: Քարտեզների հոշակավոր տպագրիչ Վիլեմ Յանսզ Բլաուսը 1617թ.-ին լույս ընծայեց Կոպեռնիկոսի գործը՝ գիտակցելով, որ 1616թ.-ին Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու կողմից արգելված գրքերի ցանկում նրա ներառումը կասեցրել էր հնարավոր որևէ մրցակցություն այլ երկրներում: Ազատ կապիտալն ու զերազանց ենթակառուցվածքը նույնպես նպաստում էին հոլանդական տնտեսության զարգացմանը և գրավում օտար արհեստավորների ու առևտրականների: Հոլանդական ջրանցքներով փոխադրման արդյունավետությունն ու ցածր գները հիացնում էին օտար այցելուներին:

1580թ. և 1584 թ.-ին, քաղաքական ու կրոնական լարվածության սաստկացման պատճառով Հարավային Նիդերլանդներից երկու առաջատար գրաձուլարաններ տեղափոխվեցին դեպի հյուսիս՝ Հոլանդիա և Ջելանդիա: Տասներկուամյա զինադադարի սկզբին, 1609թ.-ին, Ամստերդամի տպագրիչները քաղաքի կառավարությանը խնդրեցին, որ հատուկ արտոնություններ շնորհի Հարավի վերջին գրաձուլիչին, որպեսզի նա մերժեր Հոլանդիա տեղափոխվելու հրապուրիչ առաջարկները: Տասներկուամյա զինադադարի և դրան հաջորդող տասնամյակի ընթացքում Նիդերլանդները դարձան տառահայրերի ու



and punchcutting, producing a wide variety of roman, italic and textura types, as well as Greek, Hebrew, Arabic and other non-Latin types.

Armenian contacts with the Low Countries date back to the Middle Ages, but the Dutch Golden Age gave Amsterdam a central role in Armenian trade. New Julfa's silk trade routes to the West stretched from Shamakhi on the Caspian Sea via Moscow or Archangelsk to Amsterdam. To the East they stretched through Persia to India. The link to Amsterdam also meant a link to the VOC's vast maritime network in the East Indies, the Americas and elsewhere. The VOC's outpost in New Julfa has already been noted. In the first decades of the seventeenth century, itinerant Armenian merchants dealing in silks, jewels, coffee and other Eastern products also played a growing role in Amsterdam's monetary exchange and investment banking. Many stayed a few months before moving on, and by 1640 some began to take up permanent residence.

Setting up an Armenian press in Amsterdam

Several times in the course of more than a century the Armenian Apostolic Church had tried to reach an agreement with authorities in Rome to establish a printing office in Catholic territories. There had



been frequent strife, however, and due in part to Catholic interference no printing office had succeeded in printing an Armenian Bible. When Hovhannes Ankyuratsi wrote to the Catholic authorities in Rome in 1631, trying to persuade them to arrange the printing of an Armenian Bible, he warned them that if they refused the Armenians would have one printed by the 'heretics' in Holland.

In 1656 Hakob IV of New Julfa, the Catholicos at Echmiadzin in Armenia, sent his notary and secretary Matteos Tsaretsi (ca. 1590?-1661) to Italy in yet another attempt to arrange the printing of an Armenian Bible. Tsaretsi stayed in Venice and Rome from the summer of 1656 to the spring of 1658, but failed to make progress. In 1640 Hovhannes of New Julfa had already noted the decline of printing and especially of the production of printing types at Venice and Rome. That certainly hindered Tsaretsi, but he also met resistance from the Catholic authorities and obstruction by certain masters, probably Armenian Catholics working with the Propaganda Fide. Tsaretsi wrote that they convinced the Council of Cardinals to block his efforts, in spite of his appeals to them and to the Pope himself.

In 1658, with no hope of success in Rome, Tsaretsi travelled on to Holland, by this time Europe's leading centre of printing and typefounding. He claims he persevered even though wicked people and two-faced priests in both Venice and Amsterdam tried to prevent him from achieving his goals. On 27 November 1658, using the Armenian merchant

The new Amsterdam City Hall. Two colourful Armenians enliven the crowd in front of the building. Painting by Gerrit Adriaenz Berckheyde, ca.1670.

մայր տառերի պատրաստման համաշխարհային կարևորագույն կենտրոն՝ արտադրելով լատինական, իտալական և տեքստուրա տեսակների, ինչպես նաև՝ հունարեն, եբրայերեն, արաբերեն և այլ ոչ լատինական այբուբենների տառատեսակների լայն տեսականի:

Միդերլանդների հետ հայերի կապերը սկիզբ են առել դեռևս միջնադարում, սակայն հոլանդական Ոսկեդարում Ամստերդամը կենտրոնական դեր ստանձնեց հայկական առևտրի մեջ: Նոր Ջուրայի մետաքսի առևտրական ուղիները տարածվում էին Կասպից ծովից ու Շամախից մինչև Ամստերդամ՝ անցնելով Մոսկվայով կամ Արևաձագեղակով, դեպի արևելք՝ Պարսկաստանով տարածվում էին մինչև Հնդկաստան: Ամստերդամի հետ կապը նաև կապ էր «Հոլանդական արևելահնդկական ընկերության» լայն ծովային ցանցի հետ հոլանդական արևելյան գաղութներում, Ամերիկայում և այլուր: Արդեն նշվել է ՀԱԸ-ի Նոր Ջուրայի հենակետի մասին: Տասնյոթերորդ դարի առաջին տասնամյակներին մետաքսի, թանկարժեք քարերի, սուրճի և այլ արևելյան ապրանքների առևտրով զբաղվող հայ վաճառականները աճող դեր են ստանձնել նաև Ամստերդամի արտարժույթի փոխանակման և ներդրումային բանկերում: Շատերը մի քանի ամիս կայանում էին՝ նախքան ճանապարհը շարունակելը, իսկ արդեն 1640թ.-ին ոմանք մշտական բնակություն հաստատեցին քաղաքում:

Ամստերդամի նոր Քաղաքապետարանը: Գունագեղ հագուստով երկու հայ կենդանացնում են ամբոխը, շենքի առջև. նկար Խեոխտ Ադրիանս Բերկհեյդեի, մոտ 1670 թ.

Հայկական տպարանի հիմնումն Ամստերդամում

Մի դարից ավելի Հայ Առաքելական եկեղեցին փորձում էր Հռոմի իշխանությունների հետ համաձայնության հասնել կաթոլիկ տարածքում տպարան հիմնելու վերաբերյալ: Հաճախակի վեճերի և, մասամբ, կաթոլիկ միջամտության պատճառով, ոչ մի տպարանում չէր հաջողվել հայատառ Աստվածաշունչ տպագրել: Երբ 1631թ.-ին Հովհաննես Անկյուրացին նամակ է հղում Հռոմի կաթոլիկ իշխանություններին՝ փորձելով համոզել նրանց, որ կազմակերպեն հայկական Աստվածաշնչի տպագրումը, նա զգուշացրել է, որ նոր մերժում ստանալու դեպքում հայերն այն տպագրել կտան Հոլանդիայում՝ «հերետիկոսների» միջոցով:

1656թ. Հակոբ Դ Ջուրայցի կաթողիկոսն իր քարտուղար Մատթեոս Ծարեցուն (մոտ 1590-1661թթ.) էջմիածնից ուղարկեց Իտալիա՝ հայկական Աստվածաշնչի տպագրության հերթական փորձը ձեռնարկելու: Ծարեցին Վենետիկում ու Հռոմում մնաց 1656թ. ամռանից մինչև 1658թ. գարունը, սակայն առանց որևէ առաջընթացի: 1640թ.-ին Հովհաննես Ջուրայցին արդեն նկատել էր տպագրության և, մասնավորապես, տպատառերի արտադրության անկումը Վենետիկում ու Հռոմում: Անկասկած, նույնը խանգարեց նաև Ծարեցուն, սակայն նա նաև դիմադրության հանդիպեց կաթոլիկ իշխանությունների և որոշ վարպետների կողմից՝ հավանաբար Պրոպագանդա Ֆիդելի հետ համագործակցող հայ կաթոլիկների: Ծարեցին գրել է, որ նրանք համոզել են Կարդինալների խորհրդին կասեցնելու իր ջանքերը, չնայած նրանց և Հռոմի պապին ուղղված իր հորդորներին:






Armenians in a lively discussion amid the hubbub of Dam Square. Painting by Johannes Lingelbach, ca. 1660.

Shahnazarven as interpreter, he drew up a contract with the leading punchcutter and typefounder of that day, Christoffel van Dijck in Amsterdam.¹ Van Dijck agreed to make 170 punches and 240 matrices for a Text Armenian type, and 170 punches and 240 matrices for a smaller size for printing a Bible.²

Van Dijck was to receive 34 stuivers per matrix and 34 stuivers per punch plus, on completion, a bonus of 10 guilders for his wife. The total would therefore be 1404 guilders, with 100 guilders to be paid in advance and various further instalments as the materials were delivered. Punchcutters typically counted a single punch as a day's work, so cutting these 340 punches was a large job requiring more than a year of his time. His workmen certainly cast type, and some may possibly have made matrices, but he would have cut the punches himself (his son Abraham was only thirteen). The fee, not far short of what Rembrandt could earn in a year, supports the suggestion that Van Dijck anticipated devoting more than a year to his work for the Armenians.

The punchcutter Christoffel van Dijck

Christoffel van Dijck (ca. 1600/05-1669) descended from Dutch refugees who had settled in Breberen, in the Duchy of Jülich. This region in the German Rheinland, just outside the Habsburgs' Dutch territories, had attracted many




Աշխուժորեն բանավիճող հայեր, Դամ հրապարակի եռուզեռի մեջ. նկար Յոհաննես Լինգելբախի, մոտ 1660 թ.

տասներեք տարեկան էր): Վարձատրությունը, որը շատ չէր զիջում Ռեմբրանտի տարեկան վաստակած գումարին, վկայում է, որ վան Դեյքը նախատեսում էր մեկ տարուց ավելի ժամանակ տրամադրել հայերի համար կատարելիք իր գործին:

Փորագրիչ Քրիստոֆել վան Դեյք

Քրիստոֆել վան Դեյքի (մոտ 1600/05 – 1669 թթ) նախնիները հոլանդացի փախստականներ էին, որոնք հաստատվել էին Յուլիխ դքսության Բրեբերեն քաղաքում: Գերմանական Ռայնլանդի այս շրջանը, որը գտնվում է հենց Հաբսբուրգների հոլանդական տարածքների հարևանությամբ, դեռ 1520-ականներին շատ անաբապտիստների էր գրավել և հոլանդացի բողոքականների սիրած հանգրվանը դարձել Հակառեֆորմացիայի վաղ շրջանում: 1550-ականներին Ռայնլանդի բողոքականներից շատերն ընդունեցին կալվինիզմը: Մոտ 1568թ.-ին, սակայն, Յուլիխի Դուքսը շրջվեց կալվինիստների դեմ, և շատերը դարձյալ փախուստի դիմեցին: Վան Դեյքի տոհմի մասին առաջին ուղղակի նշումների համաձայն՝ նրանք գտնվել են Ռայնլանդ-Պֆալց մարզում, որի իշխանը միացել էր կալվինիստական շարժմանը և ողջունում էր Հոլանդական Բարեփոխված եկեղեցու փախստական անդամներին: Քրիստոֆելի հայրը՝ Գիլբերտ Բրեբերենուս վան դե Դեյքը (1552 – 1621թթ.) գրանցվել է Հայդելբերգի համալսարանում 1568թ.-ին և դարձել Բարեփոխված եկեղեցու քահանա՝ ի վերջո հաստատվելով Դեքսհայմ քաղաքում, որտեղ էլ ծնվել է Քրիստոֆելը:



During the Twelve Years' Truce many Dutch refugees or their descendants returned to the Netherlands, including some of Van Dijck's more distant relatives. The devastation of the Thirty Years' War led many to leave Frankenthal, especially after the English relinquished it to Catholic Spain by treaty in 1623. At least three master goldsmiths or silversmiths from Frankenthal worked in Amsterdam before 1640. In that year we find our first record of Christoffel van Dijck, as a journeyman goldsmith in Amsterdam, probably working in the jewellery trade. He never became a master goldsmith, but may have begun cutting punches for other Amsterdam typefoundries before he set up his own on 1 May 1647. The number of people working in the punchcutting and typefounding trades was so small that the guilds made little effort to control their activities at this date.

Van Dijck set up his foundry with three workmen: two journeymen and an apprentice, to judge from their ages. This was in a rented house on the Bloemgracht, five or six houses from the great atlas printer, Joan Blaeu. Although Blaeu's printing office had its own in-house typefoundry, he became one of Van Dijck's earliest and most important customers. The extent of Van Dijck's relations with the Elzeviers in Leiden has been greatly exaggerated, but he did supply some of their types by at least 1654 and may have cut the Ethiopic type they introduced in that year. The concentration of punchcutters in Amsterdam may have been too great, for the half-brothers Bartholomeus and Reinier Voskens



Four capital letters, probably all cut by Christoffel van Dijck. From top to bottom: Text (18 point) 1661, Mediaen (12.5 point) 1663, Augustijn (13.5 point) 1667 and Bourgois (9 point) 1669. Nearly every letter in the first two, Text and Mediaen, is fragmented into two or more pieces. In the second two, Augustijn and Bourgois, they are not.

Դեքսհայն ընդամենը երեսունհինգ կիրումետր հեռավորության վրա էր գտնվում Ֆրանկենթալ քաղաքից, որը 1562թ.-ին հիմնել էին հոլանդացի բողոքական փախստականները: Ըստ երևույթին, Գիլբերտի քույրն ու եղբայրը հաստատվել են այնտեղ մոտ 1570թ.-ին, և քրոջ ամուսինը դարձել է տեղական Հոլանդական Բարեփոխված եկեղեցու քահանայ: Տոհմի երկու ճյուղերը սերտ կապեր են պահպանել, և Քրիստոֆելի ավագ (խորթ) եղբայր Յոհաննեսը նույնպես քահանա է եղել Ֆրանկենթալի Հոլանդական Բարեփոխված եկեղեցում: Հնարավոր է, որ Քրիստոֆելը մանկուց խոսել է գերմաներեն և հոլանդերեն: Ֆրանկենթալ քաղաքը հայտնի էր իր ոսկերիչներով և կնուսքների ու ամուսնությունների գրանցումները վկայում են, որ Քրիստոֆելի ազգականները սերտորեն կապված են եղել առնվազն երկու ոսկերիչների հետ: Կարելի է ենթադրել, որ նա աշակերտել է ֆրանկենթալյան մի ոսկերչի, գուցե հոր մահից հետո՝ մոտ 1621 թվականին:

Տասներկուամյա զինադադարի ընթացքում հոլանդացի փախստականներից կամ նրանց ժառանգներից շատերն են վերադարձել Սիդերլանդներ, այդ թվում՝ նաև վան Դեյքի հեռավոր ազգականներից ոմանք: Երեսունամյա պատերազմի սարսափը շատերին բշել է Ֆրանկենթալից, մասնավորապես, երբ անգլիացիները քաղաքը 1623թ.-ին դաշնագրով հանձնել են կաթոլիկ Իսպանիային: Մինչև 1640թ. առնվազն երեք ֆրանկենթալյան ոսկերիչներ կամ արծաթագործներ են աշխատել Ամստերդամում: Այդ տարվա գրանցումներում առաջին անգամ երևում է Քրիստոֆել վան Դեյքի անունը, որպես ենթավարպետ ոսկերիչ Ամստերդամում, որը հավանաբար զբաղվել է ոսկերչական



չորս մեծատառ, որոնք, հավանաբար, Քրիստոֆել վան Դեյքն է փորագրել վերևից ներքև՝ Տեքստ (18 կետաչափ) 1661 թ., Մեդիան (12,5 կետաչափ) 1663 թ., Աուգուստին (13,5 կետաչափ) 1667 թ. և Բուրժուա (9 կետաչափ) 1669 թ.: 'Տեքստ' ու 'Մեդիան' տառատեսակների գրեթե բոլոր տառերը մասնատված են: 'Աուգուստին' ու 'Բուրժուա' տառատեսակների՝ ոչ:

առևտրով: Նա երբեք էլ վարպետ ոսկերիչ չի դարձել, բայց հնարավոր է, որ սկսել է տառահայրեր փորագրել ամստերդամյան այլ գրաձուլարանների համար՝ մինչև 1647թ. մայիսի մեկին իր սեփական գրաձուլարանի հիմնումը: Այդ ժամանակ փորագրման ու գրաձուլման ոլորտում աշխատողներն այնքան փոքրաթիվ էին, որ համբարություններն առանձնապես ջանք չէին գործադրում նրանց գործունեությունը վերահսկելու համար:

Վան Դեյքն իր ձուլարանը հիմնել է երեք բանվորով, նրանց տարիքներից դատելով՝ երկու ենթավարպետ և մի աշակերտ: Բլումխարախտ փողոցում տուն է վարձել՝ ատլասների հոչակավոր տպագրիչ Յոհան Բլաուից ընդամենը հինգ-վեց տուն այն կողմ: Չնայած Բլաուի տպարանն ուներ իր ներքին գրաձուլարանը, նա դառնում է վան Դեյքի ամենաառաջին ու կարևորագույն հաճախորդներից մեկը: Թեև Լեյդեն քաղաքի Էլզեվիր տպարանի հետ վան Դեյքի հարաբերությունները մեծապես չափազանցված են, բայց ճիշտ է, որ մինչև 1654թ. նա պատրաստել է նրանց տառատեսակներից մի քանիսը և, հավանաբար, Էլզեվիրի այդ տարի գործածած եթովպերեն տառատեսակը ևս ինքն է փորագրել: Գուցե Ամստերդամում փորագրիչների մեծ կուտակումն էր պատճառը, որ խորթ եղբայրներ Բարթոլոմեուս և Ռեյնիլր Վոսկենսները՝ վան Դեյքի ամենահմուտ մրցակիցները, 1650թ.-ից քիչ հետո տեղափոխվում են Գերմանիա: ժառ Կալետը, ում ամստերդամյան ձուլարանը մեծությամբ ու կարևորությամբ մրցակցում էր վան Դեյքին հետ, անձամբ չէր արտադրում տառատեսակներ, այլ ապավինում էր իր ունեցած պաշարին կամ դիմում էր այլ փորագրիչների: 1658թ.-ին վան Դեյքը, փաստորեն, մենաշնորհ էր վայելում Սիդերլանդներում որակյալ տառատեսակների արտադրության գործում: 1663թ.-ին նա

Van Dijck's Armenian punches and matrices

By acquiring not only Armenian matrices but also punches, Tsaretsi prevented Van Dijck from supplying the same type to other printers and also insured that the press could have additional sets of matrices made should they ever need them. This can be compared with purchasing photographic negatives along with prints. The skill and experience required to make a good set of matrices should not be underestimated. The matrix maker determines the alignment and relative spacing of the letters, though the type caster can reduce or expand the spacing of the entire fount. But cutting the punches used to make the matrices fixes the form of the letters. It requires the greatest technical skill and the best judgement of letterforms.



Armenian boy from Amsterdam in sumptuous clothing. Etching after a lost painting by Caspar Netscher, 1665.

Punchcutters and typefounders rarely sold punches for the bread-and-butter types of their foundries, and if they did they usually charged more than for matrices. By requiring payment for each punch and matrix separately, even at the same price, and by setting a higher price than normal for a matrix, Van Dijk received considerably more than he would for merely supplying matrices for a roman or italic. In 1670 his son Abraham sold roman, italic and Greek matrices to John Fell at Oxford for 23-28 stuivers per matrix, while Jaques Vallet asked only 20 stuivers.

In charging 34 stuivers per matrix plus 34 stuivers per punch, Van Dijk no doubt anticipated that the unfamiliar forms of the Armenian letters would demand more time than the more common types. There would also have been few customers for Armenian type, even if he had been able to keep the punches or make sets of matrices for his own use. He therefore had to recompense his time and expenses with this single sale. Since Van Dijk's 1658 contract does not require him to supply moulds or to cast type, it may have been understood that the Armenians would ask him to cast the type for them as well, giving him additional income and adding both material and labour costs to the bill.

Ամստերդամցի հայ տղա, շքեղ հագուստով: Փորագրություն, ըստ Կասպար Նետսերի (կորսված) նկարի, 1665 թ.



Hand-coloured opening page of *Yisus Vordi*, the first Armenian book printed in Amsterdam (1661).

Armenian printing comes of age: Amsterdam 1661

The 1658 contract specifies no date for completion, but after about two years Van Dijk had apparently cut only about a hundred punches for the Text bolorgir. That was nevertheless enough to make matrices and cast a basic fount, so that printing could begin in December 1660.⁴ Tsaretsi may have set up in a rented room in the house of the Walloon merchant Jean Gaston on the canal called Kromboomssloot, where the printing office is first documented in 1663. The Armenian Apostolic congregation was to buy a warehouse on that canal in 1713 and build their church on the premises. It remained the centre of the Amsterdam Armenian community into the nineteenth century. The colophon of Tsaretsi's first book notes that the press's compositors were Dutch and could not read Armenian, and the pressmen were no doubt Dutch as well. In later years many – perhaps most – of the workmen were Armenian.

Ձեռքով գունավորված առաջին էջը՝ Յիսուս Որդի վերնագրով Ամստերդամում առաջին տպագրված գրքի (1661 թ.)

ավելի մեծ տարածություն ձեռք բերեց էլանդ-փոլոցի հյուսիսային մասի մի բակում, ուր տանում էր հետագայում նրա խանութի խորհրդանիշի պատճառով Սալամանդր կոչվող նրբանցքը:


Վան Դեյքի հայկական տառահայրերն ու մայր տառերը

Ձեռք բերելով հայերեն տառատեսակի ոչ միայն մայր տառերն, այլև՝ տառահայրերը, ծարեցին կանխարգելեց՝ վան Դեյքին նույն տպատառերը տրամադրելու այլ տպագրիչների և, դրանով նաև ապահովեց մայր տառերի լրացուցիչ հավաքածուների պատրաստումը, եթե տպարանը երբևէ դրանց կարիքն ունենար: Սա կարելի է համեմատել իրենց նեգատիվներով լուսանկարներ գնելու հետ: Պետք չէ թերագնահատել որակյալ մայր տառեր արտադրելու համար անհրաժեշտ հմտություններն ու փորձը: Մայր տառեր արտադրողը որոշում է տառերի տեղադրումն ու հարաբերական հեռավորությունը, թեև գրածուկիչը կարող է նվազեցնել կամ ընդլայնել ամբողջ ձուլվածքի միջտարածությունները: Սակայն մայր տառերի արտադրման համար տառահայրեր փորագրելով՝ վարպետը անփոփոխ է դարձնում տպատառերի ձևը: Այս գործը պահանջում է տեխնիկական մեծագույն հմտություն և տառերի ձևավորման լավագույն մտածողություն:

Փորագրիչներն ու գրածուկիչները հազվադեպ էին վաճառում իրենց հացն ու ջուրն ապահովող ձուլարանի տառատեսակների տառահայրերը, իսկ վաճառելու դեպքում՝

ավելի բարձր գին էին պահանջում, քան մայր տառերի համար: Յուրաքանչյուր տառահայրի և մայր տառի դիմաց առանձին գումար պահանջելով, նույնիսկ հաշվելով նույն գինը, և մայր տառերի համար սովորականից մեծ գումար պահանջելով, վան Դեյքն այս դեպքում շատ ավելի մեծ գումար է վաստակել, քան լատինական կամ իտալիկ տառատեսակների համար միայն մայր տառեր տրամադրելիս: 1670թ.-ին նրա որդի Աբրահամը լատինական, իտալիկ և հունական մայր տառեր վաճառեց Օբսֆորդում բնակվող Ջոն Ֆելլին, յուրաքանչյուրի համար գանձելով քսաներեքից քսանութ ստայվեր, մինչդեռ ժաբ Վալետը դրանք ընդամենը քսան ստայվերով էր վաճառում:

Վան Դեյքի՝ յուրաքանչյուր մայր տառի դիմաց 34 ստայվեր և տառահայրի դիմաց նույն գինը պահանջելուց կարելի է եզրակացնել, որ նախատեսվում էր, որ հայերեն տառերի անսովոր ձևերն ավելի շատ ժամանակ կպահանջեն, քան ավելի ծանոթ տառատեսակները: Ընդ որում, հայերեն տառատեսակներ գնողները քիչ կլինեին, նույնիսկ եթե տառահայրերը իր մոտ պահելու կամ սեփական օգտագործման համար մայր տառեր արտադրելու հնարավորություն ունենար: Այս դեպքում հարկավոր էր մի գործարքով հատուցել իր ծախսած ժամանակն ու գումարը: Վան Դեյքի 1658թ. պայմանագիրը չի նշում կաղապարների տրամադրման կամ տպատառերի ձուլման մասին, հավանաբար ենթադրելի է, որ հայերը կխնդրեն նաև իրենց համար տառերը ձուլել, այսպիսով ապահովելով լրացուցիչ եկամուտ, հաշվին ավելացնելով նյութերի ու աշխատուժի ծախսերը:



78 Title-page of *Yisus Vordi* (1661).

As a trial of the new type, Tsaretsi began printing Nerses Shnorhali's twelfth-century poem *Yisus vordi* (Jesus the son). Unfortunately he died on 1 February 1661 with only 24 of the 38 sheets printed.⁵ The Amsterdam Armenian merchant, Avetis Ghlichentsi Yerevantsi, had helped finance the printing office. His brother, Bishop Voskan Yerevantsi, was abbot of the Saint Sargis monastery near Ushi and theologian at the seminary of the Holy Echmiadzin monastery. Avetis convinced Tsaretsi to bequeath the printing office to these two monasteries and to leave its management temporarily in his hands. The printing office was to take its name from the two monasteries for fifty-seven years as it moved from city to city and changed managers and orientation.


With the first book still unfinished, there was no income to offset the expenses of setting up the press, buying paper, etc., and the demands of the creditors went beyond Avetis's means. A like-minded merchant paid off the debts, allowing work to continue. Avetis was no scholar and declared himself unsuited to the task of running the press, or at least its editorial aspects. The books were in classical rather than modern Armenian, just as most European books printed before about 1540 were in Latin rather than vernacular languages. Avetis notes in his first colophon that he could read the text only with difficulty. Since no

Յիսուս Որդի գրքի (1661 թ.) անվանաթերթը

Հայկական գրատպությունը հասունանում է. Ամստերդամ՝ 1661թ.

1658թ.-ի պայմանագիրը աշխատանքի ժամկետ չէր նշում, սակայն մոտ երկու տարի անց վան Դելթը փորագրել էր «տեքստ» մեծության բոլորգիր տառատեսակի ընդամենը մոտավորապես հարյուր տառահայր: Դա բավարար էր, սակայն, մայր տառեր արտադրելու և հիմնական հավաքածու ձուլելու համար, որպեսզի 1660թ.-ի դեկտեմբերին տպագրությունը սկսվեր:՝ Հավանաբար ծարեցին իր տպարանը տեղադրել էր վարձով վերցրած սենյակում, վաղն առևտրական ժան Գաստոնի տանը, կրոմբոմստու կոչվող ջրանցքի ափին, որի հասցեով տպարանն առաջին անգամ գրանցվել է 1663թ.-ին: Այդ նույն ջրանցքի մոտ Հայ Առաքելական միաբանությունը 1713թ.-ին պահեստ պիտի զներ և եկեղեցի կառուցեր այդ տարածքում: Այն Ամստերդամի հայ համայնքի կենտրոնը եղավ մինչև տասնիններորդ դարը: Ծարեցու առաջին գրքի հիշատակարանում նշվում է, որ տպարանի գրաշարերը հոլանդացիներ էին և հայերեն կարդալ չգիտեին, և անկասկած տպագրական մամուլի բանվորները նույնպես հոլանդացիներ էին: Հետագայում բանվորներից շատերը հայեր էին:

Նոր տառատեսակը փորձելու համար, ծարեցին սկսեց տպագրել Ներսես Շնորհալու *Յիսուս որդի տասներկուերորդ դարի ստեղծագործությունը*: Դժբախտաբար, նա մահացավ 1661թ. փետրվարի մեկին, երբ 38 էջից տպագրել էր ընդամենը 24-ը:՝ Ամստերդամի հայ վաճառական Ավետիս Դիմեցի երևանցին օգնել էր ֆինանսավորել տպարանը: Նրա եղբայր Ոսկան եպիսկոպոս երևանցին Ուշիի Սուրբ Սարգիս վանքի առաջնորդն էր և




Yisus Vordi. Woodcut of the great fish vomiting Jonah onto the land.

Յիսուս Որդի. փայտի փորագրություն՝ մեծ ձուկ Յոնային է ործկում ցամակի վրա

աստվածաբան՝ Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանում: Ավետիսը ծարեցուն համոզել էր, որ տպարանը կտակի այդ երկու վանքերին և տպարանի ղեկավարությունը ժամանակավորապես հանձնի իրեն: Տպարանը հիսունյոթ տարի շարունակ կրելու էր Ս. Էջմիածնի և Ս. Սարգիս անունները՝ մինչ քաղաքից-քաղաք էր տեղափոխվում և տնօրեններ ու ուղղություններ փոխում:

Առաջին գիրքն անավարտ մնալու պատճառով եկամուտ չկար տպագրական սարքավորումների, թղթի և այլ ծախսերը մարելու համար, իսկ պարտատերերի պահանջները Ավետիսի կարողություններից վեր էին: Համախոհ մի վաճառական փակում է պարտքերը՝ հնարավորություն տալով գործը շարունակել: Ավետիսը գիտնական չէր և իրեն անկարող էր համարում տպարանը ղեկավարել, գոնե՝ խմբագրական առումով: Գրքերը գրաբարով էին գրված, ոչ թե ժամանակակից հայերենով, ինչպես եվրոպական գրքերից շատերը մինչև 1540թ. գրված էին լատիներենով, այլ ոչ թե այդ ժամանակների խոսակցական լեզուներով: Ավետիսն իր առաջին հիշատակարանում նշում է, որ մեծ դժվարությամբ էր կարդում տեքստը: Քանի որ տպարանի մնացած աշխատողները առհասարակ չէին կարդում հայերեն, նա ստիպված էր տեքստերը սրբագրել՝ դրանք ուշադիր համեմատելով ձեռագիր կամ տպագիր բնագրի հետ, որը տպագրական «օրինակ» էր ծառայում:

Ավետիսն, իր կարողությունների առավելագույն ջանքերով, առաջին գրքի տպագրությունն ավարտին է հասցնում 1661թ. մարտի 25-ին և միանգամից ձեռնարկում օրացույց պարունակող ժամագրքի տպագրումը՝ իր եղբայր Ոսկանին խնդրելով, որ գա Ամստերդամ: Ծնունդով երևանցի նրանց հայրը Ջուղայում էր ապրել: Նա և իր կինն



Yisus Vordi. A page of text with the abbreviated name of God as a woodcut bird initial.

He returned to New Julfa and studied with Khachatur Kesaratsi, Bishop of New Julfa, who had already taken an interest in printing and would later set up the printing office there. In 1634 Voskan returned to Echmiadzin, where Catholicos Pilippos I appointed him to his posts at the Saint Sargis monastery and Echmiadzin seminary. New Julfa's growing importance was reflected by the choice of Pilippos's successor in 1655: Hakob IV of New Julfa.

Voskan had been preparing the text of the Armenian Bible and seemed the natural person to guide the printing office. Not yet able to leave, he sent one of his students, Karapet Andrianatsi, to help run the press. Karapet arrived in 1661 and began work on a book of psalms, which he completed on 15 July 1662. It was still set in the same Text bolorgir, now explicitly credited to Christoffel van Dijck in the colophon. In August 1662 the press began work on a prayer book, completed in 1663 and appearing under Avetis's name. It finally introduced the smaller type intended for the Bible. Avetis oversaw the production of this type, commissioned by Tsaretsi from Van Dijck in 1658, but he presumably left most of the editorial matters to Karapet.⁶

Յիսուս Ռոյի տեքստով էջ Աստվծո (կրճատված) անունը՝ թռչնազարերով

այն տասնյակ հազարավոր հայերի շարքում են եղել, որ բշվել էին Սպահան և 1605թ.-ին հիմնել Նոր Ջուղան: Այնտեղ էլ ծնվում է Ոսկանը (1614 - 1674թթ.)՝ ուսումը ստանալով Էջմիածնի հոգևոր ճեմարանում: Ծննդավայր վերադառնալուց հետո սովորում է նորջուղայեցի արքեպիսկոպոս Խաչատուր Կեսարացու հետ, ով արդեն գրատպությանը էր հետաքրքրվում և հետագայում Նոր Ջուղայի տպարանն էր հիմնելու: 1634թ.-ին Ոսկանը նորից Էջմիածին է վերադառնում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Փիլիպպոս Ա-ի կողմից պաշտոն ստանալով Սուրբ Սարգսի վանքում և Էջմիածնի հոգևոր ճեմարանում: Նոր Ջուղայի աճող կարևորությունն իր արտացոլումն է գտնում 1655թ.-ին Փիլիպպոսի հաջորդի՝ Հակոբ Դ Ջուղայեցու ընտրությամբ:

Ոսկանը նախապատրաստում էր հայկական Աստվածաշնչի տեքստը և բնական էր, որ նա ղեկավարեր տպարանը: Քանի որ դեռևս չէր կարող մեկնել, նա ուղարկում է աշակերտներից մեկին՝ Կարապետ Անդրիանացուն, որպեսզի օգներ աշխատեցնելու տպարանը: Կարապետը 1661թ.-ին Ամստերդամ հասնելուն պես սկսեց սաղմոսարան տպագրել՝ ավարտելով 1662թ. հուլիսի 15-ին: Տեքստը շարված էր «տեքստ» մեծության նույն բոլորգիր տառատեսակով, որը գրքի հիշատակարանում վերագրվում է Քրիստոֆել վան Դեյքին: 1662թ. օգոստոսին տպարանը սկսում է տպագրել մի աղոթագիրք, որը 1663թ.-ին լույս է ընծայվում Ավետիսի անունով: Այն, ի վերջո, ներմուծում է Աստվածաշնչի համար նախատեսված փոքրաչափ տառատեսակը: Ավետիսը վերահսկել է այս տառատեսակի պատրաստումը, որի փորագրությունը ծարեցին դեռ 1658թ.-ին պատվիրել էր վան Դեյքին: Խմբագրական խնդիրները, հավանաբար, գերազանցապես Կարապետին են վստահվել:⁶



St. Luke, woodcut from the first printed Bible in Armenian. On pp. 82-83 the opening of Genesis. Amsterdam, Holy Echmiadzin and St. Sargis Press, 1666-1668.

Bishop and printer: Voskan Yerevantsi and the Armenian Bible

Meanwhile Voskan Yerevantsi had left Echmiadzin for Amsterdam on 27 September 1662, stopping in Livorno and Rome to seek financial support for the production of the Bible. With the type finished, Karapet at work and Voskan on his way, Avetis could attend to other business. He sealed the printing office and on 17 May 1663 drew up documents transferring its management to Voskan. He left the key in a crate with the type in the hands of a caretaker, to be given to Voskan on his arrival.⁷

Avetis then set off for Smyrna, stopping in Livorno to meet Voskan and give him the deed for the transfer of the printing office. Voskan sent word to Karapet in Amsterdam to have 'neumes' cut for the Mediaen bolorgir type: an extensive system of inflection marks placed above the words of psalms or chants to indicate their tonality. On 20 February 1664 he made agreements with three New Julfa merchants at Livorno to support the Bible financially. He then quickly left for Amsterdam, where he took charge of the printing office, still aided by Karapet.

With a view to the planned Bible, Voskan commissioned a third type cut for the press, a Mediaen notrgir, the first type ever cut in that style. An upright cursive, the notrgir

Սուրբ Լուկաս, փայտի փորագրություն, առաջին տպագիր հայկական Աստվածաշունչը: 82-83 էջերում՝ Տննորդ գրքի առաջին էջերը. Ամստերդամ, Սր. Էջմիածնի և Սր. Սարգսի տպարան, 1666-1668 թ.


Եպիսկոպոս-տպագրիչը. Ոսկան Երևանցին և հայկական Աստվածաշունչը

Ոսկան Երևանցին Էջմիածնից Ամստերդամ է մեկնում 1662թ. սեպտեմբերի 27-ին՝ կանգ առնելով Լիվորնոյում ու Հռոմում՝ Աստվածաշնչի տպագրության համար ֆինանսական աջակցություն փնտրելով: Տառատեսակը պատրաստ էր, Կարապետը գործի էր անցել, իսկ Ոսկանը ճանապարհին էր, և Ավետիսն արդեն կարող էր այլ գործերով զբաղվել: Նա կնքում է տպարանը և 1663թ. մայիսի 17-ին փաստաթղթերը պատրաստում, որոնցով տպարանի ղեկավարությունը հանձնում է Ոսկանին: Բանալին և տպատառերը զետեղելով մի արկղում, թողնում է դրանք խնամակալի մոտ՝ Ոսկանին ժամանելուն պես փոխանցելու համար:⁷

Ավետիսն, այնուհետև, մեկնում է Ջուլուռնիա՝ կանգ առնելով Լիվորնոյում՝ Ոսկանին հանդիպելու և տպարանի փոխանցման փաստաթուղթը նրան հանձնելու համար: Ոսկանը Ամստերդամում գտնվող Կարապետին գրում է, որ «մեղիան» մեծության բոլորգիր տառատեսակի համար պատրաստել տա երաժշտական խազեր՝ հնչերանգային նշանների լայն համակարգ, որոնք դրվում են սաղմոսի կամ ներբողի բառերի վրա՝ նրանց տոնայնությունը նշելով: 1664թ. փետրվարի 20-ին Լիվորնոյում Աստվածաշնչի տպագրման ֆինանսավորման վերաբերյալ պայմանագիր է կնքում երեք նորջուղայեցի վաճառականների հետ: Ապա արագորեն մեկնում է Ամստերդամ, որտեղ ստանձնում է դեռևս Կարապետի օգնությամբ աշխատող տպարանի ղեկավարությունը:



Լաւոսոց ան Էդէիլ Լոյս: և Էդիւ Լոյս:



Լաւոսոց ան Ժողովացի Լոյսոյ որ ինքնոյ երկնից



Լաւոսոց ան Բշխեացի երկր շխմաւոր Խորոց:



Լաւոսոց ան Էդէիլն Լաւոսոց Ի հարստութիւն



Լաւոսոց ան հոնցն Լոյս շխման շնչոց Էդիւմեոց:



Լաւոսոց ան արարչոյս Լոյս ըստ դարձիւի:

Գ Ի Բ Բ Ծ Կ Կ Գ Ո Յ
Ո Բ Բ Ս Ս Ե Բ Բ Ե Յ Ե Յ Ի Ո Յ Ն
Է Ս Ի Բ Է Բ Է Ս Ի Թ:

Գրեւի Լաւոսոց:

ՍԱԳԻՆՆԷ:

1 արար ի՞նչ զերկնս և զերկիւր:
 2 * Լաւ երկիր էր աներևոյթ և ան պատրաստ. և խաւար ի՞նչ ան զանոց. և հողի ի՞նչ շրջէր ի՞նչ ջրոց:
 3 * Լաւ ասաց ի՞նչ Եդէիլն լոյս. և եղև լոյս:
 4 * Լաւ ետես ի՞նչ զլոյսն զն բարի է. և մեկնաց ի՞նչ իմէջ լուսոյն և իմէջ խաւարն:
 5 * Լաւ և

Էկաց ի՞նչ զլոյսն տիւ. և զխաւարն կոչեաց գիշեր: և եղև երեկոյ և եղև 6 վաղորդեայն օր մի:
 * Լաւ ասաց ի՞նչ Եդէիլն հաստատու թի իմէջ ջրոց. և եղև 7 ջուր: և եղև այնպէս:
 * Լաւ արար ի՞նչ զհաստատու թիս: և անջրպետեաց ի՞նչ իմէջ ջրոց. որ էր ինքն բոց հաստատու թիս:
 8 իմէջ հաստատու թիս:
 * Լաւ կոչեաց ի՞նչ զհաստատու թիս երկնս: և ետես ի՞նչ զն բարի է. և եղև երեկոյ և եղև վաղորդեայն օր երկրորդ:
 1 և 2 և 3 և 4 և 5 և 6 և 7 և 8 և 9 և 10 և 11 և 12 և 13 և 14 և 15 և 16 և 17 և 18 և 19 և 20 և 21 և 22 և 23 և 24 և 25 և 26 և 27 և 28 և 29 և 30 և 31 և 32 և 33 և 34 և 35 և 36 և 37 և 38 և 39 և 40 և 41 և 42 և 43 և 44 և 45 և 46 և 47 և 48 և 49 և 50 և 51 և 52 և 53 և 54 և 55 և 56 և 57 և 58 և 59 և 60 և 61 և 62 և 63 և 64 և 65 և 66 և 67 և 68 և 69 և 70 և 71 և 72 և 73 և 74 և 75 և 76 և 77 և 78 և 79 և 80 և 81 և 82 և 83 և 84 և 85 և 86 և 87 և 88 և 89 և 90 և 91 և 92 և 93 և 94 և 95 և 96 և 97 և 98 և 99 և 100



The woodcuts in the Armenian Bible were made by Christoffel van Sichem. They had been used before in the Dutch *Biblia Sacra* (Amsterdam 1657), as the corresponding page of Genesis shows.

Աստվածաշնչի տպագրման նպատակով, Ոսկանը հանձնարարում է տպարանի համար երրորդ տառատեսակ փորագրել՝ «մեղիան» մեծության նոտրգիր, որն այդ ոճով երբևէ փորագրված առաջին տառատեսակն էր: Ուղղահայաց ձեռագրային նոտրգիրը գործածվում էր բոլորգիր տառատեսակի մեծատառերի հետ և օգտագործվում էր վերնագրերում կամ այլ ընդգծված հատվածներում՝ դրանք գլխավոր տեքստից զանազանելու նպատակով, ինչպես մեր օրերին՝ շեղագիրը ուղղագիր լատինատառի կողքին: Նոտրգիրն ու խազերը գործածվել են 1664թ. օգոստոսի 14-ով թվագրված Շարակնոցում:⁸ 1666թ. մարտի 11-ին Ոսկանը վերջապես կարողացավ սկսել Աստվածաշնչի տպագրությունը՝ ավարտելով այն 1668թ. հոկտեմբերի 13-ին: Դա առաջին տպագիր հայատառ Աստվածաշունչն էր:

Շատ է գրվել այն մասին, որ Ոսկանը Աստվածաշնչի հիշատակարանում նշում է, թե ծարեցու տպատառերը «յոյժ խոշորք էին և անյարմարք», և այդ պատճառով Աստվածաշունչը շարված է Ավետիսի տառատեսակով: Ծարեցու 1658թ. պայմանագրում, սակայն, հստակորեն նշվում է, որ վան Դեյքը երկու տառատեսակ պիտի փորագրի՝ ծարեցու գործածած մեծ տպատառերը և Աստվածաշնչի համար նախատեսված ավելի փոքր տառատեսակ, որի պատրաստումը ավարտվել էր Ավետիսի հսկողության ներքո՝ ծարեցու մահից հետո: Թեև պայմանագիրը չի ճշտում փոքր տառատեսակի չափը, բայց գրքերից պարզ է, որ այն «մեղիան» կոչվող մեծության բոլորգիր էր, ինչին Ոսկանը հայերենով նմանվող անունով կոչեց:⁹ Փաստ է, որ մեծ տառատեսակի մասին զովասանքով է խոսվում բազում հիշատակարաններում, և այն հետագայում

shared the bolorgir's capitals and appeared in headings or other elements to distinguish them from the main text, rather like an italic used with a roman. It and the neumes appeared in a 'Tropologion' hymnal dated 14 August 1664.⁸ On 11 March 1666 Voskan could finally begin printing the Bible, which he completed on 13 October 1668: the first Bible ever printed in Armenian.

Much has been made of the fact that the colophon of Voskan's Bible refers to Tsaretsi's type as 'too large and unsuited' and says that the Bible was therefore set in Avetis's type. But Tsaretsi's 1658 contract explicitly notes that Van Dijk is to cut two types, the larger Text that Tsaretsi used and a smaller type for use in the Bible, completed under Avetis's oversight after Tsaretsi's death. Although the contract never names the size of the smaller type, the books themselves show it was a bolorgir of the size called Mediaen, and that Voskan gave it a similar name in Armenian.⁹ In fact the larger type was praised in numerous colophons and continued in use with the smaller one. I see little reason to read a complaint about its quality into Voskan's comments.

There is no direct documentation that Van Dijk cut the neumes, the new notrgir or a puzzling Augustijn bolorgir that I have seen only in two editions of 1667, but it seems a safe supposition. On 22 July 1666, at the request of the Amsterdam Armenian printer Gabriel Gregorio, presumably a workman at Voskan's printing office, Van Dijk testified

Քրիստոֆել վան Սիխեմն էր փորագրել հայկական Աստվածաշնչի փայտափոր նկարները, որոնք արդեն օգտագործվել էին հոլանդական *Biblia Sacra* (Ամստերդամ, 1657 թ.) Սուրբ Գրքում, ինչպես ցույց է տալիս Ցննդոց գրքի համապատասխանող էջը:

շարունակում է գործածվել փոքր տառատեսակի կողքին: Չեն կարծում, որ Ոսկանի մեկնաբանությունը կարելի է դիտարկել որպես դժգոհություն մեծ տառատեսակի որակի առնչությամբ:

Վավերագրված չէ, թե արդյոք վան Դեյքն է փորագրել խազերը, նոր նոտրգիրն ու առեղծվային մի նոր «ավգուստին» բոլորգիր, որը տեսել են միայն 1667թ. տպագրված երկու գրքերում, սակայն հավանական վարկած է թվում: 1666թ. հուլիսի 22-ին, Ամստերդամում բնակվող հայ տպագրիչ Գաբրիել Գրեգորիոյի (հավանաբար, Ոսկանի տպարանի բանվորներից մեկի) խնդրանքով վան Դեյքը վկայություն է տալիս, որ իր կատարած ողջ աշխատանքի դիմաց լիովին վարձատրվել է՝ նշելով մանրամասն մի ցանկ, որը, դժբախտաբար, այլևս գոյություն չունի: Սրանից կարելի է ենթադրել, որ նա շարունակել է աշխատել Ոսկանի համար 1658թ.-ի պայմանագրում նշված վերջին՝ «մեղիան» չափի բոլորգիր տառատեսակը 1662թ.-ին ներմուծելուց հետո, ինչի պատրաստումն ավարտել է մոտավորապես այն ժամանակ, երբ սկսվել է Աստվածաշնչի տպագրությունը՝ 1666թ. մարտ ամսին:

Սակայն սրանով չի ավարտվում վան Դեյքի աշխատանքը Ոսկանի տպարանի համար: 1667թ. սեպտեմբերին նա և իր 22-ամյա որդի Աբրահամը պայմանագիր են կնքել Ոսկանի քրոջորդի Հովհաննես Լևոնյանի համար «բուրժուա» մեծության՝ նախորդների համեմատ ավելի փոքր հայերեն տառատեսակ փորագրելու վերաբերյալ:¹⁰ Պայմանագիրը չի պահպանվել, սակայն 1669թ. մայիսի 27-ին, Քրիստոֆելի մահից կես տարի առաջ, նա և




86 Voskan Yerevantsi's Bible: woodcut at the beginning of the New Testament.

that he had been fully paid for all of his work, referring to an itemized account unfortunately no longer present. This suggests that he continued working for Voskan after the introduction of the Mediaen bologir in 1662 – the last type noted in the 1658 contract – and finished around the time they began printing the Bible in March 1666.

Even this did not end Van Dijk's work for Voskan. In September 1667 he and his twenty-two-year-old son Abraham contracted to cut a Bourgeois Armenian, smaller than the earlier types, for Hovhannes Levonian, a son of Voskan's sister.¹⁰ This contract does not survive, but on 27 May 1669, less than six months before Christoffel's death, he and Abraham, both described as punchcutters, testified that they had made and delivered the type and been fully paid. This document describes Hovhannes as 'Gio: de Lione', an Armenian merchant living in Amsterdam. His brother Soghomon, who worked at the press from 1664, would later manage it for Voskan in Livorno and then take charge of it in Marseille when Voskan died there in 1674. The Bourgeois bologir first appeared in Movses Khorenatsi's geography with fables, begun on 1 October 1668 and completed on 20 January 1669.

Ոսկան Երևանցու Աստվածաշունչը՝ փորագրությունն Նոր Կտակարանի սկզբին



Title page of the Bible, detail.

Woodcuts, ornaments and decorative initials

Most of the woodcut illustrations used by the press were not newly cut for it. Many were cut by the well-known Dutch woodcut artist Christoffel van Sichem (ca. 1577-1658), the second of that name. He had cut them for the Bibles that Pieter Jacobsz Paets printed in Amsterdam from 1646 to his death in or soon after 1657. Tsaretsi probably acquired them from Paets's estate with the Armenian Bible in mind. One Van Sichem woodcut appeared already in the press's first book in 1661.

The woodcut decorative initials in the traditional Armenian style called trchnagir or dzagagir, built up from stylized birds and other animals, may have been newly cut for the Amsterdam press. Some of the woodcut decorations also follow traditional Armenian styles and may have been newly cut. Others, like many of the title-page woodcuts and some of the tailpieces, follow Western styles and no doubt came from earlier Dutch printing offices.

The fleurons – cast decorative units that can be used individually or assembled to make larger decorations – are all sixteenth- and seventeenth-century Western styles. Van Dijk no doubt supplied at least some of these fleurons, for he offered several for sale in his 1668/69 type specimen. Several sixteenth-century punchcutters, most notably Robert Granjon in the 1560s and 1570s, had introduced a wide variety of arabesque fleurons, and both the originals and later copies remained popular throughout Europe in the seventeenth and early eighteenth century. The Amsterdam Armenian books show several.

Արրահամը, երկուսն էլ նշվելով որպես տպատառեր փորագրող, վկայությունն են տվել, որ տառատեսակը պատրաստել և հանձնել են ու լիովին վարձատրվել դրա դիմաց: Այս փաստաթղթում Հովհաննեսը անվանվում է «Ջիո դե Լիոնե»՝ Ամստերդամում բնակվող հայ վաճառական: Նրա եղբայր Սողոմոնը, որ 1664-ից ի վեր տպարանում էր աշխատել, հետագայում այն ղեկավարելու էր Ոսկանի համար Լիվորնոյում, իսկ 1674թ.-ին, Ոսկանի վախճանից հետո, Մարսելում ստանձնելու էր տնօրինությունը: «Բուրժուա» բոլորգիրն առաջին անգամ օգտագործվել է Մովսես Խորենացու Աշխարհացոյց-Աղոեսագրքում, որի տպագրությունը տևել է 1668թ. հոկտեմբերի մեկից մինչև 1669թ. հունվարի 20-ը:

Փայտափոր պատկերներ, զարդեր ու զարդագրեր

Տպարանում գործածված փայտափոր պատկերներից շատերը հատուկ այս տպարանի համար չէին փորագրվել: Շատերը փորագրել էր անվանի հոլանդացի փորագրիչ-արվեստագետ Քրիստոֆել վան Ջիխենը (1577 – 1658թթ.), նույն անուն-ազգանունով երկրորդ անձը, այն Աստվածաշնչի համար, որոնք Պիտեր Յակոբս Պատսը տպագրել է Ամստերդամում՝ 1646թ.-ից մինչև իր մահը, մոտ 1657թ.-ը: Հավանական է, որ Ծարեցին դրանք Պատսի ժառանգությունից ձեռք է բերել հատկապես Աստվածաշունչ տպագրելու նպատակով: 1661թ.-ին՝ տպարանի առաջին գրքում արդեն իսկ գործածվում է վան Ջիխենի փայտափոր պատկերներից մեկը:

Հնարավոր է, որ հայկական ավանդական ոճով փայտափոր գեղազարդ սկզբնատառերը, որոնք կոչվում էին թոչնագրեր կամ ձագագրեր, և բաղկացած էին ոճավորված թոչուններից ու այլ կենդանիներից, փորագրվել են հատուկ Ամստերդամի տպարանի համար: Փայտափոր մնացած զարդերից մի քանիսը նույնպես հայկական ավանդական ոճով են արված և հավանաբար նոր են պատրաստվել: Մյուսները, ինչպես և անվանաթերթերի փորագրություններից շատերը և վերջնազարդերից մի քանիսը կատարված են արևմտյան ոճով և անկասկած հոլանդական ավելի վաղ շրջանի տպարաններից են վերցված:

Ծաղկազարդերը՝ ձուլված ծաղկազարդ տպատախտակներ, որոնք կարելի է գործածել առանձին կամ միացված վիճակում, որպեսզի ստացվեն առավել մեծ զարդեր, բոլորը տասնվեցերորդ ու տասնյոթերորդ դարերի արևմտյան ոճով են: Ակներևաբար, վան Դեյքն է տրամադրել այս ծաղկազարդերի գոնե մի մասը, քանի որ նա այդպիսիք ուներ վաճառքի համար նախատեսված իր տպատառերի ցանկում: Տասնվեցերորդ դարի մի քանի փորագրիչներ, մասնավորապես՝ Ռոբերտ Գրանժոնը 1560-1570 թվականներին, սկսել էին պատրաստել նախազարդ ծաղկազարդերի լայն տեսականի, և թե՛ բնօրինակները, թե՛ հետագա ընթրինակությունները շատ տարածված էին եվրոպայում տասնյոթերորդ ու վաղ տասնութերորդ դարերում: Ամստերդամում տպագրված հայկական գրքերում նույնպես կան դրանցից մի քանիսը:

Ոսկանն անձամբ է նախապատրաստել Աստվածաշնչի տեքստը, մի աշխատանք, որը նա սկսել էր շատ ավելի վաղ, քան Ծարեցու կողմից տպարանի հիմնումը: Նրա գլխավոր բնադրյուրը Կիլիկիայի Հեթում Բ թագավորի հանձնարարությունը 1295թ. գրված Սիսի


Աստվածաշնչի անվանաթերթը, մաս



Voskan himself prepared the text of his Bible, work that he probably began long before Tsaretsi set up the printing office. His principal source was the Sis Bible of 1295, commissioned by King Hetum II of the Armenian kingdom in Cilicia. Voskan owned this manuscript and apparently brought it to Amsterdam.¹¹ In part to make the text acceptable to Armenian Catholics as well, he compared it with the Latin Vulgate and revised it accordingly.

Van Dijk's Text and Mediaen bolorgir, cut before Voskan reached Amsterdam, were not modelled on the Sis Bible. The 1662 psalm book, set in the Text, says its model came from the late head priest Movses. This suggests that Tsaretsi supplied Van Dijk with a manuscript, probably a psalm book, from the Catholicos Movses Tatewatsi (d. 1632). The lowercase of all Van Dijk's bolorgirs resembles a manuscript hand with few cursive characteristics, common in the late 1200s and early 1300s, though still used later alongside other styles. Van Dijk's lowercase therefore follows an earlier general style than Meghapart's or Granjon's, though not necessarily an earlier manuscript.¹² Some New Julfa and Livorno types may have established the preference for upright round yerkatagir capitals with a sober sloped bolorgir lowercase, but they were not direct models.

The yerkatagir capitals of Van Dijk's first two types (Text and Mediaen) differ notably from all earlier types I have seen. Even before 1100, some



yerkatagir manuscript hands evolved an extremely high contrast between thick and thin strokes, so that both straight and curved horizontal strokes degenerated into hairlines. The bolorgir soon pushed out the yerkatagir as a book hand, but bolorgir manuscripts continued to use yerkatagir for a few words in a heading or for simple small initials. In the 1200s and especially the 1300s, these upright round yerkatagir capitals took the high contrast even further: the hairlines disappear entirely, causing most of the letters to fragment into disconnected elements.

One finds these fragmented initials used with the sober bolorgir already noted, and a manuscript combining these features could have provided the models for both the upper and the lowercase of Van Dijk's Text and Mediaen. This combination can be found even in quite late manuscripts, for example, an Echmiadzin manuscript of 1646 and an 'Isfahan' (New Julfa?) manuscript of 1660, whose bolorgir text and yerkatagir initials resemble Van Dijk's type quite closely.¹³

Van Dijk's Bourgeois bolorgir, introduced in 1668 for books completed in 1669, matches his Text and Mediaen in the style of its lowercase, but its capitals are completely different. They follow the traditional upright round yerkatagir with its horizontal connecting strokes, little changed from stone inscriptions of the 600s and continuing in

88 Noah's ark by Christoffel van Sichem, appearing in Dutch and in Armenian Bibles.

Աստվածաշունչն էր: Այս ձեռագիրը Ռսկանի սեփականությունն էր, որն իր հետ բերել էր Ամստերդամ:¹¹ Մասամբ տեքստը նաև կաթոլիկ հայերի համար ընդունելի դարձնելու նպատակով, նա ձեռագիրը համեմատել է լատինական Վուլգատայի հետ՝ վերջինի համաձայն փոփոխություններ մտցնելով:

Հազիվ թե Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչն օրինակ ծառայեր «տեքստ» ու «մեդիան» տառատեսակների ձևավորման համար, քանի որ վան Դեյքը դրանք արդեն փորագրել էր մինչև Ռսկանի Ամստերդամ ժամանելը: Այնուամենայնիվ, վան Դեյքի բոլորգիր տառատեսակների փոքրատառերը նմանվում են ձեռագրային հատկանիշներով այն գրաձևին, որը տարածված էր ուշ տասներեքերորդ և վաղ տասնչորսերորդ դարերում, իսկ հետագայում շարունակում էր գործածվել նորաստեղծ ոճերին զուգահեռ: Հետևաբար, վան Դեյքի տառատեսակներն ավելի վաղ շրջանի ոճ են ընդօրինակում, քան Մեղապարտի ու Գրանժոնի տառատեսակները, բայց ոչ միանշանակորեն ավելի հին ձեռագրի:¹² Կարելի է ենթադրել, որ գուցե Նոր Ջուղայի գրքերի տառատեսակներն են ազդել ընդհանուր ոճի ընտրության վրա: Որոշներում համադրվել են ուղղահայաց բոլորակ երկաթագիր մեծատառերը և որոշ ձեռագրային հատկանիշներ ունեցող շեղ բոլորգիր փոքրատառերը: Անհավանական է, որ այս գրքերի տպատառերը ուղղակիորեն ընդօրինակված լինեին, թեև չեմ տեսել Նոր Ջուղայի տպարանում 1642թ.-ից գործածված երկու տառատեսակները:

Քրիստոֆել վան Սիխեմի փորագրած Նոյան Տապանը, հուլանդական և հայկական Սուրբ Գրքերում

վան Դեյքի առաջին երկու (տեքստ և մեդիան) տառատեսակները մեծապես տարբերվում են իմ տեսած վաղ շրջանի այլ տառատեսակներից: Դեռ 1100թ.-ից առաջ որոշ երկաթագիր ձեռագրերում շատ մեծ տարբերություն է առաջանում հաստ ու բարակ գծերի միջև, այնքան, որ ուղիղ և կեղ հորիզոնական գծերը վերածվում են մազագծիկների: Թեև բոլորգիրը որպես գրչագիր գրաձև շուտով փոխարինում է երկաթագրին, սակայն բոլորգիր ձեռագրերը շարունակում են օգտագործել երկաթագիր ոճը վերնագրերում՝ առանձին բառերի համար, կամ պարզ փոքրաչափ սկզբնատառերի համար: Տասներեքերորդ և մասնավորապես տասնչորսերորդ դարերում այդ ուղղահայաց բոլորակ երկաթագիր մեծատառերն առկա մեծ տարբերությունն առավել խորացրեցին. մազագծիկները լիովին անհետացան, ինչի հետևանքով տառերից շատերը մասնատվեցին չկապակցված տարրերի:

Այդպիսի մասնատված սկզբնատառերը օգտագործվել են վերը նշված պարզ բոլորգիր գրաձևի հետ միասին, և այդպիսի ձեռագիրն օրինակ կարող էր ծառայել վան Դեյքի «տեքստ» և «մեդիան» տառատեսակների մեծատառերի և փոքրատառերի համար: Նույնպիսի համադրություն կարելի է տեսնել նաև շատ ավելի ուշ շրջանի ձեռագրերում, ինչպես օրինակ 1646թ. էջմիածնի և 1660թ. Սպահանի (Նոր Ջուղայի) ձեռագրերում, որոնց բոլորգիր տեքստի տառերն ու երկաթագիր սկզբնատառերը շատ նման են վան Դեյքի տպատառերին:¹³

վան Դեյքի «բուրժուա» բոլորգիր տառատեսակը, գործածված 1668թ.-ից այն գրքերում, որոնց տպագրությունն ավարտվել է 1669թ.-ին, իր փոքրատառերի ոճով նմանվում է



some manuscripts to at least the 1300s. The fragmented forms noted in the Text and Mediaen may have been considered inappropriate in smaller sizes – one must wonder if they were actually detrimental to legibility in all sizes! – but this change in style may also reflect the use of a different manuscript model after Voskan arrived in Amsterdam in 1664.

The production of the first Amsterdam press

As the eleventh city to produce books using Armenian type, Amsterdam might not seem to occupy an important place in the history of Armenian printing. Armenians had, after all, been printing books in Venice for a hundred and fifty years. In fact, the Armenians in Amsterdam changed the entire form and nature of Armenian printing. Before 1661 only the Propaganda Fide and its predecessors had printed with Armenian type over a long period of time. Even they produced only about twenty-two works before 1661, including some with no more than a few short passages in Armenian. Of the printing offices working for the Armenian communities, that at New Julfa operated on and off from 1636 to 1647 or soon after. As far as we know it produced only a half dozen works in those twelve years. The other presses before 1661 produced even less.

Sharaknots [Hymnal]. Amsterdam, Holy Echmiadzin and St. Sargis Press, 1664.

Շարակնոց, Ամստերդամ, Սբ. Էջմիգածնի և Սբ. Սարգսի տպարան, 1664 թ.

90

նրա «տեքստ» ու «մեդիան» տառատեսակներին, սակայն մեծատառերը լիովին տարբեր են: Դրանք ընդօրինակում են ավանդական ուղղահայաց բոլորակ երկաթագիր ոճն՝ իր հորիզոնական միացման գծիկներով, ինչը շատ քիչ փոփոխության է ենթարկվել յոթերորդ դարի ժայռափոր արձանագրություններից ի վեր և շարունակվել է գործածվել մի քանի ձեռագրերում ընդհուպ մինչև տասնչորսերորդ դարը: «Տեքստ» ու «մեդիան» տպատառերի մասնատված ձևերը գուցե անհարմար են համարվել ավելի փոքր տառատեսակների համար (տարակուսելի է, արդյոք դրանք բացասաբար չէին անդրադառնում ցանկացած մեծության տառերի ընթեռնելիությանը), բայց ոճական այս փոփոխությունը կարող է նաև արտացոլել այլ ձեռագրի՝ որպես նմուշի օգտագործումը 1664թ. -ին Ոսկանի Ամստերդամ հասնելուց հետո:

Ամստերդամի առաջին տպարանի արտադրանքը

Կարելի է ենթադրել, որ Ամստերդամը, լինելով տասնմեկերորդ քաղաքը, ուր հայատառ գիրք է տպվել, կարևոր տեղ չի գրավում հայկական գրատպության պատմության մեջ: Վերջիվերջո, Վենետիկում արդեն հարյուր հիսուն տարի հայերը գրքեր էին տպագրում: Սակայն իրականությունն այն է, որ Ամստերդամի հայերը լիովին փոխեցին հայկական տպագրության ձևն ու բնույթը: Մինչև 1661թ. միայն Պրոպագանդա Ֆիդեն ու իր նախորդներն էին տեսականորեն գործել հայերեն տպատառերը տպագրության



Նշխանակն մեծառան. յորակ եղև ինչ տպարան 174



Ի սնն արարին զերկինս իվեր հաստատեալ և լուսաւորաց պարտեց օրենքս կարգե 586

մեջ: Բայց նրանք էլ մինչև 1661թ. հրատարակել էին ընդամենը քսաներկու անուն գիրք, ներառյալ նրանք, որոնք հայերեն լեզվով միայն կարճ հատվածներ էին պարունակում: Հայ համայնքների համար գործող տպարաններից Նոր Ջուղայինն ընդհատումներով գործեց 1636թ. -ից մինչև 1647թ. կամ մի քիչ ավելի: Որքանով մեզ հայտնի է, այդ տասներկու տարվա մեջ տպագրվել է ընդամենը վեց անուն գիրք: Մնացած տպարանները ավելի քիչ էին հրատարակել մինչև 1661թ.:

Գրքերի թիվը միշտ չէ, որ ճիշտ պատկերացում է տալիս տպարանի արտադրանքի մասին, որովհետև այս ձևով ամբողջական Աստվածաշունչը չի տարբերակվում չորս էջանոց գրքույկից: Տպագրված թերթերի քանակն, առհասարակ, լավագույն չափանիշն է՝ հաշվելով յուրաքանչյուր գրքի թերթերը, հաշվի առնելով որ մեկ թղթից երկժալ գրքում երկու թերթ (4 էջ) է ստացվում, քառաժալ չորս թերթ, ութաժալ՝ ութ թերթ, և այլն: Թեև այդպես հաշվի չի առնվում տպաքանակը, այնուամենայնիվ արտադրանքի ծավալի մասին ընդհանուր պատկերացում տալիս է:

1660-1669 թվականներին Ամստերդամի առաջին հայկական տպարանը հայատառ մոտ 540 թուղթ է տպագրել: Այդ տասը տարվա ընթացքում այստեղ կրնակակի քանակությանը հայատառ թղթեր են տպագրվել քան Հռոմի տպարաններում՝ ութ տարվա ընթացքում, կամ Նոր Ջուղայի տպարանում՝ տասներկու տարվա ընթացքում:¹⁴ Բոլոր տպարանները միասին վերցրած 1512-1660թթ. տպագրել են ընդամենը մոտ հազար տպագրական թուղթ՝ հայկական տպատառերով: Ուրեմն, չնայած դժվարություններին, Ամստերդամի տպարանի գործունեության առաջին տասը տարվա ընթացքում տպագրված թղթերի



Nor Ktakaran [New Testament]. Amsterdam, Holy Echmiadzin and St. Sargis Press, 1668.

From 1660 to 1669, the first Amsterdam Armenian printing office printed about 540 edition-sheets. In those ten years it printed about twice as many Armenian sheets as the Roman printing offices did in eighty years or the New Julfa printing office in twelve years.¹⁴ All printing offices combined had produced only about a thousand edition-sheets using Armenian type from 1511/12 to 1660. So in spite of the difficulties it faced, the Amsterdam printing office printed about half as many edition-sheets in its first ten years as all its predecessors combined in a hundred and fifty years. Besides numerous liturgical works, calendars, a grammar and other works seen at earlier presses, it produced the first editions of the Armenian Bible, Movses Khorenatsi's geography with fables and Arakel of Tabriz's history. After leaving Amsterdam in 1669 it produced first editions of many Armenian classics, as well as the first book printed in modern, as opposed to classical, Armenian: an accounting handbook printed at Marseille in 1675. The fact that nearly all its books were in classical rather than modern Armenian limited the readership to educated groups in the society: priests could certainly read them and we have the testimony of the merchant Avetis that he could read them, but not well.

Among the printing offices that issued books containing Armenian type before 1661, only four had more than one Armenian type, and some with 'one' type had

քանակը հասնում է իր բոլոր նախորդների հարյուր հիսուն տարվա ընթացքում տպագրված թղթերի կեսին: Բացի բազմաթիվ հոգևոր գործերից, օրացույցներից, քերականությունից և այլ գործերից, որոնք նախորդ տպարանները նույնպես տպագրել էին, Ամստերդամում իրականացվեցին հայկական Աստվածաշնչի, Մովսես Խորենացու Աշխարհացոյց-Աղուեսագրքի և Առաքել Դավրիժեցու «Պատմություն» գրքի առաջին հրատարակությունները: 1669թ.-ին Ամստերդամից տեղափոխվելուց հետո, տպարանը շատ հայկական դասականների առաջին հրատարակություններն իրականացրեց, ինչպես նաև հրատարակեց առաջին տպագիր աշխարհաբար (ոչ գրաբար) գիրքը՝ Մարտերում 1675թ.-ին տպագրված «Արհեստ համարողութեան» թվաբանության դասագիրքը: Այն հանգամանքը, որ գրեթե բոլոր գրքերը գրաբարով էին, այլ ոչ թե՛ ժամանակակից հայերենով, դրանք հասանելի էր դարձնում միայն կրթված ընթերցողներին. վստահաբար հոգևորականները կարող էին դրանք կարդալ և վաճառական Ավետիսի վկայությունը կա, որ կարողանում է կարդալ դրանք, թեպետ՝ դժվարությամբ:

1661թ.-ից առաջ հայերեն տառատեսակներ օգտագործող տպարաններից ընդամենը չորսն ունեին մեկից ավելի հայկական տառատեսակ և «մեկ» տառատեսակ ունեցողներից մի քանիսն ունեին միայն փոքրատառերը: Լվովի տպարանն ուներ ոչ միայն երկու տեքստային տառատեսակ, այլև ձուլված մեծատառերի երկու հավաքածու՝ հատուկ վերնագրերի համար: Բայց միայն Նոր Ջուղայի տպարանը երկուսից ավելի տեքստային տառատեսակ ուներ, թեև հետագայում պատրաստված տառատեսակների մի մասը

Նոր Արական, Ամստերդամ, Սբ. Էջմիածնի և Սբ. Սարգսի տպարան, 1668 թ.



Սբ. Էջմիածնի Արականը, 1665

only lowercase. The printing office at Lvov had two sets of cast titling capitals in addition to two text faces, but only the printing office at New Julfa had more than two text faces, and some of its later types replaced rather than supplemented its earlier ones. I do not know whether it ever used more than two at time. Even if we ignore the Augustijn bolorgir that the Amsterdam Armenian printing office used briefly in 1667, it had two and from 1668 three sizes of bolorgir plus the first rendering of notrgir in type. It was therefore better stocked for printing a wide range of books than any earlier office.

The press runs in Amsterdam were also much larger. Hovhannes of New Julfa at Livorno proudly noted in 1644 that he had printed 1050 copies of the psalms, clearly suggesting



Սբ. Էջմիածնի Արականը, 1665

փոխարինեցին, ոչ թե լրացրեցին հին տառատեսակները: Հայտնի չէ, թե այդ տպարանը երբևիցե միաժամանակ երկուսից ավելի տառատեսակ գործածել է: Նույնիսկ եթե անտեսենք «Ավգուստին» բոլորգիրը, որը 1667թ.-ին կարճատև գործածման է ենթարկվել Ամստերդամի հայկական տպարանում, վերջինս ուներ երկու, իսկ 1668թ.-ից՝ երեք չափի բոլորգիր տառատեսակ և առաջին տպագրված նոտրգիրը: Այսպիսով, այն ավելի լավ էր համարված գրքերի լայն տեսականի տպագրելու համար, քան մինչ այդ եղած որևէ այլ տպարան:

Ամստերդամի տպարանի տպաքանակներն էլ շատ ավելի մեծ էին: Հովհաննես Ջուղայեցին 1644թ.-ին Լիվորնոյում հպարտությամբ հայտարարել է, որ Սաղոմոսարանի 1050 օրինակ է տպագրել՝ ակնարկելով դրա չափազանց մեծ քանակ լինելու մասին: Ավելի վաղ տպաքանակների մասին քիչ տեղեկություն կա, սակայն Ներսիսյանը հավանական ենթադրություն է անում, ըստ որի հայատառ գրքերից շատերը 300 կամ 400 օրինակով են տպագրվել: Ամստերդամի ժամագիրքն ու Աստվածաշունչը 3000 օրինակից են տպագրվել, մյուս գրքերը՝ 1200, 2000 ու 2700 օրինակից: Այն փաստը, որ տպագրիչները նշում են այդ թվերը, վկայում են դրանց բացառիկ լինելու մասին, ինչը նշանակում է, որ Ամստերդամի տպաքանակներից շատերն անկասկած ավելի փոքր էին: Սա խոսում է այն մասին, որ Ամստերդամի տպարանը մեծապես զերազանցում էր իր նախորդներին ոչ միայն հրատարակությունների կամ տպագրված թերթերի քանակով, այլև, հատկապես, տպաքանակներով:



առաջին աթոռոյն: և գրեանք բանայ
կն: և այլ գրք բացաւ կենաց: և դաս
ԼԼ 5

that this was an extremely large number. We have little documentation of earlier edition sizes, but Nersessian plausibly supposed that most Armenian books were printed in editions of three or four hundred copies. The Amsterdam breviary and Bible were printed in editions of 3000 copies, and other books in editions of 1200, 2000 and 2700. The fact that the printers mentioned these numbers suggests that they were remarkable, so most of the Amsterdam editions were no doubt smaller. They do make it clear, however, that the Amsterdam press far surpassed its predecessors not only in numbers of editions or edition-sheets, but even more in the number of copies printed.

Books with a religious content dominated every Armenian printing office from the beginnings through most of the eighteenth century. The first Amsterdam press did print a few secular works in its decade of activity, while many predecessors produced none, but measured in edition-sheets these represent less than twenty percent of its production. The religious books were almost certainly printed in larger press runs as well. The quality of Amsterdam's physical production and editorial work also surpassed that of most earlier books, setting a standard that many later printers failed to meet.

Nor Ktakaran [New Testament].
Amsterdam, Holy Echmiadzin and
St. Sargis Press, 1668.

Նոր կտակարան, Ամստերդամ, Սր.
Էջմիածնի և Սր. Սարգսի տպարան,
1668 թ.

Տպագրության սկզբից մինչև տասնութերորդ դարի երկրորդ կեսը հոգևոր բովանդակությամբ գրքերն էին գերիշխում բոլոր հայկական տպարաններում: Ամստերդամի առաջին տպարանն իր տասը տարվա գործունեության ընթացքում իրոք մի քանի աշխարհիկ գործեր է տպագրել, մինչդեռ իր նախորդներից շատերը՝ ոչ մի հատ, սակայն տպագրված թերթերի քանակով այդ գործերը չէին անցնում արտադրության քսան տոկոսը: Հաստատապես, հոգևոր գրքերը նաև ավելի մեծ տպաքանակներով էին տպվում: Ամստերդամի տպարանի արտադրանքի նյութի ու խմբագրական աշխատանքի որակը ևս գերազանցում էր առավել վաղ տպագրված գրքերի մեծ մասին, նշաձող սահմանելով, որին հետագա տպագրիչներից շատերը չէին հասնելու:

Ամստերդամ. խոսքը սփռվում է

Ամստերդամում տպագրված գրքերի բովանդակությունն ու արտաքին տեսքը մեծ ազդեցություն ունեցան: 1668թ.-ին հրատարակված Աստվածաշունչը, մասնավորապես, միակ ամբողջական տպագիր հայկական Աստվածաշունչն էր մինչև 1705թ., ինչի պատճառով տարածվեց հայ համայնքների համաշխարհային ցանցում: Ամստերդամում տպագրված Աստվածաշնչի և այլ շատ գրքերի տեքստերը չափանիշ դարձան հետագա հրատարակությունների համար, և այդ գրքերում գործածված տառատեսակները հաստատեցին ընդունված ոճը, որը, միայն մանր փոփոխություններով, գերիշխող մնաց

Amsterdam: spreading the word


Both the content and the form of the Amsterdam books proved enormously influential. The 1668 Bible in particular remained the only complete Armenian printed Bible until 1705, so it spread throughout the world-wide network of Armenian communities. The text of the Bible and of many other Amsterdam editions became the standard versions that later editions followed, and their types established the standard style that was to hold sway, with minor variations, until about 1840. In fact, they so stabilized the form of Armenian types that it is often difficult to distinguish Van Dijk's types and the numerous copies that followed from one another.

To identify these types without documentary evidence, or to confirm what the documentary evidence seems to suggest, one must compare each character very carefully. One could even argue that the uniformity stifled development. The sober model chosen for these types meant that they lacked the calligraphic qualities of Meghapart's or Granjon's, and it is not clear that they were more legible. The notrgir, known in manuscripts as early as the 1400s, but more common as a manuscript hand from about 1600, is now generally considered difficult to read and is little used, and I have already noted my reservations about the form of the capitals of Van Dijk's first two Armenian types.

մինչև 1840թ.: Փաստորեն, դրանք այնքան ամրապնդեցին հայերեն տառատեսակներին ոճը, որ հաճախ դժվար է վան Դեյքի տառատեսակները տարբերել հաջորդող շատ պատճեններից:

Առանց փաստաթղթային վկայագրերի այս տառատեսակները նույնացնելու, կամ փաստաթղթային վկայագրերում նշվածը հաստատելու համար յուրաքանչյուր մասնիկը պետք է մանրազնին կերպով համեմատվի: Կարելի է անգամ պնդել, որ այս միանմանությունը խոչընդոտել է զարգացումը: Այս տառատեսակների պարզ ձևավորման մեջ բացակայում էին Մեղապարտի կամ Գրանժոնի գեղագրական հատկությունները, և պարզ չէ, թե արդյոք դրանք ավելի հեշտ ընթեռնելի էին: Նոտրգիրը, որը ձեռագիր մատյաններում օգտագործվում էր տասնհինգերորդ դարից սկսած, սակայն ավելի լայնորեն կիրառվել է 1600թ.-ից հետո, ներկայումս դժվար ընթեռնելի է համարվում և քիչ է գործածվում: Ընդ որում, արդեն հայտնել եմ իմ վերապահությունը վան Դեյքի առաջին երկու հայերեն տառատեսակների մեծատառերի ձևավորման վերաբերյալ:

Թեև Ամստերդամի տպարանը տպագրեց մեծ քանակությամբ գրքեր՝ բաշխելով դրանք ամբողջ աշխարհի հայերին, և իր ազդեցությունն ունեցավ հետագայում տպագրվելիք բոլոր գրքերի վրա, սակայն երբևէ Ֆինանսական հաջողության չհասավ: Ըստ 1673թ.-ին արված Ոսկանի հաշիվների, տպարանը Ամստերդամից տեղափոխելուց չորս տարի անց դեռ պարտքեր ուներ Աստվածաշնչի և այլ գրքերի տպագրությունից մնացած: Ամստերդամից մեկնելուց հետո նա մի քանի տարի դադարեց ինքը տպագրություն իրականացնել՝



The Amsterdam printing office successfully produced large volumes of work, distributed it to Armenians around the world and influenced all books that followed, yet it never met financial success. Voskan's own account in 1673, four years after the press left Amsterdam, notes that it still had debts from the Bible and other books. After leaving Amsterdam he gave up printing himself for a few years, leaving management of the press to his sister's son Soghomon Levonian, who had worked with him since 1664. Matteos Vanandetsi, who worked for the press in Livorno and Marseille for fourteen years (ca. 1671-1684), claimed he received no salary in that entire period.

It has been supposed that the Dutch taxes played a role in the move out of Amsterdam, and Voskan may have wished to move closer to potential financiers. Perhaps he turned management over to Levonian in order to seek new capital. Most of the books were shipped to the Ottoman and Persian territories for sale, so shipping was expensive and shipments could easily be lost to various hazards. One shipment of Voskan's books sank en route to Constantinople. In Livorno and Marseille the press was slightly closer, and later in Constantinople much closer, to the vast majority of its customers. Voskan and his successors may have hoped this would reduce expenses.

Movses Khorenatsi, *Girk ashxarhatsuyts ... aghuesagir* [Geography and fox fables], Amsterdam, Holy Echmiadzin and St. Sargis Press, 1668.

տպարանի ղեկավարությունը թողնելով իր բրոջ որդի Սողոմոն Լևոնյանի վրա, ով նրա հետ աշխատում էր դեռ 1664թ.-ից: Մատթեոս Վանանդեցին, ով տասնչորս տարի (1671-1684թթ.) աշխատել էր Ոսկանի տպարանում Լիվորնոյում ու Մարսելում, պնդում է, որ այդ ողջ ընթացքում աշխատավարձ չի ստացել:

The Armenian printers and the Transylvanian Kis, however, were shipping their books to lands where they knew the local binders could not attain the standards of the Dutch masters. A study of bindings on Kis's Bibles may provide links with bindings made for the Armenians. Kis's story also gives us an idea of the size of an Amsterdam bookbinding workshop in the 1680s, for he mentions that the four binderies working for him employed twenty people, including the masters, journeymen and apprentices, so those four masters had on average four workmen each, including both journeymen and apprentices.

Amsterdam's first press moves from Marseille to Constantinople

Back in Marseille, Voskan's printing office began work again tentatively in 1686 under Petros and Simon Georgi Ladinatsi working for Levonian's widow. It was never able to recover its former level of activity, however, and in 1695 it moved to Constantinople, the third Armenian printing office to operate there. The Catholic flavour that the printing office took on in Livorno and Marseille dominated in Constantinople, where its guiding figure seems to have been the Catholic Bishop Sargis Yevdokiatsi Sahetshi. The Ladinatsi brothers may have continued to operate it, but some of the publications give false Amsterdam, Livorno or Marseille imprints. The tables were now turned and the Armenian Catholics had to fear persecution from the Armenian Apostolic authorities.

Yisus Vordi (Amsterdam 1661). Copy in the Amsterdam University Library.

Յիսուս Որդի, Ամստերդամ, 1661 թ.: Ամստերդամի համալսարանի գրադարանում պահվող օրինակ

Հայ տպագրիչները և տրանսիլվանցի Քիշը, սակայն, իրենց գրքերը ուղարկում էին այնպիսի երկրներ, որտեղ, հայտնի էր, տեղական կազմարարները որակով զիջում էին հոլանդացի վարպետներին: Քիշի Աստվածաշնչերի կազմերի ուսումնասիրությունը կարող է բացահայտել հայերի համար պատրաստված կազմերի հետ ունեցած կապը: Քիշի նկարագրությունը նաև պատկերացում է տալիս 1680-ականներին Ամստերդամում գործող կազմարարի արհեստանոցի չափերի մասին, քանի որ նշում է, որ իր համար աշխատող չորս արհեստանոցներում քսան մարդ էր աշխատում՝ ներառյալ վարպետները, օրավարձու բանվորները և աշակերտները: Հետևաբար, այս չորս վարպետներից յուրաքանչյուրն ուներ չորս աշխատող, այդ թվում՝ օրավարձու բանվոր ու աշակերտ:

Ամստերդամի առաջին տպարանը Մարսելից տեղափոխվում է Կոստանդնուպոլիս

Մարսել վերադառնալուց հետո՝ Ոսկանի տպարանը մոտավորապես 1686թ.-ին սկսեց գործել Լևոնյանի այրու համար աշխատող Պետրոս ու Սիմոն Քևորզի Լադինացիների տնօրինության ներքո: Այն այլևս իր գործունեության նախկին մակարդակին չհասավ, և 1695թ.-ին տեղափոխվեց Կոստանդնուպոլիս՝ դառնալով այդ քաղաքում գործող երրորդ հայկական տպարանը: Լիվորնոյում ու Մարսելում տպարանի ձեռք բերած կաթոլիկ շունչը գերիշխող դարձավ Կոստանդնուպոլսում, որտեղ, ըստ երևույթին, առաջատար դեր



View of Constantinople by Jean-Baptiste Vanmour, ca. 1730.

Կոստանդնուպոլսի տեսարան, Ժան-Բապտիստ Վանմուր, մոտ 1730թ.

ունեն կաթոլիկ եպիսկոպոս Սարգիս Եվդոկիացի Սահեթշին: Հնարավոր է, որ Լադինացի եղբայրները շարունակեցին գործարկել տպարանը, բայց հրատարակություններից մի քանիսը կեղծ տպագրության վայրեր են նշում՝ Ամստերդամ, Լիվորնո կամ Մարսել: Դերերը փոխվել էին. այժմ հայ կաթոլիկներն էին վախենում հայ առաքելական իշխանությունների հետապնդումներից: Նրանք Սարգսի և կաթոլիկ քարոզիչների գործեր էին հրատարակում:

1700-1701թթ.-ին տպարանը հրատարակում է երիտասարդ կաթոլիկ Մխիթար Սեբաստացու գործերը, ով հետագայում հայ գրատպության մեջ կենտրոնական դեր պիտի խաղար՝ որպես Մխիթարյան բենեդիկտյան միաբանության հիմնադիր (տես՝ ստորև): Կոստանդնուպոլիսը, հավանաբար, ավելի հարմար վայր էր տպարանի գրքերը բաշխելու համար, քանի որ մոտ 40 հազարանոց հայ բնակչություն ուներ և ավելի մոտ էր օսմանյան իշխանության տակ գտնվող Արևմտյան Հայաստանին, պարսկական իշխանության տակ գտնվող Արևելյան Հայաստանից ու Նոր Զուղայից էլ կարճ հեռավորության վրա էր գտնվում: Սակայն 1701թ.-ից հետո, խմբակցությունների միջև պայքարը սաստկանում է, երբ ճիզվիտներն են միանում կովին, խոչընդոտելով տպարանի աշխատանքին:

Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի տպարանի ամունը վերջին անգամ նշվել է 1718թ.-ին, թեև նախորդ քսան տարվա ընթացքում տպագրված գրքերից շատերը լույս էին ընծայվել առանց տպարանը նշելու կամ կեղծ անվան տակ: 1714թ.-ին Սարգիս եպիսկոպոսը ձերբակալվում է և տպագրությունը դադարում է մինչև 1718թ., երբ վերջին երկու գրքերն են

They published works by Sargis himself and by Catholic missionaries.

In 1700 and 1701 the press published works by the young Armenian Catholic Mkhitar Sebastatsi, who was later to play a central role in Armenian printing as the founder of the Mkhitarist Benedictine order, discussed below. Constantinople might have proven a more convenient location for distributing the press's books, with its own population of about 40,000 Armenians, better access to those in Ottoman-controlled Western Armenia and even shorter transport to Armenians in Persian-controlled Eastern Armenia and New Julfa. But after 1701 the strife between factions became more violent and plagued the press, the Jesuits joining in the fray.

The Holy Echmiadzin and Saint Sargis name makes its last appearance in 1718, though many of the books of the last twenty years appeared without an indication of the printing office or with a misleading one. Bishop Sargis was arrested in 1714 and the publications ceased until two last ones appeared in 1718, coincidentally the same year as the last publications of the Vanandetsi printing office in Amsterdam. This brought an end to the press, sixty years after Matteos Tsaretsi ordered his types from Christoffel van Dijck. This was not the end of Van Dijck's and Kis's types, but they were to see their future use and influence in other presses, especially back in Venice, where Armenian printing had first begun.

Girk srboyn Mastotsay vardapeti [Book of Rituals], Constantinople 1704. An expression of the Armenian love of books: forty pages lacking in this Amsterdam copy have been replaced in manuscript.

Գիրի Սրբոյն Մաշտոցայ վարդապետի, Կ.Պոլիս, 1704 թ.: Հայերի գրքասիրության ապացույց՝ Ամստերդամում պահվող այս օրինակի պակասող քառասուն էջը փոխանակվել է ձեռագիր էջերով:

Երես ընծայվում: Ձուգադիպություն է, որ նույն թվականին լույս են ընծայվում վանանդեցու ամստերդամյան տպարանի վերջին երկու հրատարակությունները: Սրանով, Մատթեոս ծարեցու՝ վան Դեյքին տպատառեր պատվիրելուց վաթսուն տարի հետո ավարտվում է տպարանի գործունեությունը: Բայց սա վան Դեյքի և Քիշի տառատեսակների վերջը չէր. դրանք դեռ պիտի գործածվեին և ազդեցություն ունենային այլ տպարանների, հատկապես՝ վենետիկ վերադարձածի վրա, որտեղից սկիզբ էր առել հայկական գրատպությունը:





VI

Venice and Amsterdam revisited

For a quarter century after Tsaretsi introduced Van Dijk's first Armenian type, no one but his successors had anything similar. But just as Vanandetsi had Kis copy them, after the originals had found their way to Livorno and Marseille, the floodgates burst open. In earlier days even Armenian Catholics had been under suspicion in Venice and Rome. Growing toleration allowed them to flourish in the 1680s, symbolized by the rebuilding of their church in Venice, the Santa Croce degli Armeni. Various kinds of printing offices using Armenian type sprang up.

Voskan's Bible now stood as a great monument to Armenian scholarship and printing. The first Amsterdam printing office and its successors elsewhere, combined with the rapidly expanding Armenian mercantile network, had for the first time provided ready access to large numbers of Armenian books around the world. Vanandetsi's new printing office was beginning to add its contribution. Nearly every new printing office followed the Amsterdam style: in the form of their types, in the layout of their books and in the editing of their texts.

The Canal Grande in Venice by Canaletto, 1730's.

Վենետիկի Մեծ ջրանցքը, Կանալետտո, 1730-ականները

Գլուխ Զ.

Վենետիկն ու Ամստերդամը վերանայված

Ծարեցու կողմից վան Դեյքի առաջին հայերեն տպատետրով տպագրությունը սկսելուց քառորդ դարի ընթացքում, իր հաջորդներից բացի, ոչ մեկը նման տառատեսակ չունեցավ: Բայց ինչպես Վանանդեցին Քիչին ընդօրինակել տվեց տառատեսակները, դա առավել մեծ մասշտաբների հասավ, երբ բնօրինակները հայտնվեցին Լիվորնոյում ու Մարսելում: Ավելի վաղ ժամանակներում Հռոմում ու Վենետիկում նույնիսկ կաթոլիկ հայերն էին կասկածելի համարվում: Աճող հանդուրժողությունը հնարավորություն տվեց նրանց բարգավաճել 1680թ.-ականներին, ինչի վկայությունն էր Վենետիկում հայկական Սուրբ Խաչ եկեղեցու վերակառուցումը: Մնկի պես աճեցին հայերեն տառատեսակներով տպագրող տարբեր տպարաններ:

Ոսկանի Աստվածաշունչը վերածվել էր հայկական գիտությունների ու գրատպության մեծ կոթողի: Ամստերդամի առաջին հայկական տպարանի, այլ քաղաքներում դրան հաջորդների, և արագորեն ընդարձակվող հայկական առևտրային ցանցի շնորհիվ՝ առաջին անգամ հայալեզու գրքերը լայնորեն հասանելի դարձան ամբողջ աշխարհում: Վանանդեցու նոր տպարանը սկսեց իր ներդրումն անել: Գրեթե բոլոր նոր տպարաններն ընդօրինակում էին Ամստերդամի ոճը՝ տառատեսակների ու գրքերի ձևավորման և տեքստերի խմբագրման հարցում:



(*) *Tshashots'* [Lectionary]. This highlight of Armenian printing is set in a copy of Van Dijck's Text bolorgir. Venice, printed by Gaspar Sahradian and Tadeos Hamazaspián, 1686.

Amsterdam's influence in Venice and elsewhere

Cardinal Gregorio Barbarigo, bishop of Padova, established a printing office and type foundry for oriental languages at the Padova diocesan seminary in 1684. Following the example of the Propaganda Fide in Rome, he had Arabic, Syriac, Samaritan, Greek and Armenian types cut by Giovanni Antonio Brasadola. They first appeared in Petar Bogdan's *Cuneus prophetarum de Christo salvatore mundi* of 1685. The two Armenian types, one used for a few pages of text set in lowercase only and the other for an upper and lowercase alphabet, are so close to Van Dijck's that without the documentary evidence one might think they were made mostly from his punches.

The West Syriac Jacobite, Timoteo Agnellini (known in Armenian as Timoteos Garnuk) converted to Catholicism and was appointed Bishop of Mardin in upper Mesopotamia (in East Syria).¹ He came to Rome in 1674/75 and wrote books to help convert people in the Near East. He had his first book, in Arabic, printed in Paris in 1679, but worked mostly in Padova. There he had proverbs in Arabic, Persian and Turkish printed at the Seminary printing office in 1688. His only Armenian book, *Partez hovevor* ('spiritual garden') appeared there in 1690 and one would expect the Seminary printing office to have printed it as well, but its types do not match those used by the seminary in 1685, though it once again follows the Amsterdam style.

(*) *Ճաշոյ* - Հայկական գրատպության այս գլուխգործոցը տպագրված է վան Դեյքի 'Տեքստ' բոլորգիր տառատեսակով: Վենետիկ, տպագրիչներ՝ Գասպար Սահրադյանն ու Թադեոս Համազասպյանը, 1686 թ.

Ամստերդամի ազդեցությունը Վենետիկում և այլուր

1684թ.-ին Պադուայի եպիսկոպոս կարդինալ Գրեգորիո Բարբարիգոն արևելյան լեզուների տպարան ու գրաձուլարան է հիմնում քաղաքի թեմական ճեմարանում: Հռոմում Պրոպագանդա Ֆիդեի օրինակով, նա Ջիովաննի Անտոնինո Բրասարոլային փորագրել է տալիս արաբերեն, ասորերեն, սամարիտերեն, հունարեն և հայերեն տառատեսակներ: Դրանք առաջին անգամ գործածվեցին 1685թ.-ին՝ Պյոտր Բոգդանի *Cuneus prophetarum de Christo salvatore mundi* գրքում: Օգտագործված երկու հայերեն տառատեսակները, որոնցից մեկով մի քանի էջ տեքստ է տպագրված՝ միայն փոքրատառերով, իսկ մյուսով՝ մեծատառերով ու փոքրատառերով այբուբենն է ներկայացված, այնքան նման են վան Դեյքի տառատեսակներին, որ, առանց փաստաթղթային ապացույցների, կարող է թվալ թե հենց նրա տառահայրերից են պատրաստված եղել:

Արևմտյան Ասորի Հակոբիկյան Տիմոտեո Անյելլին (հայերեն՝ Տիմոթեոս Գառնուկը) կաթոլիկություն է ընդունել և եպիսկոպոս նշանակվել վերին Միջագետքի (Արևելյան Սիրիայում) Մարդին քաղաքում: 1674-1675թթ.-ին նա հաստատվում է Հռոմում, որտեղ գրքեր է գրում՝ Մերձավոր Արևելքում մարդկանց դավանափոխելու նպատակով: Արաբերեն լեզվով իր առաջին գիրքը 1679թ.-ին տպագրում է Փարիզում, բայց հիմնականում նա Պադուայում էր աշխատում: Այդ քաղաքում, 1688թ.-ին, արաբերեն, պարսկերեն և թուրքերեն առածներ է տպագրում հոգևոր ճեմարանի տպարանում: «Պարսկե կոզետր» վերնագրով նրա միակ հայերեն գիրքը 1690թ.-ին է լույս ընծայվել նույն քաղաքում: Կարելի



Zhamagirh srbuhwoy kusun Mariamu astuacacnin [Breviary of the Holy Virgin Mary, Mother of God]. Venice, printed by Antonio Bortoli, 1706. Bortoli still uses the Granjon lowercase, but with more modern capitals.

It was noted above that Antonio Bortoli in Venice, who printed for the Armenian community, appears to have used a modernized version of Granjon's type from 1694. His printing office seems to be the only major one working for the Armenian community that did not follow the Amsterdam style at that time. He may have continued using this type to about 1715, but appears to have used Van Dijck's as well from 1704.² Several later printers used types in the Amsterdam style, including the Venetian printer Antonio Zatta in 1762. All these types follow the Amsterdam style, and only a detailed comparison could tell us how many different types were used, and which if any were made from Van Dijck's or Kis's punches.

This sudden flourishing of Armenian printing was not limited to Italy. At Oxford, John Fell brought a German-born Dutch punchcutter to the University Press: Peter de Walpergen (1646-1703), who had probably been apprenticed to Bartholomeus or Reinier Voskens. He cut an Armenian type more or less in the Amsterdam style. Seven letters appeared in 1690 and he later completed the punches for the entire face, but the rest of the matrices were apparently made, and complete fonts cast, only after his death.

The great English punchcutter William Caslon (1693-1766) cut a new Armenian for William Whiston's 1736 edition of Movses Khorenatsi's *Patmutiun Hayots* [History of Armenia], and one would expect Kis's type in the 1695 first edition to have served as the model. Caslon's lowercase does indeed

Ժամագիրի Մայր Կույս կուսին Մարիամու Աստուածածինն. Վենետիկ, տպագրիչ՝ Անտոնինո Բորտոլի, 1706 թ.: Բորտոլին շարունակում էր օգտագործել Գրանժոնի փոքրատառերը, սակայն՝ ավելի ժամանակակից մեծատառերով:

էր ենթադրել, որ այն ճեմարանում է տպագրված եղել սակայն տառատեսակները, որոնք կրկին Ամստերդամի ոճով են, չեն համապատասխանում 1685թ.-ին ճեմարանի օգտագործածներին:

Արդեն նշվել է, որ վենետիկյան հայ համայնքի համար տպագրող Անտոնինո Բորտոլին գործածում էր Գրանժոնի 1694թ. տառատեսակի արդիականացված տարբերակը: Ըստ երևույթին, նրա տպարանը այն ժամանակների հայ համայնքի համար գործող միակ մեծ տպարանն էր, որը չէր հետևում Ամստերդամի ոճին: Այնհայտորեն, մինչև 1715թ. օգտագործել է այս տառատեսակը, բայց 1704թ.-ից ի վեր գործածել է նաև վան Դեյքի տառատեսակը:² Հետագա բազում տպագրիչներ օգտագործել են Ամստերդամի ոճի տառատեսակներ, այդ թվում՝ նաև վենետիկյան տպագրիչ Անտոնինո Ջատտանի 1762թ.-ին: Այս բոլոր տառատեսակները նմանվում են Ամստերդամի տպատառերին, և միայն մանրակրկիտ ուսումնասիրություններով կարելի է պարզել թե քանի տարբեր տառատեսակներ են գործածվել և, այդպիսիք եղած լինելու դեպքում, դրանցից որոնք են վան Դեյքի կամ Քիշի տառահայրերից պատրաստված տպատառեր եղել:

Հայկական գրատպության այս հանկարծակի ծաղկումը չէր սահմանափակվում Իտալիայով: Չոն Ֆելլը Օքսֆորդի համալսարանական տպարան է բերում Գերմանիայում ծնված հոլանդացի փորագրիչ Պետեր դը Վալպերիսենին (1646-1703թթ.), ով հավանաբար աշակերտել էր Բարթոլոմեոս կամ Ռեյնիր Վոսկենսներին: Նա ամստերդամյան ոճին նմանվող հայերեն տառատեսակ է փորագրում: 1690թ.-ին ի հայտ են գալիս յոթ տառ,

ԿԵՆԵՅ. *ՅԵՐԿՈՏԸ




ԿԵՆԵՅ. *ՅԵՐԿՈՏԸ

ԿԵՆԵՅ. *ՅԵՐԿՈՏԸ

Այլ սրբուհի կոյս Մարիամ որ յերկոտս
սան նահապետացն ճուղ օրհնութե և ծառ
կենաց անուանեցար. բերելով մեզ զպտուղն
անմահութե. հայցելք ՚ի բէն յաւարտ և
յանգ հանել զըսկեալս մերս

4

Եւ



* Կոտի գծի Եհրաշխա ծերդեան Տերահայ Կոտի ՚ի Օրհնեայ և
Գանայ. ԷԿ. Ը.



ՈՐԳԻԲ ՍԵՕՆԵ ԵՒԳՆՈՐ
Ի ԾՆԵՐՆԳԵԼՆԵ ՄՕՐ ՏԵԼՈՐՆԵ

քան զի որ ծընաւ զանժամանակն ի հօրէ ծընեալն
այսօր ծընաւ յամուլն արգանդէ. առաք օրհնութիւն առն
զի՛ն մեզ ըզմայր ըն լուսոյս

Յընծացէք որդիք մարդկան այսօր ծնընդեամբ սրբոյնց-ոյ
կուսին. քանզի որ տարաւ զանասնելին յարգանդի անսերմ
նապէս այսօր բըղխեաց յարմատոյն յեսեայ. առաք.

Աւրախութիւն անխարհի ծընաւ զմօրիամ ամուլն աննա՛
մեհաբազ զուարթնոյն. որ ըզտըծօղն օրինաց հընոյն ծընաւ
մարմնով զպարեւի՛ն նորոյս կրտակի. առաք.

5

Խըն



closely resemble Kis's Mediaen, but for the capitals he appears to have enlarged the very different capitals of Kis's Bourgeois. Whiston's book was in preparation for many years, and its Armenian type first appeared in Caslon's type specimens of ca. 1732 and 1734. Charles Ackers, who printed Whiston's book, also printed many of Caslon's specimens. The foundry continued to offer the type for sale far into the nineteenth century.

In Constantinople, Grigor Marzvanetsi and Astvatsatur dpir set up what are supposed to be two separate but closely related printing offices in 1698 and 1699 respectively. Marzvanetsi had worked at the press that produced books at Constantinople in 1677 and 1678, which credit him with the casting of their type, and he presented his press as a continuation of that one. But if he or Astvatsatur ever used the crude type of 1677 – I have not seen their earliest publications – they quickly switched to types in the Amsterdam style. Nersessian lists other Constantinople printers who used 'Voskanean' types, meaning Van Dijck's, though these too need to be compared character by character. He gives no dates for their use of the types, but the dates noted here indicate their earliest recorded books in any type: Martiros dpir (1701), Abraham Trakiatsi (1733), Barsegh & Yacob Sebastatsi (1736) and Stepanos Petrosian (1770). Even Poghos Arapian (1742-1835), the leading Constantinople printer and typefounder of the late eighteenth century, still used types in the Van Dijck/Kis style.

(*) *Sharaknots* [Hymnal]. Constantinople, printed by Astuatsatur Kostandnupolsetsi, 1724.

(*) *Շարակնոյ*. Ա.Պոլիս, տպագրիչ՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցի, 1724 թ.

ամբողջական հավաքածուի տառահայրերն ավելի ուշ է փորագրում, սակայն մայր տառերի մնացածը և տպատառերի ամբողջական հավաքածուներն, ըստ երևույթին, ձուլվել են միայն նրա մահից հետո:

Անգլիացի նշանավոր փորագրիչ Ուիլյամ Կասլոնը (1693-1766թթ.) նոր հայերեն տառատեսակ է փորագրում Ուիլյամ Ուիստոնի 1736թ.-ին հրատարակած Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» գրքի համար, և բնական կլիներ կարծել, որ 1695թ. առաջին հրատարակությունում օգտագործված Քիշի տառատեսակն է որպես նմուշ ծառայել: Կասլոնի փորագրատառերն, իրոք, շատ նման են Քիշի «Մեղիան» տառատեսակին, սակայն մեծատառերը Քիշի «Բուրժուս» տպատառերի մեծացրած տարբերակն են: Ուիստոնի գրքի նախապատրաստությունները երկար տարիներ են տևել իսկ հայերեն տառատեսակն առաջին անգամ ներկայացվել է Կասլոնի 1732թ. և 1734թ. տպատառերի նմուշների ցանկում: Չարլզ Էքրզը, ով հրատարակել է Ուիստոնի գիրքը, նույնպես տպագրել է Կասլոնի տառատեսակների նմուշներից շատերը: Գրաձուլարանը հայերեն տպատառերը վաճառում էր մինչև տասնիններորդ դարի երկրորդ կեսը:

Կոստանդնուպոլսում Գրիգոր Մարզվանեցին և Աստվածատուր դպիրը, 1698թ.-ին և 1699թ.-ին, համապատասխանաբար, հիմնում են երկու առանձին, բայց սերտորեն կապված տպարաններ: Մարզվանեցին աշխատել էր այն տպարանում, որը 1677-1678թթ. Կոստանդնուպոլսում էր գործում, և որի տպատառերը նա էր ձուլել, իսկ նոր տպարանը նա ներկայացնում է որպես հին տպարանի շարունակությունը: Բայց եթե անգամ նա կամ Աստվածատուրը երբևէ օգտագործել են 1677թ. կոպիտ տառատեսակը (չեմ տեսել նրանց



Ուիլյամ Կասլոնի շարակնոյ գրքի մեջ 1736թ. տպագրված Քիշի տառատեսակով:

Tonatsuyts [Calendar of Saints]. Constantinople, printed by Astuatsatur Kostandnupolsetsi, 1740.

Մոնացոյց. Ա.Պոլիս, տպագրիչ՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցի, 1740 թ.


առաջին հրատարակությունները), ապա շուտով անցում են կատարել ամստերդամյան ոճի տպատառերի գործածմանը: Սերսեսյանը թվարկում է «ոսկանյան», այսինքն՝ վան Դեյքի ոճով տառատեսակներ օգտագործող Կոստանդնուպոլսի այլ տպագրիչների, բայց դրանք ևս տառ-առ-տառ ստուգման կարիք ունեն: Նա չի նշում, թե տպագրիչների կողմից երբ են գործածվել այդ տառատեսակները, սակայն ստորև բերվող տարեթվերը նշում են որևէ տառաձևով նրանց տպագրած առաջին գրքերը՝ Մարտիրոս Դպիր (1701թ.), Աբրահամ Թրակիացի (1733թ.), Բարսեղ ու Հակոբ Սեբաստացիներ (1736թ.) և Ստեփանոս Պետրոսյան (1770թ.): Նույնիսկ ուշ տասնութերորդ դարի Կոստանդնուպոլսի առաջատար տպագրիչ ու գրաձուլիչ Պողոս Արապյանն (1742-1835թթ.) էր դեռ շարունակում օգտագործել «վան Դեյք-Քիշ» ոճի տառատեսակներ:

Երեսունյոթ տարվա ընդմիջումից հետո, Նոր Ջուղայում նորից սկսեցին գործել տպարաններ, որոնք 1687-1688թթ. տպագրում են չորս անուն գիրք: Այս գրքերից մեկի (1688թ.) հիշատակարանում նշվում է, որ տպատառերի գրաձուլիչի անունը Մանուկ էր: Կևորկյանը երկու տառատեսակները նկարագրում է որպես 12 կետաչափ բոլորգիր և նոտրգիր, որոնցից որևէ մեկը Նոր Ջուղայում տպված նախորդ գրքերում չէին գործածվել: Հարց է ծագում, թե արդյոք սրանք ևս ամստերդամյան տառատեսակներ կամ դրանց ընդօրինակումներ են:

After a lapse of nearly forty years, printing began again at New Julfa with four books in 1687 and 1688. The colophon of one of the books (1688) tells us their types were cast by 'Manuk'. Kévorkian describes their two types as 12 (Didot) point bolorgir and notrgir, neither used in the earlier New Julfa books. One must wonder if these are also Amsterdam types or copies.

Mkhitarists in Venice, Trieste and Vienna

Manuk Petrosian Sebastatsi (1676-1749), known as Mkhitar, opened a new chapter in the history of Armenian Catholics. He was born to an Armenian family in Sebastea in Ottoman Anatolia, now Sivas in Turkey, west of the Armenian homeland. Around 1694 he travelled to Aleppo, where he came under the influence of Catholic missionaries and Jesuits, but he returned home and was ordained as an Apostolic priest in 1696. He visited Constantinople in 1697 to see Khachatur Arakelian, who had studied at the college of the Propaganda Fide. He returned in 1700 to publish religious pamphlets, which the Constantinople successor of the first Amsterdam printing office printed in 1700 and 1701, still using Van Dijck's types.



An inspirational leader, Mkhitar gathered followers and established what became known as the Mkhitarist congregation. Threatened with arrest at the initiative of the Armenian Apostolic authorities, he fled Constantinople for Venice. The Venetian government granted his congregation property at the Venetian port of Methoni (Modon) in Greece, where his followers set up in 1701 and he joined them in 1703. When the Ottoman Empire captured Methoni in 1714/15, Mkhitar and his congregation fled again to Venice, where the ruling council in 1717 granted them the island of San Lazzaro. On this disused leper colony in the Venice lagoon they set up the Mkhitarist monastery that remains there today.

They became very active publishers, having their books printed for them by Antonio Bortoli in Venice. It has been generally supposed that they owned the matrices and perhaps even the punches for his Van Dijk Armenian types, though we have no documentation. Bortoli began printing works by Mkhitar himself in 1715, but he began using Van Dijk's Armenian types in 1704, so Mkhitar may possibly have brought some of the Constantinople printing office's matrices or punches to Venice when he fled in 1701.

In 1727 an Armenian Catholic merchant heard it claimed in Amsterdam that Voskan's printing materials were still there, so on his return to Venice he informed Mkhitar. Another merchant, Harutyun Gevorkian, looked into it for Mkhitar the next year, informing him that they were not


Girk arakinuteants, Venice 1721. Translation of the Book of Virtues by Petrus Aragonensis, edited by Mkhitar Sebastatsi and printed by Antonio Bortoli.

Գիրք Առաքիլնութեանց, Վենետիկ, 1721 թ.: Պետրոս Արագոնացու գրքի թարգմանություն, հրատարակիչ Մխիթար Աբրահամյանի և տպագրիչ Ամտոնիո Բորտոլիի

Մխիթարյանները Վենետիկում, Տրիեստում և Վիեննայում

Մանուկ Պետրոսյան Աբրահամյանի (1676-1749թթ.), ով հայտնի դարձավ Մխիթար անունով, նոր գլուխ է բացել կաթոլիկ հայերի պատմության մեջ: Նա ծնվել է հայ ընտանիքում, օսմանյան Անատոլիայի Սեբաստիա (այժմ՝ Թուրքիայի Սիվա) քաղաքում: Մոտ 1694թ.-ին ուղևորվում է Հալեպ, որտեղ կաթոլիկ քարոզիչների ու ճիզվիտների ազդեցության տակ է ընկնում, սակայն վերադառնում է իր ծննդավայրը և 1696թ.-ին ձեռնադրվում առաքելական քահանա: Հաջորդ տարի այցելում է Կոստանդնուպոլիս, որտեղ հանդիպում է Խաչատուր Առաքելյանի հետ, ով սովորել էր Պրոպագանդա Ֆիդելի վարժարանում: 1700թ.-ին վերադառնում է, որպեսզի հրատարակի կրոնական թոուցիկներ, որոնք 1700-1701թթ.-ին տպագրվում էին Ամստերդամի առաջին հայկական տպարանին հաջորդող Կոստանդնուպոլսի տպարանում՝ դեռ վաղ Դեյքի տպատառերով:

Լինելով ոգեշնչող առաջնորդ՝ Մխիթարը հետևորդներին հավաքում և հիմնադրում է միաբանություն, որը հետագայում պիտի կոչվեր Մխիթարյան միաբանություն: Հայ առաքելական իշխանությունների կողմից ձեռքակալության վտանգի տակ հայտնվելով, Կոստանդնուպոլսից փախչում է Վենետիկ: Վենետիկյան կառավարությունը միաբանությանը սեփականություն է տալիս Վենետիկին ենթակա Հունաստանի Մեթոն նավահանգիստ-քաղաքում, որտեղ 1701թ.-ին հաստատվում են նրա հետևորդները, իսկ ինքը նրանց միանում է 1703թ.-ին: Երբ Օսմանյան կայսրությունը 1714-1715թթ.-ին նվաճում է Մեթոնը, Մխիթարն ու իր միաբանները նորից փախուստի են դիմում դեպի Վենետիկ՝



Mkhitar Sebastatsi, Kerakanutyun grabari lezui [Grammar of Classical Armenian], Venice 1730.

Մխիթար Աբրահամյանի, Քերականություն գրարարի լեզուի, Վենետիկ, 1730 թ.

կառավարող խորհրդից 1717թ. ստանալով Սուրբ Ղազար կղզին: Վենետիկյան ծովածոցում գտնվող այս բորոտների լքված գաղութում կառուցում են Մխիթարյան վանքը, որը մինչ օրս կանգուն է:

Միաբանները շատ ակտիվ հրատարակիչներ դարձան, իսկ նրանց գրքերը տպագրում էր Անտոնիո Բորտոլին՝ Վենետիկում: Ընդունված վարկածի համաձայն՝ միաբանությունը վաղ Դեյքի հայերեն մայր տառերի, երևի նաև տառահայրերի սեփականատերն էր, ինչի մասին, սակայն, վավերագրություն չունենք: Թեև Բորտոլին 1715թ.-ին է միայն սկսում տպագրել Մխիթարի գործերը, բայց 1704թ.-ից արդեն օգտագործում էր վաղ Դեյքի հայերեն տառատեսակները, ինչից կարելի է ենթադրել, որ Մխիթարը փախուստի ժամանակ, 1701թ.-ին, իր հետ էր բերել Կոստանդնուպոլսի տպարանի մայր տառերի կամ տառահայրերի մի մասը:

1727թ. վենետիկյան հայ կաթոլիկ ինչ-որ առևտրական տեղեկանում է, որ Ամստերդամում են դեռ պահվում Ոսկանի տպագրական նյութերը, ինչի մասին իր վերադարձին հայտնում է Մխիթարին: Մեկ տարի անց Հարություն Պարոզյան անունով մի այլ վաճառական հետաքրքրվում է այդ նյութերով և Մխիթարին տեղեկացնում, որ խոսքը ոչ թե Ոսկանի, այլ՝ Վանանդեցու նյութերի մասին է, որոնք մի հուլանդացու ձեռքում են, ում անունը չի նշվում: 520 գուլդենով նա ձեռք է բերում 656 պողպատյա տառահայր, 816 պղնձե մայր տառ, 99 փայտափոր սկզբնատառ ու երեք արկղ՝ ձուլված տպատառերով: Իրավացիորեն, շատ էժան գործարք են համարում: Փորձում են ամենայն զաղտնիությանը իրականացնել այս նյութերի ձեռքբերումն ու տեղափոխումը, որովհետև Ամստերդամի առաքելական քահանա

Voskan's but Vanandetsi's materials, in the hands of an unnamed Dutchman. For 520 guilders he bought 656 steel punches, 816 copper matrices, 99 woodcut initials and 3 crates of cast type. They correctly considered this a bargain. They tried to acquire and ship these materials in the greatest secrecy, because Yeghishe di Filebo, the Apostolic priest in Amsterdam, was urging the Armenians there to redeem the materials and set up a new Amsterdam printing office. He would certainly not have wanted them in Catholic hands.

The Mkhitarists of San Lazzaro, though they still had no printing office of their own, could now claim to be, in a certain sense, the successor to both Amsterdam printing offices. In the summer of 1729 they had several hundred kilos of type cast from the newly acquired matrices, and toward the end of the year they had new matrices made from the punches and more type cast. Bortoli continued printing for them, the new types appearing in his books by 1731.



Տաղանն նայի :
Պարզաբանութի :

Որպէս յորժամ ան՝ ի ժամանակս
այի եւս՝ զբնակեցել ջրոյ ի վրէ
րեսայ երկրի, ու էր տեղի ինչ փր-
կութեանն, որք էին արտաբոյ տա-
ղանին . այլ ամենեքեան ջրօրհան
յերկրէ, և Տեղանն ի ջրս, և փր-
կե-

Mkhitar Sebastatsi,
Kristoneakan
vardapetutiwn [Christian
doctrine]. Venice, printed
by Antonio Bortoli, 1737.

In 1773, twenty-one monks from San Lazzaro moved to Trieste, then under the authority of the Austro-Hungarian Empire, to set up a Mkhitarist congregation there. On 30 May 1775 Maria Theresa granted them permission to settle in the Habsburg domains and to establish a printing office in Trieste. It published the first of its many books in 1776. Their earliest types, once again in the Amsterdam style, may have come from Constantinople, even though the promised financial support from the Catholic monastery there failed to come through. When the Preßburger treaty of 25 December 1805 gave Trieste to Napoleon, the Armenians in general and the printing office in particular were regarded as Habsburg loyalists and subjected to severe depredations. The press lost much of its printing material, but continued to produce books until 1810.

The dismal circumstances in Trieste led the Mkhitarists there to set up a new monastic centre in Vienna, where the Holy Roman Emperor Franz I granted them permission to settle on 5 December 1810. They set up a new printing office there in 1811 and published their first book in July 1812. They managed to salvage some of their materials from Trieste, but also had at least one new Armenian type cut for their first book. Vienna had long been a major centre of typefounding and punchcutting, and within a decade the press branched out from Armenian to print in a wide variety of non-Latin types, gaining an international reputation for its scholarly printing. Anton Ockenfuß in Vienna,

Մխիթար Սեբաստացի, Քրիստոնէական վարդապետութիւն,
վենետիկ, տպագրիչ Անտոնիո Բորտոլի, 1737 թ.

եղիշէ դի Փիլիպոսը հայերին կոչ էր անում փրկել այդ նյութերը և Ամստերդամում նոր տպարան հիմնել: Նա, անշուշտ, չէր ցանկանա, որ դրանք կաթոլիկների ձեռքն անցնէին: Թեև Սուրբ Ղազարի Մխիթարյանները դեռ սեփական տպարան չունէին, բայց և այնպէս իրավունք ունէին պնդելու, որ, ինչ-որ չափով, իրենք են ամստերդամյան երկու տպարանների ժառանգները: 1729թ. ամռանը հարյուրավոր կիլոգրամ տպատառեր են ձուլում նոր ձեռք բերված մայր տառերից, իսկ նույն տարվա վերջին՝ տառահայերով նոր մայր տառեր են պատրաստում և դրանցով ավելի շատ տպատառեր ձուլում: Բորտոլին շարունակում է տպագրել նրանց համար, և մոտ 1731թ.-ին նոր տպատառերն արդեն ի հայտ են գալիս նրա գրքերում:

1773թ.-ին Սուրբ Ղազարից քսանմեկ քահանա տեղափոխվում են Ավստրո-հունգարական Կայսրությանը ենթակա Տրիեստ քաղաքը, որպեսզի Մխիթարյան միաբանություն հիմնադրեն: 1775թ. մայիսի 30-ին Մարիա Թերեզան նրանց հաբսբուրգյան հողերի վրա հաստատվելու և Տրիեստում տպարան հիմնելու թույլտվություն է շնորհում: Այս տպարանն իր առաջին զիրքը հրատարակում է 1776թ.-ին: Առաջին տառատեսակները, կրկին ամստերդամյան ոճով, հավանաբար Կոստանդնուպոլսից էին բերվել, սակայն այնտեղի կաթոլիկ վանքի խոստացած ֆինանսական օժանդակությունն իրականություն չդարձավ: Երբ 1805թ. դեկտեմբերի 25-ին կնքված Բրատիսլավայի դաշնագրով Տրիեստ քաղաքը հանձնվում է Նապոլեոնին, հայերն ու, մասնավորապես, նրանց տպարանը հաբսբուրգամետ են դիտվում և դաժան թալանի ենթարկվում: Տպարանը գրկվում է իր տպագրական նյութերի



Մատթեոս Եւրոկացի, Վարի Միքոյն Գրիգորի Լուսատրչին,
հրատարակիչ՝ Մխիթար Սեբաստացի, տպագրիչ՝ Անտոնիո
Բորտոլի, Վենետիկ, 1749 թ.

Mattheos Yewdokatsi,
Vark Srboyn Grigori
Lusaurchin [Life of St.
Gregory the Illuminator].
Edited by Mkhitar
Sebastatsi and printed
by Antonio Bortoli,
Venice 1749.

apparently a Hungarian, cut many types for the press before leaving for Budapest in 1848, but he was probably too young to have cut their earliest types.³


The Vienna Mkhitarists supplied matrices for a small Armenian type to the London oriental printer and type-founder Richard Watts in or before 1827.⁴ Once again, the models seem to be Kis's types, used extensively by the Venice Mkhitarists. Due in part to Watts's work for the British and Foreign Bible Society, this type was to spread around the world (see the account of nineteenth-century missionary printing below). An 1835 fire destroyed the Vienna printing office, but they rebuilt it on a larger scale. Its subsequent history belongs to a later chapter of this book.

In 1789, after having books printed for them for several decades, the Venice Mkhitarists set up their own printing office in the San Lazzaro monastery, only a few years after the Trieste congregation began printing. They continued to use the types acquired from Amsterdam, bringing an end to Armenian printing by Bortoli's successors. The second volume (1817) of their *Dictionnaire abrégé français-arménien* still shows a complete alphabet of what appears to be the Kis Bourgeois bolorgir, and they seem to have printed his Mediaen bolorgir from freshly cast type in their 1823 *Preces Sancti Nersetsi*. Soon after that they have begun revising and replacing their types.

Մատթեոս Եւրոկացի, Վարի Միքոյն Գրիգորի Լուսատրչին,
հրատարակիչ՝ Մխիթար Սեբաստացի, տպագրիչ՝ Անտոնիո
Բորտոլի, Վենետիկ, 1749 թ.

մեծ մասից, բայց և այնպէս շարունակում է գրքեր լույս ընծայել մինչև 1810թ.: Տրիեստում տիրող անբարենպաստ դրությունը մխիթարյաններին ստիպում է նոր վանական համալիր հիմնել Վիեննայում, որտեղ Սուրբ Հոսեֆական կայսր Ֆրանց 1-ը նրանց հաստատվելու թույլտվություն էր շնորհել 1810թ. դեկտեմբերի 5-ին: Այնտեղ նոր տպարան են հիմնում 1811թ.-ին, և առաջին զիրքը տպագրում 1812թ. հուլիս ամսին: Նրանց հաջողվում է փրկել Տրիեստի նյութերի մի մասը, բայց առաջին գրքի տպագրման համար առնվազն մեկ նոր տառատեսակ են փորագրել տալիս: Վիեննան երկար ժամանակ տպատառերի փորագրման ու ձուլման մեծ կենտրոն է եղել, և մեկ տասնամյակի ընթացքում տպարանի տառատեսակների հավաքածուն ընդլայնվեց հայերենից մինչև ոչ-լատինական շատ այլ տառատեսակներ՝ այսպիսով համազգային համբավ վաստակելով իր գիտական տպագրությունների շնորհիվ: Հունգարացի Անտոն Օքենֆուսը Վիեննայի տպարանի համար շատ տառատեսակներ է փորագրել մինչև 1848թ.՝ նախքան Բուդապեշտ մեկնելը, սակայն նա շատ երիտասարդ էր, որպեսզի փորագրած լինէր նաև տպարանի առաջին տառատեսակները:⁵ Վիեննայի մխիթարյանները փոքր չափի հայերեն տառատեսակի մայր տառեր են առաքել Լոնդոնի արևելյան լեզուների տպագրիչ ու գրաձուլիչ Ռիչըրդ Ուատսին, մոտ 1827թ.-ին:⁶ Տառատեսակը դարձյալ ընդօրինակում է Քիշի տպատառերը, որոնք լայնորեն գործածվում էին վենետիկյան մխիթարյանների կողմից: Բրիտանական և արտասահմանյան աստվածաշնչային միություն համար Ուատսի կատարած աշխատանքի շնորհիվ այս տառատեսակը տարածվեց աշխարհով մեկ (տես՝ ստորև՝ տասնիններորդ դարի

Magnificent third edition of Voskan Yerevantsi's 1666-1668 Bible edited by Mkhitar Sebastatsi and printed by Antonio Bortoli, Venice 1733.



ԱՅՒ ԱՆՈՒՆՉ Գ Ի Ր Ք

**ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ ԿՏԵԿԱՐԱՆԵՑ
ՇՐՐԵՆԵՐԳՈՒԹԵՇՄԻ ՆԵ ԵՆԵՆԵՅՆ ՄԵՐՈՑ
ԵՒ ՃՇՄԵՐՏԵՍԻՐԵՑ ԹԵՐԳՄԵՆՉԵՑ
ԶՈՐ ԶԿՆԻ ԸՄԵՑ Ի ԸՉՄԵՑ**

Պատի ՏՆ. 1666. և ի Թուրքիա Հայոց. ըՃՃԷ. Տրամանա. ՏՆ Յսկորայ Հայոց
Կամուզիկոսի գլխակարգեղ և սնանեղ ի 1 տարնացոց. նաև գճամաճախուի
հանուրց գրոց անձանից իրերոց սուրններ կարգեղ նոն Սահակայ վրչպոսի
երևանեցոյ. և սուրնով տպագրութի ի լոյս ածեալ.

**Իսկ այժմ՝ նոյնն լանագոյն թղթովք, ազնուագոյն պատկերոք,
գեղեցիկագոյն ծաղկադրոք, զգուշագոյն սրբագրութի, և բազմոք
ծախիք՝ վերստին տպագրութի ի լոյս ածեցեալ.**

Լախաստաբուրի և Գանի՛ ՏՆ Մխիթարայ Արչպոսի Սեբաստացոյ՝ Լճրոց Հայր կոչեցեալ.

Ի փաստ անձագոյն ՄՂ. Իճ. Կոզուտ մանկանց Լճկեցոյ :


ՅՎ ՏՆ. 1733. և ի Թուրքիա Հայոց. ըՃՃԷ. Վանի. 15.

Ի Հայրապետութե նոն Վրճաճանու. Հայոց Կամուզիկոսի :



**Ի ԱԼԵՆԷՏԻԿ ՔԵՂԱՔԻՒ
Ի Տպարանի Ընտանի Պոսեյոնի
Ն ԲԵՄԵՆԵՒՄԵ ԾԵՒՈՐԵՑ.**

Ոսկան Երևանցու 1666-1668 թվականի Աստվածաշնչի շքեղ երրորդ հրատարակությունը՝ Մխիթար Սեբաստացու կողմից, տպագրիչ՝ Անտոնիո Բորտոլի, Վենետիկ, 1733 թ.



Mikayel Chamcheants, *Patmutiun hayots* [History of the Armenians]. Venice, printed by Pietro Valvaziani, 1784.

Միքայել Ճամճեանց, Պատմութիւն հայոց, Վենետիկ, տպագրիչ՝ Պիետրո Վալվազիանի, 1784 թ.

բարոզչական տպագրությունների մասին): 1835թ. -ին Վիեննայի տպարանը ավերվում է հրդեհից, սակայն ավելի մեծ չափերով վերակառուցվում: Տպարանի պատմության շարունակությունը կպատմվի այս գրքի հաջորդ գլուխներում:

Իրենց համար տասնամյակներ գրքեր տպագրել տալուց հետո, Վենետիկի մխիթարյանները 1789թ. -ին սեփական տպարան են հիմնում Սուրբ Ղազարի վանքում՝ միաբանության Տրիեստում հաստատած տպարանի մեկնարկից միայն մի քանի տարի անց: Շարունակում են օգտագործել Ամստերդամում ձեռք բերված տառատեսակները, ինչով վերջ են դնում Բորտոլիի հաջորդների կողմից հայերեն գրքերի տպագրությանը: Նրանց «Ֆրանսերեն-հայերեն համառոտ բառարան»-ի երկրորդ հատորը (1817թ.) դեռ պարունակում է մի ամբողջական այբուբեն, որը կարող է լինել Քիշի «Բուրժուա» բոլորգիրը, իսկ «Preces Sancti Nersesis» (Սուրբ Ներսեսի աղոթքները) գիրքը 1823թ. -ին, հավանաբար, տպագրված է Քիշի «Մեդիան» բոլորգիր տառատեսակի նոր ձուլվածքով: Քիշ ժամանակ անց նրանք սկսում են վերանայել և փոխարինել իրենց տառատեսակները:

Հասարակ բաղադրի գրաձուլիչ Չարլս Էնսիեդե, որ հոլանդական գրաձուլարանների պատմությունն էր գրում, 1892թ. -ին փարիզյան արևելագետ Օգյուստ Կադիեդին նամակ է հղում Քրիստոֆել վան Դեյքի հայերեն տառատեսակների մասին: Այդ ժամանակ Քիշի մասին գրեթե ոչինչ չգիտեին, և նրանք չէին գիտակցում, որ 1660-1718թթ. Ամստերդամում հայերեն տառատեսակների երկու տարբեր խմբեր էին շրջանառվում: Հետևաբար, երբ գրելիս նրանք հղում են անում վան Դեյքի հայկական տպատառերին, դա կարող է վերաբերել վան Դեյքի



William Robertson, *Vipasanutiun Amerikoy* [History of America]; Trieste, Mkhitarist Press, 1784. Portrait of Hovhannes Babikian Jughayetsi, who financed the Armenian translation and was probably related to one of the Trieste Fathers.

In 1892 the Haarlem typesetter Charles Enschedé, working on his history of the Dutch typefoundries, wrote to the Paris orientalist Auguste Carrière about Christoffel van Dijk's Armenian. Kis was still largely unknown and they did not realize there were two different groups of Armenian types in Amsterdam from 1660 to 1718, so whenever they write about Van Dijk's Armenian it can be either his or Kis's. Carrière, just setting off for Venice when Enschedé's letter arrived, promised to see what he could find.

On his return he wrote that the 'Van Dijk' punches and matrices – more likely Kis's or some of each – survived in Venice, though in poor condition. At some later date, perhaps for safe keeping during World War I, two cabinets containing the San Lazzaro printing office's historical materials were plastered into a partition wall and then forgotten. During renovations in 1973, workmen tearing down the wall discovered the cabinets. Workmen at the press catalogued the material and identified some of the woodcut decorations and initials as ones from the 1668 Bible.⁵ We must hope the punches and matrices can be compared with Van Dijk's and Kis's types.

Կուլիեդնո Ռոբերթսոն, *Վիպասանութիւն Ամերիկոյ*, Տրիեստ, Մխիթարյան միաբանության տպարան, 1784 թ.: Դիմանկար՝ Հովհաննես Բաբիկյան Ջուղայեցու, որ հովանավորեց հայերեն թարգմանությանը և հավանաբար Տրիեստի միաբաններից մեկի ազգական էր

կամ Քիշի տառատեսակներին: Կադիեդն, ով Էնսիեդեի նամակը ստանալու ժամանակ, Վենետիկ մեկնելուն էր պատրաստվում, խոստանում է պարզել թե ինչ է պահպանվել:

Իր վերադարձին գրում է, որ «վան Դեյքի» (ավելի հավանական է՝ Քիշի, կամ՝ երկուսի) տառահայրերն ու մայր տառերը դեռ պահպանվում են Վենետիկում, թեև՝ վատ վիճակում: Ավելի ուշ, գուցե Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ չվտանգելու նպատակով, Սուրբ Ղազարի տպարանի պատմական նյութերը պարունակող երկու պահարան միջնապատի մեջ են ծեփվում ու, հետագայում, մոռացվում: 1973թ. -ին, վերանորոգման աշխատանքների ժամանակ, բանվորներն, այդ պատը քանդելիս, հայտնաբերեցին են պահարանները: Տպարանի աշխատակիցները հաշվառում են նյութերը և փորագիր զարդերից ու սկզբնատառերից մի քանիսը նույնացնում որպես 1668թ. տպագրված Աստվածաշնչում օգտագործված նյութեր:⁵ Հուսանք, որ հնարավոր կլինի տառահայրերն ու մայր տառերը համեմատել վան Դեյքի ու Քիշի տառատեսակների հետ:

Ամստերդամի անկենսունակ երրորդ տպարանն իր հետքն է թողնում

Թեև Ամստերդամում 1718թ. -ից ի վեր այլևս հայերեն գիրք չէր տպագրվել տեղական հայ համայնքն, այնուամենայնիվ, ևս մեկ խոշոր ներդրում կատարեց հայ գրքի պատմության մեջ: Քահանա Եղիշե դի Փիլիպուսի՝ նոր տպարան հիմնելու խնդրանքներն անպատասխան են մնում 1728թ. -ին, բայց 1755թ. -ին եկեղեցու սարկավազը, նորօրուլայեցի վաճառական



Portrait of a gentleman with water pipe, thought to be Arachiel di Paulo, merchant and deacon of the Armenian Church in Amsterdam. Painted in 1749 by Pierre Frédéric de la Croix (1709-1782).

Amsterdam's stillborn third Armenian printing office leaves its mark

Although Amsterdam's printing of Armenian books came to an end in 1718, the Armenian community there nevertheless made another major contribution to the history of the Armenian book. The priest Yeghishe di Filebo's pleas for the establishment of a new printing office there failed to bear fruit in 1728, but in 1755 the deacon of the church, a merchant from New Julfa named Arakel Poghosian, also known as Arachiel di Paulo, made a new attempt with the help of another Amsterdam punchcutter.

Johann Michael Fleischman (1707-1768), born near Nürnberg, was apprenticed at age fifteen to learn punchcutting and typefounding for six years from the Nürnberg master Konstantin Hartwig. An account probably deriving from Fleischman himself says that even as an apprentice he demonstrated his punchcutting skills, making notable improvements to his master's foundry, mainly by cutting missing sorts for the existing faces.

After only five years he left on his 'Wanderjahr', arriving in the Netherlands in 1728. He was to remain there for the rest of his life, quickly becoming the country's leading punchcutter. His innovative roman and italic types, joined from about 1740 by those of Jacques François Rosart and a few others, gradually supplanted the types of the Dutch golden age. By this time Holland had lost its role as the leading


Դիմանկար՝ նարգիլետով պարոնի, հավանաբար՝ վաճառական և Ամստերդամի հայկական եկեղեցու սարկավագ Առաքել դի Պաուլոյի: Նկարիչ՝ Պիեր Ֆրեդերիք դը լա Բրուա (1709-1782 թթ.), 1749 թ.

Առաքել Պողոսյանը, որը հայտնի է նաև Արաքիել դի Պաուլո անվամբ, նոր փորձ է կատարում մեկ այլ ամստերդամցի փորագրիչի օգնությամբ:

Նյուրնբերգի մոտակայքում ծնված Յոհան Միխայել Ֆլայշմանը (1707-1768թթ.) տասնհինգ տարեկանում աշակերտում է Նյուրնբերգի վարպետ Կոնստանտին Հարտվիգի մոտ՝ սովորելով տառահայրերի պատրաստում և գրաձուլում: Գուցե հենց Ֆլայշմանին պատկանող հիշատակություններում նշվում է, որ աշակերտելիս արդեն նա փորագրական իր հմտություններն է դրսևորել՝ նշանակելի բարելավումներ մտցնելով իր վարպետի գրաձուլարանում, հիմնականում եղած հավաքածուների համար պակասող տառատեսակները փորագրելով:

Ընդամենը հինգ տարի անց սկսվեցին նրա մեկամյա թափառումները, որոնք 1728թ. -ին նրան հասցրեցին Նիդերլանդներ: Այնտեղ էլ մնալու էր մինչև կյանքի վերջը՝ արագորեն դառնալով երկրի ամենահայտնի փորագրիչը: Նրա նորարարական լատինական ու իտալիկ տառատեսակները, որոնց 1740թ. -ից հետո միացան Ժաք Ֆրանսուա Ռոսարտի և մի քանի այլ փորագրիչների տառերը, աստիճանաբար փոխարինեցին հոլանդական ոսկե դարի տեսակներին: Հոլանդիան այդ ժամանակներում արդեն Ֆրանսիային ու Անգլիային էր զիջել գրաձուլության ու փորագրության առաջատար կենտրոնի իր դիրքը, և Ֆլայշմանի լատինական ու իտալիկ տպատառերը երբևէ միջազգայնորեն դեր չխաղացին տպագրական տառատեսակների զարգացման մեջ, բայց տեխնիկական հմտությունների նրա մակարդակը երբևէ չի գերազանցվել:

Ֆլայշմանը 1755թ. դեկտեմբերի 15-ին Առաքելի հետ պայմանագիր է կնքում ինը տարբեր



The contract between Di Paulo and Fleischman, dated 15 December 1755.

centre of typefounding and punchcutting to France and England, and Fleischman's romans and italics never took a central role in the evolution of printing types internationally, but his technical skill has rarely been equalled.

On 15 December 1755 Fleischman contracted to cut punches for nine different Armenian types for Arakel. The contract gives no details of the sizes or styles, but notes that it will require about 500 punches, including musical signs (neumes), punctuation, etc., so the contract must count capitals and lowercase separately to make nine types. He contracted to finish the job in fifteen months (1 February 1756-1 May 1757), which gives an average of about 1¼ punches per workday.

Already on 15 May 1756, Arakel presented the first type, a Mediaeval bologir lowercase, in a small broadside announcement in verse, nicely printed in red and black in two columns. A synopsis of the fount, centred at the foot, shows 73 characters: the 38 lowercase letters, 19 alternate ones with shorter descenders, 14 ligatures and abbreviations and a couple non-alphabetic characters. If we take this to be the number of characters for a lowercase generally and suppose that there were 38 characters in an uppercase, five sets of lowercase and four sets of uppercase would make 517 characters in total. Since there are no capitals in the broadside, the first letter of each verse is set in a factotum built up from six-lobed and eight-lobed asterisks. Four printed rules

Դի Պաուլոյի ու Ֆլայշմանի կնքած պայմանագիրը, ամսաթիվ՝ 15 դեկտեմբեր 1755 թ.

հայերեն տառատեսակների փորագրության վերաբերյալ: Պայմանագիրը չի նշում մեծությունների կամ ոճերի մանրամասները, բայց նշում է, որ կլինեն մոտ 500 տառահայր, ներառյալ՝ խազերն ու կետադրության նշանները: Դա նշանակում է, որ պայմանագրում մեծատառերն ու փոքրատառերը որպես առանձին տառատեսակներ են դիտվում՝ ինը տեսակ հաշվելու համար: Ըստ պայմանագրի, նա աշխատանքը պիտի ավարտեր տասնհինգ ամսում (1756թ. փետրվարի 1-ից 1757թ. մայիսի մեկը), ինչը ենթադրում է մեկ օրում միջինը մեկ և քառորդ տառահայրի պատրաստում:

1756թ. մայիսի 15-ին Առաքելն արդեն երևան է բերում իր առաջին տառատեսակը՝ «Մեդիան» բոլորգիր փոքրատառերով փոքր, չափածո գրված հայտագրում, գեղեցիկ կերպով տպված սև ու կարմիր երկու սյունակներով: Թղթի ստորին մասում տառատեսակի մասին ամփոփ տեղեկատվություն կա, որում ներկայացված է 73 գրանշան՝ 38 փոքրատառ, 19 այլընտրանքային փոքրատառ՝ առավել կարճ պոչերով, 14 միացման ու հապավման նշան, և մի քանի ոչ այբբենական նշան: Ընդունելով, որ սա է փոքրատառերի հավաքածուի ընդհանուր թիվը, և ենթադրելով, որ մեծատառերի հավաքածուն 38 գրանշան է պարունակում, հինգ հավաքածու փոքրատառը և չորս հավաքածու մեծատառը միասին կկազմեն 517 գրանշան: Քանի որ նշված հայտագրում չկան մեծատառեր, ամեն տողի առաջին տառը կազմված է վեց կամ ութ թևով աստղանիշերից: Չորս տպագրված գիծ, տեքստի երկու սյունակների աջ ու ձախ կողմերում, ծառայում են որպես հենասյուներ. սա լավ հնարք է բոլորգիր տպագրվածքը լավագույնս ներկայացնելու համար:

Fleischman's new type was used in this 1756 announcement in verse by Di Paulo, who asks his compatriots to send material for the new Armenian press in Amsterdam.

 8 ***

 անուշումն առ համամիտ և բանա
 սէր՝ սրբազանից հարցոյ՝ և եզ
 բարցոյ՝ համայնից

 Ըրբազանից հարցոյ հա մայն .
 նաև՝ եղբարցրոց գիտնա կան .
 յայտնի առնեմ առ իղձ մե ըայն .
 որ կայր սրտիս վաղընձա կան .
 յս է իղձ նիմ որ սրտսմա կան .
 վա սրն գրոց տրպազրու թեան .
 որ կամէի ինձ ըստաց ման .
 գիպոց ժամու ՚ի գործ ած ման .
 որ ժամ եկի ՚յամսորը դամ .
 թէպէտ՝ գործոյ վաճառա կան .
 նաև՝ ելի ՚ի ինդիր գրտ ման .
 բայց սչ գրտի գգիր վանան դեան .
 այն ժամ լեզ ո՛ւնաց զգիտունն այն .
 զգուկաս դպիր ըն սօիես տեան .
 ոչ գրտի ես առ անդ կեն դան .
 զի փոխեալ էր յերկնից կա յան .
 պա՛ եղի զայս իմ առ այն .
 ինդրահատար աստու՛ածն ըան .
 տալ ինձ սատար ըստ իմ ըղձ ման .
 ընու զփափսագն իմ անձկու թեան .
 ետ քանի մի ամաց անց ման .
 գրտի այր մի համարու՛ես տեան .
 որ էր տեղեալ գերմանա կան .
 նաև՝ քաջ վարժ քանդող գը ըեան .

 1 ***

 աղազս որոյ՝ ետու հրա ման .
 քանդել տրպել զայս սիրզ բան .
 նաև՝ ներհուն գիտնոց հա մայն .
 առ՝ ՚ի առնել յայտ ածա կան .
 յլե ու թըն կեր պըս գը ըեան .
 ետու զսրտու՛էր վա սրն քանդ ման .
 լեցի զհամայնն ինն կեր պեան .
 զատ՝ ՚ի շգեղ ձագա գը ըեան .
 ս առ պըեալ ըս անպի տան .
 որդի եմ առ ըն պօղո սեան .
 և եմ տեղեալ նոր ջուղա յեան .
 որ յայժմ կամ՝ յամսորը դամ .
 ըղ՝ այժմ ինդիր նէ՛ իմ այս քան .
 առ սիրելեացոյ համադա մայն .
 թէ գացի գիրք չքնաղա կան .
 առ իս յըղել սիրողա կան .
 ՚ի ես տացից տրպազրու թեան .
 աշխատու թեամբ և իմ ար դեան .
 բայց ձեր գրքին մից փո խան .
 տա սրն գիրք ձեզ առ յեսա տամ .
 է լեցի ձեզ բանք մեր սրտ կան .
 զնորհ մեծ ունիմ՝ ձեր բարու թեան .
 թէ չեցէ՛ ձեզ զայս հաճոց բան .
 մնացէ՛ք դուք խաղաղու թեան .
 ազար եօթըն հարի՛ւրա կան .
 յիսուն և վեց թիւ՝ փրկչա կան .
 ՚ի տանն և հինգ մայիս ամ սեան .
 եղև տրպեալ՝ յամսորը դամ .

Ֆլայշմանի նոր տառատեսակով տպագրվեց 1756 թ. այս հայտարարությունը, դի Պաուլոյի չափածո գրութեամբ, որով նա կոչ է անում իր հայրենակիցներին՝ Ամստերդամի նոր տպարանին նյութեր տրամադրելու:

(աբգդեզէըթ ժիլխծկհչձյնշոչպղռսվարցւփբևօֆան)
 (բգդեզթելևկզյշըՎբփբ)
 (մե մէ մի միս մկ մն մն ըբ ք ը ը ը օ ր)

Յոհաննես Էնսխեդեն 1768թ. իր տառատեսակների նմուշների ցանկի ներածության մեջ գրում է, որ Ֆլայշմանը յոթ հայերեն տառատեսակ է փորագրել 1756-1757թթ.-ին, և հստակեցնում, որ Առաքելն է այդ տառատեսակների միակ յիիրավ սեփականատերը: Թեև Էնսխեդեն իրավունք չուներ այդ տպատառերը ձուլել այլ գնորդների համար և այդ պատճառով դրանք չի ներառում իր գնացուցակում, բայց և այնպես հայերեն յոթ տառատեսակ է ներկայացնում՝ մեծատառերը հաշվելով որպես առանձին տառատեսակ, և պարզորոշ կերպով դրանք վերագրում Ֆլայշմանին՝ որպես 1756-1757թթ. գործեր: Ֆլայշմանի մինչև մեր օրերը հասած հաշվեմատյանում կա մեկ անթվակիր ապրանքագիր՝ Առաքելի հանձնարարությամբ հայերեն տառատեսակի փորագրության մասին. մեծագույն չափով 38 մեծատառ, հաջորդ չափով 40 մեծատառ, 34 խազ և



The 1784 type specimen of the Ploos van Amstel type foundry in Amsterdam shows a few letters of a Text bolorgir lowercase and three sizes of yerkatagir capitals. The Text lowercase matches Fleischman's in Enschedé's 1768 specimen, so the others may be Fleischman's as well.¹¹ All these types follow the Amsterdam style of Van Dijck and especially Kis. Fleischman even follows them in using connected strokes in the capitals of the smallest size, but fragmented ones in the larger sizes. The forms have now been refined, however. This can be seen most easily in the largest sets of capitals, where the short, tapered curved strokes of Van Dijck and Kis have been drawn out to long, thin points.

Granjon's Armenian type, first shown in his 1579 specimen, still appeared in a book printed by the Propaganda Fide in Rome in 1756, but Costantino Ruggieri, who headed its printing office from 1758 to 1763, made great

Dzagagir or bird letters from G.C. Amaduzzi, *Alphabetum armenum*. Rome, printed by the Propaganda Fide, 1784.

են:¹¹ Այս բոլոր տառատեսակները հետևում են վան Դեյքի և, հատկապես, Քիշի ամստերդամյան ոճին: Ֆլայշմանը նույնիսկ ընդօրինակում է փոքրաչափ մեծատառերում միացման զծիկների, իսկ առավել մեծ չափերի մեծատառերում՝ մասնատված զծերի օգտագործումը: Ձևավորումը, սակայն, ավելի նուրբ է: Սա առավել տեսանելի է ամենամեծ մեծատառերում, որոնցում վան Դեյքի ու Քիշի կարճ, նվազող կեռ զծերը վերածվել են երկար ու բարակ կետերի:

Գրանժոնի հայերեն տառատեսակը, որն առաջին անգամ ներկայացվել է նրա տառատեսակների 1579թ. ցանկում, դեռ օգտագործվել է Հռոմում Պրոպագանդա Ֆիդեի 1756թ.-ին տպագրած գրքում, սակայն Կոստանտինո Ռուջիերին, որ տպարանի ղեկավարն է եղել 1758-1763թթ., մեծ ջանքեր է թափել նյութերը թարմացնելու համար: Ըստ նրա տեղեկատվության՝ 1758-1759թթ.-ին նա հայերեն տառատեսակներ է ձեռք բերել, բայց չի տարբերում տառահայրերը, մայր տառերը և ձուլված տպատառերը միմյանցից: Նա վատիկանի տպարանից ձեռք է բերել հին չօգտագործվող նյութեր, նաև՝ հայկական տպատառեր, բայց թվում է, որ Պրոպագանդա Ֆիդեն դրանք երբևէ չի օգտագործել:¹² Փորձել է նաև վենետիկյան Սուրբ Ղազար վանքից և Հոլանդիայում բնակվող հայ քահանայի միջով ձեռք բերել ձուլված տպատառեր կամ մայր տառեր: Այստեղ Ֆլայշմանի տառատեսակի մասին է խոսքը, սակայն հայտնի չէ, թե արդյոք ձեռք է բերել:¹³ Պրոպագանդա Ֆիդեն մոտ 1775թ.-ին սկսում է գործածել «Տեքստ» բոլորգիր տպատառեր, որոնք շատ նման են Ֆլայշմանի տառատեսակին, թեև լիովին չեն համապատասխանում էնսխետեի 1768թ. տառատեսակների ցանկում ներկայացված տառերին:¹⁴


efforts to renew its materials. His own note indicates that he acquired Armenian type in 1758/59 but does not always distinguish punches, matrices and founts of cast type. He acquired older disused materials from the Vatican Press, including Armenian, but it appears the Propaganda Fide never used them.¹² He also at least tried to acquire cast type or matrices from the San Lazzaro monastery in Venice and via an Armenian priest in Holland. The latter must refer to Fleischman's type, but we have no documentation that he actually acquired it.¹³ The Propaganda Fide began using a Text bolorgir very like Fleischman's ca. 1775, though it does not exactly match that in Enschedé's 1768 specimen.¹⁴

Whether the Propaganda Fide's Armenian came from Fleischman or not, some of his materials remained in Holland. The introduction to Joh. Enschedé & Zonen's 1825 specimen notes with regret that they cannot show Fleischman's Armenian, which was taken to Russia 'not long ago'. Ignatius Kiureghian, Abbot at San Lazzaro apparently found an undated record with additional information: an Armenian from Russia bought some Armenian types in Amsterdam that had been sequestered 'par Napoleon', and took them to Tblisi in Georgia to establish a printing office there.¹⁵ They would probably have been sequestered in the period 1810 to 1813. Some types in the first known Tblisi books (1823) almost certainly match Fleischman's, and some in the first known book printed in Moscow (1819) may match as well.

Թոչնագրեր կամ ձագագրեր, Գ.Ց. Ամադուզզու. *Alphabetum armenum* գրքում, Հռոմ, տպագրեց Պրոպագանդա Ֆիդեն, 1784 թ.

Պարզ չէ, թե Պրոպագանդա Ֆիդեի հայերեն տառատեսակը Ֆլայշմանինն էր, թե՛ ոչ, բայց հաստատ է, որ նրա նյութերի մի մասը Հոլանդիայում է մնացել: «Յոհ. էնսխետե և որդիներ» տառատեսակների 1825թ. ցանկի ներածությունում ավստսանքով նշվում է, որ չեն կարող ցուցադրել Ֆլայշմանի հայերեն տառատեսակը, որով հետև այն «քիչ առաջ» տարվել է Ռուսաստան: Ըստ երևույթին, Սուրբ Ղազարի վանահայր Գարեգին Այուրեղյանն անթվակիր գրություն է գտել, որում լրացուցիչ տեղեկություններ է տրվում այն մասին, որ ռուսաստանաբնակ ինչ-որ հայ Ամստերդամում գնել է հայերեն տառատեսակներ, որոնք բռնագրավվել էին Նապոլեոնի կողմից, և տարել Թիֆլիս՝ այնտեղ տպարան հիմնելու համար:¹⁵ Տառատեսակները հավանաբար բռնագրավվել էին 1810-1813թթ.-ին: Թիֆլիսի առաջին (1823թ.) գրքերի տառատեսակներից մի քանիսը համընկնում են Ֆլայշմանի տառատեսակներին, Մոսկվայում տպագրված առաջին (1819թ.) գրքի տառատեսակը նույնպես:





Moynes Armeniens.



Mount Ararat with Echmiadzin or 'Trois Églises', as the town was called by the French traveller Pitton de Tournafort.

VII Armenian printing spreads around the world and reaches the homeland

The punches and matrices for the Amsterdam Armenian types made by Christoffel van Dijck and Nicolaus Kis long remained the property of the printers that used them, even if they were cast by independent typefoundries. The earlier Armenian types also remained largely under the control of particular printing offices. Another printing office might occasionally make a special arrangement to acquire type or matrices from the owner, but the types saw only a limited distribution. This contrasts with roman and italic types, various styles of gothic, and even Greek and Hebrew, which were readily available already in the 1500s and in some cases even the 1400s.

Before 1600 it was rare for a typefounder to offer an 'exotic' type – non-Latin other than Greek or Hebrew – on the open market, but the selection gradually expanded over the next two centuries. A particular printer, publisher or even author might still commission an exotic type in order to produce one particular book, but rather than demand

Արարատ լեռը և Էջմիածինը, կամ 'Երեք եկեղեցի', ինչպես ֆրանսիացի ճանապարհորդ Պիտոն դը Տուռնֆորն անվանեց քաղաքը

Գլուխ Է.

Հայկական գրատպությունը տարածվում է աշխարհում և հասնում հայրենիք

Քրիստոֆել վան Դեյքի և Նիքոլաս Բիշի՝ ամստերդամյան հայերեն տառատեսակների համար պատրաստած տառահայրերն ու մայր տառերը երկար տարիներ տպագրիչների սեփականությունը մնացին, չնայած տառերը ձուլվում էին անկախ գրաձուլարաններում: Ավելի հին հայերեն տառատեսակները նույնպես երկար ժամանակ մասնավոր տպարանների սեփականությունն էին համարվում: Երբեմն որևէ այլ տպարան հատուկ պայմանագիր էր կնքում, որպեսզի սեփականատիրոջից ձեռք բերի ձուլված տպատառեր կամ մայր տառեր, սակայն տառատեսակները խիստ սահմանափակ տարածում ունեին: Այս առումով մեծապես տարբերվում էին լատինական և իտալիկ, բազմաթիվ գոթական ոճի, նույնիսկ հունարեն և եբրայերեն տառատեսակներից, որոնք ազատորեն հասանելի էին դեռևս տասնվեցերորդ, իսկ, որոշ դեպքերում, անգամ տասնհինգերորդ դարից:

Մինչև 1600թ. գրաձուլիչները «տարաշխարհիկ» ոչ լատինական տառատեսակներ, չհաշված հունարենից և եբրայերենից, հազվադեպ էին վաճառքի հանում շուկայում, բայց, երկու դար անց, գնվելիք տպատառերի տեսականին մեծապես ընդլայնվել էր: Դեռ պատահում էր, որ որևէ տպագրիչ, հրատարակիչ կամ նույնիսկ հեղինակ տարաշխարհիկ



exclusive rights many allowed the typefounder to sell the same type to anyone who wished to use it. This greatly reduced the capital investment a printer had to make to use these types. That benefited many printers, especially those who needed Armenian or other exotic types only for a few short passages in an occasional scholarly publication.

**Armenian type on the open market:
Leipzig ca. 1679**

One of the first typefounders to offer a wide variety of non-Latin types was the Dutchman Anton Janson (1620-1687), who established a typefoundry in Leipzig around 1658. Twentieth-century scholars mistakenly supposed Janson to have cut punches himself, leading many modern versions of Kis's roman and italic types to be named 'Janson'. But the detailed account of his life in his funeral discourse calls him only a typefounder, not a punchcutter. It notes moreover that he was plagued by infirmity and rheumatism already at an early age and suffered from arthritis for many years before his death, deforming his limbs and keeping him bedridden for months at a time. We should not expect him to have had the extremely refined manual dexterity needed to cut typographic punches. His specimens show types of widely varying styles, qualities and dates.


Andreas Acoluth, *Abdias Hajeren*, *id est: Obadias Armenus* [The Book of Obadiah in Armenian and Latin], Leipzig 1680.

Անդրեաս Ակոլուծոս, *Արդիաս հայերէն, id est: Obadias Armenus*, Լայպցիգ, 1680 թ.

տառատեսակ էր պատվիրում հատուկ գրքի տպագրման համար, սակայն շատերն այլևս բացառիկ իրավունք չէին պահանջում, այլ գրաձուլիչին թուլատրում էին նույն տառատեսակը վաճառել ցանկացած գնորդի: Այս համաձայնագրը նշանակալիորեն նվազեցրեց տպագրիչների ծախսերն այդպիսի տառատեսակների գործածման համար: Սա խիստ նպաստավոր էր շատ տպագրիչների համար, հատկապես եթե հայերեն կամ այլ տարաշխարհիկ տառատեսակ պետք էր միայն պատահական գիտական հրատարակման կարճ հատվածների համար:

Հայերեն տառատեսակ՝ ազատ շուկայում. Լայպցիգ՝ մոտ 1679թ.

Ոչ լատինական տառատեսակների լայն տեսականի առաջարկող առաջին գրաձուլիչներից մեկը հոլանդացի Անտոն Յանսոնն էր (1620-1687թթ.), ով մոտ 1658թ. -ին գրաձուլարան է հիմնում Լայպցիգ քաղաքում: Քսանթրոդ դարի գիտնականները սխալմամբ ենթադրում էին, որ Յանսոնն ինքն է տպատառերը փորագրել, ինչի հետևանքով Քիչի լատինական ու իտալիկ տառատեսակների ժամանակակից տարբերակները հաճախ «Յանսոն» են անվանվել: Բայց Յանսոնի մահվան առիթով գրված մանրամասն կենսագրությունը նրան նկարագրում է միայն որպես գրաձուլիչ, ոչ փորագրիչ: Մանավանդ նշվում է, որ նա վատառողջ է եղել, դեռևս վաղ հասակից հոգացավով է տառապել և մինչ մահը երկար տարիներ հիվանդ է եղել հոգաբորբով, ինչի հետևանքով վերջավորությունները



In the 1670s Janson's foundry added many newly cut exotic types, including Armenian. The punchcutter and typefounder Johann Adolph Schmidt (ca. 1650?-1697) in Frankfurt am Main cut some and probably all of these types. They appeared in scholarly books printed in Jena, Frankfurt am Main, Wittenberg and Leipzig.¹ Janson's Tertia Armeniana, about the size of the largest Amsterdam bologir, was cut for the 1680 Latin and Armenian edition of the Old Testament Book of Obadiah, with a transcription of the Armenian in the Latin alphabet as well. It was prepared by the Breslau orientalist and professor of theology, Andreas Acoluth (1654-1704), the first modern study of Armenian by a Western scholar. Acoluth worked closely with the Armenian priest Hakob Gri-gorents, who came to Leipzig in 1676 and provided Acoluth with a copy of the Amsterdam Armenian Bible.

խեղված են եղել, ու նա ամիսներ շարունակ զամված է եղել անկողնում: Այդպիսով, նրանից փորագրիչի վարպետ ձեռքի ճարտարություն ակնկալելը անիրատեսական է: Նրա տպատառերի նմուշները ամենատարբեր ոճերի, որակի ու ժամանակների տառատեսակներ են պարունակում:

1670-ականներին Յանսոնի գրաձուլարանը համարվում է մեծ քանակությամբ նոր փորագրված տարաշխարհիկ տառատեսակներով, այդ թվում նաև՝ հայերենով: Մայնի Ֆրանկֆուրտի փորագրիչ և գրաձուլիչ Յոհան Ադոլֆ Շմիթը (մոտ 1650-1697թթ.) փորագրել է այդ տպատառերի մի մասը, հնարավոր է նույնիսկ՝ բոլորը: Այս տառատեսակներով գիտական գրքեր են տպագրվել Յենայում, Մայնի Ֆրանկֆուրտում, Վիտենբերգում ու Լայպցիգում: Յանսոնի «Տերցիա» հայերեն տառատեսակը, Անտոն դե Բալմի մեծագույն բոլորգիր տեսակի չափով, փորագրվել է հատուկ լատիներեն և հայերեն երկվեզու «Արդիայի գրքի» 1680թ. հրատարակության համար, որում զետեղված է նաև հայերեն այբուբենի լատիներեն տառադարձությունը: Գիրքը նախապատրաստվել էր Բրեսլաու քաղաքի արևելագետ և աստվածաբանության պրոֆեսոր Անդրեաս Ակոլուծի կողմից (1654-1704թթ.): Սա հայերեն լեզվի առաջին ժամանակակից ուսումնասիրությունն էր արևմտյան գիտնականի կողմից: Ակոլուծը սերտորեն համագործակցել է հայ հոգևորական Հակոբ Գրիգորենցի հետ, ով 1676թ. -ին Լայպցիգ է գնացել և ամստերդամյան Աստվածաշնչի մի օրինակ տրամադրել Ակոլուծին: Ակոլուծի տեքստը մեծապես պարտական է Ոսկանի Աստվածաշնչին, բայց Յանսոնի տառատեսակը ամստերդամյան որևէ ազդեցություն չի դրսևորում: Իրոք, երկաթագիր



Although Acoluth's text owes a great deal to Voskan's Bible, Janson's type shows little or no Amsterdam influence. It does have upright round yerkatagir capitals, but they have roman-like serifs and do not show the fragmentation noted in the Amsterdam Text and Mediaen. The lowercase is nearly upright.

Janson's Armenian passed with his typefoundry to Johann Karl Edling and then to the Ehrhardt family, still active in the 1740s. In one way or another at least the non-Latin types descended to the Leipzig typefounder Johann Gottlob Immanuel Breitkopf, who in 1763 sent specimens to his Paris colleague Pierre Simon Fournier. Breitkopf also set these types for the second volume of Fournier's *Manuel Typographique*, '1766' [= 1768], which includes the Armenian. All the Janson and Ehrhardt exotic types appear in Breitkopf's 1787 specimen and continued to appear in the foundry's specimens far into the nineteenth century.

Unfinished Armenian projects: Paris 1707/42 & 1775

The first French orientalist to work extensively on Armenian was François Pétis de la Croix (1653-1716), translator for King Louis XIV. In May 1706 Jesuits seized the Armenian Patriarch of Constantinople and Jerusalem, Avedick, and imprisoned him in the Bastille. Pétis visited him there and

Janson's type in Acoluth's book. The left column is a phonetic rendering of the Armenian text.

Յանսոնի տառատեսակը, Ակոլուծոսի գրքում: Ձախ կողմի սյունը ներկայացնում է հայերեն տեքստի հնչյունական տառադարձություն:

մեծատառերը ուղղահայաց ու բոլորակ են, բայց լատինական տառերի պես ծայրատեղեր ունեն և Ամստերդամի «Տեքստ» և «Մեդիան» մեծատառերի պես մասնատված չեն: Փոքրատառերը գրեթե ուղղահայաց են:

Յանսոնի հայերեն տառատեսակը, գրաձուլարանի հետ, փոխանցվել է Յոհան Կարլ Էդլինգին, ապա՝ Էյրհարտների ընտանիքին, որը շարունակել է այն գործածել մինչև 1740-ականները: Անհայտ է ինչպես, բայց ոչ լատինական տառատեսակները Լայպցիգի գրաձուլիչ Յոհան Գոտլոբ Իմանուել Բրայտկոպֆի ձեռքն են անցնում, ով 1763թ.-ին տառատեսակների նմուշներն ուղարկում է փարիզյան իր գործընկերոջը՝ Պիեռ Սիմոն Ֆուրնիերին: Բրայտկոպֆն այդ տառատեսակներն օգտագործել է նաև Ֆուրնիերի 1766թ. (= 1768թ.) «Գրատպության ձեռնարկ» գրքում, որի մեջ ներկայացվում է նաև հայերեն տառատեսակը: Յանսոնի ու Էյրհարտի բոլոր տարաշխարհիկ տառատեսակները ներկայացված են Բրայտկոպֆի 1787թ.-ի տպատառերի նմուշներում և գրաձուլարանի ցանկերում շարունակում են մնալ մինչև տասնիններորդ դարի երկրորդ կեսը:



began work on an Armenian-French dictionary. Avedick was released in September 1710, but died at Paris in July 1711. Pétis died five years later, leaving his dictionary in manuscript.

Perhaps Pétis had already begun making arrangements for the printing of his dictionary. In 1707 the Paris typefounder Pierre Cot issued a specimen of his Greek and Hebrew types. A note at the end announces a

forthcoming specimen that was to include almost all other kinds of type, including Arabic, Armenian, Syriac, Persian, Samaritan, Coptic and Ethiopic. Cot died in 1712, before any known specimens of these types appeared, but he apparently began work on the first three. If Cot's Armenian had any connection with Pétis's dictionary, their deaths along with Avedick's may have shelved the project.

Auetaran [Four Gospels]. Venice, printed by Antonio Bortoli, 1759.

Աւետարան, Վենետիկ, տպագրիչ՝ Անտոնիո Բորտոլի, 1759 թ.

Անավարտ մնացած հայկական նախագծեր. Փարիզ՝ 1707-1742թթ. և 1775թ.

Առաջին ֆրանսիացի արևելագետը, որը հայերենի ուսումնասիրության լայնածավալ աշխատանք է կատարել Ֆրանսուա Պետի դը լա Կրուան (1653-1716թթ.) էր՝ Լյուդովիկոս XIV թագավորի թարգմանիչը: 1706թ. մայիսին ճիզվիտները գերի են վերցնում Կոստանդնուպոլսի ու Երուսաղեմի Ավետիք պատրիարքին ու բանտարկում Բաստիլում: Պետին այցելում է նրան այնտեղ և սկսում աշխատել հայերեն-ֆրանսերեն բառարանի վրա: Ավետիքն ազատ է արձակվում 1710թ. սեպտեմբերին, սակայն վախճանվում է քիչ անց՝ 1711թ. հուլիսին, Փարիզում: Հինգ տարի անց մահանում է Պետին՝ բառարանն անտիպ թողնելով:

Հայտնի չէ, արդյոք Պետին սկսել էր իր բառարանի տպագրման նախապատրաստական աշխատանքները, թե՛ ոչ, բայց 1707թ. փարիզյան գրաձուլիչ Պիեռ Կոն տպագրում է հունարեն և եբրայերեն իր տառատեսակների նմուշները: Վերջում նշում է, որ նոր տեսականիի ցանկում կընդգրկվեն մնացած գրեթե բոլոր այբուբենների տառատեսակները, այդ թվում՝ արաբերեն, հայերեն, ասորերեն, պարսկերեն, սամարիտերեն, ղպտերեն և եթովպերեն: Կոն մահանում է 1712թ.-ին՝ չհասցնելով լույս ընծայել այդ տառատեսակների նմուշները, սակայն, ըստ երևույթին, սկսել էր աշխատել առաջին երեքի վրա: Հնարավոր է, որ Կոյի հայերեն տառատեսակը առնչություն է ունեցել Պետիի բառարանի հետ, այնուհանդերձ, նրանց երկուսի ու Ավետիքի մահը նախագիծն անկատար է թողել:



ՏՐԱՇ Բ. ԱՐԱՐԱՆԱ
ՅԱՐՆԱՆՈՒՄ ԿՈՒՄՆԱՐԱՆԱ
ՄԱՅ ԸՃԱՌՆԵՆ

Ս էրևանորոհն՝ որ առ սԷ անտանն անհորկնեալ
 սԷ անճանին, պարունեալ Եղև հինգ
 հրաշալի վարդեալ :

ՏՐԱՇ Բ. Ա.

ԱՇԽԱՐՏԻՆ ՓԼԱՆ
 գրից ՚ի վանս սԷյն ղերտի-
 նոսի, որ մերձ է ովմեր քա-
 ղաքին՝ գտաւ երբեմն արհի
 եպիսկոպոսն կանտավարից • որ
 պատմեաց միայնակեցայն այնոցիկ և ասէ,

B 3 լուայ





Claude Lamesle acquired the Cot foundry and his 1742 type specimen shows the three still unfinished exotic types, including a Saint Augustin Armenian: fifteen lowercase characters and no capitals, with three Syriac letters mixed in. The 'text' of the sample setting contains no recognizable Armenian words. Nicolas Gando acquired the Lamesle typefoundry, and in 1758 he reissued the remaining copies of Lamesle's specimen, replacing the title-page with a new one of his own. The Armenian type shows more influence from Sanlecque's 1633 Paris version than from the Amsterdam ones. It was probably never used outside the Lamesle-Gando specimen.

A circle of orientalist scholars associated with the Capuchin Académie Clémentine in Paris, established in 1744, made plans to produce an Armenian and Latin Bible. Guillaume de Villefroy (1690-1777) and Charles François Houbigant (1686-1783) appear to have played leading rôles in the project, but it came no further than a 1775 French and Latin edition of the Old Testament book of Habakkuk, *Les prophéties d'Habacuc*, with some Armenian text transcribed in the Latin alphabet.

Since the Cot-Lamesle-Gando type appears never to have been completed, I find only two Armenian types sold on the open market in Europe before 1800: Janson's ca. 1679 face sold in Leipzig and Caslon's ca. 1732 face in the Amsterdam style, sold in London and discussed above. Both remained

(*) *Girk hrashits* [Book of miracles]. Venice, printed by Demetrios Teodosio, 1772.

(*) *Գիրք Հրաշիւ, Վեներտիկ, տպագրիչ՝ Դեմետրիոս Թեոդոսիոս, 1772 թ.*

Կլոդ Լամեսլը ձեռք է բերում Կոչի գրաձուլարանը, և 1742թ. նրա տառատեսակների նմուշների մեջ ներկայացված են երեք անավարտ տարաշխարհիկ տառատեսակները, այդ թվում՝ «սուրբ Ավգուստին» հայերենը. տասնհինգ փոքրատառ և ոչ մի մեծատառ, որոնց խառնվել է երեք ասորերեն տառ: Օրինակի շարվածքը չի պարունակում ճանաչելի հայերեն բառեր: Նիկոլա Գանդոն գնում է Լամեսլի գրաձուլարանը և 1758թ. վերահրատարակում վերջինի տառատեսակների մնացած նմուշները՝ անվանաթերթը փոխարինելով իր սեփական անվանաթերթով: Հայերեն տառատեսակը ոչ այնքան Ամստերդամի տառատեսակների ազդեցությունն է կրում, որքան Սանլեքի՝ 1633թ. Փարիզում պատրաստած տառատեսակի: Ամենայն հավանականությամբ, Լամեսլ-Գանդո տառատեսակների նմուշների ցանկից բացի, դրանք որևէ այլ տեղ չեն գործածվել:

Կապուչինների միաբանության՝ 1744թ. Փարիզում հիմնադրած Կլեմենտյան ակադեմիայի հետ կապված արևելագետների խումբը ձեռնամուխ է լինում հայերեն և լատիներեն Աստվածաշունչ հրատարակելուն: Փիյոմ դը Վիլլֆրուան (1690-1777թթ.) և Շառլ Ֆրանսուա Հուբիգանը (1686-1783թթ.) առաջատար դեր են ունեցել այս նախագծում, որի միակ արտադրանքը, սակայն, 1775թ. -ին տպագրված Ֆրանսերեն ու լատիներեն երկվեզու *Les prophéties d'Habacuc* («Հաբակուկի մարգարեությունները») գիրքն էր՝ լատինատառ հայալեզու տեքստի հատվածներով:



David playing the harp. Woodcut from *Saghmos yerjanik margarein Davti* [Psalter]. Constantinople, printed by Hovhannes and Poghos Arapian, 1778

Դավիթը, տավիղ նվագելիս. փայտափոր նկար, Սաղմոս երգանիկ Մարգարեին Դավթի սաղմոսարանում, Կ.Պոլիս, տպագրիչներ՝ Հովհաննես և Պողոս Արապյանները, 1778 թ.

Կո-Լամեսլ-Գանդո տառատեսակի անավարտ մնալու պատճառով Եվրոպայի ազատ շուկայում ընդամենը երկու հայերեն տառատեսակ է վաճառվել՝ Յանսոնի 1679թ. Լայպցիգում վաճառվածը և վերը ներկայացված, Կասլոնի՝ ամստերդամյան ոճով 1732թ. փորագրած տառատեսակը, որը վաճառվել է Լոնդոնում: Երկուսն էլ վաճառքում են եղել մինչև տասնիններորդ դարի վերջերը: Անգամ տասնիններորդ դարի սկզբին շատ գրաձուլիչներ, որոնք ոչ լատինական տառատեսակների լայն տեսականի էին վաճառքի հանում, հայերենը չունեին:

Այն փաստը, որ հայերը շատ ակտիվ էին տպագրության գործում և տպատառեր էին պատվիրում, թվում է սահմանափել էր առևտրային շուկան: Տասնութերորդ դարում Կոստանդնուպոլսում ամստերդամյան ոճի տառատեսակներ են մատակարարվել բազմաթիվ տպագրիչների, և, ըստ վավերագրերի, տպագրիչ Պողոս Արապյանը 1770թ. -ին տառատեսակներ է մատակարարել այլ տպարանների: Ըստ երևույթին, Կոստանդնուպոլսում նա առաջինն էր, որ աշխատում էր եվրոպական հասկացությամբ անկախ գրաձուլիչի պես, թեև փաստեր են պետք համոզվելու, որ ակտիվորեն խրախուսել է իր տառատեսակների վաճառքը, այլ ոչ թե՝ դիպվածային պայմանավորվածություններ ձեռք բերել այլ տպագրիչների հետ:

on the market far into the nineteenth century. Even in the early nineteenth century, many typefoundries that offered a wide variety of non-Latin types had no Armenian.

The fact that Armenians were themselves so active in printing and in having type made for their printing offices seems to have limited the commercial market. Someone supplied various Constantinople printers with types in the Amsterdam style in the eighteenth century, and the printer Poghos Arapian is documented supplying type to other printing offices in 1770. He seems to be the first person in Constantinople to operate almost like an independent typefoundry in the European sense, but one would like to see clear documentation that he was actively promoting the sale of his type, rather than simply making an occasional ad hoc arrangement with another printer.²



A bibliophile-antiquarian press: Parma 1774

The printer and punchcutter Giambattista Bodoni (1740-1813), whose roman and italic types inspired some of the 'Bodoni' types still in use today, took an interest in non-Latin types when he began working at the printing office of the Propaganda Fide in 1758. They apparently printed nothing in Armenian between 1756 and ca. 1775, however. Bodoni left the press in 1766 and two years later Duke Ferdinand of Parma invited him to manage the new Stamp-eria Reale. There he established his reputation for printing splendid luxurious books, first under the patronage of the Duke, then of King Carlos IV of Spain and finally of Napoleon Bonaparte.

The archaeological discoveries at Pompeii and Herculaneum, first extensively described in publications from the years 1754 to 1771, inspired a new interest in antiquities generally, as well as a new 'neoclassical' style in the fine and applied arts. Bodoni epitomized both. The dozens of non-Latin types he cut no longer served missionaries in their quest to convert heathens, Jews, Muslims or non-Catholic Christians, but appealed to the antiquarian and bibliophile: collectors of objects, inscriptions and finely printed books. They mixed linguistic scholarship with amateur interest in curiosities. In many cases Bodoni seems to have produced non-Latin types more to show off the universal nature of his printing office than to meet any practical need. Some were

Grigor Narekatsi, *Girkh Aghotic* [Prayer book]. Constantinople, printed by Stepanos Petrosian, 1789.

Գրիգոր Նարեկացի, *Գիրք Աղոթից*, Կ.Պոլիս, տպագրիչ՝ Ստեփանոս Պետրոսյան, 1789 թ.

Գրասեր-հնագետի տպարան. Պարմա՝ 1774թ.

Տպագրիչ ու փորագրիչ Ջիամբատիստա Բոդոնին (1740-1814թթ.), ում լատինական ու իտալիկ տառատեսակները ներշնչանքի աղբյուր են ծառայել մինչ օրս գործածվող «Բոդոնի» տառատեսակների համար, սկսում է հետաքրքրվել ոչ լատինական տառատեսակներով, երբ 1758թ.-ին սկսում է աշխատել Պրոպագանդա Ֆիդեի տպարանում: Այնտեղ, սակայն, ակնհայտորեն հայերենով ոչինչ չի տպագրվել 1756-1775թթ.-ին: Բոդոնին տպարանից հեռանում է 1766թ.-ին, և երկու տարի անց Պարմայի դուքս Ֆերդինանդը նրան առաջարկում է կառավարել նորաստեղծ Թագավորական տպարանը: Այնտեղ նա համբավ ձեռք բերեց՝ տպագրելով հիասքանչ գրքեր, նախ՝ Դուքսի, ապա՝ Իսպանիայի Կառլոս IV թագավորի և, ի վերջո, Նապոլեոն Բոնապարտի հովանավորության ներքո:

Պոմպեյի և Հերկուլանումի հնագիտական հայտնագործությունները, որոնք առաջին անգամ նկարագրվել են 1754-1771թթ. հրապարակումներում, նոր հետաքրքրություն են արթնացնում հնությունների հանդեպ և կերպարվեստում ու կիրառական արվեստներում նոր, «նեոկլասիկ» ոճի սկիզբը դնում: Բոդոնին մարմնավորում էր այս երկուսը: Նրա փորագրած տասնյակ ոչ լատինական տառատեսակները այլևս չէին ծառայում քարոզիչներին՝ հեթանոսներին, հրեաներին, մահմեդականներին ու ոչ-կաթոլիկ քրիստոնյաներին դավանափոխելուն ուղղված իրենց ջանքերում, այլ հասցեագրված էին հնագետներին ու գրասերներին՝ իրեր, արձանագրություններ և նրբագեղ տպագիր գրքեր հավաքողներին: Բանասիրական ուսումնառությունը խառնվում էր տարաշխարհիկ



Sharaknots [Hymnal]. Constantinople, printed by Stepanos Petrosian, 1784.

Շարակոտ, Կ.Պոլիս, տպագրիչ Ստեփանոս Պետրոսյան, 1784 թ.

sharply criticized for their departure from forms authenticated by tradition or scholarly studies.

In 1774 and 1775 Bodoni introduced two Armenian types in sizes he later called Silvio and Testa, or about 15 and 19 point.³ Although he never printed an Armenian book, he continued to show these two types in his specimens and other displays of non-Latin types. They still appeared in the *Manuale tipografico* he left unfinished at his death, published by his widow in 1818.

Like nearly all Armenian types of this period, Bodoni's show direct or indirect influences from the Amsterdam types, perhaps mixed with some from the Sanlecque type of 1633, but they also introduce some eccentricities of their own, in both the capitals and the lowercase. As far as I know they were never used outside Bodoni's presses at Parma. While many of Bodoni's types were enormously influential, his Armenian never entered the mainstream.

իրերի հանդեպ սիրողական հետաքրքրությանը: Թվում է՝ Բոդոնին ոչ լատինական տառատեսակները տպագրում էր ավելի շուտ իր տպարանի համընդհանուր բնույթն ի ցույց դնելու, քան՝ գործնական նպատակով: Նրա պատրաստած որոշ տառատեսակներ սուր բննադատության են ենթարկվել, որով հետև շատ էին հեռացել ավանդույթի կամ զիտական ուսումնասիրությունների հիման վրա ստեղծված ձևերից:

1774-1775թթ.-ին Բոդոնին ներկայացնում է երկու հայերեն տառատեսակ, որոնց չափերը հետագայում «Սիլվիո» և «Տեստո» կոչեց, մոտավորապես՝ 15 ու 19 կետաչափ:³ Թեև նա երբևէ հայերեն գիրք չի տպագրել, բայց շարունակել է այս երկու տառատեսակները ներառել ոչ լատինական իր տառատեսակների նմուշներում և այլ ցուցադրություններում: Դրանք տեղ են գտել նրա մահվան պատճառով անավարտ մնացած «Գրատպության ձեռնարկ» գրքում, որն 1818թ.-ին հրատարակվել է նրա այրու կողմից:

Այդ ժամանակաշրջանի գրեթե բոլոր հայերեն տառատեսակների մասն՝ Բոդոնին էլ կրում են ամստերդամյան տեսակների ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը, թերևս՝ խառնված 1633թ.-ի Սանլեքի տպատարներից մի քանիսի հետ, սակայն յուրատեսակ դրսևորումներով թե՛ մեծատառերում, և թե՛ փոքրատառերում: Որքանով տեղյակ են, դրանք երբևէ չեն օգտագործվել Պարմայում գործող Բոդոնիի տպարաններից դուրս: Բոդոնիի տառատեսակներից շատերը մեծ ազդեցություն ունեցան, սակայն հայերենը երբևէ լայն ճանաչում չգտավ:

Smyrna (Izmir) 1759 • Echmiadzin 1771

Constantinople and New Julfa were the only Armenian printing centres in the Ottoman Empire and Persia until Mahtesi Markos set up a press at Smyrna that issued books from 1759 to 1763. He had the support of the Apostolic Patriarch of Constantinople, who also wrote some of the texts. The press's work was somewhat rough, but it had at least two sizes of bolorgir, one of notrgir and two additional sizes of yerkatagir capitals.

In 1771, about two hundred and sixty years after the first Armenian printing at Venice, a book was finally printed on Armenian soil. On the initiative of the Catholicos, Simeon Yerevantsi, monks set up a printing office at the Echmiadzin monastery. In New Julfa, the successors to the Shah Abbas II, who died in 1666, introduced short-sighted policies against the Armenians. The city rapidly declined and its merchants were no longer in a position to finance printing offices. By the mid-eighteenth century the greatest source of wealth in the Armenian trading network was India, and Madras merchants financed the Echmiadzin printing office.

Efforts to acquire type from Constantinople and Amsterdam had failed, so they turned to a local goldsmith named Harutyun who cast the type, assisted by two monks. The accounts do not explicitly state that he had cut the type himself, but they give that impression. They issued a psalm book in 1771 and a year later a prayerbook written by the Catholicos himself, who served together with the monks as editor and proofreader. 4 In 1776 they even set up a paper mill in

A Dutch ship in the Smyrna harbour.

Հոլանդական նավ, Ջմուռնիայի նավահանգստում

Ջմուռնիա՝ 1759թ., Էջմիածին՝ 1771թ.

Կոստանդնուպոլիսում ու Նոր Ջուղան Օսմանյան Կայսրությունում ու Պարսկաստանում հայկական տպագրության միակ կենտրոններն էին, մինչև Մահտեսի Մարկոսի կողմից Ջմուռնիայում տպարանի հիմնումը, որը գրքեր է հրատարակել 1759-1763թթ.: Նրան աջակցում էր կոստանդնուպոլիսի Առաքելական պատրիարքը, ով նաև տպագրված տեքստերի մի մասի հեղինակն էր: Տպարանի գործը փոքր-ինչ անմշակ էր, թեև օգտագործվում էր առնվազն երկու չափի բոլորգիր, մի նոտրգիր և լրացուցիչ երկու չափի երկաթագիր մեծատառեր:

Վենետիկում առաջին հայատառ գրքի տպագրությունից մոտ երկու հարյուր վաթսու տարի անց՝ 1771թ.-ին վերջապես հայոց հողի վրա գիրք է տպագրվում: Ամենայն չափով կաթողիկոս Սիմեոն Երևանցու նախաձեռնությամբ՝ Էջմիածնի վանքում միաբանները տպարան են հիմնում: 1666թ.-ին մահացած Շահ Աբասի հաջորդները Նոր Ջուղայում հայերի դեմ անհեռատես քաղաքականություն են սկսում վարել: Քաղաքը սրընթաց անկում է ապրում, և վաճառականներն այլևս ի վիճակի չէին տպարանների գործունեությունը ֆինանսավորել: Տասնութերորդ դարի կեսերին հայկական առևտրային ցանցի հարստության ամենամեծ աղբյուրը Հնդկաստանն էր, իսկ Մադրասում հաստատված վաճառականները ֆինանսավորում են Էջմիածնի տպարանի աշխատանքը:

Չի հաջողվում կոստանդնուպոլիսից կամ Ամստերդամից տառատեսակներ ձեռք բերել, ինչի պատճառով դիմում են Հարություն անունով տեղական մի ոսկերչի, որպեսզի, երկու



միաբանների օգնությամբ, տպատառեր ձուլի: Աղբյուրները բացահայտորեն չեն նշում, թե նա ինքն է փորագրել տառատեսակը, բայց նման տպավորություն են ստեղծում: 1771թ.-ին լույս են ընծայում Սաղմոսարան, իսկ մի տարի անց՝ կաթողիկոսի հեղինակած աղոթագիրքը, երկուսն էլ խմբագրված ու սրբագրված կաթողիկոսի ու միաբանների կողմից: 1776թ.-ին Էջմիածնի տպարանին կից նույնիսկ թղթի գործարան են հիմնում: Հայտնի է, որ տպարանը տասնչորս գիրք է լույս ընծայել՝ նախքան պատերազմների պատճառով փակվելը 1794թ.-ին: Բնականաբար գործունեությունը կենտրոնացել է Առաքելական եկեղեցուն անհրաժեշտ գրքերի վրա, որոնցից հինգի հեղինակն ինքը՝ կաթողիկոսն էր: Դատելով երկրորդ գրքի մի քանի էջերի վերաբերյալ, օգտագործվել են փոքր-ինչ անմշակ բոլորգիր և նոտրգիր տպատառեր: Արդեն 1774թ.-ին՝ տպարանը պատրաստել կամ զնել էր ավելի որակյալ տպատառեր, որոնք ավելի էին հիշեցնում ամստերդամյան ոճը: Տպարանը 1818թ.-ին վերաբացվում է, սակայն քիչ բան է թողարկում մինչև 1833թ.:

Մադրաս՝ 1772թ., Կալկաթա՝ 1796թ., Բոմբեյ՝ 1810թ.

Էջմիածնի տպարանի մեկնարկով, հայկական առևտրային ցանցի շնորհիվ, հայ գրատպությունն ավելի լայն տարածում է գտնում, և Մադրասը կրկին առաջատար դեր է ստանձնում: Հնդկաստանում հիմնադրված բազմաթիվ հայկական տպարաններից



Karg taghman kargaworats
[Rite for the Funeral
of Clergy], Press of St.
Gregory the Illuminator,
Echmiadzin 1777.

Echmiadzin to supply the press. Fourteen books are known to have been produced at the press before wars forced it to close in 1794. It naturally concentrated on books needed for the Apostolic Church, and the Catholicos wrote five himself. Judging from the reproductions of a few leaves from the second book, a somewhat rough bolorgir and notrgir type was used. By 1774 the printing office had made or acquired better types, closer to the Amsterdam style. The office reopened in 1818 but produced little before 1833.

Madras 1772 • Calcutta 1796 • Bombay 1810

As the Echmiadzin printing office began work, the Armenian trade network spread Armenian printing even further, with Madras again playing a leading role. The first of several Armenian printing offices in India issued its first book at Madras in 1772. The printers Hakob Shahamirian and his father Shahamir must have acquired their type from Venice, for it matches the rather crude and old-fashioned bolorgir used by Paolo Moneta at Rome in 1674 and Michelangelo Barboni in Venice in the 1680s.

Harutyun Shmavonian established a better stocked office in Madras and was to become famous for his polemical political works in favour of an independent Armenian

Կարգ թաղման կարգաւորաց, տպարան Ար. Գրիգոր
Լուսավորչի, Էջմիածին, 1777 թ.

առաջինն իր առաջին գիրքը լույս է ընծայել Մադրասում 1772թ.-ին: Տպագրիչներ Հակոբ Շահամիրյանն ու իր հայր Շահամիրն իրենց տառատեսակները պետք է որ վենետիկից ձեռք բերած լինեին, որովհետև նման են այն բավականին կոպիտ ու հնաոճ բոլորգրին, որը Պաղո Մոնետան էր օգտագործել Հռոմում 1674թ.-ին, և Միքելանջելո Բարբոնին՝ վենետիկում, 1680-ականներին:

Հարություն Շամավոնյանը Մադրասում ավելի լավ սարքավորված տպարան է հիմնում և համբավ ձեռք բերում անկախ հայկական պետության օգտին փաստարկող իր քաղաքական բանավիճականներով: Նրա առաջին գիրքը լույս է տեսնում 1790թ.-ին, իսկ չորս տարի անց ստեղծում է առաջին հայ պարբերականը: Հետագայում տպարաններ են հիմնվում նաև Կալկաթայում՝ 1796թ.-ին, և Բոմբեյում՝ 1810թ.-ին:

Սանկտ Պետերբուրգ՝ 1781թ., Նոր Նախիջևան՝ 1790թ., Աստրախան՝ 1793թ.

Դարեր շարունակ հայերը Ռուսաստանում առևտրով են զբաղվել, և, ինչպես նշվել է, 1475թ.-ին Դրիմի՝ օսմանյան տիրապետության տակ հայտնվելուց հետո, շատերն են փախել Ռուսաստան ու Արևելյան Եվրոպա: Հայկական առևտրային ուղիները դեպի Ամստերդամ Մոսկվայով էին անցնում, երբեմն՝ նաև Արխանգելսկով: Նորջուղայեցի հայ վաճառականները 1660-ականներին ամրապնդում են Ռուսաստանի հետ իրենց կապերը:



Movses Baghramian, Yordorak [Exhortation of the Young], Madras, printed by Hakob Sahamirian, 1772.

state. His first book appeared in 1790 and four years later he started the first Armenian newspaper. Printing offices followed at Calcutta in 1796 and Bombay in 1810.

St Petersburg 1781 • Nor Nakhijevan 1790 • Astrakhan 1793

Armenians had traded extensively in Russia for centuries and many fled to Russia and Eastern Europe when the Crimea fell to the Ottoman Empire in 1475. The Armenian trade routes to Amsterdam passed through Moscow and sometimes also Archangelsk. Armenian merchants from New Julfa strengthened relations with Russia in the 1660s. The Czars granted them trading monopolies in 1667 and formally recognized the Apostolic Church in 1716 with its seat at Astrakhan. Catherine the Great captured the Crimean peninsula from the Ottomans in 1778 and encouraged the Armenian merchants that remained there to settle in Russia. Together with merchants from other Ottoman and Persian territories, they established the city of Nor Nakhijevan near Rostov-on-Don.

Peter the Great had moved the capital from landlocked Moscow to his new port city Saint Petersburg in 1712. It quickly became Russia's most cosmopolitan and most modern city, as well as the centre of trade with the West. Hovsep Arghutian at Astrakhan, prelate of the Russian

Մուլևես Բաղրամեան, Յորդորակ, Մադրաս, տպագրիչ՝
Հակոբ Շահամիրյան, 1772 թ.

Ռուսական ցարերը 1667թ.-ին նրանց առևտրային մենաշնորհեր են տալիս, իսկ 1716թ.-ին պաշտոնապես ճանաչում Հայ Առաքելական Եկեղեցին՝ աթոռանիստն Աստրախանում: 1778թ.-ին եկատերինա Մեծ թագուհին օսմանյան իշխանություններից գրավում է Դրիմի թերակղզին և այնտեղ մնացած հայ առևտրականներին խրախուսում, որ հաստատվեն Ռուսաստանում: Օսմանյան և պարսկական այլ տարածքներից եկած վաճառականները հետ, նրանք հիմնում են Նոր Նախիջևան քաղաքը՝ Դոնի Ռուստովի մոտակայքում:


1712թ.-ին Պետրոս Առաջինն իր մաշրաքաղաքը ցամաքով շրջապատված Մոսկվայից տեղափոխում է Սանկտ Պետերբուրգ նորաստեղծ նավահանգստային քաղաքը: Կարճ ժամանակահատվածում այն վերածվում է Ռուսաստանի ամենակոսմոպոլիտ և ամենաժամանակակից քաղաքի, ինչպես նաև՝ Արևմուտքի հետ առևտրի կենտրոնի: 1773թ.-ից Աստրախանում Ռուսահայ Երի առաջնորդ Հովսեփ Արղուժյանը հովանավորում է նորջուղայեցի վաճառական Գրիգոր Խաղարենցի կողմից տպարանի հիմնումը Սանկտ Պետերբուրգում: Վերջինս ռեդակտորվում է Լոնդոն, ուր ծաղկում էին տպատետրի փորագրությունն ու գրաձուլությունը, որոնք Հոլանդիայում անկում էին ապրում: Լոնդոնում նա Հայ Առաքելական Եկեղեցու ուսմունքների մասին լատիներեն ու հայերեն երկլեզու գիրք է տպագրել տալիս Ջոն Ռիվինգտոնին՝ 1780թ.-ին: Գրքում օգտագործված է ոչ միայն Ուիլյամ Կասլոնի (վերը նկարագրված) «Պիկա» բոլորգիրը, այլև «Փոքր Պիկա» բոլորգիր և 6 միլիմետրանոց երկաթագիր մեծատառերի մի հավաքածու, որոնք հավանաբար հատուկ Խաղարենցի համար էին փորագրվել: Ակներևաբար, նա նոր տառատեսակի տառահայերեն ու մաշր տառերն իր հետ Սանկտ Պետերբուրգ է տարել:



dessiné par la France après Nature

Prospect von S^t Petersburg.

Se vend à Augsbourg au Negoce commun de l'Academie Imperiale d'Copie des Arts liberaux



dessiné par Nabelitz

Vue de S^t Petersburg.

Privilege de Sa Majeste Imperiale et avec Defense de den faire ni de vendre des Copies



Girk vor kochi shawigh lezuagitean [The Path to the Knowledge of Language], St. Petersburg 1788: Saint Mesrop Mashtots receives the Armenian alphabet by divine intervention.

Armenians since 1773, sponsored the establishment of a printing office at Saint Petersburg by Grigor Khaldarents, a merchant from New Julfa. He travelled to London, where punchcutting and typefounding flourished as it declined in Holland. There he had a Latin and Armenian book on the doctrines of the Armenian Apostolic Church printed in 1780 by John Rivington. It uses William Caslon's Pica bolorgir, already discussed, but also a Small Pica bolorgir and a set of 6 mm yerkatagir capitals apparently cut for Khaldarents. He probably took both the punches and the only matrices for the new types back to St Petersburg, for neither appears in the specimens of the British typefounders.⁵ Several excellent punchcutters worked in London by this date, so one cannot easily identify the punchcutter or typefounder without documentation.

Khaldarents returned to Russia and set up a new printing office at St Petersburg, issuing his first book in 1781: the first Armenian book printed in Russia. He printed many books there to his death in 1787, using the two new types cut in London along with a lowercase for the 6 mm capitals, additional sizes of bolorgir and of yerkatagir titling capitals and two sizes of notrgir. After Khaldarents's death the Church moved the press in 1789 to Nor Nakhijevan and in 1793 to Astrakhan, where it continued to operate until 1837. All together it produced at least fifty-seven books, an average of about one a year.

Գիրքի որ կոչի շաւիղ լեւոնագիթեան, Պետերբուրգ, 1788 թ.՝ Սբ. Մեսրոպ Մաշտոցը աստվածային միջնորդութեամբ ստանում է հայերենի այբուբենը

որովհետև դրանք երբեք չեն ներկայացվել բրիտանական գրաձուլիչների նմուշների ցանկերում:⁵ Այդ ժամանակներում Լոնդոնում բազմաթիվ վարպետ փորագրիչներ էին աշխատում, ինչի պատճառով առանց վավերագրերի դժվար է ճշտել թե ով է եղել փորագրիչը կամ գրաձուլիչը:

Խալդարենցը վերադառնում է Ռուսաստան և Սանկտ Պետերբուրգում նոր տպարան հիմնում՝ 1781թ.-ին լույս ընծայելով առաջին գիրքը, որն, առհասարակ, Ռուսաստանում տպագրված առաջին հայերեն գիրքն էր: Շարունակում է շատ գրքեր տպագրել մինչև իր մահը՝ 1787թ., օգտագործելով Լոնդոնում փորագրված երկու նոր տառատեսակները, ինչպես նաև 6 միլիմետրանոց մեծատառերին համապատասխան փոքրատառեր, լրացուցիչ տարբեր չափի բոլորգիր տպատառեր, երկաթագիր վերնագրային մեծատառեր և երկու չափի նոտրգիր: Խալդարենցի մահից հետո եկեղեցին 1789թ.-ին տպարանը տեղափոխում է Նոր Նախիջևան, ապա՝ 1793թ.-ին՝ Աստրախան, որտեղ այն գործել է մինչև 1837թ.: Ընդհանուր առմամբ, տպարանը հիսուսյոթ անուն գիրք է հրատարակել, մոտավորապես՝ տարեկան մեկ գիրք:



Awetaran chasu [Gospelbook]. St. Petersburg, printed by Grigor Khaldarents, 1786.

Աւետարան ծաշու, Պետերբուրգ, տպագրիչ Գրիգոր Խալդարենց, 1786 թ.

Taretsoys yew oratsoys [Almanac] Astrakhan, Arghutiants' Press, 1797. The cover is made of waste paper with a printed Russian text and shows Armenian manuscript notes.

Մարեպոյց եւ օրացոյց, Աստրախան, տպագրիչ՝ Արղությանց, 1797 թ.: Կազմը պատրաստվել է հին թղթով՝ ռուսերեն տպագրված և հայերեն ձեռագիր գրություններով:





VIII

**Scholars, Protestant Missions,
the Armenian Apostolic Church
and Bible Societies**

The early nineteenth-century saw a burst of missionary activity, especially by Protestants from Great Britain and the United States. The British and Foreign Bible Society, a non-denominational Christian organization, was established in 1804 to promote the production and distribution of Bibles around the world. Some Protestants portrayed the Apostolic Armenians as heroes resisting conversion by evil Islamic and Catholic powers. They aimed not merely to convert Armenians to the Protestant Church, but also to enlist them to convert non-Christians.

In 1811 the Anglican priest Claudius Buchanan, who had been a missionary at Calcutta, wrote: 'Armenians will form the most generally useful body of Christian Missionaries. They are to be found in every principal city in Asia; they are the general merchants of the East, and are in a state of constant motion from Canton to Constantinople. Their general character is that of a wealthy, industrious, and enterprising people. They are settled in all the principal places of India, ... Wherever they colonize, they build Churches, and observe

Jerusalem.


Յերուսաղեմ

Գլուխ Ը.

Գիտնականներ, բողոքական քարոզիչներ, Հայ Առաքելական եկեղեցի և աստվածաշնչային միություններ

Վաղ տասնիններորդ դարում միսիոներական գործունեության պոռթկում արձանագրվեց, հատկապես՝ Մեծ Բրիտանիայի ու Միացյալ Նահանգների բողոքականների կողմից: 1804թ.-ին հիմնադրվեց Բրիտանական և արտասահմանյան աստվածաշնչային միությունը՝ ոչ հարանվանական քրիստոնեական կազմակերպություն, որի նպատակը ամբողջ աշխարհում Աստվածաշնչի տպագրությունն ու տարածումն էր: Որոշ բողոքականներ առաքելական հայերին ներկայացնում էին որպես չարիք հանդիսացող մահմեդական ու կաթոլիկ ուժերի կողմից դավանափոխության սպառնալիքներին դիմակայող հերոսների: Նրանք փորձում էին ոչ միայն հայերին բողոքական եկեղեցու հետևորդներ դարձնել, այլև նրանց զինվորագրել՝ ոչ քրիստոնյաներին հավատափոխելու համար:

1811թ.-ին անգլիացի քահանա Քլոդիուս Բյուքենը, որ միսիոներ էր եղել Կալկաթայում, գրում է. «Հայերից կարել է ձևավորել քրիստոնյա քարոզիչների ամենաօգտակար խումբը: Նրանք Ասիայի բոլոր կարևոր քաղաքներում են, Արևելքի սովորական վաճառականներն են,



172 Claudius Buchanan.


the solemnities of the Christian Religion in a decorous manner. ... Let us print the Armenian Bible, and employ proper persons from among themselves, to superintend the work, and encourage them to disperse their own faithful copy throughout the East.¹ Nersessian notes that the American Protestant missionary, William Goodell made a similarly reasoned plea for printing Armenian Bibles in 1818.

Bibles had so far been printed in classical Armenian, difficult or impossible to read for all but the clergy and well-educated scholars. To bring scriptures to the general population, they needed to print them in the vernacular. The Apostolic Church's opposition to Bibles in modern Armenian, the Ottoman and Persian governments' opposition to Bibles in Arabic type, and the hope that Armenians might help convert Muslims, led the British and Foreign Bible Society's affiliate in St Petersburg to produce a Turkish New Testament in Armenian type in 1819. This clearly failed to meet the Armenians' needs, but missionaries published various biblical texts in this manner for the next three decades.

Քլովդիոս Բուքենըն

որ մշտական շարժման մեջ են կանտոնից մինչև կոստանդնուպոլիս: Ունևոր, աշխատասեր և ձեռնարկու ժողովուրդ են: Հաստատվել են Հնդկաստանի բոլոր գլխավոր քաղաքներում... Որտեղ որ գաղութներ են հիմնում, եկեղեցիներ են կառուցում և քրիստոնեական կրոնի ծիսակարգը պատշաճ կերպով են պահպանում... Եկեք հայերեն Աստվածաշունչ տպագրենք և նրանց միջից հարմար անձանց ընտրենք այդ գործը ղեկավարելու համար, և խրախուսենք նրանց՝ Արևելքում տարածելու իրենց արժանահավատ գիրքը:»¹ Ներսեսյանը նշում է, որ ամերիկական բողոքական քարոզիչ Ռիչիան Գուդելլը նույնպես 1818թ.-ին նման հիմնավորումներով հայկական Աստվածաշունչ տպագրելու կոչ է արել:

Մինչ այդ Աստվածաշունչը գրաբարով էր տպագրվել, ինչի պատճառով դժվար ընթեռնելի կամ ամբողջովին անհասկանալի էր բոլոր այն մարդկանց համար, ովքեր ո՛չ հոգևորական էին, ո՛չ էլ կրթություն ստացած գիտնական: Սուրբ Գիրքը լայն հասարակությանը հասանելի դարձնելու համար հարկավոր էր այն տպագրել աշխարհաբարով: Հայ Առաքելական եկեղեցու առարկությունը՝ տպագրելու Աստվածաշունչ ժամանակակից հայերենով, օսմանյան և պարսկական իշխանությունների դիմադրությունը՝ ունենալու արաբատառ Աստվածաշունչ, և հայերի օգնությամբ մահմեդականներին դավանափոխելու հույսը միասին վերցրած պատճառ դարձան, որ Սանկտ Պետերբուրգում հաստատված Բրիտանական և արտասահմանյան աստվածաշնչային միության մասնաճյուղը 1819թ.-ին լույս ընծայի հայատառ, բայց թուրքալեզու Նոր Կտակարան: Սա ամենևին էլ բավարարում հայերի կարիքները, սակայն միսիոներները դեռ երեսուն տարի շարունակ հրատարակում էին նմանատիպ աստվածաշնչային տեքստեր:



Densely printed: an 1839 Bible from the Baptist Mission Press in Calcutta. Reprint of the 1835 Moscow edition by the British and Foreign Bible Society.

Խիտ տպագրված Աստվածաշունչ, Մկրտիչ Միսիոներների տպարան, Կալկաթա, 1839 թ.: Վերատպագրություն՝ Բրիտանական և Արտասահմանյան Աստվածաշնչյան ասոցիացիայի 1835 թ. մոսկովյան հրատարակությանը:

Փարիզյան տառատեսակ գիտնականների ու միսիոներների համար՝ 1823թ.

Բրիտանական և արտասահմանյան աստվածաշնչային միության տնօրինությունը բողոքական էր, բայց երբեմն կաթոլիկների հետ էին համագործակցում, ինչը հաճախակի ներքին խժոժություններ էր առաջացնում: Միությունը Փարիզում բնակվող միսիոնարյան միաբան Հովհաննես Չոհրաբյանին (1756/1758-1829թթ.) հանձնարարում է Նոր Կտակարանի տեքստը պատրաստել ժամանակակից արևմտահայերենով, որով խոսում էին օսմանահպատակ հայերի մեծ մասը: Սա էր 1805թ.-ին պատրաստել Վենետիկում հրատարակված գրաբար Աստվածաշնչի առաջին բնական հրատարակությունը, որն, ի վերջո, այլընտրանք ներկայացրեց Ռուկանի 1668թ.-ին Ամստերդամում տպագրած Աստվածաշնչի տարբերակին: Նրա աշխարհաբար Նոր Կտակարանը պիտի տպագրվեր Փարիզում՝ երկու սյունակով ներկայացնելով գրաբար ու արևմտահայերեն տեքստերը:

Միությունը որոշեց նոր տառատեսակ պատվիրել Չոհրաբյանի Նոր Կտակարանի համար. «Թող նոր տառատեսակ ձուլվի այս գործի համար, պրն. Չոհրաբյանի հսկողության ներքո, քանի որ դրանով գործը մեծապես կշահի, իսկ Թագավորական տպարանի ներկայիս տառատեսակները շատ վատն են:»² Թեև այստեղ նշվում է միայն տառերը ձուլվելու մասին, բայց Չոհրաբյանի վերահսկողությունն անտեղի կլիներ, եթե հարցը չվերաբերեր նաև տառատեսակի փորագրությանը: Եթե միությունն իրականություն է դարձրել իր այս ծրագրերը, ապա ո՛չ միությունը, ո՛չ էլ տպագրիչը նոր տառատեսակի օգտագործման

Paris type for scholars and missionaries, 1823

Though run by Protestants, the British and Foreign Bible Society sometimes worked with Catholics, a matter that caused much internal strife. The Society commissioned Hovhannes Zohrapian (1756 or 1758-1829), a Mkhitarist then living in Paris, to prepare the text of the New Testament in modern Western Armenian, the language spoken by most Armenians in the Ottoman Empire. He had prepared the text of the first critical edition of the classical Armenian Bible, published at Venice in 1805, which finally offered alternatives to Voskan's 1668 Amsterdam version. His vernacular New Testament was to be printed in Paris, with the classical and the modern Western Armenian texts in parallel columns.

Caractères Arméniens.

Arménien du Onze. — 10 fr. le kilo.

Ա՛ղէ առ ընթերցիր զարճեստ Ոտանաւորայդ : Դիւ-
ցապնական է տաղա՛ Քաջ ոլորեալ , և տաղ պղպղուն,
օղուն , և զեղուն , եռակի վանքզօք շարակայեալ . զե
հոյծ , կատարուն , շարծուն : Ո՛չ վիճեալ զծի ոչ նուա-
զեալ յօզի , ոչ փոփոխեալ տառին . կարեկցբառ առ իո
ձգելով զձայնակիցսն ստուգաբանութեամբ . և շարակա-
ցուցեալ շորթելով՝ կամ՝ ճոկոպրելով : Դիւլլէն

Arménien Italique.

Եւ հարաւ Տարաւնէ յԵւլլէրրրրաւ մտնէն ՚ի հար-
նէլլէն մտնէն ՚ի լէրլէն Արարարայ : Դարեւ յԱրարաւ-
Ժայունչունչէն Հայոց՝ ՚ի Հարգէ Անյայրէյ : Թուշլ Սրե-
Ժաննա երէյուէ Պուշու Արարարէն ՚ի Կրէլլուցեյ :

FONDERIE GÉNÉRALE.

Molé's Armenian type. *Épreuves de caractères*: E. Tarbé & Cie, successeurs de Firmin Didot, Molé, Crosnier, Everat, Paris 1839.

բացառիկ իրավունք չեն պահանջել: Նույն տպատառերի մասին խոսող այլ աղբյուրներ պնդում են, թե Փարիզի առաջատար արևելագետ Լուի-Մաթիեու Լանգլեն (1763-1824թ.) է վերահսկել տառատեսակի պատրաստումը: 1822թ.-ին արդեն տառատեսակը պատրաստ է եղել, որովհետև օգտագործվել է 1823թ. փետրվարին լույս տեսած՝ Չոհրաբյանի գլխավոր փարիզյան մրցակցի քերականության մեջ: Չոհրաբյանի Նոր Կտակարանը սկսել է տպագրվել միայն 1824թ.-ին՝ Առաքելական եկեղեցու դիմադրության պատճառով, և լույս է տեսել 1825թ.-ին:

Հիմնավոր ապացույցները վկայում են, որ տառատեսակը փորագրել է փարիզյան գրաձուլիչ ժոզեֆ Մոլեն (1775-1841թթ.), ավելի հայտնի՝ Մոլե կրտսեր անվամբ, ով իր սերնդի լավագույն փորագրիչներից էր:՝ Սա 1633թ.-ից ի վեր Ֆրանսիայում պատրաստված առաջին նոր տառատեսակն էր: Վարպետորեն է փորագրված և ավելի գեղազարական բնույթ ունի, քան՝ ամստերդամյան տառատեսակները: Հայերի աչքին հավանաբար բավական խորթ են եղել, սակայն այս տառատեսակի մեծատառերը աղբյուր են դարձել այն երկաթագիր տառատեսակների համար, որոնք երեսուն տարի անց նոր չափանիշ դարձան:

Մոլեի հայերեն տառատեսակը: Տպատառերի փորձ, Է. Տարբե և Ընկերություն, հաջորդներ՝ Ֆերմեն Դիդոյի, Մոլեի, Քրոսնիեի և Էվերատի, Փարիզ, 1839 թ.

Ամերիկական միսիոներներ Մալթայում (1828թ.) և Չմյունխայում (1833թ.)

Մասաչուսեթսի միաբանության քահանայի որդի Հոման Հելլոբը (1803-1893թթ.), գրատպության տեսակետից, բոլոր քարոզիչներից ամենամեծ հետաքրքրությունն է ներկայացնում:՝ Իրականում, նա ավելի շատ հետաքրքրություն է ցուցաբերել տպատառերի ու տպագրության հանդեպ, քան՝ կրոնի: Հայրը նրան ուղարկեց Մասաչուսեթսի էնդովեր քաղաք, որպեսզի սովորի «Ֆլեգ ընդ գոլը» տպարանում՝ Ամերիկայի այն փոքրաթիվ տպարաններից մեկում, որ ոչ լատինական տառատեսակներ ուներ: 1826թ.-ին ուսումնա ավարտելուն պես, Ամերիկայի Արտասահմանյան առաքելությունների հանձնակատարների խորհրդի հանձնարարությամբ ուղևորվում է Մալթա՝ քարոզչական տպարանի տնօրինությունը ստանձնելու նպատակով:

1827թ.-ին միսիոներ Ջոնըս Քինգը, Մալթայի տպարանի համար, Փարիզում ձեռք է բերում, իմ կարծիքով՝ Մոլեին պատկանող, բոլորգիր տպատառերի հավաքածու: Քինգը, այլոց հետ, 720 դոլար է հանձնակում՝ ծախսերը հոգալու համար, և տառատեսակը ձեռք է բերում տպագրիչ Դոնդի-Դյուպրեի միջոցով:՝

Մալթայի տպարանն այս հայերեն տառատեսակով տպագրել է հինգ փոքր կրոնական տրակտատ, թուրքերենով, որոնք բոլորն էլ ներառված են եղել մինչև 1828թ. դեկտեմբերի 31-ը նրանց հրատարակած գործերի ցանկում: Հավանաբար, տարվա վերջին են տպագրվել, որովհետև, ըստ նշված ցանկի, ոչ մի օրինակ դեռ չէր վաճառվել կամ բաժանվել: Ցանկում

American missionaries in Malta 1828 & Smyrna 1833

Homan Hallock (1803-1894), son of a Massachusetts Congregational minister, proved the most interesting missionary from a typographical point of view.⁵ In fact, he showed far more interest in type and printing than in religion.




176 Malta harbour around 1850. Մալթայի նավահանգիստը, շուրջ 1850 թ.

գրքերի վերնագրերը շարված են 1823թ.-ի բոլորգրով, որը վերագրում են Մոլեին:⁷ «Քարոզչության գրանցումը» նշում է, որ «Թուրքահայերեն» թարգմանությունները կատարված էին Բեյրութում, որտեղ ամերիկացիները շատ ակտիվ քարոզչական կենտրոն ունեին:

Խորհուրդը վաղուց էր ցանկանում տպարանը տեղափոխել Թիրախ հանդիսացող մարդկանց ավելի մոտ: Այդ նպատակով, 1833թ.-ին տպագրական մամլիչն ու նյութերն ուղարկում են Չմյուռնիա: Այնտեղ չեղյոքը հայերեն է տպագրում, մինչ արաբերենի տպագրական նյութերն ուղարկվում են Բեյրութ: Հայերեն տպատառերը մեծ էին նախատեսված մատչելի, փոքրաչափ Աստվածաշունչ կամ նույնիսկ Նոր Կտակարան տպագրելու համար, ուստի չեղյոքն իր գործակիցների հետ շարունակում է հարմար տառատեսակների փնտրությունը: Մալթայից մեկնելուց առաջ չեղյոքը փորձում է ինքը տառատեսակ փորագրել և ձուլել՝ պատրաստելով մի քանի փորձնական հայերեն տպատառեր:

Բողոքականները Կաթոլիկ եկեղեցուն քննադատում էին այն քանի համար, որ Աստվածաշնչի ընթերցումը միայն քահանաներն էին իրականացնում, ովքեր այն պիտի բացատրեին իրենց ծխականներին: Բողոքական բարոզիչները գրագիտությունը համարում էին կրոնական զարգացման նախապայման և կարևորում էին դպրոցները: 1834թ.-ին Չմյուռնիայում չեղյոքը սկսեց «դպրոցական դասերի համար» պատրաստել յոթ տողանոց ու չորս տողանոց հայերեն «Պիկա» տառատեսակներ: Մտադիր էր այս



Fashionable cover of a *Nor Ktakaran* [New Testament] in Western Armenian. Constantinople 1882, published by the British and Foreign Bible Society.

His father apprenticed him in the Flagg and Gould printing office in Andover, Massachusetts, one of the few American offices that could set non-Latin types. As soon as he finished in 1826, the American Board of Commissioners for Foreign Missions recruited him to take charge of the missionary printing office in Malta.

In 1827, the missionary Jonas King in Paris bought a fount of the bolorgir I attribute to Molé for the Malta printing office. He and others raised \$720 to cover the costs and acquired the type via the printer Dondey-Dupré.⁶

The Malta printing office printed five small religious tracts in Turkish using this Armenian type, all included in their broadside list of their publications up to 31 December 1828. They were presumably printed late in that year, for not a single copy had yet been sold or given away. In the list, the titles of these books are set in the 1823 bolorgir I attribute to Molé, no doubt used for the books themselves as well.⁷ The *Missionary register* indicates that the translations into ‘Turkish-Armenian’ were made in Beirut, where the Americans had a very active mission.

The Board had long wished to move its printing office closer to the people they hoped to reach. In 1833 they therefore shipped the press and materials to Smyrna. There Hallock concentrated on Armenian while the

Արևմտահայերեն Նոր Այտակարանի նորաձև կազմ, Կ.Պոլիս, 1882 թ., հրատարակիչ՝ Բրիտանական և Արտասահմանյան Աստվածաշնչյան ասոցիացիա

մեծաչափ տպատառերով տպագրել այբուբենով և վանկատված բառերով քարտեր: Ջոզեֆ Լենքեստրը ուղղագրության ուսուցման այս մեթոդը ներկայացրել էր իր՝ 1808թ.-ի «Կրթության բարելավումներ» գրքում: Չեղյոքն անգամ նշում է գրքերի տպագրության համար հարկավոր առավել փոքր տառատեսակներ՝ «Պիկա» կամ ավելի փոքր «Լոնգ Պրայմեր» փորագրելու մասին: Սակայն նա դեռ չէր տիրապետում անգամ ավելի պակաս տեխնիկական դժվարություններ առաջացնող մեծ տառատեսակների պատրաստմանը: Տպարանը 1835թ.-ին վիեննայի միսիոնարյաններից պատվիրում է «Կոստանդնուպոլսյան» «Ցիցերոն» հայերեն տպատառերի հավաքածու՝ սաղմոսարան տպագրելու համար, նշելով, որ իրենց մոտ եղած մեծաչափ տառատեսակն «Ավգուստին» է, որի հավաքածուն ձեռք էր բերվել Փարիզում:

Արտադրված է ԱՄՆ-ում՝ Չմյուռնիայում գործածելու համար, 1836թ.

Չեղյոքը հիմա իր ուզած հայերեն տառատեսակի ստույգ պատկերացումն ուներ: Գոհ իր գրաձուլական կարողությունից, բայց ոչ իր փորագրությունից, որոշում է վերադառնալ Միացյալ Նահանգներ, որպեսզի իր ուզած տառատեսակը փորագրել տա փորձառու մասնագետի: 1835թ.-ի սեպտեմբերին նա Նյու Յորքի Բրուքլին թաղամասի ոսկերիչ, կնիքագործ, փորագրիչ ու գրաձուլիչ Ռիչարդ Սթարին պատվիրում է, որպեսզի վերջինս ավարտին հասցնի դպրոցական քարտերի համար նախատեսված չորս տողանոց «Պիկան»



Nor Ktakaran [New Testament], Constantinople 1882. Title-page with imprint of the British and Foreign Bible Society.


materials for printing Arabic were sent on to Beirut. The Armenian type was rather large for a Bible or even a New Testament in an inexpensive small format, so Hallock and his associates continued searching for types better suited to their needs. Just before leaving Malta, Hallock tried his hand at cutting and casting type himself: a few trial letters for Armenian.

Protestants criticized the Catholic church for leaving the reading of the Bible to the priests, who would then explain it to their parishioners. Protestant missionaries saw literacy as essential for religious development and put more emphasis on schools. In Smyrna in 1834 Hallock began working on 'Armenian 7 line and 4 line Pica for school lessons'. He intended to use these large types to print cards with alphabets and with individual words divided into syllables. Joseph Lancaster had promoted this system for teaching spelling in his 1808 *Improvements in education*. Hallock even spoke of cutting the smaller types needed for printing books: Pica or the still smaller Long Primer. But even the easier large types presented technical problems that he had not yet learned to master. In 1835 the printing office ordered a fount of a 'Constantinople' Cicero Armenian from the Mkhitarists in Vienna to print the psalms, noting that the large Armenian they already had was Augustin, meaning the fount bought in Paris.

Նոր Ապակարան, Ա.Պոլիս, 1882 թ.՝ անվանաթերթ, Բրիտանական և Արտասահմանյան Աստվածաշնչյան ասոցիացիայի սկզբնատառերով

և փորագրի «Պիկա» բոլորգիր ու նոտրգիր տառատեսակներ՝ ըստ իր ցուցումների: Սթարը մոտ 210 տառահայր է փորագրում, մոտ 300 մայր տառ պատրաստում և, ձուլված տպատառերի փոքր հավաքածուի հետ, Հելլոքին հանձնում 1836թ. մարտի 25-ին: Հելլոքը սերտորեն համագործակցել է փորագրչի հետ և ինքն է որոշել տպատառերի ձևը: Սթարն իր պատրաստածն ամբողջությամբ հանձնել է, ինչի պատճառով նույն տառատեսակը այլևս չի ձուլել ուրիշների համար: Փաստորեն, դեռ ավելի քան քսան տարի պիտի անցներ, մինչև հայերեն տպատառերով առաջին գիրքը տպագրվեց Միացյալ Նահանգներում և առհասարակ՝ Ամերիկաներում: Հելլոքը 1836թ.-ի հունիսին նոր նյութերով վերադառնում է Չմյուռնիս և ավարտում նոր հավաքածուների ձուլումն այդ տարվա վերջին:

Չմյուռնիսյի միսիոներները որոշել էին գրքեր տպագրել հայերեն, այլ ոչ թե՝ թուրքերեն լեզվով: Սկզբում Փարիզի ու Վիեննայի տառատեսակներն էին օգտագործում, իսկ 1837թ.-ից սկսում են գործածել նաև Հելլոքի՝ Ամերիկայից բերած նոր տառատեսակները: Քանի որ վիեննական «Ցիցերոն»-ից փոքր տպատառեր դեռ չուներին, 1838թ.-ին Բրիտանական և արտասահմանյան աստվածաշնչային միությունը նրանց ուղարկում է Լոնդոնում արդեն գործածված՝ Ռիչարդ Ուոթսի Վիեննայում պատրաստած «Փոքր Պիկայի» հավաքածու: Չմյուռնիսյի տպարանը պատահաբար ձեռք է բերում նաև Ուոթսի «Փոքր Պիկա» նոտրգիրը, որը, սակայն, օգտակար է դառնում: Հելլոքը չէր հավանում Ամերիկայից իր բերած «Պիկա» նոտրգիրը և մինչև 1844թ. նույնիսկ մայր տառեր չէր ձուլել որպեսզի օգտագործի:



Another example of American mission printing: *Inchila Rappe moi Yisus Kristus ko Matteos Nvisi* [Gospel of St. Matthew], Constantinople 1891. Kurdish in Armenian type, with part of the title-page printed in Arabic.

Made in U.S.A. for use in Smyrna, 1836

Hallock now knew exactly what he wanted in an Armenian type. Satisfied with his typefounding but not yet with his punchcutting, he decided to return to the United States to have his type cut by an experienced professional. In September 1835 he commissioned the silversmith, die sinker, punchcutter and typefounder Richard Starr in Brooklyn, New York to complete his 4-line Pica for school cards and cut a Pica bolorgir and notgir to his specifications. Starr cut about 210 punches, struck about 300 matrices and delivered them with a small fount of cast type to Hallock, finishing by 25 March 1836. Hallock worked closely with the punchcutter and clearly determined the form of the type himself. Starr kept nothing for himself, so that he was never able to cast the type for others: in fact it was more than twenty years before anyone printed with Armenian type in the United States or indeed anywhere in the Americas. Hallock arrived back in Smyrna with his new materials in June 1836 and finished casting new founts around the end of the year.

Ամերիկական միսիոներական տպագրության այլ օրինակ՝ Ինչիլա Բապպե մոյ Յիսուս Բրիսպոս իր Մապթեոս Նվիսի, Ա.Պոլիս, 1891 թ.: Հայատառ քրդերեն. տիտղոսաթերթը մասամբ տպագրված է արաբերենով

Հելլոքի բոլորգիրը շարունակում է ամստերդամյան ավանդույթը, սակայն ավելի ժամանակակից ձևավորմամբ և կորերին կենդանություն հաղորդող նուրբ անհամաչափությամբ: Դեռևս պարունակում է ամստերդամյան «Տեքստ» ու «Մեդիան» տառատեսակների մեծատառերի մասնատվածությունը: Հավանաբար, ձևավորման համար օրինակ են ծառայել Վենետիկի միսիոնարյանների տպագրած գրքերը, որոնցում ամստերդամյան տառատեսակները շարունակվել են օգտագործվել մինչև տասնիններորդ դարի կեսերը, որից հետո արդիականացվել են: Վենետիկի միսիոնարյանները գրքեր էին տպագրում արտասահմանյան գնորդների համար, բայց հազվադեպ էին մայր տառեր կամ նույնիսկ ձուլված տպատառեր տրամադրում այլ տպարանների: Դա էր պատճառը, որ Չմյուռնիսյի քարոզիչները ձեռք էին բերում Փարիզում, Վիեննայում և Ամերիկայում պատրաստված տառատեսակներ՝ համեմատելով դրանք որպես չափանիշ ծառայող վենետիկյանների հետ: 1836թ.-ին արդեն օգտագործում էին փարիզյան տառատեսակը, Վիեննայից հենց այդ ժամանակ ձեռք էին բերել «շատ գեղեցիկ տպատառերի երկու հավաքածու» և Հելլոքը Ամերիկայում նոր տառատեսակներ էր պատրաստել սովել որոնք «պետք է հարմարեցվեն հայերի ճաշակին, ում դժվար է գոհացնել քանի որ սովոր են վենետիկի կաթոլիկ հայկական տպարանի գրքերում գործածված գեղեցիկ տառատեսակին»:⁶



The Smyrna missionaries had decided to print books in Armenian, rather than Turkish. They began with their Paris and Vienna types, but in 1837 used Hallock's new American types as well. They still had no type smaller than the Vienna Cicero. In 1838 the British and Foreign Bible Society therefore sent them a fount of Richard Watts's Vienna Small Pica that had already been used in London. The Smyrna office accidentally bought Watts's Small Pica notrgir as well, but it proved useful. Hallock was never satisfied with his American Pica notrgir and in 1844 its matrices had not even been made ready for use.

Hallock's bolorgir continues in the Amsterdam tradition, but in a modernized form and with a lively subtle asymmetry to the curves. It still shows the fragmented capitals of the Amsterdam Text and Mediaen types. Books printed by the Venice Mkhitarists, who continued using their Amsterdam types well into the nineteenth century and then modernized them, probably provided the direct model. While the Venice Mkhitarists printed books for foreign customers they rarely if ever supplied matrices or even founts of cast type to other printing offices.

The Smyrna missionaries therefore acquired types cut in Paris, Vienna and America, but they judged them against the Venice standard. In 1836 they had been using the Paris fount, had just obtained 'two founts of great beauty' from Vienna and Hallock was having new types cut in America

Hamatarats ashxarhatsoyts [World map, ca. 1: 107,000,000]. When the brothers Schoonebeeck engraved their Armenian world map for the Vanandetsis in 1695, they also made a copperplate for a small version, measuring 23.5 x 39 cm. The illustration shows an early 19th-century print from that plate.

Շուշի՝ 1828թ.

Շվեյցարացի բողոքականները 1815թ.-ին հիմնադրում են Բազելի ավետարանական քարոզչական միությունը և քարոզիչներ ուղարկում Կովկաս, այդ թվում՝ Ղարաբաղի խանություն, որը 1813թ.-ից Ռուսական Կայսրության մաս էր կազմում: Ավգուստոս 2. Դիտրիխը և մյուսները Շուշի են ժամանում 1824թ.-ին և հիմնում քաղաքի առաջին միսիոներական առաքելությունը: Դիտրիխի քարոզչական գործունեության մասին 1826թ.-ի փետրվարին գրված զեկույցներում ասվում է, որ «ուր որ է տպարան կհիմնվի», իսկ 1830թ.-ի սեպտեմբերին նշվում է, որ տպարանը շատ եռանդուն կերպով գործում է, ու Դիտրիխը թարգմանություններ է անում դրա համար: Մինչ այդ «միայն հայերեն լեզվով էր տպագրել»: Այդ տարի Շուշիի քարոզիչները բաշխում են նաև Մոսկվայում տպագրված հայատառ տրակտատներ: 1830թ. դեկտեմբերին հայերեն բառարան էին տպագրում:

Ամերիկացի միսիոներների՝ 1830թ.-ին Շուշիի առաքելություն կատարած այցից հետո, Ամերիկայի Արտասահմանյան առաքելությունների հանձնակատարների խորհուրդը եզրակացնում է, որ Բազելի միության միջոցները չեն բավարարում տպարանի հնարավորություններն լիովին իրացնելու համար: Լիազորում են Մալթայի տպարանին՝ անվճար տպագրելու «ասիական Ռուսաստանի լեզուներով» այն բոլոր գրքերը, որ Դիտրիխը նրանց կտրամադրի, և դրանց բաշխումն իրականացնել Դիտրիխի վերահսկողությամբ: Հատկացնում են նաև ֆինանսական միջոցներ: Գտնվելով երևանից ընդամենը երկու հարյուր կիլոմետր հեռավորության վրա, Դիտրիխի առաքելությունը

that 'should be adapted to the tastes of the Armenians, they having been rendered somewhat difficult to please on this point by the beautiful type employed in the books issued from the Catholic-Armenian press at Venice.'⁸

Shushi, 1828



Swiss Protestants established the Evangelische Missionsgesellschaft Basel in 1815 and sent missionaries to the Caucasus, including the Karabakh Khanate, part of the Russian Empire since 1813. Augustus H. Dittrich and others reached the city of Shushi in 1824 and set up the city's first mission. Reports on Dittrich's mission note in February 1826 that 'a printing press is about to be established' and in September 1830 that the press has been very active and that Dittrich is making translations for it. It had 'hitherto printed only in Armenian'. But in that year the Shushi missionaries also distributed Armenian tracts printed in Moscow. In December 1830 they were printing an Armenian dictionary.

After American missionaries visited the Shushi mission in 1830, the American Board of Commissioners for Foreign Missions concluded that the Basel society lacked the means to realize the potential of its printing office. They authorized the Malta press to print free of charge any books 'in the languages of Asiatic Russia' that Dittrich might supply them and to have them distributed under his direction. They also

Համապարսած աշխարհայոյց (մոտավորապես՝ 1: 107,000,000): Մխոնըբէլէ կղբայրները 1695 թ. Վանադէցիների համար փորագրեցին հայերեն լեզվով աշխարհի քարտեզ, որի փոքր տարբերակը պղնձի վրա փորագրեցին. չափը՝ 23,5 x 39 սմ: Այստեղ ներկայացվում է այն փորագրության վաղ 19-րդ դարի տպագրությունն:

գրքեր է տարածել Հայաստանում, Վրաստանում, Ղարաբաղում և Պարսկաստանի հյուսիսային մասում: Հայ Առաքելական եկեղեցին Հայաստանում և Հայաստանի շուրջ իրականացվող այս քարոզչական գործողությունները վստահավոր է համարում և արդեն 1830թ.-ին ակտիվորեն դիմադրում առաքելության գործունեությանը:⁹

Երկու հայերի օգնությամբ՝ Դիտրիխն իրականացնում էր Աստվածաշնչի առաջին ժամանակակից արևելահայերեն թարգմանությունը, սակայն ռուսական կառավարությունը, Առաքելական իշխանությունների դիմադրության պատճառով, թույլ չի տալիս այն տպագրել: Մոսկվայում հաստատված միսիոներական տպարանին հաջողվում է իրենց համար տպագրել Ավետարան ըստ Մատթեոսի (1831թ.) և Մոր Կտակարան (1834թ.), բայց կառավարությունը խոչընդոտում է աշխատանքների շարունակմանը: Չմյուռնիայի ամերիկյան քարոզչական տպարանն է վերջո տպագրում է Դիտրիխի կատարած սաղմոսների թարգմանությունը, բայց մինչև 1883թ. արևելահայերեն ամբողջական Աստվածաշունչ լույս չի ընծայվում:¹⁰

Երուսաղեմի առհասարակ առաջին տպարանը՝ 1833թ.

Մխիթարյանների 1717թ.-ին վենետիկում հիմնած Սուրբ Ղազարի վանքը գիտական մեծ համբավ էր վաստակել: Տեղական հոգևոր ճեմարանում սովորում էին ոչ միայն կաթոլիկ, այլև՝ առաքելական ուսանողներ, չնայած եկեղեցիների միջև առկա լարվածությանը: Չաքարիա Կոփեցին ուսում էր ստացել այնտեղ և, ըստ երևույթին, ոգևորվել ճեմարանի



Zanazan araroghutyunk Yerusaghem i Surb Hakovb [Different ceremonies in the Church of St. James in Jerusalem]. The woodcut shows St. James and the Jerusalem monastery named after him, the home of the Armenian printing office. Jerusalem 1870.

provided funds. Situated only two hundred kilometres from Yerevan, Dittrich's mission distributed books in Armenia, Georgia, Karabakh and northern Persia. The Apostolic Church saw a threat in this missionary activity in and around the Armenian homeland and were actively opposing the mission by 1830.⁹

With the help of two Armenians, Dittrich was making the first translation of the Bible into modern Eastern Armenian, but the Russian government refused permission for the printing due to opposition from the Apostolic authorities. The missionary press in Moscow managed to print the Gospel of St. Mathew for them in 1831 and the New Testament in 1834, but the government blocked any further work. The American missionary press in Smyrna finally printed Dittrich's translation of the psalms, but no complete Bible in Eastern Armenian appeared until 1883.¹⁰

First printing office of any kind in Jerusalem, 1833

The San Lazzaro monastery set up by the Mkhitarists at Venice in 1717 built a reputation for scholarship. Its seminary attracted not only Catholic but also Apostolic students, in spite of tensions between the churches. Zakaria Kopetsi studied there and must have been inspired by its printing office. From 1826 to 1829 he worked as assistant to the

Ջանազան արարողությունի նի Յերուսաղեմ ի Ս. Յակովբ. Փայտափոր նկարը ներկայացնում է Յերուսաղեմի Սր. Հակոբյանց եկեղեցին և վանքը՝ հայկական տպարանի վայրը: Յերուսաղեմ, 1870 թ.

տպարանով: 1826-1829թթ. նա եղել է Կոստանդնուպոլսի պատրիարքի օգնականը, ով վերապահումով էր վերաբերում նրա կաթոլիկական կրթությանը: Բազմաթիվ տառատեսակներ է գնում ուն Յուսուֆյանից և ծրագրեր մշակում Երուսաղեմի Առաքելական պատրիարքի աթոռ Սուրբ Հակոբյանց վանքում տպարան հիմնելու շուրջ: Նախքան կհասցներ որևէ առաջընթաց գրանցել, ներքաշվում է Գողգոթայի սեփականության շուրջ վեճի մեջ և 1830թ. -ին արքայվում Կիպրոս: Արքայի ժամանակ շարունակում է նախապատրաստությունները՝ Տրիեստի վաճառականից ձեռք բերելով փայտյա տպագրական մամլիչ, լրացուցիչ ձուլված տպատառեր և մի քանի մայր տառեր: Այս ամենն ուղարկվում է Կոստանդնուպոլիս, և, ի վերջո, բոլոր նյութերը տեղափոխվում են Երուսաղեմ: Նա նույնիսկ լիտոգրաֆիական տպագրության համար նյութեր է ձեռք բերում:

Ջաքարիան վերադառնում է 1834թ. մայիսի 24-ին. դրանից մեկ տարի առաջ տպարանն արդեն սարքավորվել էր նրա գնած նյութերով և 1833թ. հունվարի մեկին լույս է ընծայում տասնվեց էջանոց փոքրաչափ աղթամատույց:¹¹ Տպարանի գործունեության առաջին վեց տարվա ընթացքում լույս է տեսնում տասնչորս անուն գիրք: Սա Երուսաղեմում առհասարակ առաջին տպարանն էր, որին հետևում է Իսրայել Բակի հրեական տպարանը՝ իր առաջին գիրքը հրատարակելով 1840թ. -ին: 1833թ. -ի աղթամատույցի անվանաթերթում ներկայացված հայերեն տառատեսակը նման է վան Դեյքի ու Քիշի «Տեքստ» բոլորգրին, բայց հնարավոր է, որ Վիեննայում ստեղծված լինի:¹²

Ջաքարիան 1840-1846թթ. -ին Երուսաղեմի պատրիարքն էր, և այդ ժամանակահատվածում տպարանը ծաղկում է ապրում: 1849թ. -ին Վիեննայից ձեռք է բերում երկաթե



Կ Ա Ն Ո Ն
ՇԱՆԱԶԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՐՈՍԱՂԵՄԻ Ի Ս. ՅԱԿՈՎԲ
ՄԱՐԿՆԵՐ ԵՐԱՍՏՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԻՍՏՈՒՎԻ ՍՏՈՐԻՆ: ՄԻՆՃԼ 1855Թ. ՏՊԱԿՐԱՆԸ ՇԱՐՈՆԱԿՈՒՄ Է՝ ՕԳՏԱԳՐԹԵՎ ՀԻՆ ԱՄՍՏԵՐՊԱՄՅԱՆ ՈՃԻ ԲԱԶՄԱԹԻՎ ՏՈՒՆՏԵՍԱԿՆԵՐ, ԹԵՆ 1850Թ. -ԻՆ ԱՐՂԵՆ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՆ ՆԱՍ ՆՈՐ ՏՈՒՆՏԵՍԱԿՆԵՐ:¹³ ՈՐՔԱՆՈՎ ՀԱՅՏՆԻ Է, ԵՐՈՍԱՂԵՄԻ ՏՊԱԿՐԱՆԸ ԵՐՔԼԷ ՍԵՓԱԿԱՆ ՏՈՒՆՏԵՍԱԿՆԵՐ ՉԻ ՈՒՆԵԳԵԼ Լ ԵՐՈՂ ՂԵԱՔԵՐՈՒՄ ՁԵՌՔ ԷՐ ԲԵՐՈՒՄ ՄԻՊԱՆ ձՈՒՎՎԱԾ ՏՊԱԿՏՈՒՆԵՐ, ԱՅՂ ՈՋ ԹԵ՛ մայր տառեր:

Zanazan araroghutyunk Yerusaghem i Surb Hakovb, Jerusalem 1870.

Patriarch in Constantinople, who distrusted his Catholic training. He purchased several kinds of type from a certain Yusufian, and made plans to establish a printing office at the St James Monastery, the seat of the Apostolic Patriarch in Jerusalem. Before he could make any progress, however, he became involved in a dispute over the ownership of Golgotha and was exiled to Cyprus in 1830. He continued the preparations during his exile, acquiring a wooden printing press, more cast type and even a few matrices from a merchant at Trieste. These were sent to Constantinople and all the materials finally to Jerusalem. He even acquired materials for lithographic printing.

More than a year before Zakaria's return on 24 May 1834 the printing office set up the materials he had acquired and issued a small sixteen-page prayer book on 1 January 1833.¹¹ It produced fourteen books in its first six years. This was the first printing office of any kind in Jerusalem, followed by the Jewish printing office of Israel Bak, who issued his first book in 1840. The type shown on the 1833 title-page is similar to the Van Dijk and Kis Text bolorgir, but may originate in Vienna.¹²

Zakaria served as Patriarch of Jerusalem from 1840 to 1846 and the printing office continued to flourish. In 1849 it acquired an iron printing press from Vienna and new type from Hovhannes Miuhentisian in Constantinople, whose work is discussed below. Even in 1855 the printing office still used some types more or less following the

Ջանազան արարողությունի նի Յերուսաղեմ ի Ս. Հակովբ, Յերուսաղեմ, 1870 թ.

տպագրական մամլիչ և նոր տառատեսակներ՝ պոլսեցի Հովհաննես Մյուհենտիսյանից, ում գործունեության մասին կիսովի ստորև: Մինչև 1855թ. տպարանը շարունակում է օգտագործել հին ամստերդամյան ոճի բազմաթիվ տառատեսակներ, թեև 1850թ. -ին արդեն ներմուծում են նաև նոր տառատեսակներ:¹³ Որքանով հայտնի է, Երուսաղեմի տպարանը երբևէ սեփական տառատեսակներ չի ունեցել և որոշ ղեաքերում ձեռք էր բերում միայն ձուլված տպատառեր, այլ ոչ թե՛ մայր տառեր:

Նոր տառատեսակ շուկայում. Լայպցիգ՝ 1835թ., Բեռլին՝ 1837թ., Բրաունշվալգ՝ 1840թ.

Արդեն նշվել է, որ հայերեն տառատեսակները, մինչև տասնիններորդ դարի առաջին տասնամյակները, հազվադեպ էին եվրոպական արտադրական գրաձուլարաններում: Բրայտկոպֆի գրաձուլարանը 1820-ականներին դեռ առաջարկում էր 1679թ. -ի Շմիթ/Յանսոն հայերեն տառատեսակն իր նմուշների ցանկերում, բայց այն ավելի ու ավելի հնատճ էր դառնում: Թե՛ այս, և թե՛ ավելի ժամանակակից՝ 1823թ. -ի տառատեսակը, որը վերագրում են փարիզցի Մոլեին, հետոնում էին ամստերդամյան ոճից, որին նմանվում էին Վենետիկի ու Վիեննայի միսիթարյանների կիրառած տառաձևերը: Լայպցիգի գրաձուլիչ Ֆրիդրիխ Նիսը լրացնում է շուկայում առկա այդ բացը, հավանաբար՝ երիտասարդ արևելագետ Յուլիուս Հայնրիխ Պետերմանի հետ գործակցելով:



Գ. Մանակ եպիսկոպոս . Տիմոթեոս Ի. Վ.

Bishop Isaac and Father Timothy from St. James's Monastery, Jerusalem. Engraving in R.P. Timothé, *Deux ans de séjour en Abessinie*, Jerusalem 1871.

Յերուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի Իսահակ եպիսկոպոսն ու Տեր Տիմոթեոսը: Փորագրություն Տիմոթեոս Սափրիչյանի *Deux ans de séjour en Abessinie* գրքում, Յերուսաղեմ, 1871 թ.

Նիսը 1829թ.-ին Լայպցիգում տպարան է հիմնում, որին 1831թ.-ին գրաձուլարան է ավելացնում: Գերմանիան և, մասնավորապես, Լայպցիգը, այդ ժամանակներում բանասիրական, հնագիտական և պատմագիտական գիտությունների առաջատար կենտրոն էր, և Նիսը մասնագիտանում է գիտական հրատարակությունների համար նախատեսված ոչ լատինական տառատեսակների բնագավառում: 1835թ.-ին նրա ներկայացրած առաջին տառատեսակների նմուշների ցանկում ընդգրկված է նոր «Ցիցերոն» բոլորգիր, որը հավանաբար փորագրվել է Պետերմանի՝ 1837թ.-ին Բեռլինում հրատարակված «Grammatica Linguae Armeniacae» (Հայերենի քերականություն) գրքի համար:¹⁴ Նույն տարի Բեռլինի համալսարանը Պետերմանին պոռֆեսորի կոչում է շնորհում: Նա արագորեն առաջատար արևելագետի համբավ է ձեռք բերում՝ կենտրոնանալով հայերենի վրա:

Պետերմանին իր քերականությունը նվիրում է Սուրբ Ղազարի վանահորը, և վանքի տառատեսակներից մի քանիսն անպայմանորեն որպես հիմնական բնօրինակներ են ծառայել նոր տառատեսակի ձևավորման համար: Ամստերդամյան «Տեքստ» ու «Մեդիան» տառատեսակների նման, նոր մեծատառերը ևս մասնատված էին: Ընդհանուր առմամբ, այս տառատեսակը ավելի շատ Քիչի տպատառերին է նման, քան՝ Ֆլայշմանի: Սա միակ ոչ հայկական արտադրական գրաձուլարանն էր, որն այս ոճի տառատեսակ էր առաջարկում: Գերմանիայի մի քանի քաղաքներում տպագրիչներն այս տառատեսակն էին օգտագործում Պետերմանի, Ֆրանց Բոպի և այլ գիտնականների գործերը տպագրելու համար: Այլ բազմաթիվ ոչ լատինական տառատեսակների հետ, այն ներկայացված է Հայերի Մայերի



1871.

R.P. Timothé, *Deux ans de séjour en Abessinie*, Jerusalem 1871. Engraved title-page.

older Amsterdam style, but they apparently introduced the new types in 1850.¹³ As far as I know, the Jerusalem printing office never had exclusive types and in some cases they acquired only cast founts rather than matrices.

A new type on the open market: Leipzig 1835, Berlin 1837, Braunschweig 1840

I have noted that Armenian types remained rare among the commercial European typefoundries in the first decades of the nineteenth century. The Breitkopf typefoundry still offered the ca. 1679 Schmidt/Janson Armenian in their type specimens of the 1820s, but it appeared increasingly old-fashioned. Both it and the more modern 1823 type I ascribe to Molé in Paris departed from the Amsterdam style followed by the Mkhitarists in Venice and Vienna. The Leipzig typefounder Friedrich Nies filled this gap in the market, probably working with the young orientalist Julius Heinrich Petermann.

Nies established a Leipzig printing office in 1829 and added a typefoundry in 1831. Germany in general and Leipzig in particular was a leading centre of linguistic, archaeological and historical scholarship at this time and Nies came to specialize in non-Latin types for scholarly publications. His first known type specimen of 1835 includes a new Cicero bolongir, probably cut for Petermann's *Grammatica Linguae*

Տիմոթեոս Սափրիչյան, *Deux ans de séjour en Abessinie*, Յերուսաղեմ, 1871 թ.: Անվանաթերթի փորագրություն

«Գուտենբերգի այբոմում», որը 1840թ.-ին տպագրվում է Բրաունշվայգի «Ֆրիդրիխ Վիլհելմ և որդի» տպարանում՝ արևմտյան գրատպության գյուտի ենթադրյալ 400-ամյակի առթիվ: Այբոմի զնորդների ցանկն ընդգրկում է բազմաթիվ կարևորագույն գրաձուլիչների: Մեծատառերի և փոքրատառերի այբուբեն է ներկայացված 1837թ.-ի քերականության մեջ և մի քանի այլ հրատարակումներում, այդ թվում՝ Ֆրիդրիխ Բալհորնի «Alphabete orientischer und occidentalischer Sprachen» (արևելյան և արևմտյան լեզուների այբուբեններ) գրքի բազում հրատարակություններում:¹⁵ Հաստատապես կարելի է այս ցանկը լրացնել գերմանացի այլ տպագրիչների անուններով, որոնք օգտագործել են այս տառատեսակը, ավելացնելով դրանց օտար տպագրիչների:

Նիսի ժառանգորդները 1868թ.-ին գրաձուլարանը վաճառում են հեղինակավոր լայպցիգյան «Դուգուլին» տպարանին, որը մասնագիտանում էր ոչ լատինական տպագրության մեջ և տեքստեր էր շարում արտասահմանյան շատ հրատարակությունների համար: Հայերեն տառատեսակը 1874թ.-ին և դրա հաջորդող տարիներին ներկայացվում էր տպարանի տառատեսակների նմուշների ցանկերում: Նրանք նաև տպագրում են Մ. Լաուերի «Հայերենի քերականություն» Օգյուստ Կադիեղի 1883թ.-ի հրատարակությունը, որը լույս էր տեսել Փարիզում: Մայնի Ֆրանկֆուրտում հաստատված Շտեմպել գրաձուլարանը 1919թ.-ին ձեռք է բերում Դուգուլինի մայր տառերի հավաքածուն և վաճառքի հանում Նիսի հայերեն տառատեսակը՝ «12 կետաչափ հայերեն 1» անվամբ:

Accusativus.	Declinationes nomi	Ablativus.
ՉՏրդատս	ՉՏրդատաց	՚ի Տրդատաց
զսերմանս	զսերմանց	՚ի սերմանց
cf. զհիմունս ²⁾		
զարու թիւնս	զարու թիւնց	՚ի արու թիւնց
զաղելւրս	զաղելւրց	՚ի յաղելւրց
ս. զաղելւրս ⁵⁾	ս. յաղելւրաց	
զասեղս	զասեղց	՚ի յասեղց
	ս. յասեղաց	
զախտս	զախտց	՚ի յախտց
զմարդս	զմարդց	՚ի մարդց
զաւուրս ²⁾	զաւուրց	՚ի ծանուրց
զճանունս ²⁾	զճանունց	
		cf. ՚ի արձանց
զզանձս	զզանձց	՚ի զանձոց

Declination of nouns.
Julius H. Petermann,
*Brevis Linguae Armeniacae
Grammatica*, ed. Berlin
1841. Set in Friedrich
Nies's ca. 1835 type.

Armeniacae, published in Berlin in 1837.¹⁴ The University of Berlin made Petermann a professor the year he published his grammar. He quickly established his reputation as a leading orientalist and concentrated especially on Armenian.

Petermann dedicated his grammar to the Abbot of the San Lazzaro monastery and some of their types no doubt served as the principal model for the new type. Like the Amsterdam Text and Mediaen, the capitals are fragmented. The type in general remains closer to Kis's than to Fleischman's. No other non-Armenian commercial typefoundry offered a type in this style. Printers in several German cities used it for works by Petermann, Franz Bopp and other scholars. It appeared with many other non-Latin types in Heinrich Meyer's 1840 *Gutenbergs-Album*, printed by Friedrich Vieweg & Sohn in Braunschweig, celebrating the supposed 400th anniversary of the invention of Western letterpress printing. Its subscribers included several leading typefounders. An upper and lowercase alphabet appeared in the 1837 grammar and several other publications, including the many editions of Friedrich Ballhorn's *Alphabete orientalischer und occidentalischer Sprachen*.¹⁵ One could no doubt expand the list of German printers who used this type and probably add foreign ones.

In 1868 Nies's successors sold the typefoundry to Drugulin, a prestigious Leipzig printing office that specialized in non-Latin printing and also set type for many foreign publications. They showed the Armenian in their 1874 specimen

Գոյականի հոլովները: Յուլիուս Պետերման, *Brevis Linguae Armeniacae Grammatica*, հրտ. Բերլին, 1841 թ.: Տպագրված է Ֆրիդրիխ Նիսի 1835 թ. տառատեսակով:

Առաջին հայատառ տպագրությունն Ամերիկայում՝ 1858թ.¹⁶

Ամերիկայում բրիտանական Վիրջինիա գաղութում գտնվող Ջեյմսթաուն քաղաքը 1618թ. մեկ հայ բնակիչ ուներ, սակայն հայ ներգաղթողների առաջին նշանակալից հոսքը Նյու Յորք 1850-ականների վերջերին՝ 1860թ. -ականների սկզբներին էր: 1857թ. -ին նորաբնակ հայերից մեկն անգամ հանրամատչելի անգլիալեզու գործ է հրատարակել Օսմանյան Կայսրության մասին, շեշտը դնելով հայերին վերաբերող խնդիրներին:¹⁷ Թեև երեսուն տարուց ավելի Ամերիկայի Արտասահմանյան առաքելությունների հանձնակատարների խորհուրդն օժանդակել էր Բողոքական քարոզիչների հայատառ տպագրությունները, բայց մինչ այդ Ամերիկայում հայատառ տպագրությունն չէր եղել: Տպագրական գործունեությունը վերահսկելու՝ խորհրդի ցանկությունը համընկնում է Միացյալ Նահանգներում հայ համայնքի հաստատման հետ: Սա խթան է հանդիսանում 1850-ականներին հայատառ տպագրության ներմուծմանը Նյու Յորք:

Ամերիկայի Աստվածաշնչային միությունը հիմնադրվել է Նյու Յորքում՝ 1816թ. -ին, Աստվածաշունչ տպագրելու և Միացյալ Նահանգներում ու արտերկրում տարածելու նպատակով: Միության գործունեությունը սահմանափակվում էր Աստվածաշնչի տեքստերով, սակայն 1825թ. հիմնադրվում է Ամերիկայի Տետրակի ընկերությունը, նաև՝ Նյու Յորքում, որի նպատակը, աստվածաշնչային տեքստերից զատ, ավետարանական կրոնական տեքստերի տպագրումն ու տարածումն էր: Երկու կազմակերպություններն իրենց ուշադրությունը սևեռում են հայերի վրա, թե՛ Ամերիկայում, և թե՛ արտերկրում:

Armenisches A

Figur.	Benennung.	Bedeutung.	Zahl- werth.	Fig.
Ա	Aip	a	1	Ս
Բ	Pjen	p	2	Յ
Գ	Kim	k	3	Ն
Դ	Ta	t	4	Շ
Ե	Jetsch	je e	5	Ո
Զ	Za	z gelind.	6	Զ
Է	E	e	7	Պ
Ը	Jeth	e kurz	8	Ջ
Թ	Tho	th	9	Ռ
Ճ	She	sh franz. j	10	Ս
Ի	Ini	i	20	Վ
Լ	Liun	l	30	Տ
Խ	Che	ch	40	Ր

Armenian for Germans.
Friedrich Ballhorn,
*Alphabete orientalischer
und occidentalischer
Sprachen*, 2nd ed. Leipzig
1844, showing an upper-
and lowercase alphabet
of Nies's type.

and many later ones. They also printed Auguste Carrière's 1883 edition of M. Lauer, *Grammaire Arménienne*, published in Paris. The Stempel typefoundry in Frankfurt am Main took over Drugulin's collection of matrices in 1919 and continued to sell the Nies type as 12 Didot point Armenisch I.

The first Armenian printing in America, 1857/58¹⁶


The city of Jamestown in the Virginia colony in America could boast one Armenian resident in 1618, but the first significant wave of Armenian immigrants reached New York in the late 1850s and early 1860s. In 1857 an Armenian immigrant even published a popular English-language account of the Ottoman Empire, with an emphasis on matters relating to the Armenians.¹⁷ The American Board of Commissioners for Foreign Missions had been supporting printing in Armenian type by Protestant missionaries for more than thirty years, but no Armenian had yet been printed in America itself. The Board's desire to have better oversight of the printing activities coincided with the beginnings of an Armenian community in the United States itself. This gave the impetus for the introduction of Armenian printing to New York in the 1850s.

Հայոց լեզու՝ գերմանացիների համար: Ֆրիդրիխ Բալհորն, *Alphabete orientalischer und occidentalischer Sprachen*, 2-րդ հրտ. Լայպցիգ, 1844 թ., ներկայացվում են Նիսի տառատեսակի մեծատառերով ու փոքրատառերով այբուբեններ:

Երկու ամերիկացի, տեղացի հայերի հետ համագործակցելով, ժամանակակից արևմտահայերեն էին թարգմանել Աստվածաշունչը: Միաբանության քարոզիչ Հերիսոն Դուայթը մոտ 1837թ. -ին սկսել էր թարգմանությունը, որն ավարտին է հասցնում նրա պրեսբիտերական գործընկեր Էլիաս Ռիգբը: Զմյուռնիայի քարոզչական տպարանը 1853թ. -ին տեղափոխվել էր Կոստանդնուպոլիս, որտեղ այդ նույն տարում իրականացնում է առաջին հրատարակությունը Նյու Յորքի Ամերիկայի Աստվածաշնչային միության համար: Ռիգբը 1856թ. -ի վերջին վերադառնում է Միացյալ Նահանգներ և հաջորդ տարի սկսում աշխատել այդ թարգմանության նոր հրատարակության վրա, որը միությունը տպագրում և հրատարակում է Նյու Յորքում:

Տեքստի շարունակ սկսում է 1857թ. կամ 1858թ. -ին: Աստվածաշնչային միությունը շարված էջերից էլեկտրալուծական տպատախտակներ է պատրաստում՝ դյուրացնելով վերատպությունը և, անհրաժեշտության դեպքում, դրանց տեղափոխումը արտերկրում տպագրելու նպատակով: 1858թ. -ին Վ.Մ. Ուոթթը Լոնդոնում Սոր Կոսակարան է տպագրում Բրիտանական և արտասահմանյան աստվածաշնչային միության համար՝ օգտագործելով Նյու Յորքում պատրաստված տպատախտակները, բայց, որքանով հայտնի է, այն Նյու Յորքում լույս չի ընծայվել մինչև 1859թ. -ը, երբ ընդգրկվել է ամբողջական Աստվածաշնչի մեջ:

Երկու առավել փոքրածավալ գրքերի պատրաստումը հավանաբար սկսվել է մոտավորապես նույն ժամանակ, սակայն դրանք տպագրվել ու լույս են ընծայվել Նյու Յորքում 1858թ. վերջին, հավանաբար՝ Տետրակի ընկերության կողմից. դրանք էին



The cathedral of Ani, medieval capital of Armenia. The tourist guide *Das pittoreske Armenien* (Venice 1893) was also published in a French edition.

The American Bible Society had been established in New York in 1816 to organise the production and distribution of Bibles for use both in the United States and abroad. It limited its work quite strictly to biblical texts, but in 1825 the American Tract Society was established, also in New York, to produce and circulate Evangelical religious tracts other than the biblical texts themselves. Both now turned their attention to Armenians at home and abroad.

Two Americans had been working with native Armenians to translate the Bible into modern Western Armenian. The Congregational missionary Harrison Dwight began it around 1837 and it was completed by his Presbyterian colleague Elias Riggs. The missionary press at Smyrna had moved to Constantinople in 1853, and in that year it printed the first edition, for the American Bible Society in New York. Riggs returned to the United States late in 1856 and in 1857 he began editing a new edition of this translation, which the Society printed and published in New York.

The typesetting began in 1857 or 1858. The Bible Society made electrotype plates of the pages of type, so that they could reprint it easily and also ship the plates for printing abroad if desired. W. M. Watts in London printed an 1858 edition of the New Testament for the British and Foreign Bible Society,

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի մայր տաճարը: *Das pittoreske Armenien* գրքաշրջիկային ուղեցույցի (Վենետիկ, 1893 թ.) ֆրանսերեն տարբերակ հրատարակվեց:

Ջոն Բունիանի «Քրիստիանոսին ու Քրիստինեին ճամփորդութիւնը աս աշխարհէս հանդերձեալը երագի ձեռով շարադրեալ» և Ֆիլիպ Դոդրիջի «Աստուածապաշտութեան մարդուս հոգւոյն մեջ ծագիլն ու յառաջ երթալը» գրքերը: Սրանք առաջին հայերեն գրքերն են, որ տպագրվել են Միացյալ Նահանգներում և, առհասարակ, Ամերիկաներում:

Հելլոքը, 1841թ.-ին վերադառնալով Ամերիկա, իր հետ բերել էր մայր տառերի մի մասը, ինչի շնորհիվ Մասաչուսեթսի Փլեյնֆիլդ քաղաքում նրա մասնագիտացված փոքր գրաձուլարանը միակն էր Ամերիկայում, որն ի վիճակի էր հայերեն տպատառեր պատրաստել: Նրա ունեցած ամենափոքր տառատեսակը, սակայն, մեծ «Պիկա» էր, որը պիտանի չէր միության նախատեսած փոքրաչափ Աստվածաշունչը տպագրելու համար: Չկան վկայություններ այն մասին, թե Նյու Յորքի Աստվածաշունչային միությունը և Տետրակի ընկերությունը տառատեսակներ է գնել, սակայն երկու կազմակերպությունները գրեթե միաժամանակ սկսում են հայերեն տպագրել. հավանաբար, միասին էլ պատվիրել են տառատեսակները, որի համար շարժառիթ է դարձել Ռիզսի Աստվածաշունչի թարգմանությունը: Թե՛ փաստագրական, և թե՛ գրատպական վկայություններն ակնհայտ են դարձնում, որ տառատեսակը պատրաստելու պատվերը տրվել է Վիեննայի մխիթարյանների գրաձուլարանին:¹⁸



The excavated ruins of Ani became icons of the Armenian past. Engraving from Nerses Sargisian, *Teghagruthiunk i Pokr yev i Mets Hajs* [Topography of Armenia Minor and Maior], Venice, printing office of S. Lazzaro, 1864.

using the plates prepared in New York, but as far as I know, it was not published in New York until it appeared in the complete Bible in 1859.


The typesetting of two shorter books must have begun at about the same time but they were printed and published at New York before the end of 1858, presumably by the Tract Society: Armenian editions of John Bunyan's *Pilgrim's progress* and Philip Doddridge, *The Rise and Progress of Religion in the Soul*. These were the first Armenian books printed in the United States, or anywhere in the Americas.

Hallock had returned to America in 1841 and brought some of his matrices with him, so his small and specialized typefoundry in Plainfield, Massachusetts was the only one in America equipped for Armenian. His smallest type, however, a large-faced Pica, was too large for the small Bibles the Society wished to produce. The New York Bible Society and Tract Society's successors have no record of the purchase of the type, but they began Armenian printing almost simultaneously and probably ordered their types together, initiated by plans for Riggs's Bible. Both documentary and typographic evidence suggest they ordered the type from the Mkhitarist typefoundry in Vienna.¹⁸

Անի քաղաքի պեղված փլատակները վերածվեցին Հայաստանի անցյալի խորհրդանշի: Փորագրություն, Ներսիս Սարգիսեանի *Մեղագրութիւնի ի Փոյի եւ ի Մեծ Հայս գրքից*, Վենետիկ, Սուրբ Ղազարի տպարան, 1864 թ.



Անի.



IX

Westernization, advertising, new fashions ... and Jesuits!

A 1783 view of the interior of the Armenian Apostolic Church in Amsterdam shows the parishioners in fashionable Western clothing. Armenians in the major European cultural centres were probably the first to embrace the latest fashions in print as well.

Archaeological excavations at Herculaneum and Pompeii had inaugurated a new interest in antiquities that culminated in the extensive team of scholars that accompanied Napoleon's army on the 1798 Egyptian campaign. The beautifully illustrated scholarly reports that began to appear in 1809 sparked a new fashion for 'antique' styles. Old gothic printing types were revived and new styles developed under the influence of real or imagined ancient ones. Sans-serif types made a tentative appearance around 1813 followed by a deluge of slab-serif types beginning around 1818, both kinds dubbed 'Egyptian'.

At the same time, the industrial revolution began to shake the foundations of the society's economic structure. With England in the forefront, manufacturers produced all imaginable wares for the emerging middle class. To market

Yerevan with Mount Ararat.

Երևանն ու Արարատ (Մասիս) լեռը

191

Գլուխ Թ.

Արևմուտքի ազդեցություններ, գովազդներ, նորամուծություններ և... ճիզվիտներ

Ամստերդամի Հայ Առաքելական եկեղեցու ինտերիերի 1783թ.-ի պատկերը ներկայացնում է ծխականների՝ արևմտյան նորաձև հանդերձով: Հավանական է, որ Եվրոպայի մշակութային մեծագույն կենտրոններում բնակվող հայերը նույնպես առաջինն են եղել տպագրական նորարարությունները որդեգրելու հարցում:

Հերկուլանումում ու Պոմպեյում իրականացվող հնագիտական պեղումները հնությունների հանդեպ նոր հետաքրքրություն էին արթնացրել, որը 1798թ.-ին իր գագաթնակետին է հասնում, երբ բազմաճյուղ գիտական արշավախումբը Նապոլեոնի զորքերին ուղեկցում է եգիպտական ռազմական արշավի ժամանակ: Հրաշալի նկարազարդ գիտական զեկույցները, որ սկսում են ի հայտ գալ 1809թ.-ին, «հնադարյան» ոճի հանդեպ նոր միտում են սկսում: Վերածնվում են հին գոթական տառատեսակները և նոր ոճեր են մշակվում իրական կամ հորինված հնագույն ոճերի հիման վրա: Առանց ծայրատ եզրերի (sans-serif) տառատեսակները փորձնականորեն մուտք են գործում մոտ 1813թ.-ին, դրանց մոտ 1818թ.-ին հետևեցում է «սալաքար» ծայրատ եզրերով տառատեսակների հեղեղը. երկու տիպի տառատեսակները «եգիպտական» են անվանվում:



the new products, printers of posters, newspaper advertisements and catalogues needed new types designed not for the seated reader of a book, but to catch the eye of the passer-by on the street. Such letterforms found their way into Western and Armenian books as well, first in engraved copperplates and then as letterpress type. Armenian printers must have envied their European colleagues, who had not only a wide variety of decorative types, but also romans and italics in light and bold versions, both narrow and wide.



The latest styles from Vienna and Venice

In 1835 the printing office and typefoundry of the Vienna Mkhitarists burned down and they had to begin from scratch. They took the opportunity to build larger and more modern facilities that opened in 1838. For twenty-five years they had occasionally supplied founts of cast type or even matrices to printers around the world. With new centres of Armenian printing appearing in both the near East and Europe, and newspapers springing up, Armenian typefounding became big business. Before the end of the century the Vienna foundry had filled orders for type from Venice, Rome, Smyrna, Moscow, Paris, Basel and/or Geneva, London, New York, and apparently – though perhaps indirectly – Constantinople, Jerusalem and Beirut. San Lazzaro made no attempt to compete with them: they printed for others, but cast type almost exclusively for their own use.

Title engraving of Ghukas Inchichyan, *Yeghanak byzandean* [Byzantine Almanac], Venice, San Lazzaro, 1818. The book also contains a folding print of a Japanese temple, copied from Bernard Picart's *Cérémonies et Coutumes Religieuses II*, Amsterdam 1728.

Տիտղոսի փորագրություն, Ղուկաս Ինճիճյանի *Եղանակ Բիզանդեան* տարեգրությունից, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1818 թ.: Գրքում զետեղված է նաև Բերնար Պիկարի *Cérémonies et Coutumes Religieuses II* գրքից (Ամստերդամ, 1728 թ.) վերցված ճապոնական տաճարի ծավլող նկար:

Միևնույն ժամանակ, արդյունաբերական հեղափոխությունը սկսում է ցնցել հասարակության տնտեսական կառուցվածքային հիմքերը: Անզիհան առաջատարն էր, որտեղ արտադրողները երևակայելի ամեն տեսակի ապրանք էին արտադրում աճող միջին խավի համար: Նոր ապրանքները շուկա հանելու համար գովազդային պաստառներ, թերթային գովազդներ և կատալոգներ տպագրողները կարիք ունեին այնպիսի նոր տառատեսակների, որոնք նախատեսված չէին հանգիստ ընթերցման, այլ փողոցով անցնողի աչքին ընկնելու համար: Այդպիսի տառաձևերը նաև մուտք գործեցին արևմտյան և հայկական գրքեր՝ սկզբից պղնձե փորագիր տախտակների միջոցով, ապա՝ տպատառերի տեսքով: Կարծում են, որ հայ տպագրիչները խանդով էին վերաբերվել եվրոպացի իրենց գործընկերներին, որոնք ոչ միայն զարդագրերի լայն տեսականի ունեին, այլև լատինական ու իտալիկ տպատառեր, բարակ և հաստ, նեղ և լայն տարբերակներով:

Վիեննայի ու Վենետիկի նորագույն ոճերը

1835թ.-ին այրվում են Վիեննայի միսիթարյանների տպարանն ու գրաձուլարանը, և ամեն ինչ նորից սկսելու անհրաժեշտություն է առաջանում: Առիթից օգտվելով՝ ավելի մեծ ու ավելի ժամանակակից կառույց են հիմնում, որը բացվում է 1838թ.-ին: Քսանհինգ տարի շարունակ նրանք ձուլված տպատառերի հավաքածուներ և անգամ մայր տառեր են մատակարարել աշխարհի այլ տպագրիչներին: Թե՛ Մերձավոր Արևելքում, և թե՛ Եվրոպայում հայկական

տպագրության նոր կենտրոնների ստեղծմամբ ու պարբերականների աճով, հայերեն տպատառերի ձուլումը մեծ բիզնես է դառնում: Մինչև դարավերջ Վիեննայի գրաձուլարանն արդեն տառատեսակներ պատրաստելու պատվերներ էր ստացել Վենետիկից, Հռոմից, Ջնյունիայից, Մոսկվայից, Փարիզից, Բազելից և/կամ Ժնևից, Լոնդոնից, Նյու Յորքից և ըստ երևույթին, (թեև գուցե միջնորդավորված)՝ Կոստանդնուպոլսից, Երուսաղեմից և Բեյրութից: Սուրբ Ղազարի գրաձուլարանը չէր ջանում մրցակցել նրանց հետ, տպագրում էր ուրիշների համար, սակայն տպատառեր էր ձուլում գրեթե բացառապես սեփական օգտագործման համար:

Վիեննայի տպարանի և գրաձուլարանի 1898թ.-ին գրված պատմության մեջ համառոտ ներկայացվում է տեղում պատրաստված մոտ վաթսույն հայերեն տառատեսակ, ինչպես նաև՝ կիրիլիցա, հին վլավրներեն, եբրայերեն, ասորերեն և չինարեն տառատեսակներ: Վիեննայում ձուլվել են նաև հայերեն և այլ տպատառեր Կոստանդնուպոլսից ուղարկված մայր տառերից: Նոր տառատեսակներից շատերում անտեսվում են հայկական գրատպական ու ձեռագրային ավանդույթները՝ հետևելով եվրոպացի գրաձուլիչների վերջին ձևերին: Այսօր համացանցը հնարավորություն է ընձեռում տասնիներորդ դարի հարյուրավոր հայատառ գրքեր թերթել՝ այս նոր ոճերի մոտավոր ժամանակագրությունը ներկայացնելով:

Դեռևս 1839թ.-ին փորձեր են ձեռնարկվել հայերենը տեղավորել եվրոպական գոթական ոճի խստապահանջ կաղապարի մեջ, որը «տեքստուրա» է կոչվում, իսկ ոչ մասնագետները հաճախ «հին անզլիական» են անվանում: Վիեննայի գրաձուլարանի նման առաջին փորձը



